

Հարգելի՛ ընթերցող,

**Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ)** նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения молодых учёных и специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

**The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA)** presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

### Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlib.am/>

E-mail: [info@artsakhlib.am](mailto:info@artsakhlib.am)

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhelibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

**ՆԵԼԼԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

**ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ  
ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ  
1813-1867 ԹԹ.**



ԵՐԵՎԱՆ  
«ԱՆՏԱՐԵՍ»  
2015

ԼՏԴ 94(479.25) Աշխատությունը տպագրվում է Արցախի պետական  
ԳՄԴ 63.3(5Ը) համալսարանի և Ստեփանակերտի Մեսրոպ Մաշ-  
տոց Համալսարանի գիտխորհուրդների որոշմամբ  
Բ 242

**Գիրքը տպագրվել է Լեռնային Ղարաբաղի  
Հանրապետության Ազգային ժողովի մեկենասությամբ**

**Խմբագիր՝ պատմական գիտությունների դոկտոր  
Վահրամ Բալայան**

Բաղդասարյան Ն. Է.

Բ 242 Վարչաքաղաքական և սոցիալ-տնտեսական կացությունը  
Ղարաբաղում 1813-1867 թթ.- Խմբ.՝ Վ. Բալայան, Երևան,  
«Անտարես», 2015, 256 էջ:

Աշխատությունը նվիրված է հայոց պատմության պատմաշրջաններից մեկի՝ Ղարաբաղի վարչաքաղաքական և սոցիալ-տնտեսական կացության պատմությունը 1813-1867 թթ.: Արխիվային նորահայտ վավերագրերի, տպագիր սկզբնաղբյուրների, պատմագիտական գրականության, ժամանակի պարբերական մամուլի վերլուծության արդյունքում ստեղծված ուսումնասիրությունն առաջին փորձն է գիտական հանրությանը ներկայացնելու Արցախի պատմության նշված ժամանակահատվածը: 1813 թվականից գտնվելով ռուսական կայսրության կազմում՝ Ղարաբաղն անմասն չէր կայսերական վարչաքաղաքական, սոցիալ-տնտեսական համակարգում առկա փոփոխություններից: Ղարաբաղի պատմությունը մի կողմից՝ դիտարկվել է համակովկասյան քաղաքական զարգացումների համատեքստում, մյուս կողմից՝ պատմական գնահատականների հարցում հաշվի են առնվել քաղաքական և սոցիալ-տնտեսական առանձնահատկությունները: Նախատեսված է պատմաբանների, միջազգայնագետների, հայագիտությամբ և կովկասագիտությամբ զբաղվողների և հետաքրքրվողների համար:

ISBN 978-9939-51-772-8



© Բաղդասարյան Ն., 2015

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 5**

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

### ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

**ՂԱՐԱԲԱՂՈՒՄ 1813-1867 ԹԹ. .... 21**

Ա) Գյուլիստանի պայմանագրի

քաղաքական հետևանքները..... 21

Բ) Արցախահայությունը 1826-1828 թթ.

ռուս-պարսկական պատերազմում ..... 64

Գ) Ղարաբաղը՝ ռուսական կայսրության

վարչաքաղաքական բարեփոխումների

նախագծերում և որոշումներում 1822-1867 թթ. ....92

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

### ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

**1813-1867 ԹԹ.: ՑԱՐԻՉՄԻ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ**

**ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ..... 115**

Ա) Գյուղատնտեսությունը, արհեստները և առևտուրը .....115

Բ) Ցարական Ռուսաստանի հարկային

քաղաքականությունը Ղարաբաղում.....161

Գ) Դասային հարաբերությունները.....180

Դ) Ղարաբաղի ռուս վերաբնակները

(Ռուսաստանի ժողովրդագրական

քաղաքականության դրսևորումը) .....190

Ե) Հակաավատատիրական և հակացարական  
ելույթները Ղարաբաղում .....195

**ՎԵՐՋԱԲԱՆ** ..... 215

НЕЛЛИ БАГДАСАРЯН: АДМИНИСТРАТИВНО-ПОЛИТИЧЕСКАЯ И  
СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКАЯ СИТУАЦИЯ В КАРАБАХЕ  
В 1813-1867 ГГ. РЕЗЮМЕ .....222

NELLY BAGHDASARYAN: THE ADMINISTRATIVE-POLITICAL  
AND SOCIOECONOMIC SITUATION IN KARABAGH  
IN 1813-1867. SUMMARY.....229

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ**  
**ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**..... 237

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրությունը նվիրված է հայոց պատմության կարևորագույն շրջափուլերից մեկին՝ Ղարաբաղի<sup>1</sup> վարչաքաղաքական և սոցիալ-տնտեսական կացությանը 1813-1867 թթ. ընդգրկող ժամանակաշրջանում: 1813 թ. Գյուլիստանի հաշտության պայմանագրով Ղարաբաղի պարսկական հպատակությունը փոխարինվում է ռուսականով: Պատմագիտությունը Գյուլիստանի պայմանագրի նշանակությունը դիտարկել է Անդրկովկասի Ռուսաստանին միացման համատեքստում՝ տարբեր գնահատականներ տալով քաղաքական այս ակտին՝ առաջադիմականից մինչև «չարյաց նվազագույնը»: Դրանով հանդերձ՝ գոյություն չունի պատմագիտական որևէ աշխատություն, որտեղ համակողմանիորեն քննության առնված լիներ Ղարաբաղի՝ Ռուսաստանին միացման հետևանքների ուսումնասիրությունը, միացմանը հետևած վարչաքաղաքական և տնտեսական կացությունը, հարափոփոխ այն իրադրությունը, որը տիրում էր մինչև Ելիզավետպոլի նահանգի ստեղծումը: Խնդրո առարկա այդ հարցերի լուսաբանմանն էլ նվիրված է ուսումնասիրությունը: Ուսումնասիրության թեման հրատապ է, որովհետև հակառակորդ պետության՝ Ադրբեջանի հակաքարոզչության, իրական պատմության խեղաթյուրման պայմաններում ժամանակի հրամայական է հայրենական պատմագրության բաց էջերը լրացնելը: Ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է նրանով, որ խորհրդային շրջանի պատմագիտության կապանքներից ձերբազատվելուց հետո անհրաժեշտություն է առաջացել նորովի վերագնահատելու պատմական անցյալը՝ խուսափելով արդեն իսկ քննություն անցած կարծրատիպերից:

Աշխատության նպատակն է նորահայտ արխիվային վավերագրերի, ձեռագրերի, տպագիր սկզբնաղբյուրների, ուղեգրությունների, ժամանակի պարբերական մամուլի և պատմագիտական գրականության հիմքի վրա ուսումնասիրել Ղարաբաղի

<sup>1</sup> Նշված ժամանակաշրջանի աղբյուրներում ուսումնասիրվող վարչաքաղաքական միավորը հիշատակվում է «Ղարաբաղ» ձևով, ինչը և հիմք է տվել աշխատության մեջ առավել շատ օգտագործել վերոհիշյալ տեղանունը:

վարչաքաղաքական և սոցիալ-տնտեսական կացությունը 1813-1867 թվականներն ընդգրկող ժամանակաշրջանում: Ուսումնասիրությամբ փորձել ենք լուսաբանել հետևյալ խնդիրները.

ա) վերլուծել Ղարաբաղի քաղաքական կյանքում Գյուլիստանի պայմանագրի ունեցած դերն ու հետևանքները.

բ) ընդգծել Ղարաբաղում 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ընթացքում արցախահայության կողմից ռուսական զորքերին ցուցաբերած օգնության նշանակությունը: Վերհանել Շուշիի պաշարման վերացումից հետո Ղարաբաղում ծավալված քաղաքական իրադարձությունները, ինչպես նաև Թուրք-մենչայի պայմանագրի արդյունքում Պարսկաստանի հպատակության տակ մնացած հայկական տարածքներից հայության մի փոքր հատվածի Ղարաբաղ տեղափոխման գործընթացը.

գ) հատկանշել 1822-1867 թթ. Ղարաբաղի տեղը ռուսական կայսրության վարչաքաղաքական բարեփոխումների նախագծերում և որոշումներում.

դ) ցույց տալ, որ Ղարաբաղի քաղաքական կացությունը զուգահեռվել է տնտեսական կյանքի հետընթացի և ձեռքբերումների հետ.

ե) վերլուծել Ղարաբաղում ձևավորված դասային հարաբերությունները՝ որպես մելիքական շրջանի, խանական և ռուսական տիրապետության ժամանակաշրջանների համաձույլ արդյունք.

զ) ուսումնասիրել ռուս աղանդավորների Ղարաբաղում վերաբնակեցնելու գործընթացը՝ իբրև Ռուսաստանի ժողովրդագրական քաղաքականության դրսևորում.

է) բացահայտել ռուսական տիրապետության ժամանակաշրջանում արցախահայության նկատմամբ վարված գաղութային քաղաքականությունը, հակաավատատիրական ու հակացարական ելույթների պատճառներն ու հետևանքները:

Ժամանակագրական առումով ուսումնասիրությունն ընդգրկում է 1813-1867 թթ.՝ Գյուլիստանի պայմանագրի կնքումով Ղարաբաղի՝ Ռուսաստանին միացումից մինչև ցարական կառավարության 1867 թ. դեկտեմբերի 9-ի հերթական վարչաքաղաքական բաժանումը և նրա հայտնվելը Ելիզավետպոլի նահանգի կազմում:

ժամանակաշրջանի նյութերի ուսումնասիրությունն ու վերլուծությունը պարբերացման անհրաժեշտություն է առաջադրել.

ա) Ցարական կառավարության կողմից իրականացված քաղաքականությունը Ղարաբաղում 1813-1822 թթ. ընդգրկող ժամանակաշրջանում հիմնականում ծանոթության և փորձարարական բնույթ էր կրում: Ժամանակաշրջանը բնութագրական է նաև Ղարաբաղի տնտեսական վերընձյուղման առումով:

բ) 1822-1840 թթ. ընդգրկած ժամանակաշրջանում ցարիզմն ինչպես անդրկովկասյան իր բոլոր տիրույթներում, այնպես էլ Ղարաբաղում կատարում է վարչաքաղաքական փոփոխություններ, որոնց նպատակը տեղում իշխանության կենտրոնացումը, տնտեսական յուրացումն ու վերածումն էր գաղութի: Սեփական ազգային հենարանն ստեղծելու նպատակով՝ ցարական կառավարությունը ռուս աղանդավորներ է վերաբնակեցնում Ղարաբաղում: Այս փուլում տեղական իշխողների և ցարական պաշտոնյաների կողմից Ղարաբաղի բնակչության նկատմամբ իրականացված կամայականություններն ու անօրինություններն իրենց գագաթնակետին են հասնում:

գ) 19-րդ դարի 40-60-ական թթ. ընդգրկող փուլը բնութագրվում է նոր վարչաքաղաքական փոփոխություններով, ինչի արդյունքում Ղարաբաղում հաստատվում է կառավարման նոր՝ քաղաքացիական կարգ, կարգավորվում է դատական համակարգը: Տնտեսական կյանքում կատարվում են որոշակի դրական տեղաշարժեր, կարգավորվում է հարկային համակարգը: Ժամանակաշրջանը բնորոշվում է հակաավատատիրական և հակացարական գյուղացիական ելույթներով:

Ղարաբաղի՝ 1813-1867 թթ. վարչաքաղաքական և սոցիալ-տնտեսական կացությունը պատմաքննական վերլուծության և ընդգրկուն ուսումնասիրության է ենթարկվում առաջին անգամ, ինչով էլ պայմանավորված է ուսումնասիրության գիտական նորույթը:

Ուսումնասիրությունը կարևորվում է գիտագործնական առումով: Աշխատությունն ունի աղբյուրագիտական հարուստ հենք: Այն հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանի



ուսումնասիրության գործում որոշակի ավանդ ներդնելու փորձ է և կարող է օգտագործվել մեր պատմական դաշնակցի, իսկ այժմ ռազմավարական գործընկերոջ՝ Ռուսաստանի հետ ունեցած հարաբերությունների պատմական ընթացքին ծանոթանալու համար:

Հատկանշական է այն իրողությունը, որ չուսումնասիրված աղբյուրագիտական փաստական հիմքն ուսումնասիրության կարոտ մեծասպառ տիրույթով՝ գերազանցում է հետագայում պատմագիտության մեջ թեմայի վերաբերյալ ընդհանուր բնույթի արձարծումներին: Ուսումնասիրության պատմաքննական վերլուծության համար աղբյուրագիտական հիմք են ծառայել ՀՀ ազգային արխիվի՝ Էջմիածնի Սուրբ Լուսավորչական Սինոդի, վարդապետ Խաչիկ Դադյանի ֆոնդերում պահվող վավերագրերը: Ղարաբաղի 1813-1867 թթ. քաղաքական և տնտեսական կյանքի մասին մեծարժեք վավերագրեր կան պահված նաև Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի Կաթողիկոսական դիվանում, Ներսես Աշտարակեցու, Ալեքսանդր Երիցյանի, Լազարյանների, Հարություն Աբրահամյանի ֆոնդերում: ԼՂԹՀ Թաղուտ գյուղի մասին վկայագիր նյութ կա պահված Հաղբուրթի շրջանի պատմաերկրագիտական թանգարանում:

Աղբյուրագիտական նշանակություն ունեն նաև 19-րդ դարի կեսերին ստեղծված մի քանի պատմագիտական երկեր, որտեղ արժեքավոր տեղեկություններ են պահպանվել մեր կողմից ուսումնասիրվող ժամանակաշրջանում Ղարաբաղի կացության մասին: Այդ երկերից է Երուսաղեմի միաբան Հակոբ սրկ. Զաքարյան Շուշեցու աշխատությունը<sup>2</sup>: Պատմագիտական երկը սկսվում է Արցախում Փանահի հաստատումից և Շուշիի բերդը վերակառուցելու

---

<sup>2</sup> Հակոբ սրկ. Զաքարյան Շուշեցու «Պատմութիւն գաւառին Արցախու» աշխատությունը՝ շարադրվել է 1853 թ., ձեռագրի տեսքով, 2734 և 10659 (ընդօրինակություն) թվահամարներով պահպանվում է Մատենադարանում: Ձեռագրի մեկ այլ օրինակ պահվում է Մատենադարանի արխիվի նախկին վարիչ Հ. Աբրահամյանի անձնական ֆոնդում, տե՛ս Մատենադարան, Հ. Աբրահամյանի արխիվ, թղթ. 98, վավ. 259: Ձեռագիրն ամբողջական, պատմաքննական վերլուծությամբ տե՛ս Մաղալեան Ա., Յ. Զաքարեանի «Պատմութիւն գաւառին Արցախու» աշխատութիւնը, «Հանդէս անսօրեայ», թիւ 1-12, Վիեննա, 2006, էջ 317-394:

ժամանակներից հասցվելով մինչև 19-րդ դարի 20-ական թթ. վերջը: Մեր ուսումնասիրության մեջ մասնավորապես օգտագործվել է «Յաղագս վիպասանութեան. յայտարարութիւն գործեալ իրաց հայկազն Մաղաթեան Յօհաննէս սպասաւարի ռուսաց» վերնագիրը կրող հատվածը, որտեղ հեղինակը պատկերավոր ոճով նկարագրել է 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ընթացքում Վ. Մաղաթովի քաջագործությունները, Շամխորի ճակատամարտը, Գանձակի գրավումը, և Վ. Մաղաթովի իրականացրած ղարադաշտյան արշավանքը: Ուշագրավ են նաև այն հատվածները, որոնցում նկարագրված են Մաղաթովի ծննդավայրի ավերման մանրամասները: Չնայած աշխատության վիպասանական շնչին և որոշակի չափազանցումներին՝ այն կարևոր սկզբնաղբյուր է Ղարաբաղի 18-րդ դարավերջի և 19-րդ դարասկզբի պատմության համար:

Իր աղբյուրագիտական արժեքով կարևորվում է Միրզա Յուսուֆ Ներսեսովի (Հովսեփ Ներսիսյանց) «Թարիխ-ե Սաֆի» երկը<sup>3</sup>: Հեղինակը 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ գտնվել է Արցախ ներխուժած պարսկական զորաբանակում և Ղարաբաղում տեղի ունեցած իրադարձությունները ներկայացրել է որպես ականատես: Ներսեսովի հաղորդած տեղեկություններն անկողմնակալ են, որոշ վկայություններ էլ լսելի էին միայն այս աղբյուրից:

Աղբյուրագիտական կարևոր նշանակություն ունի 19-րդ դարի 2-րդ կեսին ստեղծված Գտչավանքի վանահայր Առաքել վրդ. Կոստանյանցի երկհատոր «Պատմութիւն Արցախի» ձեռագիր աշխատությունը<sup>4</sup>: Ձեռագրի երկրորդ հատորը մանրամասն բացառիկ

---

<sup>3</sup> Մ. Յ. Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, թարգմանությունը բնագրից, ներածությունը և ծանոթագրությունները՝ Ք. Կոստիկյանի, Երևան, 2000: Մ. Յ. Ներսեսովը ծնվել է 1798 թ. Դիզակում: Մանուկ հասակում գերեզարկվել է պարսիկների կողմից և տարվել Պարսկաստան, 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրի կնքումից հետո վերադարձել է Ղարաբաղ և ստացել քրիստոնեական մկրտություն: Աշխատության պատվերը ստացել է 1854 թ. Հյուսիսային Դաղստանի կառավարիչ Գ. Օրբելիանու կողմից, տե՛ս Նույն տեղում, էջ 13-15:

<sup>4</sup> Մատենադարան, ձեռ. 7822, 7823:

տեղեկություններ է հաղորդում 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ Դիզակի Տող և Տումի գյուղերի կազմակերպած ինքնապաշտպանության մասին:

Ղարաբաղի 19-րդ դարի առաջին քառորդի քաղաքական և տնտեսական կյանքի մասին մեզ են հասել մի շարք աշխատություններ՝ ուղեգրությունների տեսքով: Ռուս-պարսկական պատերազմից հետո ամայացած Ղարաբաղը նկարագրող էջեր կան Հ. Հակոբյանի կողմից կազմված ուղեգրություններում<sup>5</sup>:

Գյուլիստանի պայմանագրից հետո Ղարաբաղում հաստատված անդորրի, տնտեսական վերընձյուղման և նախկին մելիքական տների դեռևս պահպանվող հեղինակավոր դիրքի մասին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Մեսրոպ Թաղիադյանը<sup>6</sup>: Վերջինս 1822-1823 թթ. գտնվել է նվիրակության համար Ղարաբաղում գտնվող Եփրեմ կաթողիկոսի պատվիրակության կազմում և մանրամասն գրի է առել ճանապարհորդության ամբողջ ընթացքը:

Ականատեսի վկայություններ են նաև Գ. Սրվանձտյանցի ուղեգրային խճանկար-պատումները: Նշանավոր բանահավաքը և հասարակական գործիչը 1861 թ. Մ. Խրիմյանի ուղեկիցների թվում լինում է Ղարաբաղում<sup>7</sup>: Թղթին հանձնված նրա ճամփորդական նոթերն անգնահատելի վկայություններ են 19-րդ դարի 60-ական թթ. Շուշի քաղաքի համայնապատկերն ստեղծելու գործում<sup>8</sup>:

Որպես ականատեսի վկայություններ՝ նշանակալի են նաև Լ. Սեգալի ճամփորդական նոթերը<sup>9</sup>: Աշխատությունը վերաբերում է 19-րդ դարի երկրորդ կեսին և վերջին: Սեգալը տեղեկություններ է հաղորդել Շուշի քաղաքի մասին, նրա ուշադրությունը գրավել էր քաղաքում ապրող բեկերի ցոփ ու շվայտ նիստուկացը:

<sup>5</sup> Հակոբյան Հ., Ուղեգրություններ, հ. 2, (1800-1820 թթ.), Երևան, 1934:

<sup>6</sup> Թաղիադեանց Մ., Ճանապարհորդություն ի Հայս, հատոր առաջին, Կալկաթա, 1847:

<sup>7</sup> Կոստանյան Է., Գարեգին Սրվանձտյանց, Երևան, 2008, էջ 23:

<sup>8</sup> Սրվանձտյանց Գ., Երկեր, հ. 2, Երևան, 1982:

<sup>9</sup> Сегаль Л., Елисаветпольская губерния, впечатления и воспоминания, Тифлис, 1902.

Աղբյուրագիտական մեծ արժեք ունեն 19-րդ դարի 50-ական թթ. Ղարաբաղ այցելած պարսկական գահաժառանգ Բեհմեն Միրզայի շքախմբում գտնվող ֆրանսուհի Շանտրի հուշագրությունները: Ճանապարհորդը հիացական գնահատականներ է տալիս հատկապես Շուշիի գորգագործությանը<sup>10</sup>:

Ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ փաստագրական, ազգագրական, տեղագրական նյութեր կան Ս. Ջալալյանցի, Ա. Բեկնազարյանցի, Ալ. Երիցյանի, Եր. Լալայանի, Մ. Բարխուդարյանի աշխատություններում<sup>11</sup>:

Թեմայի վերաբերյալ բավականին հարուստ տեղեկություններով աչքի են ընկնում 19-րդ դարին վերաբերող ռուսական աղբյուրները: Աղբյուրագիտական մեծ նշանակություն ունեն Ա. Երմոլովի Կովկասի կառավարչապետ լինելու տարիներին կատարած գրառումները՝ Ղարաբաղի խանական վարչակարգը վերացնելու և ռուսական վարչակարգ հաստատելու անհրաժեշտության մասին<sup>12</sup>: 1822 թ. խանական վարչակարգի վերացումից և ռուսական օրենսդրություն հաստատելուց հետո նրա կողմից Ղարաբաղ ուղարկված ցարական պաշտոնյաներ Պ. Ի. Մոզիլսկու և Պ. Ն. Երմոլովի կազմած Ղարաբաղի գավառի նկարագրությունը, որոշակի թերություններով հանդերձ, անգնահատելի սկզբնաղբյուր է 19-րդ դարի 20-ական թթ. Ղարաբաղի դիմապատկերը վերականգնելու, նրա հարկային համակարգին, տնտեսական հնարավորություններին ծանոթանալու առումով<sup>13</sup>:

19-րդ դարի 20-ական թթ. սկզբին է վերաբերում նաև Ս. Բրոնսկու աշխատությունը, որտեղ տեղեկություններ են հաղորդվում ուսումնասիրվող ժամանակաշրջանում Ղարաբաղում

<sup>10</sup> Madame B Chantre, A travers, L'armenie Russe, Paris, 1893.

<sup>11</sup> Ջալալեանց Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Մասն Բ, Տփլիս, 1858: Բեկնազարեանց Ա., Գաղտնիք Ղարաբաղի, Ս. Պետերբուրգ, 1888: Երիցեան Ալ., Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը եւ Կովկասի հայք XIX դարում, Կ. Ա., Թիֆլիս, 1894: Լալայան Ե., Վարանդա, Թիֆլիս, 1898: Բարխուտարեանց Մ., Աղուանից երկիր եւ դրացիք, Արցախ, Երևան, 1999:

<sup>12</sup> Записки Алексея Петровича Ермолова с приложением, ч. II, 1816-1827 гг., Москва, 1868.

<sup>13</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 241, վավ. 206:

շրջանառվող դրամների մասին<sup>14</sup>: 19-րդ 30-ական թթ. վերաբերող կարևորագույն աղբյուր է «Обозрение российских владений за Кавказом» աշխատությունը, որի 3-րդ հատորի բավականաչափ ծավալուն մի հատված վերաբերում է Ղարաբաղի տնտեսական կյանքին<sup>15</sup>: Անդրկովկասի ռուսահպատակ վարչաքաղաքական միավորների մասին տեղեկություններ է հաղորդում Օ. Եվեցկին<sup>16</sup>: Հեղինակը Ղարաբաղի գավառը դիտարկել է, այսպես կոչված, «մահմեդական պրովինցիաների» կազմում՝ տվյալներ հաղորդելով տեղական ինքնակառավարման մարմինների, տնտեսական կյանքի մասին:

Ռուսահպատակ տիրույթներում գաղութային և ազգային քաղաքականության ծավալման անհրաժեշտությանն են անդրադարձել մի շարք ռուս հեղինակներ Ն. Շավրովը, Կ. Բորոգդինը, Ի. Իվանովը և Զ. Ավալովը<sup>17</sup>: Այս հեղինակները Անդրկովկասում ռուսական կայսրության ամուր հենարանը ստեղծելու ուղիներից մեկն էին համարում ժողովրդագրական քաղաքականությունը: Անդրկովկասում, այդ թվում՝ Ղարաբաղում այն արտահայտվեց ռուս աղանդավորությանը վերաբնակեցնելու գործընթացով:

Ղարաբաղի տնտեսական կյանքի մասին հարուստ տեղեկություններ կարելի է քաղել ցարական կառավարության կողմից Կովկասի մասին հրատարակված ժողովածուներից<sup>18</sup>: Ղարաբաղի

<sup>14</sup> Броневский С., Новейшие географические и исторические известия о Кавказе, ч. 2, Москва, 1823.

<sup>15</sup> Обозрение российских владений за Кавказом, ч. III, СПб, 1836.

<sup>16</sup> Евецкий О., Статистическое описание Закавказского края, ч. II, СПб, 1835.

<sup>17</sup> Шавров Н., Русская колонизация на Кавказе, СПб, 1883. Бороздин К., Переселенцы в Закавказье, “Русский вестник”, СПб, 1891. Иванович Ив., Колонизация Кавказа, “Вестник Европы”, СПб, 1900. Авалов З., Национальный вопрос на Кавказе, “Русская мысль”, СПб, 1911.

<sup>18</sup> Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края, (այսուհետև՝ СМІЭБГКЗК), т. I, ч. III, Тифлис, 1887, т. II, Тифлис, 1887. Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края (այսուհետև՝ МІЭБГКЗК), т. VI, ч. II, Тифлис, 1887, т. IV, ч. I, Тифлис, 1886. Сборник материалов для описания местностей и племен Кавказа (այսուհետև՝ СМОМПК), вып. VI, от. II, Тифлис, 1888, вып. XI, Тифлис, 1891, вып. XIII, отд. I, Тифлис, 1892.

վարչաքաղաքական և տնտեսական կացության մասին արժեքավոր աղբյուրներ են Կովկասի մասին լույս տեսած՝ Կովկասի փոխարքայի<sup>19</sup> և Կովկասյան Գյուղատնտեսական ընկերության հաշվետվությունները<sup>20</sup>:

Բացի վերը նշված ժողովածուներից, հիմնահարցի մասին աղբյուրագիտական մեծ նյութ են պարունակում մի շարք փաստաթղթերի ժողովածուներ, այդ թվում՝ 1833-1838 թթ. Մոսկվայի Լազարյան ճեմարանի հրատարակած եռահատոր ժողովածուն, որի երկրորդ հատորի մի շարք փաստաթղթեր օգտագործվել են մեր կողմից<sup>21</sup>: Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Ղարաբաղի քաղաքական և տնտեսական կյանքի մասին աղբյուրագիտական հարուստ հենք են տրամադրում 1868-1888 թթ. Թիֆլիսում Կովկասյան հնագրական հանձնաժողովի հրապարակած «Ակտերի» հատորները<sup>22</sup>:

Ղարաբաղի մասին փաստաթղթեր են տպագրվել նաև խորհրդային և հետխորհրդային շրջանում լույս տեսած փաստաթղթերի և վավերագրերի ժողովածուներում<sup>23</sup>: Ժողովածուներում ամփոփված արժեքավոր նյութերը մեծապես օգտակար են եղել բացահայտելու Ղարաբաղի քաղաքական և սոցիալ-տնտեսական

---

<sup>19</sup> Отчет по главному управлению наместника Кавказского за первое десятилетие управления Кавказским и Закавказским краем е. и. в. в. князем Михаилом Николаевичем с декабря 1862- 6 декабря 1872, Тифлис, 1873.

<sup>20</sup> Краткий очерк 25-ти летней деятельности Кавказского общества сельского хозяйства, Тифлис, 1875.

<sup>21</sup> Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа, ч. II, Москва, 1838.

<sup>22</sup> Акты, собранные Кавказской Археографической Комиссией (այսուհետև՝ АКАК), т. II-XI, Тифлис, 1868-1888.

<sup>23</sup> Присоединение Восточной Армении к России, сборник документов, т. II, Ереван, 1978. Документы и материалы по истории армянского народа, социально-политическое и экономическое положение Восточной Армении после присоединения к России (1830-1870), сборник документов, под ред. Н. А. Тавакаляна, Ереван, 1993. Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության, գիրք Թ, Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813-1933թթ.), Երևան, 2000: Нагорный Карабах в международном праве и мировой политике, документы и комментарий, т. I, Москва, 2008.

կյանքի մանրամասները՝ Գյուլիստանի պայմանագրին հետևած պատմաշրջանում:

Ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ բազմաթիվ հոդվածներ են լույս տեսել ժամանակի մամուլում<sup>24</sup> և պարբերականներում<sup>25</sup>: Մամուլից քաղված հոդվածներում շուշեցի հոդվածագիրները հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում արցախցու հերոսական պատմության, նրա առջև ծառայած խնդիրների և անելիքների մասին: Արժեքավոր տեղեկություններ են հաղորդվում նաև 19-րդ դարում Թիֆլիսում տպագրվող «Кавказ», «Кавказский сборник», մասնավորապես «Кавказский календарь»<sup>26</sup> պարբերականներում: Հատկանշական են «Կովկասյան տարեցույցի» (1845-1867 թթ.) էջերում տեղ գտած տեղեկությունները Ղարաբաղի վարչական բաժանումների, տեղական ինքնակառավարման, ինչպես նաև տնտեսական կյանքի մասին:

Արխիվային վավերագրերի, տպագիր սկզբնաղբյուրների, վիճակագրական տվյալների, պարբերական մամուլի ուսումնասիրությունից բացի, թեմայի լուսաբանման համար կարևոր են տարբեր ժամանակներում հրատարակված պատմագիտական աշխատությունները: 20-րդ դարասկզբին հրատարակվում են մի շարք աշխատություններ, որտեղ Արևելյան Հայաստանի պատմության համատեքստում լուսաբանվել են նաև Ղարաբաղի քաղաքական և տնտեսական կյանքին վերաբերող որոշ հարցեր: Այս առումով հատկանշական է Դ. Անանունի աշխատությունը, որտեղ հեղինակը քննության է առնում Ղարաբաղի խանական

<sup>24</sup> «Մեղու Հայաստանի», թիվ 41, 1858, թիվ 1, թիվ 28, 1859, թիվ 42, թիվ 316, 1860, թիվ 5, 1861, թիվ 40, թիվ 50, 1873, (Թիֆլիս): «Մշակ», թիվ 23, թիվ 25, թիվ 48, 1874, թիվ 94, 1888, թիվ 39, թիվ 99, 1890 (Թիֆլիս):

<sup>25</sup> Բաստամեանց Ե., Բարոն Օ. Հակոտիաուզենի ճանապարհորդութենից մի գլուխ, «Կռունկ հայոց աշխարհի», թիւ Բ, փետրուար, 1862: Պլուզեան Մ., Արցախի նահանգի Ջրաբերդ գաւառը, «Արարատ», թիւ Ը, 1871: Տէր-Յովհաննիսեանց Գ., Բաղտասար մետրապօլիտ Հասան-Ջալալեանցի համառօտ կենսագրութիւն, «Փորձ», թիւ 5, Տիֆլիս, 1880: Մուսայելեան Հ., Ղարաբաղի նուաճման հարիւրամեակը (1813 թ. 12 հոկտ.-1913 թ. 12 հոկտ.), «Արարատ», N 1-12, թիվ 3, մարտ, 1914:

<sup>26</sup> «Կովկասյան տարեցույց»:

և հետխանական շրջանի տնտեսական կյանքը, հարկային համակարգը, դասային հարաբերությունները<sup>27</sup>:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանի մասին փաստագրական հարուստ նյութ է պարունակում Լեոյի «Պատմութիւն Ղարաբաղի Հայոց Թեմական հոգեւոր դպրոցի 1838-1913» աշխատությունը<sup>28</sup>: Իր մեկ այլ՝ «Սահմանավեճեր» փոքրածավալ աշխատության մեջ նշանավոր պատմաբանը մեղադրում է ցարիզմին՝ Ղարաբաղը մահմեդական բեկերին գերի դարձնելու համար<sup>29</sup>: Ցարական կառավարության կողմից Անդրկովկասում իրականացված վարչաքաղաքական բաժանումներին է անդրադարձել Ա. Շահխաթունյանը<sup>30</sup>: Հեղինակն այդ բաժանումների հիմքում տեսնում է սոսկ տնտեսական և աշխարհագրական շարժառիթներ, որոնց կողքին էթնիկական գործոնը երրորդական կարգում էր հայտնվել:

Խորհրդային շրջանի հայ պատմագրության մեջ խնդրո առարկա թեմային, հասկանալի պատճառներով, հպանցիկ կերպով է անդրադարձ կատարվել: Ղարաբաղի 19-րդ դարի առաջին կեսի պատմությանն իրենց աշխատություններում սակավաթիվ էջեր են նվիրել Վ. Պարսամյանը, Մ. Ադոնցը, Զ. Գրիգորյանը, Ս. Մարկոսյանը, Ծ. Աղայանը, Վ. Ռշտունին, Կ. Հովհաննիսյանը, Վ. Դիլոյանը<sup>31</sup> և ուրիշներ: Նշված հեղինակները Ղարաբաղի՝ ուսում-

<sup>27</sup> Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում (1800-1870), հ. I, Բաքու, 1916:

<sup>28</sup> Լեօ, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց Թեմական հոգեւոր դպրոցի 1838-1913, Թիֆլիզ, 1914:

<sup>29</sup> Լեօ, Սահմանավեճեր, Աթէնք, 1990:

<sup>30</sup> Шахатунян А., Административный передел Закавказского края, Тифлис, 1918.

<sup>31</sup> Պարսամյան Վ., Ցարիզմի գաղութային քաղաքականությունը Հայաստանում, I մաս, Երևան, 1940: Адонц М., Экономическое развитие Восточной Армении в XIX веке, Ереван, 1957. Գրիգորյան Զ., Ռուս և հայ ժողովուրդների համագործակցությունը XIX դարի սկզբին, Երևան, 1957: Մարկոսյան Ս., Ագրարային հարաբերությունները Արարատյան երկրում XVII-XVIII դդ. և XIX դարի առաջին քառորդում, Երևան, 1959: Ռշտունի Վ., Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության (1828-1917), մաս Ա, Երևան, 1960: Агаян Ц., Вековая дружба народов Закавказья, ч. первая, Ереван, 1970. Աղայան Ծ., Ռուսաստանի դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում, Երևան, 1981: Հովհաննիսյան Կ., Էջեր Արևելյան Հայաստանի ազատագրական շարժման պատմությունից, Երևան, 1981:



Նասիրվող ժամանակաշրջանին անդրադարձել են Հայաստանի արևելյան հատվածի քաղաքական և սոցիալ-տնտեսական կացության պատմության համատեքստում:

Ռուսական կայսրության կողմից Անդրկովկասում վարած քաղաքականությանն ու քննության առարկա հիմնախնդրին այս կամ այն կերպ առնչվել են Լ. Պախոմովը, Մ. Ռոժկովան, Ս. Շոստակովիչը, Լ. Սեմյոնովը, Ա. Կավտարաձեն և Ն. Երոշկինը<sup>32</sup>: Այս աշխատությունները մեծապես օգտակար են եղել բացահայտելու և ըստ այդմ էլ գնահատելու ցարական կենտրոնական իշխանության կողմից տեղական ինքնակառավարման համակարգի կազմակերպումը, վերահսկողության լծակների ուժեղացումը, տնտեսական քաղաքականությունը, ինչպես նաև իշխանությունների վերաբերմունքը հպատակ տիրոյթների, այդ թվում՝ Ղարաբաղի նկատմամբ:

Ղարաբաղի տնտեսական և քաղաքական կացության մասին տեղեկություններ են հաղորդվում Ա. Սումբատ-զադեի, Դ. Իսմայիլ-զադեի, Ի. Ալիևի, Ի. Մամադովի և Տ. Մուսաևի, Զ. Հաջիևայի աշխատություններում<sup>33</sup>: Այս հեղինակների աշխատությունների ընդհանուր գնահատականը մեկն է. Ղարաբաղի պատմությունը խեղաթյուրված է և այն ներկայացված է որպես «ադրբեջանական

---

Դիլոյան Վ., Արևելյան Հայաստանը 19-րդ դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1989:

<sup>32</sup> Пахомов Е., О сословно-поземельном вопросе в Азербайджане, Баку, 1926. Рожкова М., Экономическая политика царского правительства на Среднем Востоке во второй четверти XIX в. и русская буржуазия, Москва, 1949. Шостакович С., Дипломатическая деятельность А. С. Грибоедова, Москва, 1960. Семенов Л., Россия и международные отношения на Среднем Востоке, Ленинград, 1963. Кавтарадзе А., Генерал А. П. Ермолов, Тула, 1977. Ерошкин Н., История государственных учреждений дореволюционной России, Москва, 1983.

<sup>33</sup> Сумбат-заде А., Сельское хозяйство Азербайджана в XIX в., Баку, 1958, Промышленность Азербайджана в XIX в., Баку, 1964. Исмаил-заде Д., Русское крестьянство в Закавказье, 30-е годы XIX-начало XX в., Москва, 1982, Население городов Закавказского края в XIX-начале XX в., Москва, 1991. Алиев И., Нагорный Карабах: История. Факты. События, Баку, 1989. Маммадов И., Мусаев Т., Армяно-азербайджанский конфликт: история, право, посредничество, Тула, 2006. Гаджиева З., Гарабагское ханство: социально-экономические отношения и государственное устройство, Баку, 2008.

տարածք»: Խեղաթյուրման առումով իրենց հայրենակիցներին առանձնապես գերազանցում են Ի. Ալիևը, Զ. Հաջիևան, Ի. Մամադովը և Տ. Մուսաևը: Նրանք միաբերան տարփողում են, թե իբր հայերը Ղարաբաղում հայտնվել են 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրի ստորագրումից հետո՝ պարսկական հպատակության տակ մնացած հայերի գաղթի արդյունքում: Իրենց տեսակետին առավել համոզիչ տեսք տալու համար՝ տեղափոխված ընդամենը 100 ընտանիքների թիվը, միտումնավորությամբ հասցվում է 130-170 հազարի: Իր հերթին Զ. Հաջիևան կասկածի տակ է դնում 1823 թ. Պ. Երնոլովի և Պ. Մոզիլևսկու կողմից Ղարաբաղում անցկացված բնակչության հաշվառման արդյունքները, կարծիք հայտնելով, որ քանի որ ցուցակագրությունն իրականացվել է բանավոր վկայությունների հիմքի վրա, հետևաբար հիմնականում ցուցումներ տվող, այսպես կոչված, «ադրբեջանցի» բեկերն ու նայիրները հարկերից խուսափելու նպատակով թաքցրել են իրենց հավատակիցների անունները, այլապես, Հաջիևայի կարծիքով՝ «ադրբեջանցի» բնակչության թիվը կկազմեր ոչ թե 80%, (գոյություն չունեցող ցուցանիշ՝ Ն. Բ.) այլ զգալիորեն ավելի շատ: Որոշակի տարբերվող բնույթ ունի Ա. Սումբատ-գադեի աշխատությունը: Նա ևս Ղարաբաղի գավառն ուսումնասիրել է, այսպես կոչված, «Ադրբեջան» վարչաքաղաքական միավորի ներսում, բայց ի տարբերություն վերոնշյալների՝ չի կեղծել գավառի տնտեսական կյանքին վերաբերող արխիվային տվյալները<sup>34</sup>:

Հետխորհրդային շրջանում Ղարաբաղի պատմության չգրված էջերը լրացնելու հետզհետե գերակայող միտում է նկատվում: Նորահրատարակ աշխատություններում Ղարաբաղի պատմությունը շրջանցելու անհրաժեշտությունն այլևս վերանում է: Ուսումնասիրվող թեմային իրենց հետաքրքրած խնդիրների շրջանակներում անդրադարձել են Կ. Ղահրամանյանը, Պ. Մուրադյանը, Ա. Վիրաբյանը, Պ. Սեյրանյանը, Ս. Կարապետյանը, Ա. Քյուրքչյանը,

<sup>34</sup> Հատկանշական է, որ ի տարբերություն Արցախի քաղաքական կյանքի մասին խեղաթյուրված տեղեկությունների՝ տնտեսական կյանքին վերաբերող տվյալները ադրբեջանական պատմագրության էջերում համեմատաբար հավաստի են:

Ա. Ղուլյանը, Գ. Առաքելյանը, Վ. Թաթիկյանը, Եվ. Մանուկյանը, Լ. Մկրտումյանը, Ա. Մկրտչյանը<sup>35</sup>, իսկ ռուս հեղինակների շարքում՝ Մ. Մելիտյուխովը, Ս. Պուշկարյովը<sup>36</sup> և ուրիշներ:

Խնդրո առարկա թեմային մեծապես առնչվում է Ա. Մաղալյանի ուսումնասիրությունը<sup>37</sup>: Գիտնականն արխիվային նորահայտ նյութերի, ձեռագրերի, վիմագրերի և պատմագիտական գրականության հիման վրա ներկայացրել է Արցախի մելիքությունների ավելի քան երկդարյա պատմությունը, մելիքական տների տոհմաճառերը: Մեր ուսումնասիրության համար հատկանշական են աշխատության այն հատվածները, որոնք վերաբերում են մելիքությունների պատմության՝ 19-րդ դարի առաջին կեսն ընդգրկող ժամանակաշրջանում նախկին հզոր մելիքական տների շուրջ պտտվող քաղաքական իրադարձություններին: Ուսումնասիրությունը գիտական լուրջ ներդրում է պատմագիտության ասպարեզում:

19-րդ դարում ցարիզմի կողմից Անդրկովկասում և Արևելյան Հայաստանում իրականացված վարչատնտեսական քաղաքականության համատեքստում Ղարաբաղն անմասն չի մնացել

---

<sup>35</sup> Ղահրամանյան Կ., Հյուսիսային Արցախ, Երևան, 1990: Мурадян П., История-память поколений, Ереван, 1990. Вирабян А., Знаменитые арцахцы, кн. первая, Ереван, 1992. Сейранян П., Карабах и Россия: страницы истории, Москва, 1997. Կարապետյան Ա., Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Երևան, 1999: Քյուրքչյան Ա., 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմը, Երևան, 2000: Ղուլյան Ա., Արցախի և Սյունիքի մելիքական ապարանքները, Երևան, 2001: Առաքելյան Գ., Գանձակ-Ելիզավետպոլի (մարզ, նահանգ) բնակչությունը XIX դարում, Երևան, 2003: Թաթիկյան Վ., Արցախի տոհմագորգերը, Երևան, 2004: Մանուկյան Եվ., Հայ ժողովրդի ազգահավաքման գործընթացը Արևելյան Հայաստանում 19-րդ դարի 20-ական թթ. վերջերին և 30-ական թթ. սկզբներին, Երևան, 2005: Մկրտումյան Լ., Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսությունը XVII-XIX դդ., Երևան, 2006: Мкртчян А., Общественный быт Нагорного Карабаха (вторая половина XIX-начало XX вв.), Ереван, 2010.

<sup>36</sup> Мельтюхов М., Тер-Саркисянц А., Трапезников Г., Исторические фальсификации с политической подоплекой, Москва, 1999. Пушкарев С., Россия 1801-1917: Власть и общество, Москва, 2001.

<sup>37</sup> Մաղալյան Ա., Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII-XIX դդ., Երևան, 2007:

Վ. Թունյանի աշխատություններում<sup>38</sup>: Հեղինակը, հիմք ընդունելով ռուսական և վրացական արխիվները, ներկայացրել է ցարական Ռուսաստանի վարած գաղութային քաղաքականության էությունը՝ ինչպես ռուսահպատակ անդրկովկասյան տարածքներում, այնպես էլ Ղարաբաղում: Մեր ուսումնասիրության համար էականորեն կարևորվել է Ղարաբաղի նկատմամբ ցարիզմի վարած վարչական վերափոխումների քաղաքականությունը:

Ղարաբաղի քաղաքական և տնտեսական կյանքին անդրադարձել է Վ. Բալայանը<sup>39</sup>: Հեղինակի կողմից լուսաբանվել են Ղարաբաղի նկատմամբ ցարիզմի վարած գաղութային քաղաքականության դրսևորումներն ու դրանց հետևանքները:

Բացի վերոնշյալ պատմագիտական աշխատություններից, Ղարաբաղի տնտեսական կյանքի կարևորագույն մի ոլորտի՝ արհեստների լուսաբանման տեսանկյունից մեզ օգտակար են եղել հետազոտող Հր. Հարությունյանի՝ Շուշիի գերեզմանատների 18-19-րդ դարերի տապանաքարերի արձանագրությունների վերաբերյալ աշխատությունները<sup>40</sup>, որոնց շնորհիվ հնարավոր է դարձել վերհանել ինչպես արհեստի որոշ ճյուղեր, այնպես էլ դրանցով զբաղվող արհեստավորների ինքնությունը: Որոշ դեպքերում բա-

---

<sup>38</sup> Тунян В., Восточная Армения в составе России, Ереван, 1989, Русская политика в Армении: мифы и реалии (конец XVIII-начало XX вв.), Ереван, 1998, Карабахский конфликт: историко-геополитический аспект, Ереван, 1999, «Положение» армянской церкви 1836-1875, Ереван, 2001, Административно-экономическая политика самодержавия России в Закавказье 1-й пол. XIX в., Ереван, 2003, Церковная политика самодержавия в Закавказье в первой половине XIX в., Ереван, 2005, Политика самодержавия России в Закавказье XIX-нач. XX вв. Часть первая, 1800-1826 гг., Ереван, 2006, Политика самодержавия России в Закавказье XIX-нач. XX вв. Часть вторая, 1826-1836 гг., Ереван, 2006, Политика самодержавия России в Закавказье XIX-нач. XX вв. Часть третья, 1836-1844 гг., Ереван, 2006, Политика самодержавия России в Закавказье XIX-нач. XX вв. Часть четвертая, 1845-1876 гг., Ереван, 2007.

<sup>39</sup> Բալայան Վ., Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, Երևան, 2002:

<sup>40</sup> Հարությունյան Հր., Շուշի (սորահայտ նյութեր քաղաքի պատմության մասին), Ստեփանակերտ, 2002, Շուշիի տապանաքարերի արձանագրությունները, Երևան, 2008, Шуши: нововыявленные исторические надписи, Степанакерт, 2008. Շուշի. քարեղեն անխոս վկաներ, Ստեփանակերտ, 2013:

ցահայտվել են արհեստի առանձին ճյուղերով մասնագիտացած արհեստավորական գերդաստաններ:

Վերը ներկայացված աղբյուրագիտական և պատմագիտական հենքի առկայությունը հնարավորություն է տվել լուսաբանելու քննության առարկա խնդիրը, որը համալրել է պատմագրության մեջ որոշ իմաստով բաց մնացած էջերը:

Աշխատության հիմքում ընկած է մեր ատենախոսությունը:

Աշխատությունը հրատարակման է պատրաստվել հաշվի առնելով ատենախոսության պաշտպանության ընթացքում հնչած առաջարկությունները, ինչի առիթով շնորհակալություն ենք հայտնում ԱրՊՀ «Պատմության» ամբիոնին, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի «Նոր պատմության» բաժնին, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ «Հայոց պատմության» ամբիոնին:

**ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ  
ՂԱՐԱԲԱՂՈՒՄ 1813-1867 ԹԹ.**

**Ա) ԳՅՈՒԼԻՍՏԱՆԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ**

19-րդ դարի սկիզբը Ղարաբաղի քաղաքական կյանքում նշանավորվեց արմատական փոփոխություններով: 1804-1813 թթ. ռուս-պարսկական պատերազմի ընթացքում Ղարաբաղի քաղաքական պատմության մեջ տեղի է ունենում աննախադեպ իրադարձություն. 1805 թ. մայիսի 14-ին Քյուրակչայ (Կուրակ) գետի ափին կնքված պայմանագրով Ղարաբաղը միացվում է Ռուսաստանին: Ղարաբաղի իբրահիմ խանը ստորագրված դաշնագրով հրաժարվում է պարսկական տիրապետությունից և ընդունում Ռուսաստանի մշտնջենական հովանավորությունը<sup>41</sup>:

Պարսկաստանը չի ճանաչում Քյուրակչայի դաշնագիրը, և Ռուսաստանի դեմ պայքարը Ղարաբաղի ու անդրկովկասյան տարածքների համար շարունակվում է: Ղարաբաղի տարածքը թատերաբեմ էր ռազմական գործողությունների համար: Ղարաբաղի մելիքներից շատերն իրենց զորաջոկատներով հանդես էին գալիս ռուսական զորքերի կազմում: Պարսկական զորքերի դեմ մղված մարտերում աչքի են ընկնում Վարանդայի տեր Մելիք Զումշուդ Մելիք-Շահնազարյանի, Գյուլիստանի տեր Մելիք-Աբովի որդու՝

---

<sup>41</sup> Утверждение русского владычества на Кавказе, т. I, под ред. ген.-май. В. Потто, Тифлис, 1901, с. 192, Լեո, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1984, էջ 248-251, Сейранян П., Карабах и Россия: страницы истории, Москва, 1997, с. 104, Տե՛ս նաև մեր հոդվածը՝ Օհանջանյան Ն. (Նույնն է՝ Բաղդասարյան Ն.), Քաղաքական կացությունը Ղարաբաղում 1805-1826 թթ., ԱրԴՀ «Գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2008, հ. 2, էջ 66-70:

Ռուստոմ-բեկ Մելիք-Բեգլարյանի և Գյուլյաթաղի Մելիք-Ռովշան Մելիք-Ալլահվերդյանի հեծելախմբերը<sup>42</sup>:

Ի հակադրություն Ղարաբաղի հայության ռուսական բանակի հաղթանակներում ունեցած շոշափելի ներդրումի՝ մահմեդական բնակչությունը, ծածուկ խրախուսվելով Ղարաբաղի Իբրահիմ խանի կողմից, բոլոր հնարավոր միջոցներով օգնում էր պարսկական կողմին: Իբրահիմ խանը Ռուսաստանի նկատմամբ ցուցաբերած իր անհավատարմության պատճառով սպանվում է: Նրան հաջորդում է որդին՝ Մեհտի Ղուլի խանը, որը, բարդ քաղաքական իրադրության մեջ կողմնորոշվելով, կարողանում է պահպանել նախկին խանական իրավունքները<sup>43</sup>: Ցարական արքունիքն էլ իր հերթին հաստատում է Ղարաբաղի նկատմամբ Մեհտի Ղուլի խանի ավատական իրավունքները: Ղարաբաղի մելիքները չեն ճանաչում այս իրողության օրինականությունը և մշակելով Արցախի ինքնավարության ծրագիր՝ 1806 թ. ներկայացնում են Մինաս Լազարևին: Մելիքներն առաջարկում էին Ղարաբաղի լեռնային մասը համարել Ռուսաստանի գերիշխանության տակ գտնվող տարածք, այսպես կոչված «Արցախի օկրուգ», որը պետք է ունենար ինքնավար կարգավիճակ: Ծրագրի համաձայն՝ մելիքները պարտավորվում էին ցարին վճարել Ռուսաստանին տրվող հարկի կեսը՝ 4000 չետով. ցորեն և 4000 ոսկի: Նախատեսվում էր բնակչության աճին զուգահեռ մեծացնել հարկերի թիվը: Ծրագիրն այդպես էլ մնաց թղթի վրա՝ պայմանավորված որոշ պատճառներով. ցարական պաշտոնավարող շրջաններում վախ կար, որ մելիքները կարող են դնել հայկական անկախ պետականության հիմքերը<sup>44</sup>, ռուսական կայսերական քաղաքականությունը միանգամայն անհաղորդ էր նման ծրագրերի նկատմամբ, ուստի միամտություն կլիներ սպասել դրա իրագործմանը:

<sup>42</sup> Մաղալյան Ա., Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII-XIX դդ., Երևան, 2007, էջ 51:

<sup>43</sup> Тунян В., Русская политика в Армении: мифы и реалии (конец XVIII-начало XX вв.), Ереван, 1998, с. 7.

<sup>44</sup> Նույն տեղում, էջ 8:

1813 թ. հոկտեմբերի 12-ին Ղարաբաղի Գյուլիստան բերդավանում կնքված ռուս-պարսկական պայմանագիրը նշանավորում է ռուսական զենքի փայլուն հաղթանակը<sup>45</sup>: Ռուսաստանի կողմից պայմանագիրը ստորագրում է Վրաստանում և Կովկասում գտնվող ռուսական զորքերի գլխավոր հրամանատար գեներալ-լեյտենանտ Ն. Ռոտիշչևը, Պարսկաստանի կողմից՝ Միրզա Աբդուլ Հասան խանը: Պայմանագիրը կնքած կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում էր հավատարիմ մնալ «Status quo ad presentem» սկզբունքին, «այսինքն՝ որպեսզի յուրաքանչյուր կողմի տիրապետության տակ մնան այն հողերը, խանություններն ու տիրակալությունները, որոնք այդ պահին գտնվում են նրանց կատարյալ իշխանության ներքո»: Պայմանագրի 3-րդ հոդվածով. «Նորին շահական մեծությունը իբրև ապացույց Նորին Մեծության Ամենայն ռուսաց կայսեր նկատմամբ իր տաճած անկեղծ բարեկամության, սրանով հանդիսավոր կերպով ինչպես իր կողմից, այնպես էլ Պարսկական գահի բարձր ժառանգների կողմից, որպես Ռուսաստանյան կայսրությանը պատկանող սեփականություն է ճանաչում Ղարաբաղի և Գյանջայի խանությունները, որոնք ներկայումս վերածվել են Ելիզավետպոլյան անունը կրող նահանգի, ինչպես նաև Շեքիի, Շիրվանի, Դերբենտի, Ղուբայի, Բաքվի, և Թալիշի խանությունները սույն խանության այն հողերի հետ, որոնք այժմ գտնվում են Ռուսաստանյան կայսրության իշխանության տակ:

Ընդ որում, ամբողջ Դաղստանը, Վրաստանը Շորագյալի նահանգով, Իմերեթիան, Գուրիան, Մինգրեթիան և Աբխազիան, հավասարապես այն տիրույթներն ու հողերը, որոնք գտնվում են այժմ որոշված սահմանի և կովկասյան գծի միջև՝ այս վերջինին և Կասպից ծովին հարող երկրներով ու ժողովուրդներով»<sup>46</sup>:

<sup>45</sup> Մարտիրոսյան Հ., Ինչ է արել Կովկասի համար Ռուսաստանը Ռոմանովների գահակալության ներքո, Թիֆլիս, 1913, էջ 6, Ղահրամանյան Կ., Հյուսիսային Արցախ. գոյության պայքար, գիրք Ա, Երևան, 1993, էջ 63-64, Վալերազրեր Հայ եկեղեցու պատմության, գիրք Թ, Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813-1933 թթ.), Երևան, 2000, էջ 34-35, Пушкарев С., Россия 1801-1917: Власть и общество, Москва, 2001, с. 190, Բալայան Վ., Արցախի պատմություն, Երևան, 2002, էջ 204, Энциклопедия Арцах-Карабах, Москва, 2005, с. 137.

<sup>46</sup> Ագալոյան Հ., Բախտորոշ պայմանագրեր, Երևան, 2002, էջ 26-31:



Ղարաբաղի քաղաքական պատմության մեջ պայմանագրի հետևանքների ընդհանրականը հետևյալն է. Ղարաբաղի ժողովուրդը ստացավ խաղաղ գոյատևման հնարավորություն: Հետամնաց պարսկական տիրապետությունը փոխարինվեց համեմատաբար զարգացած ռուսական տիրապետությամբ: Ռուսաստանը, հանձին Ղարաբաղի, ձեռք էր բերել հումքային պաշարներով հարուստ երկրամաս, որտեղ ապրում էր ստեղծագործ ու աշխատասեր մի ժողովուրդ, ինչպես նաև ապրանքների վաճառահանման նոր շուկա: Գյուլիստանի պայմանագրին հաջորդած պատմական ժամանակաշրջանը Ղարաբաղի համար նշանավորվեց համեմատաբար երկարատև խաղաղությամբ: 1804-1813 թթ. ռուս-պարսկական պատերազմի հետևանքով առաջացած սովին, արտագաղթին, տնտեսական կյանքի անկմանը հաջորդում է Ղարաբաղի շենացման ժամանակաշրջանը: Որոշակիորեն պաշտպանված լինելով ռուսական զենքով և օրենսդրությամբ՝ երկրամասը վերածվել էր հանգիստ և ապահով անկյունի:

Սակայն ընդհանրական հետևանքներից զատ Գյուլիստանի պայմանագրի հետևանքների մանրամասն և օրյեկտիվ քննությունը թույլ է տալիս պայմանագիրը դիտարկել իր ունեցած դրական, բացասական կամ հանգուցալուծում չստացած հետևանքներով և պատմական փաստերի վերլուծության արդյունքում տալ պայմանագրի գնահատականը:

ա) Պայմանագրի հետևանքով ստեղծված համեմատաբար բնականոն կենսապայմանները բավարար հիմք հանդիսացան, որպեսզի ծավալվեր պատերազմի հետևանքով հեռացած Ղարաբաղի բնակչության հայրենադարձություն<sup>47</sup>: Քաղաքական անկայուն

<sup>47</sup> Ստորև քննարկվող հարցի մասին առավել մանրամասն տե՛ս մեր հոդվածը՝ Багдасарян Н., Ованнисян Л., Демографические передвижения в Нагорном Карабахе после заключения Гюлистанского и Туркменчайского договоров: возвращения на родину, миграция армян Персии, сборник научных статей, Центр системных региональных исследований и прогнозирования ИППК ЮФУ и ИСПИ РАН, УММ, Южнороссийское обозрение, Вып. 77, Москва-Ростов-на-Дону, 2013, с. 122-135. Բաղդասարյան Ն., Հովհաննիսյան Լ., Ժողովրդագրական տեղաշարժերը Լեռնային Ղարաբաղում Գյուլիստանի և Թուրքմենչայի պայմանագրերի կնքումից հետո. հայրենադարձություն, պարսկահայերի ներգաղթ, ադրբեջանական շահարկումներ, Մեսրոպ

իրավիճակը և պատերազմն իրենց սև գործն արել էին՝ մասնավորապես Ղարաբաղի բնակչության գերեվարության և արտագաղթի առումով: Այս մասին հանգամանալից տեղեկություններ է հաղորդում Կովկասյան հնագրական հանձնաժողովի իրապարակած «Ակտերի» էջերում տեղ գտած Ա. Երմոլովի 1817 թվականի թվագրությամբ զեկուցագիրն ուղղված Ալեքսանդր 1-ինին: Զեկուցագրում նշվում է. «Ղարաբաղը ռուսական պետության կազմի մեջ մտնելու պահին ուներ ավելի քան 10 հազար ընտանիք, (1805 թ.՝ Քյուրակչայի դաշնագրի կնքման պահին՝ Ն.Բ.) 1808 թ.՝ 7474 ընտանիք: Այս թվում թշնամու կողմից տարված և արտասահման փախած. այսպես՝ 1806 թ. պարսիկների կողմից տարվել է 367 ընտանիք, իսկ փախել՝ 84-ը: 1809 թ. գերի է տարվել 323 ընտանիք, փախել՝ 412-ը: 1810 թ. տարվել է 276, փախել՝ 248 ընտանիք, 1811 թ. տարվել է 274, փախել՝ 707 ընտանիք: 1812 թ. տարվել է 977, փախել՝ 1177 ընտանիք: Գերի տարվածներն ու փախածները ընդամենը 4845 ընտանիք են: Հետևաբար՝ Ղարաբաղում պետք է մնացած լինեի 5000 ընտանիք, իսկ գնդապետ Ասսերի հաղորդմամբ՝ 3080 ընտանիք: Դրանից բացի, Շաքիի խանության տիրոջներում կար մոտ 1000 ընտանիք»<sup>48</sup>:

Արտագաղթին զուգահեռ՝ ծայր էր առել մեկ այլ գործընթաց. ցարական կառավարությունը, տարբեր միջոցներով իր կողմը գրավելով քոչվոր անասնապահների որոշ ընտանիքների, նրանց լրտեսական նպատակներով օգտագործելու համար տեղավորում էր կարևորագույն ռազմական կետերում: Վերը նշվածի իսկությունը փաստում է գեներալ Ն. Ռոտիշչևի հանձնարարականը Գանձակի պարետին. ռուսական սահմանները լավագույնս պաշտպանելու նպատակով նա կարգադրում է, որ այրում անասնապահները, որոնք ամառն անց էին կացնում Խաչքուլաղի լեռներում, ռուսներին տեղյակ պահեն այդ շրջաններում թշնամու տեղաշարժերի մասին: Այրումների այդ պահակակետերից հետագայում առաջացան Հյուսիսային Արցախի սահմանային Այրում, Բաղշլաղ, գյուղերը:

---

Մաշտոց Համալսարանի «Լրատու» (գիտական հոդվածների պարբերական ժողովածու), Երևան, 2014, էջ 20-30:

<sup>48</sup> АКАК, т. V, ч. II, Тифлис, 1873, с. 579.

Այդ նույն ճանապարհով նախկինում առաջացել էին Զեյվա<sup>49</sup>, Մուլավալաթի (հետագայում՝ Շեֆեթ), Գյուրզալար, Թողան բնակավայրերը, որոնք, հետագայում բազմամարդ դառնալով, կատարյալ չարիք դարձան Ղարաբաղի բնիկ տերերի գլխին: Նրանց անարգել բնակեցմանը նպաստում էր նաև այն, որ Ղարաբաղի մելիքները պատերազմական դրության պատճառով կարճ ժամանակով թողել էին հայրենի տիրույթները և իրենց հպատակներով հեռացել Վրաստան: Վերադառնալուց հետո նրանք փորձում են իրենց հողերից վտարել եկվորներին, սակայն դա միշտ չէր հաջողվում:

Հեշտությամբ չէր հաջողվում նաև հայ մելիքների վերադարձը Ղարաբաղ: Աղբյուրները վկայում են այն մասին, որ մելիքները դիմում էին ռուսական իշխանություններին՝ Ղարաբաղ վերադառնալու խնդրանքով:

Կովկասի կառավարչապետ՝ գեներալ Տորմասովի՝ գնդապետ Ախվերդովին ուղղված մի զեկուցագրում վերջինիս կարգադրվում էր թույլատրել Մելիք-Բեգլարյանների վերադարձը Ղարաբաղ: Ղարաբաղի մելիքներից Մելիք-Բեգլարյանների տոհմն առաջինն էր, որ թողեց Վրաստանը, և սկսած 1812 թվականից վերստին հաստատվեց իր հայրենական տիրույթներում՝ Գյուլիստանի գավառում: Գավառը բաժանվեց Մելիք-Աբովի և Մելիք-Ֆրիդոնի ժառանգների միջև: Նրանց տոհմերը, հետևելով ռուսական սովորույթին, սկսեցին կոչվել պապերի անունով. Մելիք-Հովսեփի թոռները՝ Մելիք-Հովսեփյաններ, իսկ Մելիք-Բեգլարի թոռները՝ Մելիք-Բեգլարյաններ<sup>50</sup>:

19-րդ դարի 10-ական թթ. Ղարաբաղում հաստատված իրավիճակի մասին՝ «Կռունկ հայոց աշխարհի» թերթը գրում է. «Բացի բուն Հայաստանից Հայք գտանում են այժմ բաւական շատ թուով եւ Ղարաբաղի գավառում: Հովիտներից նոքա փոքր առ փոքր մղուեցան լեռներում. այնտեղ նոքա կառավարում էին 5 ժառանգական մելիքների ձեռքով, որք պարսկաց իշխանութեան տակ էին, բայց թուրքաց իշխաններու զօրութիւնը եւ գերազանցութիւնը Ղարաբաղում՝ արտաքսեցին նոցա այնտեղից տասն եւ

<sup>49</sup> AKAK, т. V, ч. II, с. 542.

<sup>50</sup> Մաղալյան Ա., նշվ. աշխ., էջ 99-100:

ութերորդ դարում. իսկ երբոր Ռուսաստանը տիրեց Ղարաբաղին, Նոքա կրկին վերադարձան: Ներկայ ժամանակում կան միայն երկու տունք մելիքաց՝ Բեյլարեանք և Շահնազարեանք»<sup>51</sup>: Մելիք-Բեգլարյանները մինչև 19-րդ դարի երկրորդ կեսը շարունակում են իշխել Գյուլիստան գավառի 15 գյուղերի վրա, իսկ 3 գյուղերում իշխում էին Մելիք-Հովսեփյանները<sup>52</sup>:

Հայրենադարձությանը զուգընթաց՝ վերակենդանանում էին նաև ամայացած բնակավայրերը: 1804-1813 թթ. ռուս-պարսկական պատերազմի ընթացքում ավերվել և ամայացել էր Ջրաբերդ գավառի Կուսապատ գյուղը: 1812-1814 թթ. Վանի Աթաբեկյանն իր գերդաստանով տեղափոխվում է հիշյալ գյուղը, և կարճ ժամանակում գյուղի բնակչության թիվը հասնում է 150 ծխի<sup>53</sup>: Ոգևորիչ արդյունքից խրախուսվելով՝ Վանին թողնում է գյուղը և նույն եղանակով հիմնադրում ու շենացնում Հոռաթաղ, Մարտակերտ, Մեծ շեն, Մոխրաթաղ, Կարմիրավան և Ծաղկաշեն գյուղերը<sup>54</sup>:

Ռուս-պարսկական պատերազմի ավարտին՝ 1812 թ., Վրաստանից Ղարաբաղ է վերադառնում նաև արցախահայոց հոգևոր հովվապետը՝ Գանձասարի Սարգիս Հասան-Ջալալյան կաթողիկոսը: Ղարաբաղի Մեհտի Ղուլի խանը՝ 1227 հ. թ. չավալ ամսի (1812 թ. 10 հոկտեմբեր-6 նոյեմբեր) հրովարտակով ծանաչում է Գանձասարի կաթողիկոսի իրավունքները: 1815 թ. Ներսես Աշտարակեցու կողմից Սարգիս կաթողիկոսը ծանաչվեց որպես արքեպիսկոպոս կամ մետրոպոլիտ Գանձասարի կամ Ղարաբաղի<sup>55</sup>:

---

<sup>51</sup> Բաստամեանց Ե., Բարոն Օ. Հակոստաուզէնի ծանապարհորդութենից մի գլուխ, «Կռունկ հայոց աշխարհի», թիւ Բ, փետրուար, 1862, էջ 107, տե՛ս նաև Հակոստաուզէն Օգոստոս, ծանապարհորդութիւն յայսկոյս Կովկասու, այն է ի Հայս եւ ի Վիրս, թարգմ. Արիստակէս վարդապետ Սեդրակեան Խալֆալուեցոյ, Վաղարշապատ, 1872, էջ 211:

<sup>52</sup> Մաղալյան Ա., նշվ. աշխ., էջ 100:

<sup>53</sup> Израелов Г., Село Касапет, Елисаветпольской губернии, Джеванширского уезда, Сборник материалов для описания местностей и племен Кавказа, (այսուհետև՝ СМОМПК), вып. 13, Тифлис, 1892, с. 44-45.

<sup>54</sup> Մաղալյան Ա., նշվ. աշխ., էջ 114, Առաքելյան Գ., Գանձակ-ելիզավետպոլի (մարգ, նահանգ) բնակչությունը XIX դարում, Երևան, 2003, էջ 34:

<sup>55</sup> Մկրտումյան Լ., Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսությունը XVII-XIX դդ., Երևան, 2006, էջ 194:

Պայմանագրի կնքմանը հաջորդած երեք տարիներին Ղարաբաղ վերադարձած ընտանիքների թվի մասին հայտնի է դառնում Ա. Երմոլովի Ալեքսանդր 1-ինին ներկայացրած՝ 1817 թ. մարտի 4 թվագրված մի զեկուցագրից: Զեկուցագրում ասված էր, որ Գյուլիստանի պայմանագրի կնքումից ի վեր երեք տարվա ընթացքում Պարսկաստանից փախչելով վերադարձել են մոտ 4 հազար ընտանիքներ, որոնք բնակվել են իրենց նախկին կացարաններում: Նշվում էր նաև, որ. «... Ղարաբաղն այժմ արդեն ունի 7872 ընտանիք, բայց նախկին բնակչության թվաքանակի համեմատությամբ պակաս է 4 հազարով»: Հատկանշական է, որ սկզբնական շրջանում հայրենադարձությունը կամավոր բնույթ էր կրում: Դրությունը փոխվում է հետագայում, երբ 1817 թ. Շաքիի, Շիրվանի և Ղարաբաղի խանությունների ռազմական հրամանատար է նշանակվում Վ. Մադաթովը<sup>56</sup>: Վերջինս, ելնելով ցարական կառավարության և իր շահերից, ձեռնամուխ է լինում բռնի հայրենադարձություն իրականացնելուն: Նա ձգտում է Ղարաբաղ վերադարձնել բոլոր այն ընտանիքները, որոնք Վարանդայից Շաքի էին գաղթել: Արդեն 1817 թ. սեպտեմբերի 5-ին Մադաթովը Ա. Կուտուզովին<sup>57</sup> ուղղված իր զեկուցագրում նշում է, որ Վարանդա է վերադարձրել 187 ընտանիք<sup>58</sup>: Այս ճանապարհին Վ. Մադաթովը չէր խորշել անգամ մահմեդականների Ղարաբաղ տեղափոխման գործից՝ արդյունքում իր հպատակների թիվն ավելացնելով ղլիջցիների, կարադեմուրչինցիների հաշվին<sup>59</sup>:

Հատկանշական է, որ ի հակակշիռ հայ բնակչության վերադարձի՝ Ղարաբաղի Մեհտի Ղուլի խանը իր դիրքերի անսասանությունն

<sup>56</sup> Մատենադարան, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 156, վավ. 158, Вирабян А., Знаменитые арцахцы, кн. первая, Ереван, 1992, с. 13. Аветисян Г., Генералы-армяне Российской империи, Ереван, 2007, с. 121,

<sup>57</sup> Գեն.- մայոր Ալեքսանդր Կուտուզովը փոխարինում էր Ալեքսեյ Երմոլովին՝ վերջինիս Պարսկաստանում գտնվելու առիթով:

<sup>58</sup> Присоединение Восточной Армении к России, сборник документов, т. II, (1814-1830), Ереван, 1978, с. 45, АКАК, т. IV, ч. I, Тифлис, 1874, док. 1081, с. 726.

<sup>59</sup> Хан-Агов А., Экономический быт государственных крестьян Джеванширского уезда, Елисаветпольской губернии, Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края шжунիեստ՝ МИЭБГКЗК, т. VI, ч. II, Тифлис, 1887, с. 338-339.

ամրապնդելու համար հոգում էր նաև քոչվոր մահմեդական ցեղերի տեղափոխման մասին: 1821 թ. հոկտեմբերի 7-ին նա դիմում է Ի. Վելյամինովին Ղարաբաղից հեռացած և Երևանի խանությունում բնակություն հաստատած 200 քոչվոր ընտանիք քոլանի ցեղի քրդերին Ղարաբաղ տեղափոխելու մասին<sup>60</sup>:

Հայրենադարձության և սեփական հայրենիքը շենացնելու ցանկության մի հետաքրքիր փաստ է վավերագրված Մատենադարանի արխիվային նյութերում՝ թվագրված 1830 թ., ապրիլի 16: Ըստ վավերագրի՝ հնդկահայ մեծահարուստ Հովսեփ Ամիրբեկյանը պատրաստակամություն է հայտնում իր ծննդավայր Արցախն ու Փայտակարանը գնելու հայ ժողովրդի համար. «Նաև իմ միտքնայ իմ հայրենի աշխարքն, որ է Արցախ և Փայտակարան աշխարքն, թե հնարե փողով գնել կամ հարկատուութենէ ազատել, ինչ քանակութիւն լինի պատրաստ եմ հատուցանել, եթե ըստ իմ ցանկութեան կըգտանիմ՝ այսինքն բոլորովին իմ հրամանի ներքոյ լինի...»: Ամիրբեկյանը ավելացնում է նաև, որ ինքն իր ընտանիքով բնակություն կհաստատի այստեղ՝ հրավիրելով նաև Հոդկաստանի բոլոր հայազգիներին<sup>61</sup>: Ցավոք, Ամիրբեկյանի սրտաբուխ ցանկությունը չի իրագործվում:

Գյուլիստանի պայմանագրի կնքումից շուրջ մեկ տասնամյակ անց Ղարաբաղի հայ բնակչության դանդաղ հայրենադարձության և բնականոն աճի արդյունքում, 1823 թ. ցարական կառավարության ցուցակագրությամբ Ղարաբաղի գավառում 1823 թ. կար 17520 ընտանիք<sup>62</sup>: Ուսումնասիրվող ժամանակահատվածի առանձնահատկությունը ժողովրդագրական պատկերի գնահատման առումով հետևյալն էր. քաղաքական աննպաստ զարգացումների հետևանքով հարթավայրերը զբաղեցրած քոչվոր բնակչության անկանոն տեղաշարժերը և կենսակերպը հասցնում էին գավառի հայ բնակչության արհեստական արտամղմանը նախալեռնային և լեռնային շրջաններ:

<sup>60</sup> Присоединение Восточной Армении к России, т. II, с. 95-96.

<sup>61</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 62, վավ. 75:

<sup>62</sup> ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 163 (Ցարական աստիճանավորներ Պ. Մոզիլևսկու և Պ. Երմոլովի կողմից իրականացվել է Ղարաբաղի բնակչության թվի, հարկերի ցուցակագրություն և որպես զեկույց Ա. Երմոլովին է ներկայացվել 1823 թ. մայիսի 2-ին):

1823 թ. Ղարաբաղի գավառի կամերալ ցուցակագրության փաստը հատուկ խնամքով կեղծվում է ադրբեջանական պատմագիտության կողմից: Մասնավորապես՝ Խ. Խալիլովի պնդմամբ՝ «Այն ադրբեջանական գյուղերը, որոնք բնակեցված էին հայկական ընտանիքներով ցուցակագրության մեջ ներկայացված են որպես հայկական գյուղեր»<sup>63</sup>: Կամերալ ցուցակագրության ադրբեջանական տարբերակը իրական տարբերակից տարբերվում է նրանով, որ միտումնավորությամբ դուրս են հանված բացառապես հայաբնակ մի շարք գյուղանուններ:

1832-1833 թթ. ցարական իշխանությունները Ղարաբաղի գավառի նոր «Կամերալ ցուցակագրություն» են կատարում: Ցուցակագրության տվյալներով գավառում կար 20546 ընտանիք՝ մոտավորապես 100 հազ. բնակչությամբ: Գավառում կար մեկ քաղաք և 741 գյուղ<sup>64</sup>: 19-րդ դարի կեսերին Անդրկովկասի առանձին վարչամիավորների մասին տվյալների համաձայն Ղարաբաղի գավառի բնակչությունը կազմում էր 113 հազ. մարդ<sup>65</sup>:

Ընդհանրապես, ծխահամար ներկայացնող ցարական կամերալ ցուցակագրությունների՝ 1823 թ. և 1832-1833 թթ. տվյալները, թերևս, չեն արտացոլել Ղարաբաղի գավառի բնակչության թվի իրական պատկերը: Բնակչության թվի մասին հստակ պատկերացում հնարավոր է կազմել 19-րդ դարի վերջին անցկացված համառուսական մարդահամարի տվյալների ուսումնասիրությամբ:

բ) Գյուլիստանի պայմանագրին հաջորդած պատմական ժամանակաշրջանը Ղարաբաղի համար նշանավորվեց համեմատաբար երկարատև խաղաղությամբ: 1804-1813 թթ. ռուս-պարսկական պատերազմի հետևանքով առաջացած սովին, արտագաղթին, տնտեսական կյանքի անկմանը հաջորդում է Ղարաբաղի շենացման ժամանակաշրջանը: Որոշակիորեն պաշտպանված լինելով

<sup>63</sup> Халилов Х., Из этнической истории Карабаха, <http://karabakh-dok.azerall.info/ru/azerpeople/ap003.htm>, 4.10.2006.

<sup>64</sup> ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 50, 51: Մուսայելեան Հ., Ղարաբաղի նուաճման հարիւրամեակը (1813 թ. 12 հոկտ.-1913 թ. 12 հոկտ.), «Արարատ», թիւ Գ, 1914, էջ 254:

<sup>65</sup> «Кавказский календарь» на 1852 г., Тифлис, 1851, с. 430-433, «Кавказский календарь» на 1856 г., Тифлис, 1855, с. 358-359, 376-441.

ռուսական զենքով և օրենսդրությամբ՝ երկրամասը վերածվել էր հանգիստ և ապահով անկյունի: Ուստի պատահական չէ, որ 1821 թ. վերջին, հայոց կաթողիկոս Եփրեմը, հալածված պարսկական կառավարության կողմից, անցավ Ռուսաստանի այսրկովկասյան տարածքները՝ մասնավորապես Ղարաբաղի գավառ: Նրան այդ քայլին էին մղել էջմիածնի աթոռի տնտեսական ծանր վիճակը և Երևանի սարդարի կողմից կաթողիկոսին հասցվող բարոյական բռնաճնշումները<sup>66</sup>: էջմիածնի աթոռի պարտքը Երևանի սարդարի եռանդուն ջանքերի շնորհիվ կազմում էր 320000 ռուբ.<sup>67</sup> արծաթով<sup>67</sup> կամ, ինչպես նշում է Ալ. Երիցյանը, 4000 թուման<sup>68</sup>: Նրա առաքելության գլխավոր նպատակն ի սկզբանե նվիրակությունն էր: Պատահական չէր նվիրակության համար Եփրեմ կաթողիկոսի կողմից Ղարաբաղի ընտրությունը: Կաթողիկոսը համոզված էր, որ այստեղ կկարողանար ժողովել անհրաժեշտ գումարը:

Կաթողիկոսի՝ Ղարաբաղ մեկնելու և այստեղ գտնվելու մասին պատմող արխիվային սկզբնաղբյուրները հարուստ տեղեկություններ են հաղորդում<sup>69</sup>: Այնուհանդերձ, նրա առաքելության հետ կապված հանրահայտ փաստերը քաղաքական հնչողություն են ստանում, երբ մի կողմ թողնելով մանրամասները՝ այն փորձում ենք քննել ցայժմ չուսումնասիրված այլ դիտանկյունից:

Եփրեմի Ղարաբաղում գտնվելը՝ առաջին հայացքից անվսաս այդ առաքելությունը, քաղաքական մեծ վիճաբանությունների և քննարկումների տեղիք տվեց: 1822 թ. հունվարի վերջերին Դաղստանից վերադարձած Ա. Երմոլովն իր անբավականությունը հայտնեց Ներսես Աշտարակեցուն՝ Եփրեմի՝ ռուսական

---

<sup>66</sup> Փափազյան Հ., Ներսես Աշտարակեցու 1823 թ. բողոքագիրը, «Բանբեր Մատենադարանի», թիվ 13, Երևան, 1980, էջ 268:

<sup>67</sup> Тунян В., Церковная политика самодержавия в Закавказье в первой половине XIX в., Ереван, 2005, с. 26.

<sup>68</sup> Երիցյան Ալ., Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը եւ Կովկասի հայք XIX դարում, հ. Ա, Թիֆլիս, 1894, էջ 189:

<sup>69</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 35, վավ. 378, թ. 1, թղթ. 42, վավ. 126, թ. 1, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 165, վավ. 539, վավ. 513, վավ. 606, վավ. 320, թ. 24, վավ. 326:



սահմաններում գտնվելու առիթով: Նա գտնում էր, որ այդ քայլը պարսիկների կողմից կօգտագործվեր որպես պատերազմի առիթ:

Պարսկական կողմի հետ հարաբերությունները չփչացնելու մտահոգությունից զատ՝ ցարական կառավարությունը չէր կարող հանգիստ վերաբերվել Նվիրակության արդյունքում առաջացած ոչ փոքր գումարն իր տիրապետության տակ գտնվող երկրամասից դուրս բերելու և պարսիկ խանին վճարելու հանգամանքին: Ասվածն ապացուցում է Ա. Երմոլովի (1822 թ. մարտի 12)՝ կոմս Կ. Նեսելրոդին գրած նամակը. «Միևնոյն ժամանակ նա այստեղ փող է ժողովում պարսից անյագութինը կշտացնելու համար և այս բանում իւրեան օգնում է պարսից բարեկան Ղարաբաղի խանը, որն որ իւր կողմից չի համարձակուիլ նոցա աշկարայ ընծայաբերութիւններ անելու»<sup>70</sup>: Փաստորեն, նամակի ետնախորքը քննելով՝ պարզվում է ցարական կառավարության գլխավոր մտահոգությունը՝ Ղարաբաղում ժողովված գումարի դուրս հանումը, ինչը հակառակ դեպքում կարող էր գանձվել ցարական գանձարանի օգտին:

Կաթողիկոսի առաքելության ուսումնասիրությունը կարևորվում է մեկ այլ դիտանկյունից: Կաթողիկոսական թափորում գտնվող Մեսրոպ Թաղիադյանի գրի առած ճամփորդական նոթերը տեղեկություններ են հաղորդում Ղարաբաղի տնտեսական ներուժի և Արցախի երևելիների ու մելիքների հեղինակության և բարձրաշխարհիկ դիրքի մասին: Դա է վկայում նաև Եփրեմի հետ տեսակցելու համար Շուշի ժամանած և Թառումյանների ջերմ հյուրասիրությունը վայելած Ներսես Աշտարակեցու նամակը (թվագրված է 1822 թ. հունիսի 15)՝ ուղղված թիֆլիսաբնակ իշխան Ռոստոմ Գրիգորյանին. «... ի բարձունս երկնից աստ ի գլուխ բարձրաբերձ լերքն Շուշուաց եւ վայիլենք ի բարւէ վաղիմի սիրելեաց մերոյ և բազմափորձ հարազատից յարգոյ ազնուականացն Թառումեանց օրհնելու զձեզ և զպարձանքդ ազգի և հայրենեաց ամենայն Ղարաբաղու»<sup>71</sup>: Ներսես Աշտարակեցին այն պահին էր գտնվել Թառումյանների

<sup>70</sup> Երիցեան Ա., նշվ. աշխ., էջ 200-201:

<sup>71</sup> Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 165, վավ. 558:

տանը, երբ մահամերձ Մարկոս Թառումյանը էջմիածնի պարտքը՝ 4000 ոսկու մուրհակը, հանձնել էր եփրեմ կաթողիկոսին<sup>72</sup>:

Շուշիից եփրեմ և Ներսես Աշտարակեցի կաթողիկոսները մեկնել են Զրաբերդ, որտեղ հյուրընկալվել են Մելիք-Վանի Աթաբեկյանի տանը: Այս մասին թափորում գտնվող վարդապետ Հովսեփ Տեր-Մարությանը Կուսապատից Աղաբեկ և Ավագ Քալանթարյաններին ուղղված նամակում 1822 թ. հուլիսի 21-ին գրել է. «Հանդերձ գլխով մերով կամք ողջութեամբ ամենեքեանքս ի տան օրհնեալ ազնիւ մէլիք Իվանու ամենայն կերպիւ պատուով»<sup>73</sup>: Մելիք-Վանիի հյուրասիրությունը վայելելու և նրա հզորության ու հռչակի մասին իր հերթին Մ. Թաղիադյանը գրել է. «Ընդ ճանապարհ լեռնային և անտառախիտ՝ թրթնջակ և ողին ուտելով՝ զի գարուն էր, հասաք ի Ծիրանաքար, զոր հասարակօրէն Մէլիք Վանույ գիւղ ասէին, ի գաւառին Խաչենոյ, և իջաք ի տան նորուն իսկ Մէլիք Վանույ, առն բարեպաշտի և երկիւղածի յԱստուծոյ, բայց և հզօրին ի պատերազմի: Լոկ անուն սորա դողացուցանէր զըրջակայ ազգս, մինչև անգամ և զլեռնականս Կովկասու: Երկիր նորա առատ էր հացի և մեղերք. երիվարք նորա ընտիրք, և բնակիչք ամենայն Հայք հզօրք և տիրասէրք յոյժ»<sup>74</sup>:

Հետագայում իր երախտագիտությունը եփրեմ կաթողիկոսն արտահայտել է 1824 թ. դեկտեմբերի 14-ին Հաղպատից Մելիք-Վանուն ուղարկած օրհնագրի մեջ. «Մեք պարտաւորեալ ի գերապատիկ սիրոյ և բարեպաշտութեանց ձերոց՝ զորոց առաք զչափ բաականապէս ի լինել մեր ընդ օրհնեալ յարկաւ ձերով հանդերձ ընդ մեզ եղելովք...»<sup>75</sup>:

Կաթողիկոսների հերթական հանգրվանը Գյուլիստանն էր, որտեղից 1822 թ. օգոստոսի 9-ին Հովակիմ Լազարյանին գրված նամակում Ներսես կաթողիկոսը նշում է, որ գտնվում է «...ի կալուած քաջաբազուկ իշխանազն մելիք Հովսեփեանց եւ մելիք

<sup>72</sup> Թաղիադեանց Մ., Ճանապարհորդութիւն ի Հայս, հ. առաջին, Կալկաթա, 1847, էջ 325:

<sup>73</sup> Մաղալյան Ա., նշվ. աշխ., էջ 82:

<sup>74</sup> Թաղիադյան Մ., Գրական ժառանգություն, հ. 9, Երևան, 1975, էջ 163:

<sup>75</sup> Մաղալյան Ա., նշվ. աշխ., էջ 82:

Բեգլարեանց»<sup>76</sup>: Նախկին մելիքական տանը մեծապատիվ հյուրերին ցույց տված բարձրակարգ ընդունելության մասին Մ. Թադիադյանը գրել է. «Տուն մելիք Յովսէփայ անկանէր ի միջավայր քառառաջ ճանապարհին, ընդ որ երթնեկա առնէին կարաւանք ի Տփղեաց յԱրցախ, և ի Հայոց յԱղուանս: Անմարթ էր ումեք անցանել առանց սեղանոյ հիւրասէր տան այսմիկ, առօրին երկու եզինք և չորս կամ հինգ ոչխարք զենուին անդ՝ ի կերակուր անցաւորաց, բաց ի ձկանց և յորսոց անտի՝ զորս յաջողակք ի ժողովրդոցն անդադար կրէին ի ներքս»<sup>77</sup>: Ղարաբաղում նրանց ցուցաբերած ջերմ ընդունելության օրինակները, որոնք նկարագրված են Մ. Թադիադյանցի ճամփորդական նոթերում, վկայում են, որ արցախահայությունը, անկախ ցարական կառավարության վերաբերմունքից, մշտապես հոգատարությամբ և պատկառանքով է վերաբերվել իր հոգևոր հովվապետներին:

Ամփոփելով՝ նշենք, որ 1821-1823 թթ. Եփրեմ կաթողիկոսի այցելությունը Ղարաբաղ, բացի քաղաքական մեծ աղմուկից, իրականում ոչ մի հետևանք չունեցավ: Ակամա քաղաքական աշխույժ անցուդարձում հայտնված Ղարաբաղի այս ժամանակաշրջանի պատմության բացահայտման գործում այդ առաքելության ուսումնասիրությունը մեծապես կարևորվում է: Կաթողիկոսի նվիրական շուրջ ծավալված ցարական կառավարության արձագանքը, բացի քաղաքական պատճառներից, կրկին փաստում է այն իրողությունը, որ Ղարաբաղը համարվում էր ցարական Ռուսաստանի եկամտաբեր գաղութներից մեկը: Նրանից ստացվող շահույթը Ռուսաստանը չէր ցանկանում բաժին հանել ոչ մի այլ տերության, առավել ևս՝ Պարսկաստանին: Վերոնշյալ աղբյուրների հաղորդած տեղեկություններից հայտնի է դառնում նաև, որ Ղարաբաղի ներտնտեսական հարաբերություններն ապրում էին վերընծյուղման և շենացման շրջան: Ղարաբաղի նախկին մելիքների մոտ կաթողիկոսների մասին պատմող դրվագները փաստում են. չնայած ցարական իշխանությունների կողմից մելիքական կարգին և մելիքների ինքնուրույնությանը վերջ տալու ձեռնարկումներին՝

<sup>76</sup> Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 105, գ. 13, վավ. 192, էջ 1:

<sup>77</sup> Թադիադյան Մ., Գրական ժառանգություն, հ. 9, էջ 165:

չգրված օրենքով նրանք շարունակում էին մնալ իրենց կալվածք-ներին ինքնիշխան տերը՝ հոգալով հպատակների բարեկեցության մասին:

գ) Հետգյուլիստանյան ժամանակաշրջանում հայության համար արդիական ռազմավարական հնչողություն ունեցող և երկարատև ու բարդ գործընթացների արդյունքում հաջողված ձեռնարկ ենք համարում ստորև ներկայացվածը: Գյուլիստանի պայմանագրի կնքումից հետո Աղվանից կաթողիկոսությունը հայտնվեց ռուսական կայսրության տիրապետության տակ, և եթե նախկինում Հայ Աղվանից հովվապետերը մեծ մասնակցություն էին ունենում քաղաքական անցուղարձին, ապա ռուսական տիրապետության հաստատման պայմաններում նրանց գործառույթների շրջանակները պետք է սահմանափակվեին հոգևոր, կրթական և լուսավորչական գործունեությամբ՝ այն էլ ցարական կառավարության խիստ վերահսկողության պայմաններում: Այդ պայմաններում անգամ եկեղեցու առաջնորդները չէին դադարում արցախահայությանը հուզող հասարակական-քաղաքական բնույթի գործերով մտահոգվելուց, որի հարցում, հիրավի, ամենամեծ պատիվը պատկանում է Բաղդասար Հասան-Ջալալյանին:

Աղվանից 85-րդ և վերջին կաթողիկոս (1815 թվականից՝ արքեպիսկոպոս) Սարգիս Հասան-Ջալալյանի մահից հետո 1828 թ. դեկտեմբերի 25-ին Արցախի մելիքական տների ժառանգները Շուշիում գրված համախոսականով խնդրում են Ամենայն Հայոց Եփրեմ կաթողիկոսին՝ Սարգիս արքեպիսկոպոսի փոխարեն մետրոպոլիտ (արքեպիսկոպոս) կարգել Հասան-Ջալալյան տոհմի մեկ այլ նշանավոր ներկայացուցչի՝ Բաղդասար եպիսկոպոսին, որը Սարգիս Հասան-Ջալալյանի եղբոր որդին էր: Սարգիս Հասան-Ջալալյանի մետրոպոլիտության ժամանակ դեռևս եպիսկոպոս Բաղդասարը՝ մեծապես աջակցում էր նրան բոլոր գործերում, ուստի արցախահայության մեջ մեծ ճանաչում ու հարգանք էր վայելում: Դա զգացվում է նաև համախոսականում գրված տողերից, որտեղ կարդում ենք. «...գլխոհեմազարդ և յիրաւի արժանին պատուոյ Մետրապօլտոթեան երկրիս մերոյ՝ զՊաղդասար յարգոյ եպիսկոպոսն՝ կարգել է

տեղի վերափոխեալ Սրբազան արքեպիսկոպոսին Սարգսի Հասան Ջալալեանի իբրև զորդի փոխանակ հօր»<sup>78</sup>:

1830 թ. դեկտեմբերի 13-ին հրավիրվում է էջմիածին՝ Եփրեմ կաթողիկոսից ստանալով մետրոպոլիտոսության աստիճան և Գանձասարի թեմի առաջնորդությունը<sup>79</sup>: Այդ պահից էլ Բաղդասար մետրոպոլիտը սկսում է աշխարհաշեն, եկեղեցաշեն, հոգևոր և մշակութային<sup>80</sup> գործունեություն, որն աշխուժացնում է արցախահայության հասարակական-քաղաքական կյանքը: Ուսումնասիրության շրջանակներում առավել կարևորում ենք մետրոպոլիտի հասարակական-քաղաքական ձեռնարկումների քննարկումը, որոնք արտահայտվեցին հողափրկչական գործունեությամբ<sup>81</sup>:

Օգտվելով այն հանգամանքից, որ 19-րդ դարի սկզբին Արցախի մեկիքները և Սարգիս Հասան-Ջալալյանը Ղարաբաղում չէին՝ Գանձասարի վանքապատկան կալվածքները մեկը մյուսի հետևից զբաղեցվում էին զանազան մահմեդական բեկերի ու անկոչ քոչվորների, հատկապես քուլանի ցեղի կողմից: Ա. Մաղալյանը, վկայակոչելով մի շարք արխիվային վավերագրեր, գրում է, որ Բաղդասար մետրոպոլիտին հաջողվել էր վերջ տալ Գանձասարի վանքի շուրջ ծավալված վեճերին և վանքապատկան տարածքները մաքրել

<sup>78</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 243, վավ. 186:

<sup>79</sup> Լեօ, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց Թեմական հոգեւոր դպրոցի 1838-1913, Թիֆլիզ, 1914, էջ 114:

<sup>80</sup> Հարությունյան Գ., Արցախահայ դպրոցը 5-19-րդ դարերում, Ստեփանակերտ, 2000, էջ 21, Արցախի թեմի լուսավորիչները, Ստեփանակերտ, 2002, էջ 21-30, Բալայան Մ., Շուշիի վերածումը Ղարաբաղի հոգևոր կենտրոնի, «Շուշին հայոց քաղաքակրթության օրրան» Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտական հողվածների ժողովածու, Երևան, 2007, էջ 75-78: Հարությունյան Մ., Մշակութային կյանքը Լեռնային Ղարաբաղում (Արցախում) 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին, Ստեփանակերտ, 2010, էջ 56, 110-115:

<sup>81</sup> Տեր-Յովհաննիսեանց Գ., Բաղտասար մետրոպոլիտ Հասան-Ջալալեանցի համառօտ կենսագրութիւն, «Փորձ», թիւ 5, Տփլիսիս, 1880, էջ 131-164, Լեօ, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց Թեմական հոգեւոր դպրոցի 1838-1913, էջ 127-161, Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 9, Երևան, 1987, էջ 569-574, Բաղդասարյան Ն., Բաղդասար մետրոպոլիտ Հասան-Ջալալյանի դերը Ղարաբաղի հայության հասարակական-քաղաքական կյանքում, «Կրթությունը և գիտությունը Արցախում», թիվ 1-2, Երևան, 2009, էջ 164-168:

քոչվորներից: Հեղինակը վկայակոչում է մի փաստաթուղթ, որտեղ նշվում է, որ Ղարաբաղի պարետ մայոր Նիկոլայ Ռեյտերը 1833 թ. մայիսի 24-ի գրությամբ արգելել էր Գանձասարի վանքին պատկանող հողերի վրա ապօրինի ցանքս կատարելը<sup>82</sup>: 1834 թ. օգոստոսի 30 թվագրված մեկ այլ վավերագրում Արցախի նոր պարետ մայոր իշխան Բարաթովը նայիբ Ռոստամ բեկին կարգադրում է հեռացնել Գանձասարի վանքապատկան կալվածքներում հաստատված քուլանի ցեղի քոչվորներին. «Սրբազան Բաղդասար մետրապոլիտն ինձ գիր գիրելով յայդնում է, թե Քոլանի միակէն Քոլանի Քարամլու թայքիցն հինգ տուն. վանքին թալիղ կուզլակ տափումն ձմեռն կէնում էն եւ Տեառն մետրապոլիտն էս բանիս ըռագի չէ, վասն որոյ ձեզ հրամայեմ էս թալլաս հասեալ սիաթին էն տնէրն մի ըստ միոջէ քօչացնենք եւ իրեանց էլիկին մեջն յղեք և դատ-դատ անէք, որ ոչ ոք չի կարողանան վանքի թալիղ տափերումն վէր կան»<sup>83</sup>: Գանձասարի կալվածքներն ազատելուց հետո վանքապատկան գյուղերի բնակիչներն ազատվում են հողային հարկից<sup>84</sup>:

Այսպես 1834 թվականից՝ Բաղդասար մետրոպոլիտը գրագրություններ սկսեց սկզբնապես տեղական ռուսական իշխանությունների հետ՝ ապացուցելու, որ ռուսների համար որպես մաքսատուն ծառայող Ամարասը (ռուսական աղբյուրներում՝ Աղօղլան), ոչ թե սովորական ամրոց է, այլ հայկական վանք, սրբավայր, որտեղ ամփոփված է Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիսի մարմինը: Հետամուտ իր պահանջին՝ նա գրագրությունը շարունակեց շուրջ 15 տարի: Այդ գործում նրան չկասեցրեց 1836 թ. մարտի 11-ի եկեղեցական կանոնադրությունը՝ «Պոլոժենիեն», որով ստեղծվեց Ղարաբաղի թեմը<sup>85</sup> կենտրոն ունենալով Շուշի քաղաքը: 1837 թ. հուլիսի 1-ի հրամանով Բաղդասարը նշանակվեց թեմի առաջնորդ և նույն թեմի կոնսիստորիայի նախագահ: Սակայն եկեղեցական այս կանոնադրությունն էլ չսահմանափակեց Բաղդասար

<sup>82</sup> Մաղալյան Ա., նշվ. աշխ., էջ 152:

<sup>83</sup> Մատենադարան, Հ. Աբրահամյանի արխիվ, թղթ. 98, վավ. 121, թ. 26:

<sup>84</sup> ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 492:

<sup>85</sup> Тунян В., «Положение» армянской церкви 1836-1875, Ереван, 2001, с. 35.

մետրոպոլիտի եռանդն ու հողափրկչական գործունեության շրջանակները, ավելին՝ նա իր ձեռնարկումների հաջողության համար սկսեց դիմել ցարական կառավարությանը:

1849 թ. Բաղդասար արքեպիսկոպոսը շահում է դատը և Ամարասը հանձնում հայ հոգևորականությանը՝ իբրև վանք, իսկ մաքսատունը տեղափոխվում է Կարյագինո<sup>86</sup>: Վանքը վերադարձնելուց հետո մետրոպոլիտը արցախահայության օգնությամբ նախաձեռնում է վերականգնել Գանձասարի տանիքը և Ամարասի վանքը, ինչը և հաջողությամբ իրականացնում է<sup>87</sup>:

Ամարասի վանքը փրկելուց և վերանորոգելուց հետո Բաղդասար մետրոպոլիտը եռանդորեն ձեռնամուխ է լինում վանքապատկան կալվածքների ազատմանը: Նրա գործը դժվարացել էր՝ պայմանավորված նրանով, որ վանքապատկան կալվածքների մասին կալվածագիր չունեին: Այս մասին 1853 թ. ապրիլի 4-ին Բաղդասար արքեպիսկոպոսը Ներսես Աշտարակեցուն ուղղված իր նամակում գրել է, որ ստիպված էր դիմել բանավոր վկայություններին<sup>88</sup>: Վանքապատկան կալվածքները գտնվում էին Իբրահիմի դստեր՝ Ազատ Բեգյունի և Մադաթյան տոհմի ձեռքում: Մետրոպոլիտին հաջողվում է Մելիք Ջուռլուղ Շահնազարյանի որդի Բեհրամ բեկից վերցնել սուրբ Գրիգորիսի վանքի կալվածագրերը: Արդյունքում Ազատ Բեգյունը ետ է վերադարձնում հողերի իր բաժինը, իսկ Հովսեփ բեկ Մադաթյանը հրաժարվում է վերադարձնել վանքապատկան հողերը, ինչի առիթով հարուցվում է դատական քննություն: Մետրոպոլիտը դիմում է Շուշիի գավառապետ Սմիռնովին, որն էլ իր հերթին գործը հանձնում է Շուշիի գավառական դատարան: Դատաճիռ է կայացվում վանքապատկան Խազազ<sup>89</sup> կոչվող տեղամասը Հովսեփ բեկ Մադաթյանին թողնելու մասին<sup>90</sup>: 1853 թ. հունիսի 24 թվագրված մի վավերագրում Բաղդասար մետրոպոլիտը խնդրում

<sup>86</sup> Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց Թեմական հոգեւոր դպրոցի 1838-1913, էջ 141:

<sup>87</sup> Դանիէլյան Է., Գանձասարի պատմութիւն, Երևան, 2005, էջ 340-341, ՀԱԱ, ֆ. 332, ց. 1, գ. 590, թ. 2:

<sup>88</sup> Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 227:

<sup>89</sup> Տեղանքն այդպէս է կոչվում նաև մեր օրերում:

<sup>90</sup> Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 224-226, 229:

Է Շամախիի զինվորական նահանգապետ, քաղաքացիական հարցերով կառավարիչ, գեներալ-մայոր Չեյյակի միջամտությունը՝ ընդգծելով. քանի որ Ամարասի մենաստանը վերադարձվել է 1848 թ., ուստի պետք է վերադարձվեին նաև վանքապատկան կալվածքները, իսկ Խազազ կոչվող տեղանքն՝ առավել ևս: Տարիներ տևած այս վեճն ի վերջո լուծվում է հոգուտ Բաղդասար մետրոպոլիտի<sup>91</sup>:

19-րդ դարի 50-ական թթ. սկզբներին Բաղդասար մետրոպոլիտը ձեռնամուխ եղավ Խոթավանքի կալվածական հարստությունների հետ վերադարձմանը, որոնք զավթվել էին Մեհտի Ղուլի խանի դստեր, պարսիկ բեկերի, իսկ 1821 թվականից՝ այստեղ հաստատված քուլանի ցեղի քրդերի կողմից<sup>92</sup>:

Բաղդասար մետրոպոլիտը վանքապատկան հողերը ետ վերադարձնելու խնդրանքով դիմում է Ամենայն Հայոց կաթողիկոս Ներսես Ե-ին և Նրա միջոցով էլ՝ Կովկասի փոխարքա Մ. Վորոնցովի օգնությամբ<sup>93</sup>: «Այդ կալուածների պատճառով վարած դատերի և մրցմանց համար ծախսեց նա 24000 ռուբլուց անելի, մինչև որ վերջապես իւր ազգօգուտ փափագին հասաւ, ձեռք բերելով այն ընդարձակ երկիրները, որք Արցախու չափ տեղ են բռնում»<sup>94</sup>: Անտրինաբար զավթած այս կալվածքները, որոնք կոչվում էին «Դուդխու-Քեալբաջար», տարածվում էին 140 հազ. դեսյատինների<sup>95</sup> չափ, իսկ «Մշակ»-ի էջերում տարբեր կիսաքոչվոր ցեղերից և

<sup>91</sup> Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց Թեմական հոգեւոր դպրոցի 1838-1913, էջ 156:

<sup>92</sup> Հովհաննիսյան Լ., Էթնիկական գործընթացները Քաշաթաղի և Քարվաճառի գավառներում 18-րդ դարում և 19-րդ դարի առաջին կեսին, «20-րդ դարասկզբին ԼՂՀ Քաշաթաղի շրջանի հայկական գյուղերի բնակիչների բռնի տեղահանման 100-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր», Բերձոր, 2005, էջ 30-32:

<sup>93</sup> Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Երևան, 1999, էջ 84:

<sup>94</sup> Տէր-Յովհաննիսեանց Գ., Բաղտասար մետրապոլիտ Հասան-Ջալալեանցի համառօտ կենսագրութիւն, «Փորձ», թիւ 5, էջ 159:

<sup>95</sup> Դեսյատին՝ հեկտարից քիչ ավելի:



քուանի ցեղի քրդերից ազատագրված հողերի քանակը հասցվում էր 196438 դեյաատինի<sup>96</sup>:

Վանքապատկան կալվածքները տարածվում էին Թարթառ գետի հյուսիսային և հարավային ափերի երկարությամբ. «Խոթա վանքի կալվածները, այդ միլիոնների արժեք ունեցող ազգային մեծ հարստությունը, կարելի է մի ամբողջ գավառ համարել: Նրանց մեջ բացի հրաշալի, կուսական անտառներից, բացի ընդարձակ արոտատեղիներից և լեռներից, բացի լայնատարած և արգավանդ վարելահողերից, զետեղված էին թվով մինչև 100 գյուղեր: Նրանց լեռների բարձրավանդակների վրա և հովիտներում թափառում էին թվով մինչև 20 զանազան խաշնարած ցեղեր, զանազան անուններով»<sup>97</sup>:

Խոթավանքի կալվածքների փրկության արժեքը գիտակցելով՝ մետրոպոլիտը կարգադրում է իր կտակի մեջ գրել, որ միայն Խոթա վանքի կալվածքներում կարելի է բնակեցնել 2000 ընտանիք<sup>98</sup>:

Ամփոփելով՝ նշենք, որ եթե խանական վարչակարգի կամայականությունների պայմաններում վերը նշված նախաձեռնությունները կդատապարտվեին անհաջողության, ապա ռուսական տիրապետության հաստատումից հետո էլ հայ եկեղեցու վրա դրված արգելքների՝ մասնավորապես «Պոլոժենիեով» ստեղծված սահմանափակումների պայմաններում անհնարին կլիներ իրականացնել մետրոպոլիտի ծրագրերը: Ունենալով մեծ հեղինակություն և բարոյական վարք՝ նա համարձակություն է ունեցել առաջին հայացքից անհաղթահարելի թվացող դատեր վարել ինչպես մահմեդական քոչվորների, այնպես էլ ռուսական կայսրության հետ: Հեռատես հոգևորականը հարկ եղած դեպքում խնդիրը հանում էր տեղական ինքնիշխան ինքնակառավարման մարմինների իրավասության շրջանակներից և դրան լուծում տալիս ռուսական օրենսդրական վերին ատյաններում: Մեծ է Բաղդասար մետրոպոլիտի գործունեության նշանակությունը ներկայի, մասնավանդ՝

<sup>96</sup> «Մշակ», թիվ 94, Թիֆլիս, 1888:

<sup>97</sup> Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 9, էջ 572:

<sup>98</sup> Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց Թեմական հոգևոր դպրոցի 1838-1913, էջ 174:

Արցախյան ազգային-ազատագրական պատերազմի դիտակետից պատմական անցյալը վերագնահատելու առումով, քանի որ քոչվորն ապրելով այդ հողերում, սովորության համաձայն, այն ևս կարող էր անվերապահորեն համարել իրենը:

Քննության առումով հետաքրքրական ու նշանակալից են Գյուլիստանի պայմանագրի այն հետևանքները, որոնք կամ հանգուցալուծում չստացան, կամ էլ քաղաքական տեսակետից էապես բացասական հետևանքներ ունեցան Ղարաբաղի համար.

ա) Համաշխարհային պատմության փորձը ցույց է տալիս, որ ազդեցության գոտիների, տարածքների համար մղվող պատերազմների արդյունքում ստեղծված իրավիճակը ոչ միշտ է բավարարում կողմերին, ուստի նոր պատերազմի անհրաժեշտություն է առաջանում: 19-րդ դարասկզբին բռնկված և գրեթե մեկ տասնամյակ տևած ռուս-պարսկական պատերազմը, այսպես կոչված, «անավարտ» պատերազմի օրինակ էր: Ռուս-պարսկական պատերազմը և Գյուլիստանի պայմանագիրը ոչ միայն վերջ չտվեցին սահմանային վեճերին, այլև ավելի բորբոքեցին երկու երկրների միջպետական հարաբերությունները: Սահմանային տարածայնությունների շարքում բազմիցս շահարկվում էր որոշ տարածքների, այդ թվում՝ Ղարաբաղի՝ Պարսկաստանին վերադարձման հարցը<sup>99</sup>:

Գյուլիստանի պայմանագիրը խուճապ առաջացրեց անգլիական և թուրքական կառավարող շրջաններում: Կուլիսների հետևում ընթացող քննարկումներից հետո Անգլիայի դրոմամբ Ռուսաստանում գտնվող պարսկական դեսպան Միրզա Աբդուլ Հասան խանը 1816 թ. կիսավերջնագրային ձևով դիմեց ռուսական կառավարությանը՝ առաջարկելով «ավելի մանրամասն պայմանագիր» կնքել և շահին վերադարձնել այն խանությունները, որոնք Ռուսաստանին էին զիջվել Գյուլիստանի պայմանագրով: Առաջարկությունն իր պաշտպանությունը գտավ նաև անգլիական դեսպան Կատկարտի կողմից, սակայն կտրականապես մերժվեց Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրության

<sup>99</sup> Иоаннисян А., Присоединение Закавказья к России и международные отношения в начале XIX столетия, Ереван, 1958, с. 427.

կառավարիչ Կ. Նեսելրոդեի կողմից: Պարսկական կողմի տարած-  
քային նկրտումները շարունակվեցին նաև հետագա տարիներին:

1816 թ. հուլիսի 29-ին, Վրաստանի ռուսական զորքերի գլխա-  
վոր հրամանատար գեներալ Ա. Երմոլովին ուղղված հրահանգում  
Ալեքսանդր 1-ինը նշում էր, որ պարսիկները պահանջել են վե-  
րադարձնել գրաված բոլոր տարածքները կամ իրենց զիջել որոշ  
մարզեր՝ դրամական փոխհատուցման դիմաց. «...Պարսկական  
արքունիքի ցանկությունները բոլոր առումներով կբավարարվեն,  
եթե մեր գրաված տարածքներից ետ վերադարձնենք Թալիշի,  
Ղարաբաղի և Գանձակի խանությունները»<sup>100</sup>: Նրա խոսքերով՝  
«հնարավոր չէ՞ արդյոք Թալիշի և Ղարաբաղի խանություններով  
միջոցներ գտնել պարսիկներին բավարարելու համար՝ անցկաց-  
նելով նոր սահմանագիծ»: Կայսրն ավելացնում էր՝ «Կասկած չկա,  
որ առավել շահավետ կլիներ մեր կողմից Արաքսի այն կողմում  
ձեռք բերված հողերը փոխանակել Երևանի և Նախիջևանի հետ,  
սակայն իմանալով թե ինչպիսի համառությամբ էր հրաժարվում  
այդ տիրույթների (Նկատի է առնվում Երևանի և Նախիջևանի խա-  
նությունները - ընդգծումը մերն է՝ Ն.Բ.) զիջումից չի կարելի հույս  
ունենալ, որ նա դրան կհամաձայնի...»<sup>101</sup>:

Իր հերթին պարսիկների հետ վիճելի հարցերը կարգավորելու և  
բարիդրացիական հարաբերություններ հաստատելու համար Կով-  
կաս ուղարկված՝ անսահմանափակ իրավասություններով լիա-  
զորված գեներալ Ա. Երմոլովը վճռում է՝ պարսիկները ժամանակի  
ընթացքում պետք է ընդունեն Արաքսի և ռուսական տարածքների  
միջև ընկած հողերի կորուստը<sup>102</sup>:

Բնականաբար, պաշտոնական շրջանակներում շրջանառվող  
այս շշուկները չէին կարող հասու չլինել ազատագրված տարածք-  
ների ժողովուրդներին: Ռուսաստանի հովանու տակ գտնվող ժողո-  
վուրդների անհանգստությունը փարատելու համար կայսեր անու-  
նից Ա. Երմոլովը 1817 թ. օգոստոսի 15-ին դիմում է Դաղստանի,  
Շիրվանի, Ղարաբաղի, Շաքիի, Թալիշի բնակչությանը և բոլոր

<sup>100</sup> АКАК, т. VI, ч. II, Тифлис, 1875, док. 267, с. 122.

<sup>101</sup> Присоединение Восточной Армении к России, т. II, с. 23.

<sup>102</sup> ՀԱԱ, ֆ. 151, ց. 1, գ. 23, թ. 25:

այն ժողովուրդներին, որոնք գտնվում էին Ռուսաստանի հովանու տակ. «Ես ձեզ մեր Մեծ կայսեր անունից հավաստիացնում եմ, որ ոչ միայն շրջաններ, այլև ոչ մի թիզ հող նա չի գիջում պարսկական շահին, և մեր սահմանները չեն փոփոխվի...»<sup>103</sup>:

Հանդես գալով կայսեր անունից՝ իրականում՝ Ա. Երմոլովն արտահայտել էր իր կարծիքը սահմանների վերաբերյալ: Ասվածն ապացուցում է ևս մեկ փաստաթուղթ՝ գեներալ Ա. Վեյամինովի զեկույցը գեներալ Ա. Երմոլովին՝ թվագրված 1818 թ. հուլիսի 22: Փաստաթղթում Վեյամինովը հայտնում է Երմոլովին, որ Ալեքսանդր 1-ինը, լավ ծանոթ չլինելով տեղանքին, հարցրել է Վեյամինովին՝ Ղարաբաղի կամ որևէ այլ վայրի՝ Պարսկաստանին զիջման նպատակահարմարության մասին: Ա. Վեյամինովն այս հարցում համակարծիք լինելով Երմոլովին՝ գտնում էր, որ Ղարաբաղի զիջումը Պարսկաստանին կնշանակեր նրա հետ մեկտեղ զիջել նաև Թիֆլիսը, ինչն անհեռանկարային է<sup>104</sup>:

Ղարաբաղի տարածքը շարունակում էր շահարկումների առարկա մնալ նաև հետագայում: 1819 թ. հոկտեմբերի 18-ին գեներալ Ա. Երմոլովը կոմս Կ. Նեսելրոդեին ուղղված իր նամակում գրել է. «Աբբաս-Միրզան մտածում է Ղարաբաղը ետ վերադարձնել և կարծում է, որ կստիպի համաձայնել դրան՝ սպառնալով լեռնային ժողովուրդների հուզումներով, որոնց նա շարունակում էր կերակրել փողերով»<sup>105</sup>:

Աբբաս-Միրզայի կողմից Ղարաբաղի վերադարձման ձգտումն այնքան մեծ էր, որ հարուցել էր Ա. Երմոլովի հեգնանքը: 1820 թ. ապրիլի 13-ին կոմս Կ. Նեսելրոդեին ուղղված իր հերթական նամակում նա գրել է. «Աբբաս-Միրզան, չբավարարվելով պայմանագրի հետևանքներով..., ցանկանում է վերադարձնել Ղարաբաղի շրջանը: Այս ցանկությունն այնքան մեծ է, որ նա երազում է դրան հասնել Անգլիայի «կախարդական»

---

<sup>103</sup> АКАК, т. VI, ч. II, док. 312, с. 162.

<sup>104</sup> АКАК, т. VI, ч. II, док. 364, с. 194.

<sup>105</sup> АКАК, т. VI, ч. II, док. 402, с. 218.

ազդեցությամբ և սպասում է Միրզա Աբդուլ Հասան խանի վերադարձին»<sup>106</sup>:

Ղարաբաղի և մի քանի այլ տարածքների զիջման «գործարքը» չկայացավ՝ շնորհիվ այս գործում շահագրգիռ կողմի՝ Ա. Երմոլովի: Ավելին՝ Ա. Երմոլովը միջոցներ էր ձեռնարկում՝ շահագրգռելու հայերին ներգաղթել Ղարաբաղ՝ խոստանալով նրանց ամենաշահավետ բնակատեղիները և քառամյա արտոնություններ<sup>107</sup>:

Այսպիսով՝ Գյուլիստանի պայմանագիրը մասամբ միայն վերջ դրեց Ռուսաստանի և Պարսկաստանի միջև տարածքային վեճերին, Վ. Պոտտոյի խոսքերով՝ «Գյուլիստանի պայմանագիրը միայն զինադադար էր, լռությունը՝ խաբուսիկ և ավետաբերն էր ռազմական նոր փոթորիկների»<sup>108</sup>: 1826-1828 թթ. բռնկված ռուս-պարսկական պատերազմը կոչված էր վերջ դնելու ռուս-պարսկական հակասություններին:

բ) 18-րդ դարի կեսին և վերջին տեղի ունեցած քաղաքական աննպաստ հայտնի զարգացումների հետևանքով Արցախի մելիքական տները թուլացել էին: Չնայած սպասումներին՝ Գյուլիստանի պայմանագրի կնքումից հետո Ղարաբաղի մելիքների ժառանգական իրավունքները շարունակեցին թուլանալ, որին հակառակ՝ բարձրացավ խանական ընտանիքի դերակատարությունը: Հանուն ճշմարտության պետք է ասել, որ ի սկզբանե ցարական կառավարությունը հույսեր չէր էլ ներշնչում հայ երևելիներին, պարզապես հայկական կողմն իր ավանդական ռուսամետ դիրքորոշման և գործելակերպի դիմաց որոշակի ակնկալիքներ, այնուամենայնիվ, ուներ: Մելիքությունների կազմալուծման իրողությանը ոչ մի կերպ չէին համակերպվում ժամանակի նշանավոր հասարակական-քաղաքական գործիչներից հատկապես Լազարյանները: Այս առիթով տեղին է հիշատակել Մատենադարանում պահվող մի վավերագիր՝ թվագրված 1816 թ. օգոստոսի 12: Վավերագրի հեղինակն է

<sup>106</sup> AKAK, т. VI, ч. II, док. 419, с. 228.

<sup>107</sup> Գալոյան Գ., Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից մինչև 1917 թ.), Երևան, 2004, էջ 168:

<sup>108</sup> Հովհաննիսյան Հ., Հայագիտությունը Ռուսաստանում (պատմագիտություն, XIX դար), Երևան, 2004, էջ 183:

Հովակիմ Լազարյանը: Այն ուղղված էր Եփրեմ կաթողիկոսին: Վավերագրում նշվում էր, որ Անդրկովկասի նոր կառավարչապետ Ա. Երմոլովի հետ Անդրկովկաս են գալիս Ա. Սոկոլովը և Ալ. Խուդաբաշյանը: Լազարյանը խնդրում է նրանց՝ կուսակալի միջոցով միջնորդել կայսեր առաջ՝ Արցախի մելիքների իրավունքների վերականգնման համար. «Միահեփառ ընդ ազնիւ Խուդաբաշեանին ողորմելեաց այդի մերագնէից, մանաւանդ վասն խղճալի մնացորդաց մէլիքաց Ղարաբաղու և Սղնաղու, որք զամենայն ստացուածս իրեանց կօրուսեալ՝ իբր զտառապեալ մուրացկանս ի Տփլիսի քաղաքի և այլ ուրեք աստանդական շրջին չգտանելով զապրուստ իմն կամ զելս կացութեան, որոց միայն ձե՛զ է թողեալ, զօրէն ձեռնտու հովուապետի և օգնականի առաջնորդ լինելով զայցելութիւն ի Կուսակալէն և նորա ի դրանէ ողորմածագունեղ Կայսերն հայցելոյ, զի բաւ է լինելոց նոցա, եթէ դարձուցեն ողորմելեացն այնոցիկ, գոնէ մասն ինչ ի գեղօրէից նոցա և ի հողոց, որով կարասցեն ապրիլ և անցուցանել զկեանս իրեանց»<sup>109</sup>: Ինչպես ցույց են տալիս հետագա իրադարձությունները այս խնդրանքն անպատասխան է մնում:

Ստեղծված կացության հարցում Րաֆֆին մեղադրում է Վ. Մադաթովին: Նա մատնանշում է այն հանգամանքը, որ Մեհտի Ղուլի խանի կողմից առատ բաշխումները տեղի ունեցան հատկապես այն ժամանակ, երբ ռուսները տիրել էին Ղարաբաղին, և երբ իշխան Մադաթովը ռազմաշրջանային պետն էր և նրան էր հանձնարարված հսկելու խանի գործողությունները<sup>110</sup>: Ըստ էության՝ խանական պարզևագրերն օրինական ուժ էին ստանում միայն ռուսական ներկայացուցչի՝ Վ. Մադաթովի ստորագրության առկայության դեպքում: Մեհտի Ղուլի խանը շնորհագրով (թվագրված՝ 1816 թվական) Վ. Մադաթովին՝ որպես տոհմական սեփականություն, հանձնում է մասնավորապես Վարանդայի մահալի Գյունե Ճարտար և Ղուզե Ճարտար, Ննգի, Քեշիքքենդի և Ավետարանոց գյուղերը, ինչպես նաև Գորիսի մահալի Խոտ, Շենհեր

<sup>109</sup> Մադաթյան Ա., նշվ. աշխ., էջ 38, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 155, վավ. 33:

<sup>110</sup> Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 9, էջ 581:

(Շինուհայր) և Խալիզար գյուղերը<sup>111</sup>: Մատենադարանի անստորագիր և անթվական մի վավերագրում թվարկված են Մադաթովին հանձնված 9 գյուղեր՝ Չանախչի, Սղնախ, Քեշիշքենդի, Սարուշեն, Ննգի, Ղուզումքենդի, Ղուզե Ճարտար, Գյունե Ճարտար, Դիզակի մելիքության Տող գյուղերը, որոնք ունեին 1245 ընտանիքներ<sup>112</sup>:

«Ակտերի» էջերում տեղ գտած փաստաթղթերը<sup>113</sup> վկայում են, որ չնայած Վ. Մադաթովը ցարական պաշտոնավարող շրջաններում բավական մեծ ճանաչում ուներ, շնորհագրման գործընթացը ձգձգված բնույթ ընդունեց: Այն հաջողվեց միայն կոմս Կ. Նեսելրոդեի և Ա. Երմոլովի գործուն միջամտությամբ: Կոմս Կ. Նեսելրոդեն նախարարների խորհրդում հարցի քննարկման ժամանակ մատնանշեց Ղարաբաղի խանի հետ կնքած պայմանագրի բովանդակությունը, ըստ որի՝ խանի կողմից հողեր շնորհելու իրավունքը ոչնչով սահմանափակված չէ, և նա օգտվում է սեփական հայեցողությամբ այն նվիրաբերելու իրավունքից: Իսկ Ա. Երմոլովը բերում էր մեկ այլ հակափաստարկ, ըստ որի՝ «Ղարաբաղի խանությունը մտել է Ռուսաստանի տիրապետության տակ մի կայսեր ժամանակ, որն այժմ էլ շարունակում է բարեհաջող թագավորել»<sup>114</sup>:

Ալեքսանդր 1-ինը վերոնշյալ փաստարկներն ընդունում է և 1821 թ. ապրիլի 23-ին բարձրագույն հրահանգով Վ. Մադաթովին թույլատրում ամրագրել Չանախչի (Ավետարանոց) գյուղն իր կալվածքներով: Հրահանգում ցարը համոզվածություն էր հայտնում, որ Վ. Մադաթովը կարդարացնի իրեն և օրինակ կձառաջի մյուս տերերի համար, իսկ բնակիչները կհավատան, որ պետությունը միշտ էլ պատրաստ է հանդես գալու իր հպատակների օգտին<sup>115</sup>: Փաստորեն, շնորհագրի ետնախորքում ընկած էր ռուսական կառավարությանը հավատարիմ հենարան ստեղծելու հանգամանքը:

<sup>111</sup> Присоединение Восточной Армении к России, т. II, с. 22.

<sup>112</sup> Լազարյանների արխիվ, թղթ. 111, գ. 36, վավ. 80, թ. 1-3:

<sup>113</sup> АКАК, т. VI, ч. I, Тифлис, 1874, док. 1769, с. 837-838, док. 1270, с. 838, док. 1272, с. 839.

<sup>114</sup> Потто В., Кавказская война, т. III, Персидская война 1826-1828, СПб, 1888, с. 215-216.

<sup>115</sup> Присоединение Восточной Армении к России, т. II, с. 84.

Վարանդայի կալվածքների մեծ մասի շնորհունը Վ. Մադաթովին դժգոհություն առաջացրեց նրա տերերի՝ Մելիք-Շահնազարյանների մոտ: Մատենադարանի վավերագրերից մեկը՝ թվագրված 1822 թ. ապրիլի 21, պատմում է Ջահանգիր և Խոսրով Մելիք-Շահնազարյանների կողմից ռուսական կայսեր ուղղված նամակի մասին: Գրության մեջ Շահնազարյան տոհմի ժառանգները պատմում են, որ Շուշիում և Չանախչիում գտնվող Մելիք-Շահնազարյանների հայրական կալվածքները, որոնք տարեկան 10 հազ. ռուբ. եկամուտ էին բերում, բռնագրավվել են Մադաթովի կողմից: Հայցվորները խնդրում էին նախքան իրենց տիրույթների վերադարձման գործի ավարտը՝ կալվածքների եկամուտներից տարեկան 750 ռուբ. թոշակ տրամադրել<sup>116</sup>:

Շահնազարյանների վերոնշյալ գրությունն անպատասխան է մնում: Այդ մասին է վկայում մեկ այլ վավերագիր, որը Խոսրով Շահնազարյանի նամակն էր իր եղբայր Լալային՝ թվագրված 1836 թ. նոյեմբերի 24: Նամակում նշվում է. «... երմուջվըն մին անիրավ սարտար էր, եկավ Կուրճիստան քարուքանդ արեց, Մատաթովին շինավ Ղարայպաղուն ակրուժնոյ նաչալնիկ, Մէյտի խանին հրաման գրավ, որ Շահնազարի ազկեն Վարանդա մէլիքությունըն վերայցնէյ: Մէյտի խանն իւր ճանիցըն իւր կլխիցըն վախէլուց, ինչ որ Մատաթովըն հրամայում էր էնպէս էր կրում, էնպէս էր անում», ապա նամակագիրը շարունակում է՝ գրելով, որ Մադաթովը կարողացավ մինչև թագավոր կատարել իր կեղծ գործը: Նամակի վերջում Խոսրով Շահնազարյանը գրել է. «Ես խնթրում էմ տէրութիւնին, որ այս հանցանացըն վերայխասու լինի, իմ որթոց գորթի ազատ ժողովուրթիս, ի կերութիւնէյ նոցայ ազատի, մէլիք Պաղուն ժառանկացըն հայրենիք մէլիքութունի աստիճանըն, ղապալալու մուլքն, հողըն և ամենայն կայիքըն նոցայ, հետ տարցուցանէյ»<sup>117</sup>:

<sup>116</sup> Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 106, գ. 51, վավ. 43, թ. 2-3:

<sup>117</sup> Մադալյան Ա., Փաստաթղթեր Վարանդայի Մելիք-Շահնազարյանների տոհմի վերաբերյալ, «Բանբեր Հայաստանի արխիվների», թիվ 2, Երևան, 2005, էջ 9-10, Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 257, վավ. 167:



Շահնագարյանների դիմումներն, ուղղված ռուսական կայսրությանը՝ վերականգնելու իրենց ժառանգական իրավունքները, ապարդյուն են անցնում, իսկ արդեն 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո Մելիք-Շահնագարյան տան սերունդները տոհմիկ ազնվականի կարգավիճակով մտնում են ռուսական զինվորական ծառայության շարքերը: Մելիք-Ջունջուդ Շահնագարյանի թոռը՝ Մելիք-Խուդադադը, մինչև 1833 թ. (մինչև մահ), որպես կառավարիչ իշխել էր հայրենական տիրույթների մի մասում<sup>118</sup>:

Ինչ վերաբերում է Ջրաբերդ գավառի Մելիք-Իսրայելյաններին, ապա հատկանշական է, որ 19-րդ դարի սկզբին նրանք աստիճանաբար սկսեցին հեռանալ պատմության թատերաբեմից: Ա. Մաղալյանը նկատում է, որ հավանաբար դա պայմանավորված էր Մելիք-Իսրայելյանների տոհմի վերջին սերնդի՝ արու ժառանգ չունենալու հանգամանքով: 1814 թ. Ջրաբերդի մելիքության կառավարչի պաշտոնում նշանակվեց Վանի Աթաբեկյանը, որին շնորհվեց մելիքի տիտղոս<sup>119</sup>:

Նախկին հզոր մելիքական տների կողքին տեղական համեմատաբար նվազ նշանակության դերում էին Մելիք-Փաշայան, Մամիկոնյան, Բահաթրյան, Երիցանց, Ուլուբաբյան, Մելիք-Դոլուխանյան տոհմերը և այլք<sup>120</sup>:

Այսպիսով, Գյուլիստանի պայմանագիրն իր դրական հետևանքներով հանդերձ չլուծեց խանությունների վերացման և ռուսական վարչակարգի մուտքի հարցը, հայ մելիքների իրավունքներն այդպես էլ չվերականգնվեցին՝ չնայած այս ուղղությամբ անդադրում ջանքեր էին գործադրվում:

գ) Գյուլիստանի պայմանագիրը չարդարացրեց արցախահայության սպասելիքները, այդ թվում՝ խանական վարչակարգին

<sup>118</sup> Մաղալյան Ա., նշվ. աշխ., էջ 195, 198:

<sup>119</sup> Նույն տեղում, էջ 111:

<sup>120</sup> ՀԱԱ, ֆ. 319, ց. 2, գ. 50, թ. 1-2, ց. 1, գ. 51, թ. 1-3, ց. 1, գ. 52, թ. 1-3, ց. 1, գ. 49, թ. 1-4, ց. 1, գ. 54, թ. 1-13: Մելիք-Դոլուխանյան տոհմի մելիքական անպաճույճ ապարանքը գտնվում Վարանդա գավառի այժմ արդեն լքված Թուխնակալ գյուղում (այս տոհմի շառավիղներից է տողերիս հեղինակը): Այս մասին տե՛ս Դուլյան Ա., Արցախի և Սյունիքի մելիքական ապարանքները, Երևան, 2001, էջ 106-108:

վերջ դնելու ակնկալիքը<sup>121</sup>: Ավելին՝ ցարիզմն այս վարչակարգի մեջ ամուր հենարան տեսավ իր գաղութային քաղաքականությունը ծավալելու նախնական փուլում: Անկախ դիրքերից գնահատելով պատմաշրջանի քաղաքական զարգացումները, թերևս, ավելին հնարավոր չէր ակնկալել. Ռուսաստանն իրատեսական քաղաքականություն էր վարում, անգամ, եթե այն որևէ կերպ վնասում էր նրա տնտեսական շահերին: Ցարիզմի այս քաղաքականությունը թելադրված էր կայսերական պետության պատմական փորձով, հետևաբար, պայմանագրի կնքումից հետո տեղական իշխողների գործունեությունը որևէ ձևով չսահմանափակվեց:

Հատկանշական է, որ 1815 թ. փետրվարին Ղարաբաղի, Շիրվանի և Շամախիի խանությունների ռազմական շրջանի հրամանատար նշանակված Վրաստանի նախկին կառավարիչ գեներալ-մայոր Ֆ. Հախվերդովը պաշտոնապես իրավասու չէր խառնվելու տեղական իշխողների ներքին գործերին, այլ պարզապես նրանց գործունեության նկատմամբ «նուրբ վերահսկողություն» պետք է սահմաներ: Իրադրությունը փոխվում է, երբ 1816 թ. Ալեքսանդր 1-ինի հրամանագրով կովկասյան բանակի գլխավոր հրամանատար և քաղաքացիական մասի կառավարչապետ է նշանակվում գեներալ Ալեքսեյ Երմոլովը<sup>122</sup>: Կովկաս ժամանելուն պես Ա. Երմոլովը տեսավ խանական վարչակարգի կամայականությունների և անօրինությունների վերացման անհրաժեշտությունը: Դրանում նա համոզվում է, երբ 1816 թ. մեկնում է Ղարաբաղի պարսկական

---

<sup>121</sup> Քննարկվող հարցի մասին տե՛ս Բաղդասարյան Ն., Ղարաբաղի խանության վերացումը, «Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգությունը», միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, 24 հունիսի-հուլիսի 1, Երևան-Ստեփանակերտ, Երևան, 2012, էջ 16-17, Ղարաբաղի խանության վերացումը աղբյուրների լույսի ներքո, Մեսրոպ Մաշտոց Համալսարանի «Լրատու» (գիտական հոդվածների ժողովածու), 1/14, Ստեփանակերտ, 2013, էջ 20-28, Политика царской России по отношению к ханскому режиму в Карабахе в первой четверти XIX века., «Армяне юга России: история, культура, общее будущее», материалы Всероссийской научной конференции, 30 мая – 2 июня 2012 г., Ростов-на-Дону, 2012, с. 38-43.

<sup>122</sup> Լեո, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 394:

սահման<sup>123</sup>: Այս մասին 1816 թ. դեկտեմբերի 18 թվագրված և Սարգիս աղա Գրիգորյանին ուղղված մի նամակում Ներսես Աշտարակեցին գրում է, որ կուսակալը վերադարձել է Ղարաբաղից և հայտնել իրեն. «... հրաման ետու ամենայն խանիս, որ ի վերայ հայոց այլազգք պրիստավ կամ տարուղայ չի կարգեսցին այսուհետև, այլ մի ոք հայոց ընդ ամենայն տեղիս...»<sup>124</sup>:

1817 թ. հունվարի 4-ին Ա. Երմոլովը Ղարաբաղի, Շաքիի, Շիրվանի ռազմաշրջանային պետի պաշտոնում է նշանակում Վ. Մադաթովին: Նա պետք է գտնվեր Ղարաբաղում՝ վերահսկելու Մեհտի Ղուլի խանի գործունեությունը, քանի որ կասկածում էր վերջինիս՝ Պարսկաստանի հետ գաղտնի կապեր ունենալու գործում: Պաշտոնում նշանակվելուն պես Վ. Մադաթովը մեծ ջանքեր գործադրեց երեք խանությունների համար աղետ դարձած ավազակություններին վերջ տալու ուղղությամբ: Այդ տարիներին Ղարաբաղում հաստատված անդորրի մասին ժողովուրդն ասել է. «Մադաթովի ժամանակ Ղարաբաղի կինն անգամ կարող է մենակ ման գալ, կրելով իր վրա ոսկով լիքը թաբախ»<sup>125</sup>:

Ա. Երմոլովի հաշվարկներով՝ Ղարաբաղի խանությունից սպասվում էր տարեկան մինչև 1 մլն. ռուբ. արծաթով եկամուտ, որն ստանալը հնարավոր էր միայն խանական վարչաձևի տապալումից հետո<sup>126</sup>: Այս առիթով նա գրել է. «Ղարաբաղի խանությունը ամայացել է պարսիկների հարձակումներից: Բնակչության թիվը նվազել է: Հողը բարեբեր է: Ժողովուրդը ռազմունակ է և միշտ մեզ կողմնակից: Այս երկրից կարելի է ստանալ մեծամեծ շահույթներ, այն դեպքում, երբ այստեղ կմտցվի մեր վարչակարգը»<sup>127</sup>:

Իր նպատակին հասնելու ճանապարհին Ա. Երմոլովը հստակեցրել էր օրախնդիր երկու եղանակ՝ վերացնել խանական

<sup>123</sup> Тунян В., Политика самодержавия России в Закавказье XIX-нач. XX вв. Часть первая, 1800-1826 гг., Ереван, 2006, с. 83

<sup>124</sup> Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 164 ա, վավ. 285, թ. 21:

<sup>125</sup> Լեո, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 396:

<sup>126</sup> Тунян В., Политика самодержавия России в Закавказье XIX-нач. XX вв. Часть первая, 1800-1826 гг., с. 116.

<sup>127</sup> Записки А. П. Ермолова, 1798-1826, Москва, 1991, с. 290.

իշխանության ժառանգական կարգը և բռնել խաներին դավաճանության մեջ: Խանության վերացմանը և ռուսական վարչակարգի մուտքին օրինական տեսք տալու համար նախատեսվում էր խանից գրավոր պարտավորություն վերցնել առ այն, որ վերջինս իրենից հետո արգելում է ժառանգության իրավունքը, իսկ խանությունը հանձնում է ռուսական կայսեր: Գործողությունների նման ծրագիրը համարվում էր ամենաօրինականը. «Դա նրա համար է պետք,- գրում է Ա. Երմոլովը,- որ օրինական տեսք տրվի իմ գործողություններին: Հնարավոր է և գործողությունների զարգացման երկրորդ տարբերակը. այսպես թե այնպես, խանի մահից հետո խանությունը պետք է դադարեր գոյություն ունենալուց, ես ունեմ նաև պատրաստ այլ եղանակներ՝ արտաքինից բարետես»<sup>128</sup>:

Խանական վարչակարգի վերացումը Ա. Երմոլովի համար դարձել էր սկզբունքային խնդիր: 1817 թ. փետրվարի 24-ին իշխան Վորոնցովին ուղղված իր նամակում Ա. Երմոլովը գրել է. «... Տանջում են ինձ խանությունները՝ խայտառակելով մեզ իրենց գոյությամբ... Խաների կառավարումը՝ ամեն կարգի անհեթեթությունների, դաժան ինքնակալության և անկարգությունների օրինակը, ոչնչացնում է մարդկությանը»<sup>129</sup>:

Հատկանշական է, որ խանական վարչակարգի վերացման հարցն առավել սուր տեսք ստացավ Մեհտի Ղուլի խանի պահվածքի պատճառով: Ղարաբաղը դիտելով որպես իր անձեռնմխելի սեփականություն՝ Մեհտի Ղուլի խանը հիվանդագին էր վերաբերվում ռուսական կառավարության կողմից կատարվող վիճակագրություններին, և ընդհանրապես, ցանկացած միջամտության: Վերը նշվածը հաստատվում է Մատենադարանում պահվող արխիվային մի շարք վավերագրերով: 1822 թ. փետրվարին վիճակագրություն կատարելու նպատակով Աշտարակեցու կողմից Ղարաբաղ էր ուղարկվել Խաչատուր վարդապետը<sup>130</sup>,

<sup>128</sup> Тунян В., Политика самодержавия России в Закавказье XIX-нач. XX вв. Часть первая, 1800-1826 гг., с. 91-92

<sup>129</sup> Кавтарадзе А., Генерал А. П. Ермолов, Тула, 1977, с. 75.

<sup>130</sup> Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 165, վավ. 579, վավ. 580:

որի գործունեության մասին աղբյուրների լռությունը հիմք է տալիս ենթադրելու, որ նա հանդիպել էր Մեհտի Ղուլի խանի կողմից ստեղծված խոչընդոտներին: 1822 թ. հունիսի 9 թվագրված մի վավերագրում Ներսես Աշտարակեցին դիմում է Ղարաբաղի կառավարիչ Ռեուտին՝ նշելով, որ կուսակալը հանձնարարել է ներկայացնել Ղարաբաղի, Շամախիի և Նուխիի հայության ժողովրդագրական պատկերը և այդ առիթով ուղարկում է Գաբրիել Ապողավրյանին: Աշտարակեցին հայտնում էր, որ արդեն խնդրել է Մեհտի Ղուլի խանի և Պետրոս Թառույանի աջակցությունը<sup>131</sup>:

Մեհտի Ղուլի խանը, երկյուղելով, որ ռուսական կառավարությունն այդ վիճակագրությունը կատարում է հետագայում Ղարաբաղից իրեն հեռացնելու համար, ոչ միայն չօգնեց, այլև բազմաթիվ խոչընդոտներ հարուցեց վիճակագրության ընթացքը խաթարելու համար: Արխիվային մի վավերագրում՝ թվագրված 1822 թ. հունիսի 23, Ներսես Աշտարակեցին դիմում է փոխկուսակալ Վեյամինովին՝ նշելով, որ Մեհտի Ղուլի խանը և Ղարաբաղի կառավարիչ Ռեուտը ոչ պատշաճ վերաբերմունք են դրսևորել հայ բնակչության վիճակագրությունը կազմելու հարցում, ուստի խնդրում է համապատասխան կարգադրություն<sup>132</sup>: Իր հերթին Վեյամինովը, 1822 թ. հուլիսի 8-ին պատասխանելով Ներսես Աշտարակեցուն, խնդրում է նրան հետաձգել վիճակագրական հաշվառումը մինչև ձմեռային շրջան<sup>133</sup>:

1822 թ. հուլիսի 8 թվագրված մեկ այլ նամակ էլ Վեյամինովն ուղարկում է Մեհտի Ղուլի խանին: Նամակում նա բացատրում է խանին վիճակագրության անհրաժեշտության մասին որ այն նպատակ ունի պարզելու ռուսական կայսրության տարածքում քրիստոնյաների թիվը և, ի վերջո, դա անհրաժեշտ է հողագրության և ընդհանրապես պատմության համար: Վերջում նա ավելացնում է, որ վիճակագրությունը ոչնչով չի ազդի խանի իրավունքներին<sup>134</sup>:

<sup>131</sup> Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 165, վավ. 559, վավ. 560:

<sup>132</sup> Նույն տեղում, վավ. 561:

<sup>133</sup> Присоединение Восточной Армении к России, т. II, с. 105.

<sup>134</sup> Նույն տեղում, ինչպես նաև Մատենադարան, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 159, վավ. 182, թ. 1-3:

իր մեկ այլ՝ 1822 թ. հուլիսի 9 թվագրված զեկույցում գեներալ Ի. Վեյամինովը ներկայացնում էր Մեհտի Ղուլի խանի ծայրահեղ անհանգստության պատճառով հայ բնակչության հաշվառումը որոշ ժամանակով հետաձգելու մասին<sup>135</sup>:

Մեհտի Ղուլի խանը զարմանք ու անհանգստություն էր արտահայտել Վեյամինովին ուղղված իր նամակում. «Եթե հայերը և թաթարները նույն խանության բնակիչներն են, ապա ո՞րն է հայերին թաթարներից առանձնացնելու և վիճակագրելու պատճառը, արդյո՞ք սա ապագայում հողերը եկեղեցիներին և մզկիթներին հանձնելու համար է արվում»: Նա տարակուսում էր. հայ եկեղեցու եկամուտները գրանցելու համար պետք չէ հատուկ վիճակագիրներ ուղարկել, դա կարելի է ձշտել նաև թեմի եպիսկոպոսից: Վերջում նա ավելացնում է, որ յուրաքանչյուր տարի դրսեկ որևէ մեկի կողմից Ղարաբաղի հայերին վիճակագրելը հակասում է Ղարաբաղյան կարգին և օրենքին<sup>136</sup>: Աղբյուրների հաղորդած տեղեկությունները փաստում են, որ Ղարաբաղի բնակչության վիճակագրությամբ ստիպված էր եղել զբաղվել 1822 թ. հուլիսի 29-ին Եփրեմ կաթողիկոսին այցելած Ներսես Աշտարակեցին<sup>137</sup>:

Վիճակագրության հետ կապված այս դեպքերը, ցույց տվեցին, որ Մեհտի Ղուլին այնքան ինքնահաստատ էր զգում իրեն Ղարաբաղում, որ փորձում էր նույնիսկ հակառակվել ցարական պաշտոնական կարգադրություններին: Բնականաբար, ցարական կառավարությանը ոչ միայն ձեռնադրու չէր, այլև անհաճ էր ի դեմ Մեհտի Ղուլիի, որպես Ղարաբաղի խան ունենալու իրողությունը:

Դրան գումարվել էր նաև ներքին գործոնը՝ նոր հողեր ստացած տեղական իշխողների երկյուղը. գինեմոլ խանը վատ հիշողություն ուներ և երեկվա տված թուղթը կարող էր վաղն ուրանալ, ուստի նրա հեռացումը պարզապես անհրաժեշտություն էր: Օգտվելով այն հանգամանքից, որ Մեհտի Ղուլի խանը բավական երկչուտ մարդ էր՝ ամեն կողմից սկսեցին նրան վախեցնել, թե ռուսները

<sup>135</sup> АКАК, т. VI, ч. I, док. 609, с. 452.

<sup>136</sup> АКАК, т. VI, ч. I, док. 1288, с. 846.

<sup>137</sup> Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 165, վավ. 607:

մտադիր են նրան սպանել, Սիբիր արքայի և այլն<sup>138</sup>: Մեհտի Ղուլիին վախեցնելու ամենալուրջ փորձը կազմակերպվեց 1822 թ. վերջերին, երբ Շուշուում խանի եղբորորդի և հակառակորդ Ջաֆար Ղուլի աղան իր իսկ դեմ կեղծ մահափորձ կազմակերպեց: Դրանով Ջաֆար Ղուլի աղան նպատակ ուներ կասկածներն ուղղելու Մեհտի Ղուլի խանի դեմ և նրան հեռացնելով Ղարաբաղի խանությունից՝ դառնալ խան<sup>139</sup>: Դա էլ բավական եղավ, որ խուճապահար խանը փախչեր Պարսկաստան<sup>140</sup>:

1822 թ. նոյեմբերի 21-ին կատարվածի մասին Վ. Մադաթովն իսկույն տեղեկացնում է Ի. Վելյամինովին<sup>141</sup>: Նա խանի փախուստը բացատրում էր Ղարաբաղի ժողովրդին պատճառաւ կեղեքումների համար հաշվեհարդարից խոյս տալով<sup>142</sup>:

Մեհտի Ղուլի խանի փախուստից հետո Ա. Երմոլովը դիմում է Ղարաբաղի ժողովրդին՝ հայտարարելով խանական կառավարման մեկընդմիջտ վերացման մասին: Իր ուղերձում նա հայտարարում է նաև, որ բեկերի և ընդհանրապես բնակչության սեփականությունը անձեռնմխելի կմնա, իսկ ամբողջ խստությամբ կհետապնդվեն նրանք, ովքեր մասնակցել են խանի դավաճանական արարքներին և կշարունակեն նրա հետ գաղտնի կապեր ունենալ: 1822 թ. նոյեմբերի 25-ին Ա. Երմոլովը կարգադրություն է ուղարկում Վ. Մադաթովին՝ կապված խանի փախուստից հետո ձեռնարկվելիք միջոցառումների հետ: Երմոլովը հանձնարարում էր Մադաթովին՝ մինչև պարետի նշանակումն այդ գործը հանձնարարել փոխգնդապետ Ի. Ռեուտին, իսկ նոր կառավարման համար ընտրել խանի ժամանակ ծառայած աստիճանավորներ: Նա գրել է. «Ես համոզված եմ, որ Ղարաբաղի բնակիչները, որոնց նախկինում ունեցած իրավունքները և սեփականությունը պահպանվել են,

<sup>138</sup> Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 9, էջ 582:

<sup>139</sup> АКАК, т. VI, ч. I, док. 1306, с. 855.

<sup>140</sup> Լեո, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 398, Покровский М., Дипломатия и войны царской России в XIX столетии, сборник статей, Москва, 1923, с. 186-187.

<sup>141</sup> Присоединение Восточной Армении к России, т. II, с. 108.

<sup>142</sup> Записки Алексея Петровича Ермолова с приложением, ч. II. 1816-1827 гг., Москва, 1868. См. Раздел «Приложения к запискам Ермолова», с. 167-168.

կծգտեն սրտանց և հավատարիմ ծառայությամբ ապացուցելու իրենց հավատարմությունը կայսերը»<sup>143</sup>:

1822 թ. աշնանը Ա. Երմոլովը լինում է Ղարաբաղում: Նրա ներկայությամբ Շուշիում բացվում է դիվան (գավառային դատարան), ազդարարվում է ռուսական վարչակարգի մուտքը, և ժողովուրդը հավատարմության երդում է տալիս ռուսական կայսեր: Շուշիի բնակիչները որպես հիշատակ Ա. Երմոլովին են նվիրաբերում պողպատյա սուսեր՝ գավառի միացման մասին մակագրությամբ<sup>144</sup>:

Արդեն 1822 թ. դեկտեմբերի 14-ին Ա. Երմոլովը Ալեքսանդր 1-ինին ուղղված զեկույցում գրում է կառավարման նախկին «անառակ» ձևի փոխարեն Ղարաբաղում ռուսական կառավարում մտցնելու և խանի փախուստի պատճառների մասին. «Նրա ամենազվախալի վախը, ինչպես հեշտությամբ կարելի է գուշակել, այն էր, որ խանության բնակիչները Ձերդ Կայսերական Մեծության առատաձեռնությունից՝ մի քանի տարվա պարտքերը չհավաքելու այդ բարեգթությունից չեն օգտվել, քանի որ շվայտ խանը հարկերը գանձարան չէր ներկայացրել, մինչդեռ բնակիչներից հարկեր էր հավաքել»: Ջեկույցում Ա. Երմոլովը նշում էր, որ նախկին կարգադրության համաձայն՝ խանի ժառանգորդը պետք է լիներ Ջաֆար Ղուլի աղան, բայց վերջինս 1804-1813 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ գործել էր ընդդեմ ռուսների, ուստի դա համարում է հիմնավոր պատճառ՝ նրան ժառանգորդությունից հեռացնելու և Ղարաբաղը ռուսական գավառ հայտարարելու համար: Նա հավելում էր Ղարաբաղի գավառի եկամուտները հաշվառելու նպատակով այստեղ ուղարկված իր գրասենյակի քարտուղար Պ. Մոզիլևսկու և վրացական գնդի հրամանատար՝ գնդապետ Պ. Երմոլովի մասին<sup>145</sup>: Ղարաբաղում հաստատված անդորրի մասին 1823 թ. մարտի 5-ին Ա. Երմոլովը զեկույց է ներկայացնում

<sup>143</sup> Нагорный Карабах в международном праве и мировой политике, документы и комментарий, т. I, Москва, 2008, с. 181-182.

<sup>144</sup> Присоединение Кавказа к России XIX век, СПб, 2005, с. 116.

<sup>145</sup> АКАК, т. VI, ч. I, док. 1301, с. 850.



Ալեքսանդր 1-ինին<sup>146</sup>, ինչի համար ցարի կողմից արժանանում է գովեստի<sup>147</sup>:

Խանի փախուստի լուրը ցնծությամբ էր ընդունվել հայ առաջադեմ շրջանների կողմից: Այս մասին Ներսես Աշտարակեցին 1823 թ. հունվարի 8 թվագրված և Հովակիմ Լազարյանին ուղղված իր նամակում գրել է. «Ղարաբաղու Մեհտի Ղուլի խանն ինքնահալած գտանիլ յամսոյս քսանն դեկտեմբերի փախուցեալ անկաւ յԵրևան եւ զկին եւ զընտանիս նորա առաքեցին յետոյ նորա եւ մէք գոհանամք, վասնզի իւրայինք ազատեցան նեղութեան նորա»<sup>148</sup>:

Մեհտի Ղուլի խանի փախուստից հետո Ղարաբաղի շատ բնակիչներ, ովքեր նրա օրոք չէին ցանկանում վերադառնալ հայրենիք, այժմ ցանկություն ունեին ետ վերադառնալու, սակայն նրանց այս անգամ խոջընդոտում էր Մեհտի Ղուլիի եղբայրը՝ Ղարաբաղի Աբուլ Ֆեստի խանը՝ սպառնալով զենքով և հակագործողություններով: Դատապարտելով այդ արարքը՝ Ա. Երմոլովը 1822 թ. դեկտեմբերի 29-ին դիմել էր Աբբաս Միրզային՝ վկայակոչելով երկու պետությունների միջև կնքված պայմանագիրը<sup>149</sup>: 1823 թ. մարտի 31-ի կարգադրությամբ Ա. Երմոլովը Վ. Մադաթովին հրամայում է. «...Պարսիկներից մեզ մոտ գալ ցանկացողներին մերժել՝ բացի Ղարաբաղի նախկին տերերից, նստակյաց կեցություն ունեցող ժողովուրդներից, չթույլատրել այնպիսի քոչվոր ցեղերի, ինչպիսիք են շահսևանցիները և չելբայանցիները»<sup>150</sup>:

Մեհտի Ղուլի խանի փախուստից հետո պարսկական կողմը հարձակումներ էր հրահրում սահմանամերձ շրջանների դեմ: Այս մասին 1823 թ. հուլիսի 20-ին Ա. Երմոլովը նշում էր, որ

<sup>146</sup> АКАК, т. VI, ч. II, док. 1306, с. 855.

<sup>147</sup> Нагорный Карабах в международном праве и мировой политике, документы и комментарий, т. I, с. 183.

<sup>148</sup> Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 105, գ. 13, վավ. 198, թ. 1:

<sup>149</sup> АКАК, т. VI, ч. II, док. 505, с. 272.

<sup>150</sup> АКАК, т. VI, ч. II, док. 515, с. 275. Կարգադրության պատճառն այն էր, որ Ղարաբաղի տարածքով Թալիշի խանություն ներգաղթելու ժամանակ քոչվոր ցեղերը, հատկապես շահսևանցիները մեծ անկարգություններ էին հարուցում, այս մասին տե՛ս АКАК, т. VI, ч. II, док. 475, с. 257.

Ղարաբաղ ասպատակած ավագակախմբերի գերիներից մեկի խոստովանությամբ՝ հարձակումները հրահրված էին պարսկական ղեկավարության կողմից: Ապա Ա. Երմոլովը շարունակել է. «Մեհտիի քույրերին ես Պարսկաստան չեմ թողնում գնալ, որովհետև նրանցից մեկի հետ վաղուց ցանկանում է ամուսնանալ Երևանի սարդարը, և ո՞վ չի համոզված, որ 70-ամյա ցնդած ծերունին կին է առնում, որպեսզի կնոջ՝ Ղարաբաղում ունեցած կապերի միջոցով անհանգստություն տարածի և հրապուրի բնակիչներին»<sup>151</sup>:

Ղարաբաղն այնքան էլ հեշտ չազատվեց Մեհտի Ղուլի խանից: 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո Մեհտի Ղուլի խանը բազմաթիվ դիմումներով խնդրեց ռուսական կառավարությանը՝ հետ վերադառնալ «իր տարածքները»: Նրա վերադարձի մասին Մատենադարանի արխիվային վավերագրերից մեկում Լազարյանների զեկուցագրում նշված է. «Այս ամսվա 15-ին տեղեկացնում են Թիֆլիսից, որ Ղարաբաղի Մեհտի Ղուլի խանը, որը իշխան Մադաթովի ժամանակ փախել էր, այժմ իր ընտանիքով և 3000 հպատակներով եկել է Ղարաբաղ, ինչի մասին արդեն հայտարարված է Թիֆլիսում, այս լուրը հայտնի է դարձել այնտեղ հունիսի 24-ին»: Զեկուցագրի երկրորդ մասում նշվում է, որ շահի հրամանագրով ռուսահպատակ պարսիկները պետք է վերադառնան իրենց բնակավայրերը, և նրանցից շատերն արդեն հասել էին Ղարաբաղ<sup>152</sup>:

Այսպիսով՝ 1822 թ. Ղարաբաղում վերջ է դրվում դեռ նախորդ դարի կեսերին սկիզբ դրված՝ հայ իրականությանը խորթ խանական կառավարմանը: Ինքնակալությունը գնահատելով իրավիճակը, բնականաբար, Գյուլիստանի պայմանագրից հետո չէր վերացրել խանական վարչակարգը հաշվի առնելով այն հանգամանքը, որ այն իր դեմ կհաներ վարչակարգին հավատարիմ՝ Պարսկաստանի հետ գաղտնի հարաբերությունները շարունակող խանական ընտանիքն ու նրան շրջապատող մահմեդականների մի

<sup>151</sup> АКАК, т. VI, ч. II, док. 520, с. 280.

<sup>152</sup> Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 106, գ. 51, վավ. 51, թ. 1, գ. 51, վավ. 49, թ. 1-2:

սովար զանգված: Դա է պատճառը, որ տեղական դրածոների միջոցով իրադրությունը հասունացվեց: Թերևս, նախօրոք հաշվի էր առնվել վարչակարգերի կտրուկ վերացման պատմական փորձն ու դրանց հետևանքները: Դարասկզբի պատերազմներից հետո ինքնակալությանը բավարարում էր իրավիճակը, մինչև այն պահը, երբ սկսեց վնասել նրա շահերին: Խանական վարչակարգին փոխարինելու եկած ռուսական վարչակարգի գլխավոր խնդիրը Ղարաբաղի գաղութացումն էր:

Ստիպված ենք արձանագրել այն իրողությունը, որ Արցախի պատմության այս հատվածը ևս դուրս չի մնացել ադրբեջանական պատմագրության տեսադաշտից: Պարսկաստանի հպատակության տակ գտնվող Ղարաբաղի խանության պատմությունը սեփականելու փորձերը խոսում են այն մասին, որ 1918 թվականից հիշատակվող պետությունը՝ Ադրբեջանը, հավակնություններ ունի ոչ միայն հարևան պետությունների տարածքների, այլ նաև նրանց պատմության նկատմամբ: Հայ պատմագիտության խնդիրն է պայքարել սեփական պատմության հաշվին ինքնահաստատվելու ցանկություն ունեցող հակառակորդ պետության պատմագրության դեմ: Ինչպես Ղարաբաղին վերաբերող բոլոր հարցերում, այնպես էլ այս հարցում բավականին շատ են խճողումները: Առաջին խեղաթյուրումն այն է, որ սեփականվել էր Ղարաբաղի խանության տարածքը և այն ներկայացվում է որպես «ադրբեջանական» վարչաքաղաքական միավոր, բնակեցված՝ առավելապես «ադրբեջանցիներով»: Պատմական աղբյուրներին հակասում է նաև Ղարաբաղի խանության վերացման հարցը: «Ղարաբաղյան ողբերգության 200-ամյակը» խորագրված հոդվածում անդրադառնալով 1805 թ. մայիսի 14-ին ստորագրված Քյուրակչայի դաշնագրին հոդվածի հեղինակը գրում է. «Ղարաբաղի խանության կողմից Քյուրակչայի դաշնագրի կնքումը և Ռուսաստանի հպատակության ընդունումը ոչ մի կապ չունի հայերի հետ: Այդ ժամանակ հայերը Ղարաբաղում այնքան քիչ էին, որ նրանք չէին կարող ազդել քաղաքական իրադարձությունների վրա: 1813 թ. Գյուլիստանի պայմանագրի կնքումից հետո Ռուսաստանը նշանակալիորեն ամրապնդվեց Ադրբեջանում,

և ուշադրություն չդարձնելով ստորագրված հավիտենական երդմամբ հաստատված խոստմանը սկսեց վերացնել խանությունը»<sup>153</sup>: Վերը ներկայացված Ղարաբաղի խանության վերացման շարժառիթների և վիճակագրության դեպքերի մասին յուրօրինակ եզրահանգումներ է կատարել հաջորդ հեղինակը, որը վկայակոչելով 1822 թ. հուլիսի 8-ի Ա. Վեյամինովի նամակը գրում է. «Հարավային Կովկասում քրիստոնեական հենարան ստեղծելու համար մուսուլմանական ադրբեջանական ակնհայտորեն գերակշռող բնակչությանն ի հակակշիռ ռուսական իշխանությունը հայերին նվիրեց Ղարաբաղը: Ոչ պակաս կարևոր ապացույց է նաև Ա. Վեյամինովի և Ներսես Աշտարակեցու նամակագրության գաղտնիությունը և նրան Ղարաբաղի խանի նամակի պատճենի տրամադրումը: Դրանով հայկական եկեղեցին ստացել էր իր նկատմամբ ռուսական իշխանությունների բարեհաճ վերաբերմունքի հաստատումը»: Հեղինակը փորձել էր ետնախորք տեսնել նաև Ա. Երմոլովի Ղարաբաղի ժողովրդին ուղղված խանության վերացման մասին հրովարտակում: Նա գրում է. «Երմոլովը հանդես եկավ ուղերձով, որտեղ ոչ մի պաշտոնական փաստաթղթի հիշատակություն չկար Սանկտ-Պետերբուրգից՝ կայսեր մանիֆեստ, հրամանագիր, ինչը կհաստատեր խանության վերացումը... դա թույլ է տալիս եզրակացնել, որ նման որոշումն ավելի վաղ է ընդունվել և դրանից հետո ձեռնարկվել է ամեն հնարավորը, որպեսզի Մեհտի Ղուլի խանը «կամավոր» թողներ խանությունը»<sup>154</sup>: Իրականում, ինչպես վերը մեր կողմից նշվել էր՝ Ա. Երմոլովը ցարի կողմից անսահմանափակ լիազորություններով էր օժտված և խանության վերացման համար իր պատճառներն ուներ, որոնք բխում էին կայսրության շահերից:

Համացանցը հեղեղած պատմական իրականությանը հակասող նյութերից մեկում, մասնավորապես՝ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի էլեկտրոնային գրադարանում տեղակայված

<sup>153</sup> Гасанлы Дж., 200-летие Карабахской трагедии (Организация Освобождения Карабаха), материалы научно-практических конференций по теме «Карабах вчера, сегодня и завтра», вторая часть, Баку, 2009, с. 52-53.

<sup>154</sup> Абасов Ф., Гарабагское ханство, Баку, 2007, с. 99, с.141.

հետևյալ տեղեկատվության մեջ կարդում ենք. «...1805 թ. Քյուրակ-  
չայի դաշնագրով Ղարաբաղի խանությունը փաստորեն միացվեց  
Ռուսաստանին: Եվս 17 տարի խանական կարգի պահպանումն  
ունեցել է որոշակի ստրատեգիական նպատակ: 1806 թ. Իբրահիմ  
խանի սպանությունը ցույց է տվել, որ Ռուսաստանը հաշվի չի  
առնում օրենքները: Նման պայմաններում Իբրահիմ խանի որդու  
Մեհտի Ղուլի խանի (1806–1822 թթ.) իշխանությունն ամուր չէր:  
Ցարական կառավարությունն ուժեղացրեց նվաճողական քաղա-  
քականությունը՝ իր իշխանությունն ամրապնդելու համար՝ ձգտե-  
լով թուլացնել տեղական մահմեդական բարձր դասի տնտեսա-  
կան դիրքերը, առաջ մղելով գրիգորիանական և հայկական ալ-  
բանցիներին, որոնց համարում էր իր սոցիալական հենարանը»<sup>155</sup>:  
Մեկ այլ հոդվածում փորձ էր արված խնդիրը քաղաքական  
հարթակից տեղափոխել առավել նեղ՝ ներանձնային հարաբե-  
րություններ. «Ինչպես տեղական, այնպես էլ ռուսական աղքյուր-  
ները նկատում են Մեհտի Ղուլի խանի բարյացակամությունը և  
հավատարմությունը Ռուսաստանի նկատմամբ: ...Սակայն Ա. Պ.  
Երմոլովը վարում էր հյուսիսադրբեջանական խանությունների  
լիկվիդացման քաղաքականություն: Իր գլխավոր օգնական Հա-  
րավային Կովկասի մահմեդական գավառների պետ հայկական  
ծագումով ռուսական գեներալ Վ. Մադաթովի հետ նա մշտապես  
ճնշում էր Մեհտի Ղուլի խանին և նրա դեմ մահափորձ էր նախա-  
պատրաստում : Արդյունքում 1822 թ. նոյեմբերի 21-ին Ղարաբաղի  
Մեհտի Ղուլի խանը ստիպված էր հեռանալ Հարավային Ադրբե-  
ջան...»<sup>156</sup>: Իրականում, սակայն մեր կողմից քննարկվել են Մեհտի  
Ղուլի խանի պարսկական կողմի հետ գաղտնի համագործակ-  
ցության, ռուսական կողմի նկատմամբ անուղղակի անհնազան-  
դության դեպքեր, ինչպես նաև Ջաֆար Ղուլի աղայի կողմից  
կազմակերպված մահափորձի մասին, և ընդհանրապես, այս  
հարցում ցարական կառավարության պետական քաղաքակա-  
նության պատճառները: Այսինքն, պատմական անաչառության  
դիտակետից Ղարաբաղի խանության վերացման պատճառների

<sup>155</sup> <http://files.preslib.az/projects/azerbaijan/rus/gl7.pdf>

<sup>156</sup> [www.irs-az.com](http://www.irs-az.com)

մասին ադրբեջանական պատմագրության մեջ առաջ են քաշված հիմնագուրկ և պարզունակ տեսակետներ: Պատմական իրակա- նության վերլուծությունը փաստում է, որ Ղարաբաղի խանական վարչակարգի վերացմանը նպաստել են արտաքին և ներքին գործոններ:

Գյուլիստանի պայմանագրի քաղաքական հետևանքների ման- րաման քննությունը թույլ է տալիս հստակորեն ընդգծել, որ այն արցախահայությանն առաջին հերթին տվեց խաղաղ գոյատևման և արարելու հնարավորություն: Պայմանագրի հետևանքով ստեղծ- ված համեմատաբար բնականոն կենսապայմանները բավարար հիմք հանդիսացան, որպեսզի ծավալվեր պատերազմի հետևան- քով հեռացած Ղարաբաղի բնակչության հայրենադարձություն: Համամիտ լինելով Վ. Բալայանի տեսակետին՝ մենք ևս կարևոր ենք համարում Գյուլիստանի պայմանագրի իրավաքաղաքական ենթատեքստը՝ այդ պատմական պահին Ղարաբաղի ինքնու- րույն ազգային իրավական կարգավիճակի սահմանումը, որն այ- սօր փաստական հիմք կարող է լինել ԼՂՀ իրավական ճանաչման ճանապարհին<sup>157</sup>: Պատմական իրադարձությունների ուսումնա- սիրությունը ցույց է տալիս, որ Արևելյան Հայաստանի միակ քիչ թե շատ ապահով անկյունը՝ ռուսահպատակ Ղարաբաղը, կարճ ժամանակամիջոցում հաղթահարելով հետպատերազմյան դժվա- րությունները, բռնել էր շենացման ուղի՝ փորձելով լուծում տալ համահայկական նշանակության այնպիսի խնդրի, ինչպիսին էր Եփրեմ կաթողիկոսի նվիրակությունը: Պայմանագրի հետևանքով ստեղծված պատմաքաղաքական կացությունն օգտագործելով՝ Արցախի թեմի առաջնորդ Բաղդասար մետրոպոլիտն իրակա- նացնում է հողափրկչական աշխատանքներ, որոնք նշանակալի էին ու արդիական:

Բացի վերոնշյալ դրական հետևանքներից, Գյուլիստանի պայմանագրի քաղաքական հետևանքների վերլուծությամբ բացահայտվում են նաև բացասական հետևանքներ: Պայմա- նագիրն ավելի էր բորբոքել Ռուսաստանի և Պարսկաստանի

<sup>157</sup> Բալայան Վ., նշվ. աշխ., էջ 204-205:

միջև սահմանային հարցերը. շահարկվող հարցերից էր Ղարաբաղի տարածքի հարցը: Պայմանագիրը հուսախաբ արեց հայ առաջադեմ հասարակությանը, ովքեր մեծ հույսեր էին կապել ռուսական տիրապետության հետ՝ համարելով, որ այդուհետ կվերականգնվի Ղարաբաղի մելիքների նախկին փառքն ու հզորությունը: Սակայն իրականում տեղի էր ունեցել հակառակը՝ ցարիզմն, ի սկզբանե, մելիքական կարգի վերականգնման հարցում որևէ հույս չներշնչելով՝ պահպանեց խստական խամաճիկային վարչակարգը, ինչը վերացվեց միայն այն պահին, երբ կայսրությունն իրեն բավականաչափ ապահով էր զգում հպատակ տիրույթներում: Փաստորեն, դրական հետևանքներով հանդերձ, Գյուլիստանի պայմանագրով վերջնականապես թաղվեց Արցախի մելիքությունների վերականգնման հույսը:

Այսպիսով, Գյուլիստանի պայմանագրի քաղաքական հետևանքների քննությունը թույլ է տալիս կատարել մի շարք նկատառումներ: Պատմական օրինաչափությամբ միայն հետամնաց մի տիրապետության փոխարինումը համեմատաբար զարգացած մեկ այլ տիրապետությամբ, այսինքն՝ նվազ զարգացած աստիճանի բացասումը համեմատաբար զարգացած աստիճանով պետք է առաջադիմական համարել: Սակայն օրինաչափություններից բացի գոյություն ունեն նաև պատմական փաստերի գնահատման չափանիշներ, ինչը թույլ է տալիս մեզ հակվել այն կարծիքին, որ Գյուլիստանի պայմանագրով Ղարաբաղի միացումը Ռուսաստանին «չարյաց նվազագույնն էր»: Իրականում սա այնքան էլ խիստ կամ ծայրահեղ որակում չէ, իմաստաբանությունը շատ հստակ է. երբեք օտարի տիրապետությունը չի կարող «բացարձակ բարիք» լինել, իսկ տվյալ դեպքում ռուսական տիրապետությունը պարսկական տիրապետության համեմատությամբ «չարիքներից նվազագույնն» էր: Կայացած միջազգային-իրավական ակտին այլ գնահատական կտրվել, եթե իրագործվեր Արցախի ինքնավար վարչաքաղաքական միավորի ստեղծման գաղափարը: Ի վերջո, հազարարամյակների բովով անցած մշակութային հարուստ ու օրինակելի ժառանգություն, արքայատոհմեր, պետականության պահպանման և

վերականգնման համար մշտապես պայքարող ժողովրդի դեպքում՝ միացումը ռուսական կայսրությանը պարզապես պետք է դիտարկել, որպես պատմական իրադարձությունների զարգացման արդյունքում ձևավորված նոր, անխուսափելի փուլ՝ իր ունեցած դրական ու բացասական հետևանքներով:

Հավելենք նաև, որ վերոնշյալ շրջադարձային պատմաշրջանի ուսումնասիրությունը խիստ կարևոր և արդիական է պատմական դասերի, ինչպես նաև՝ անկողմնակալ դիրքերից այն արդի քաղաքական գործընթացներին ծառայեցնելու առումով:



## **Բ) ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ 1826-1828 ԹԹ. ՌՈՒՍ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ**

1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմը և նրա ետնախորքում Շուշիի հերոսական պաշտպանությունը հայ պատմագիտության ուսումնասիրված էջերից են: Խոյս տալով հանրահայտ փաստերից՝ նպատակ ունենք ուշադրության արժանացնել այդ դեպքերի՝ ցայսօր չուսումնասիրված կամ մասամբ միայն լուսաբանված կողմերը: Ուսումնասիրության շրջանակներից դուրս են մնացել աղբյուրներում տեղ գտած այն փաստերը, որ պարսկական կողմն առաջին հարվածներից մեկը հասցնելու է Ղարաբաղին: Որոշակի ճշգրտման կարիք ունի Շուշիի պաշարման ժամանակաընթացքի հարցը: Սահմանափակվելով միայն Շուշիի պաշտպանության մանրամասները ներկայացնելով՝ ըստ արժանվույն չի գնահատվել նրա նշանակությունը: Բավարար ուշադրություն չի դարձվել պարսկական արշավանքի ընթացքում Ղարաբաղի մնացած հատվածներում տեղի ունեցած ռազմական գործողություններին ու քաղաքական իրադարձություններին: Ուսումնասիրության տեսակետից կարևորվում է նաև Թուրքմենչայի պայմանագրով կազմակերպված պարսկահայերի մի փոքր հատվածի ներգաղթը Ղարաբաղ: Այն քաղաքական հնչողություն է ստացել՝ կապված ադրբեջանական նոր «պատմաշինարարության» հետ, որը փորձում է ցույց տալ, թե հայությունը Ղարաբաղում հաստատվել է ներգաղթի հետևանքով: Այդ է պատճառը, որ խնդրի լուսաբանումը համարվում է արդի շրջանի մարտահրավերներից մեկը:

Գոյություն ունեն ծանրակշիռ փաստարկներ, որոնց համաձայն՝ պարսկական կողմն առաջին հարվածներից մեկը հասցնելու էր Ղարաբաղին: 1826 թ. հունիսի 18-ին մայոր Չելյակի՝ Ի. Վելյամինովին ուղղված զեկույցում նշված է. «Ղարաբաղի հայերից Ջհանգիր Լել է բեկ օլլին<sup>158</sup>, Ղարադաղից վերադառնալով Չանախչի, տեղեկություններ է բերել, որ պարսկական զորքը պատրաստվում է

<sup>158</sup> Ուսումնասիրվող ժամանակաշրջանի աղբյուրներում հաճախ է հանդիպում հայկական անուն ազգանունների օտարացման երևույթը, այս դեպքում՝ Ջհանգիր:

հարձակվել Ղարաբաղի վրա տարբեր ուղղություններից և հույս ունեն արագ հաղթանակի՝ տեղի քոչվոր ժողովուրդների և Ղարաբաղի՝ իրենց կողմն անցած բեկերի շնորհիվ Շուշիի ամրոցը արագորեն գրավելու համար»<sup>159</sup>:

Վերոնշյալի մասին փաստող հաջորդ աղբյուրը մայրո Չեյյանի՝ 1826 թ. հուլիսի 1-ի զեկույցն է Ի. Վեյյամինովին, որտեղ մասնավորապես ասված էր, որ Թավրիզ ուղարկված շուշեցի Խաչատուր Պետրոսովը բերել էր տեղեկություններ, որոնց համաձայն՝ Պարսկաստանում բացահայտորեն նախապատրաստական մեծ աշխատանքներ են տարվում պատերազմ սկսելու համար, և առաջին հարվածը հասցվելու էր Ղարաբաղին: Փաստաթղթում ընդգծվում էր նաև պարսիկների շրջանում կրոնական մոլեռանդություն հրահրելու հանգամանքը. «Տեղացի բեկերը ոչ միայն Ղարաբաղյան, այլ նաև ամբողջ մուսուլմանական պրովինցիաներից մշտական կապեր ունեն պարսկական կառավարության հետ և համարյա բոլոր վայրերից, արևելյան սովորույթի համաձայն, ուղարկում են կանացի գլխաշորեր և զգեստներ՝ դրանցով պարսիկներին մեղադրելով կանացիակերպության մեջ՝ կոչելով նրանց շուտափոյթ ազատագրել իրենց հավատակիցներին Ռուսաստանի հպատակության լծից»<sup>160</sup>: Այս վերջին տեղեկությունը, Պարսկաստանի նախապատրաստությունների մասին պետք է զգաստացնեն ցարական կառավարությանը, բայց այն սպասված ներգործությունը չունեցավ: Նման պատասխանատու պահին Ա. Երմոլովի ուշադրությունը կենտրոնացված էր միայն Թիֆլիսի վրա, իսկ Ղարաբաղի անառիկ ամրոց Շուշին ամրացնելու մասին խոսք անգամ չկար: Հետագայում Ի. Պասկևիչն իրավացիորեն նկատել է. «Ծանոթանալով ամրոցին՝ ես շատ զարմացա, որ գեներալ Երմոլովը այն կարևոր չէր համարում և թողել էր վատ վիճակում: Ես հարցրել եմ պատճառը, ինձ պատասխանել են, որ մտադրություն է եղել ամրոց կառուցելու Արաքսի մոտ, քանի որ Շուշին գտնվում էր լեռներում: Եվ այսպես, Ելիզավետպոլը թողնված էր նրա համար, որ գտնվում էր հարթավայրում, իսկ Շուշին նրա համար,

<sup>159</sup> АКАК, т. VI, ч. II, док. 627, с. 347.

<sup>160</sup> АКАК, т. VI, ч. II, док. 632, с. 348, док. 629, с. 347-348.

որ գտնվում էր լեռներում»<sup>161</sup>: Երմուլովի մտադրությունը՝ Արաքսի ափին ամրոց ունենալը, հավանաբար, պայմանավորված էր հակառակորդին սահմանազլխին կանգնեցնելով և ռազմական գործողությունները երկրի խորքը չտեղափոխելու նկատառումներով: Հետախուզական տվյալների բացակայության դեպքում անգամ հարվածն այս ուղղությամբ ակնկալելի էր, հաշվի առնելով պարսկական արշավանքների ավանդական երթուղին:

Շուշին չամրացնելու մյուս պատճառն այն էր, որ Ա. Երմուլովը չէր պատրաստվում այնտեղ երկու գումարտակ թողնել, որոնք, փակվելով այստեղ, անգործության կմատնվեին<sup>162</sup>: Դրա համար նա դեռ հուլիսի 21-ին գնդապետ, Շուշիի պարետ՝ Ի. Ռեուտին կարգադրել էր զորքերը հավաքել Չանախչիում, սպասել երկու վաշտերի ժամանմանը Շիրվանից, իրենց ուժերը համալրել ի հաշիվ Ղարաբաղի ոստիկանության: Պարսկական մեծաքանակ զորքերին դիմագրավել չկարողանալու դեպքում հանձնարարված էր նահանջել Շահբուլաղ, Ելիզավետպոլ, ապա Թիֆլիս: Հուլիսի 21-ին Թիֆլիսում գրված այս հանձնարարականը տեղ չէր հասել, քանի որ պարսիկներն առգրավել էին: Կարգադրությունը նույնիսկ տեղ հասնելու դեպքում չէր կարող իրագործվել, քանի որ պարսիկներն արդեն ներխուժել էին Ղարաբաղ<sup>163</sup>, իսկ հուլիսի 25-ին՝ պաշարել Շուշին:

Շուշիի պաշարման և պաշտպանության մանրամասները պատմագիտության մեջ բավականաչափ ուշադրության են արժանացել, ուստի առավել նպատակահարմար ենք գտել չլրկնել դրանք և փաստերի հիմքի վրա կատարել պատմագիտական մի ճշգրտում

<sup>161</sup> Потто В., Кавказская война, т. III, Персидская война 1826-1828, с. 221. Պասկևիչ-Երմուլով ակնհայտ հակակրանքի մասին տե՛ս Алавердяни М., Граф Иван Феодорович Паскевич-Эриванский и его деятельность на Кавказе, СПб, 1912.

<sup>162</sup> Հարկ է նշել, որ 1805 թ. Քյուրակչայի դաշնագրից հետո Շուշիում տեղակայվել էր մայրո Դ. Լիսանևիչի գունդը: Թաղամասը, որտեղ տեղակայված էր զորամասը, կոչվել է «Կազարմայի» թաղ: Շուշիում պահպանվել է գնդապետ Ի. Ռեուտի տունը, որը տեղակայված է հյուսիսային բերդապարսպի պարսպապատի երեք աշտարակային թնդանդանների համար նախատեսված աշտարակից հարավ, այգու հարևանությամբ:

<sup>163</sup> Потто В., Геройская оборона крепости Шуши, СПб, 1903, с. 10.

պաշարման ժամանակարնթացքի հարցում: Հատկանշական է, որ հայ և ռուս մինչխորհրդային և խորհրդային պատմագրության մեջ ընդունված էր Շուշիի պաշարման տևողությունը համարել 48 օր: Շուշիի պաշարումը մինչև 50 օր ներկայացրել է Զ. Գրիգորյանը<sup>164</sup>, 48 օր՝ Ծ. Աղայանը, Բ. Բալայանը, Ա. Գիլիխանդանեանը, Վ. Պարսամյանը, Վ. Սևյանը<sup>165</sup>:

Փորձենք ձգբոտել Շուշիի պաշարման վերացման ամսաթիվը՝ ստորև ներկայացնելով այն հեղինակների հաղորդած տվյալները, որոնք Շուշիի պաշարման ավարտը համարում են սեպտեմբերի 5-ը: Միրզա Յուսուֆ Ներսեսովի հաղորդած տվյալների համաձայն՝ Շամխորի ճակատամարտի պարտությունից<sup>166</sup> հետո Աբբաս-Միրզան առաջ է ընթանում՝ **«իր հետ վերցնելով Շուշի բերդի մոտ եղած իր ամբողջ զորքը»**<sup>167</sup>: Շուշիի պաշարման ավարտը սեպտեմբերի 5-ն են համարում Ալ. Երիցյանը<sup>168</sup>, Լեոն<sup>169</sup> և Վ. Պոտտոն<sup>170</sup>:

Պաշարման ավարտը սեպտեմբերի 5-ն է համարվում 1828-1829 թթ. թվագրված մի վավերագրում, որտեղ Զոհրապ Թառումեանցը Ղարաբաղի անցուդարձի մասին տեղեկություններ է հաղորդում Ներսես Աշտարակեցուն. «ինչևիցէ սուրբ Խաչի պահոց բարեկենդան կիրակի օրն յառաւօտուն, տեսինք օրտուն կրակելայ, և ինքն փախել կորել. ի սեպտեմբերի 5»<sup>171</sup>:

<sup>164</sup> Գրիգորյան Զ., Ռուս և հայ ժողովուրդների համագործակցությունը XIX դարի սկզբին, Երևան, 1957, էջ 71:

<sup>165</sup> Գիլիխանդանեան Ա., Կովկաս երկիրը, ժողովուրդը, պատմությունը, Ա մաս, Փարիզ, 1916, էջ 133, Балаян Б., Международные отношения Ирана в 1813-1828 гг., Ереван, 1967, с. 145, Агаян Ц., Вековая дружба народов Закавказья, ч. первая, Ереван, 1970, с. 133, Россия в судьбах армян и Армении, Москва, 1978, с. 222, Պարսամյան Վ., Ռուսաստանը և հայ ժողովրդի պատմական բախտը, Երևան, 1978, էջ 68, Սևյան Վ., Շուշի, Երևան, 1991, էջ 45:

<sup>166</sup> Մկրտչյան Վ., Գեներալ լեյտենանտ Մադաթով, Երևան, 2001, էջ 23, Мирза Джамал Джеваншир, История Карабага, Баку, 1959, с. 99.

<sup>167</sup> Մ. Յ. Ներսեսով, Չճմարտացի պատմություն, Երևան, 2000, էջ 131:

<sup>168</sup> Երիցյանց Ալ., նշվ. աշխ., էջ 262:

<sup>169</sup> Լեո, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 414:

<sup>170</sup> Պոտտոն Վ., Ղարաբաղի առաջին կամավորները, Երևան, 1974, էջ 31-32:

<sup>171</sup> Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության, գիրք Թ, էջ 54-55:

Այժմ ներկայացնենք այն աղբյուրների տվյալները, որոնց համաձայն՝ Շուշիի պաշարումը շարունակվել է Աբբաս-Միրզայի՝ Ելիզավետպոլ հեռանալուց հետո: Դա հաստատվում է Մադաթովի՝ 1826 թ. սեպտեմբերի 22-ին Երմոլովին ուղղված զեկույցում: Նա գրել է. «...Շամխորում և Ելիզավետպոլում կրած պարտությունից հետո երևում է Աբբաս Միրզան այնքան էր սարսափել, որ առանց մտածելու արագ թողել է Շուշիի պաշարումը և օգնության շտապել որդուն՝ Մամեդ Միրզային, ձգտելով իր զորքերի մնացորդներով արագ հեռանալ Արաքսի մյուս ափը»<sup>172</sup>: Ա. Երմոլովը ցարին ուղղված իր զեկույցում (թվագրված՝ 1826 թ. սեպտեմբերի 30)՝ գրել է. «Պատիվ ունեն զեկույցելու, որ պարսկական գահաժառանգ Աբբաս Միրզան 13-ի (սեպտեմբերի-Ն.Բ.) Ելիզավետպոլի ճակատամարտից հետո փախավ այնպիսի արագությամբ, որ (սեպտեմբերի) 18-ին անցավ Արաքսը և Շուշիի ամրոցը մնաց ազատ»<sup>173</sup>:

Ն. Դուբրովինը Շուշիի պաշարման մասին գրում է. «Տեսնելով կայազորի համառությունը և չհամարձակվելով գրոհով վերցնել ամրոցը՝ Աբբաս Միրզան Շուշիում թողնելով հսկիչ ջուկատ, ինքը սեպտեմբերի 5-ին գլխավոր ուժերով շարժվեց դեպի Ելիզավետպոլ»<sup>174</sup>:

Շուշիի 55-օրյա պաշարման տեսակետը առանց փաստական հիմքերի առաջ է քաշել Ա. Քյուրքչյանը. «Հարցն այն է, որ Շուշիի շրջափակումը չէր կարող սկսվել պատերազմի առաջին օրվանից: Աբբաս Միրզայի զորքերը մոտեցան Շուշիին և սկսեցին բերդի շրջափակումը 1826 թ. հուլիսի 25-ին միայն Արաքսը մարտանցելուց մեկ շաբաթ անց: Այդ պատճառով Աբբաս Միրզան ուղղվեց դեպի Շամխոր շրջափակման 43-րդ օրը: Սակայն շրջափակումը շարունակվում էր և վերջնականապես դադարեցվեց 1826 թ. սեպտեմբերի 18-ին միայն»<sup>175</sup>: Համաձայն նրա տեսակետի՝ Աբբաս-Միրզան,

<sup>172</sup> АКАК, т. VI, ч. I, док. 1326, с. 866-868.

<sup>173</sup> АКАК, т. VI, ч. II, док. 690, с. 390.

<sup>174</sup> Дубровин Н., История войны и владычества русских на Кавказе, т. VI, СПб, 1888, с. 641-642.

<sup>175</sup> Քյուրքչյան Ա., 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմը, Երևան, 2000, էջ 33:

Շուշիում թողնելով պաշտպանական մի ջրկատ, շարժվել է դեպի Գյանջա<sup>176</sup>:

Ընդհանրացնելով Շուշիի պաշարման ժամանակաընթացքի որոշման հարցը և կիսելով Ա. Քյուրքչյանի տեսակետը՝ եզրահանգում ենք. Աբբաս-Միրզան սեպտեմբերի 5-ին շարժվում է դեպի Գանձակ: Թագաժառանգի նպատակը ռումներին արագ հաղթելն ու վերադառնալն էր: Բնականաբար, Շուշիի պարիսպների տակ նա պետք է փոքրաթիվ զորք թողներ, ինչպես իր թիկունքն ապահովելու, այնպես էլ այն պարզ պատճառով, որ Շուշիի պաշարումը վերացնելը կնշանակեր իր դեմ հանել նաև Ղարաբաղը՝ ինչը սեպ էր դարձել Աբբաս Միրզայի հեռագնա ռազմավարական ծրագրերում: Պետք է հստակորեն տարրորոշել «պաշարում» և «պաշտպանություն» բառերը, քանի որ, մեր կարծիքով, Շուշիի պաշարումը տևել է 55 օր, (հուլիսի 25-սեպտեմբերի 18), իսկ պաշտպանությունը՝ 41 օր (հուլիսի 25-սեպտեմբերի 4), ինչից առավել ծանրը կազմել է 34 օր, այսինքն սեպտեմբերի 5-ին Շուշիի պաշարումը վերացվել էր միայն մասնակիորեն:

Կարևորելով արցախահայության դերակատարությունը Շուշիի պաշտպանության ընթացքում և պաշտպանության նշանակությունը ամբողջ ռուս-պարսկական պատերազմի համատեքստում՝ ներկայացնենք մեր դիտարկումները խնդրո առարկա հարցի շուրջ:

Պարսկական հարձակմանը դիմագրավելու համար տեղի ռուսական կայազորը (բաղկացած 1700 զինվորից) և շրջակայքի 22 հայկական գյուղերից նրան օգնության եկած 1500 աշխարհագորայիններ ձեռնամուխ եղան Շուշիի հերոսական պաշտպանությանը<sup>177</sup>: Իսկ արխիվային վավերագրերից մեկի համաձայն՝ Շուշի բերդի կայազորն ուներ թվով 1500 զինվոր և Շուշիի ու Վրաստանի սահմանի մոտ ընկած մերձակա գյուղերի ու ավանների բնակիչներից 3000 հայ աշխարհագորային<sup>178</sup>:

---

<sup>176</sup> Նույն տեղում, էջ 51:

<sup>177</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. 5, Երևան, 1974, էջ 139:

<sup>178</sup> Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 645, վավ. 643:

իր հերթին ռազմական պատմաբան Վ. Պոտտոն ռուսական զորքերի սակավաթիվ լինելու և արցախահայության ցուցաբերած օգնության մասին գրում է. «Հայերը, որ իրենց փրկությունն էին գտել այդ պարիսպների հետևում, միահամուռ կերպով օգնում էին զորքերին և նրանց հետ միասին կրում շրջափակման պայմաններում իրականացվող ծառայության ծանրությունը»<sup>179</sup>:

Ցարական կառավարությունը բավականաչափ շռայլ վարձահատույց եղավ արցախահայության այն մեծ օգնությանը, առանց որի ռուսական փոքրաթիվ զորքը չէր կարող երկար դիմակայել պարսկական բանակին: Այս առիթով Սարգիս Ջալալյանը գրել է. «Ի 1826 ամի զօրաւոր հանդիսացան ընդ դէմ բազմաթիւ Պարսից և չարաչար հարին զթանձրութիւնս բանակի նոցին, և արեամբ նոցա ներկեցին գլխովին զգետն Գարգառ, ցուցին և զանկասկած հաւատարմութիւն առ տէրութիւնն Ռուսաց համաձայն ազգային ընդաբոյս բնութեանց, փոխարեն որոյ ընկալան զարժանաւոր պարգևս և զմեծ գոհունակութիւնս ի դրանէ Կայսեր»<sup>180</sup>:

Շուշիի պաշտպանության ժամանակ իր անձնազոհությամբ և քաջությամբ աչքի ընկան հետախույզ-սուրհանդակ Հարություն Ալթունյանը, թարգմանիչ Ջեանգիր Աղասարովը, եղբայրներ Ռոստոմ և Սաֆար Թարխանյանները, Հաթային<sup>181</sup>, որոնք իրենց մատուցած ծառայությունների համար պարգևատրվում են ցարական բարձրագույն շքանշաններով<sup>182</sup>: Քաղաքի պաշտպանությանը գործուն մասնակցություն են ունեցել նաև Շուշիի մեծահարուստները՝ Հախումյանները, Թառումյանները, Բեհրանբեկ

---

<sup>179</sup> Потто В., Первые добровольцы Карабаха в эпоху водворения русского владычества, Тифлис, 1902, с. 61.

<sup>180</sup> Ջալալեանց Ա., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Մասն Բ, Տիփլիս, 1858, էջ 244:

<sup>181</sup> Հաթայի՝ հավանաբար Խաթուն:

<sup>182</sup> Գրիգորյան Զ., նշվ. աշխ., էջ 106, Հովհաննիսյան Կ., Հայ ժողովրդի մասնակցությունը 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմին, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1978, թիվ 3, էջ 65, Մկրտչյան Վ., Գեներալ-ադյուտանտ Լազարև, Երևան, 2001, էջ 7, Պոտտո Վ., Ղարաբաղի առաջին կամավորները, էջ 32:

Մելիք-Շահնազարյանը<sup>183</sup> Գյանջում Խանդամիրյանցը<sup>184</sup>: Նրանց անունները հիշատակված են ռուսական կառավարությանը ներկայացված հայերի պաշտպանական կոիվները ղեկավարող անձանց ցուցակում<sup>185</sup>:

Արցախահայության ցուցաբերած օգնությանը անդրադարձել է նաև Զոհրապ Թառումեանցը՝ Ներսես արքեպիսկոպոսին ուղղված գրության մեջ. «Աստուած շէն և հաստատ պահեսցէ հայ ազգն. իրաքանչիւր ըստ կարեաց իւրեանց, ժ մանէթով չէթվերթ ցորեան առին և ետուն ռուսաց զօրացն. ոմն հինգ չէթվերթ, ոմն ժ չէթվերթ. փողովն տաւար առին այն եկամուտ գիւղական հայերիցն, և ետուն ռուսաց զօրքին, ոմանք իւրեանց մսացու տաւարներն տւեցին. փայտ տւին. հաց տւին. և այսպէս կառավարեցին զզօրսն: Հայ ազգն Բ ամիս գիշերներն քէշիկ են արեալ բերդի վերայ, և ցերեկներն փահիլ նման իւրեանց ուլախովն քար և ջուր կրել բերդի խախուտ տեղերն շինել. չունքի խախտեալ տեղեր շատ կայր դարիս»<sup>186</sup>:

Ապրես Բեկնազարյանը վկայում է, որ Շուշիի պաշտպանության ժամանակ պաշարվածներին մեծ օգնություն էր ցուցաբերում Խնածախ և Բալլուջա գյուղերի բնակչությունը: Կաջաղակաբերդում պատսպարված Վերին Խաչենի բնակչությունը գիշերները անասուններ էր փոխադրում Շուշի<sup>187</sup>:

Շուշիի բնակչությունը, վերջին ունեցածը կիսելով ռուսական զորքերի հետ, պաշարման վերացումից հետո կանգնած էր առաջիկայում աշնանացան չկատարելու և սովի վտանգի առջև: Այդ առիթով 1826 թ. սեպտեմբերի 4-ին Վ. Մադաթովը զեկուցում է

---

<sup>183</sup> Աղայան Ծ., Ռուսաստանի դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում, Երևան, 1981, էջ 251:

<sup>184</sup> Հարությունյան Հր., Շուշի. քարտեզն անխոս վկաներ, Ստեփանակերտ, 2013, էջ 278:

<sup>185</sup> «Кавказский сборник», т. 24, Тифлис, 1903, с. 108.

<sup>186</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 54, վավ. 342:

<sup>187</sup> Բեկնազարեանց Ա., Գաղտնիք Ղարաբաղի, Ս. Պետերբուրգ, 1888, էջ 361: Պատմական այս տեղեկությունը կասկածի տակ է դրվել Լեոյի կողմից, որը նշել է նրա մտացածին, լավագույն դեպքում՝ գերազանցված լինելու փաստը: Այս մասին տե՛ս Լէօ, Վէ՛պ թէ պատմութիւն (Ղարաբաղի անցեալը Ապրես Բեկնազարեանցի գրչի տակ), Շուշի, 1887, էջ 108:



Ա. Երմոլովին. «Համոզվելով այս մարդկանց ծայրահեղ վիճակի մեջ և որպես փոխհատուցում նրանց հավատարմության, ինչպես նաև, որ նրանք ամբողջ ունեցվածքը նվիրաբերել են ռուսական զորքին, ես խնդրում եմ Ձերդ մեծությանը թույլատրելու հայցողներին բավարարել գավառային դատարանին պատկանող գումարների հաշվին...»<sup>188</sup>:

Շուշիի պաշտպանության բացառիկ նշանակությունը կարևորել էր նաև Ներսես Աշտարակեցին. «Ամրոցն Շուշույ գտա հանդիպական ամրոց և բարերար կամ փրկիչ ամենայն այսոցիկ նորոգ սահմանաց ռուսաց քանզի զօրք ռուսաց ի նմա իբրև 1300 և զինուորք հայկազունք աջակցեալք կազմեցին իբրև 3000 քաջաբար արիացեալ ընդդեմ յամենայն բանակին պարսից և ի 19-իցն հուլիսի մինչև ց 4 սեպտեմբերի...»<sup>189</sup>: Աշտարակեցին Հովհաննես Լազարյանին ուղղված նամակում ընդգծում է Ղարաբաղի բնակչության հավատարիմ լինելու փաստը. «... որով ոչ միայն փրկեցին իրենց քաղաքը, Շուշիի բերդը, այլև Վրաստանի սահմանամերձ շատ շրջաններ և բնակիչներին»<sup>190</sup>:

Շուշիի պաշտպանությունը բարձր է գնահատվել ռուս պատմաբանների կողմից: Ն. Դուբրովինը գրում է. «Շուշիի համառ պաշտպանությունը մեծագույն ազդեցություն ունեցավ պարսկական պատերազմի ամբողջ ընթացքի վրա՝ այստեղ պահելով ամբողջ պարսկական բանակը մեզ համար ամենավտանգավոր պահին, գրեթե յոթ շաբաթ, ժամանակ տվեց կենտրոնացնելու զորքը»<sup>191</sup>:

Ա. Քյուրքչյանի կարծիքով՝ Աբբաս-Միրզան, Շուշիին մոտենալով և Գյանջան գրավելով, փորձում էր գեներալ Երմոլովին հարկադրել պատերազմելու Արցախի և Գյումրի-Միրաքի՝ երկու հակադիր ուղղություններով՝ Վրաստանում

<sup>188</sup> АКАК, т. VI, ч. I, док. 1327, с. 868.

<sup>189</sup> Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 660:

<sup>190</sup> Հովհաննիսյան Կ., Էջեր Արևելյան Հայաստանի ազատագրական շարժման պատմությունից, Երևան, 1981, էջ 66:

<sup>191</sup> Дубровин Н., Обзор войн России от Петра Великого до наших дней, ч. IV, книга I, СПб, 1898, с. 300.

կենտրոնացված ռուսական զորքերին թուլացնելու և մեկուսացնելու նպատակով<sup>192</sup>:

Այս ետնախորքում Շուշիի պաշտպանությունը իրավամբ կարելի է համարել 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի հերոսական էջերից մեկը: Շուշին կաթվածահար արեց Աբբաս-Միրզայի արագ հաղթանակի հասնելու ծրագիրը, հնարավորություն տվեց ռուսական բանակին՝ անցնելու հակահարձակման և հաղթելու Շամխորի և Ելիզավետպոլի ճակատամարտերում: Ի վերջո, այն փրկություն էր ամբողջ Վրաստանի համար, որի գլխավոր ուժերը կենտրոնացված էին Թիֆլիսում: Շուշիի պաշտպանությունն իրականում վճռեց պատերազմի ելքը:

Ինչպես արդեն նշվեց, պատմագրության մեջ բավականաչափ ուսումնասիրվել է Շուշիի հերոսական պաշտպանությունը, մինչդեռ Շուշիի պարիսպներից դուրս տեղի ունեցած իրադարձությունները հավուր պատշաճի չեն լուսաբանվել:

Պարսկական հարձակման պահին Ղարաբաղը ոչ միայն պատրաստ չէր, այլև նույնիսկ հանկարծակիի եկավ պարսկական մեծաքանակ զորքերի հարձակումներից: Աբբաս-Միրզայի հարձակման պահին իրադարձությունները հետևյալ ընթացքն էին ստացել. «Հաճի Աղալարն էլ Ղարաբաղու դռունն հավաքեց քուրտ ու ժագայ, և գնաց միաուրեցու խանին և շահագատին. ջուրն կտրեցին, և ռուսն մնաց անձար. չորս կողմն կտրեցին մեր թիւրքերն և պէկերի տղայքն. ռուսին ցրի տւին և լաւ լաւ չինովնիկների գլուխ կտրեցին. լաւ շատ հայերի գլխներ կտրեցին տարան շահգատային և ամէն գլխոյ 10 պապախանի ոսկի տայր. թէ անասնոց համար, և թէ խոտի համար, որ հայքն դուրս գային, ձեռք անկածի գլուխն կտրէին թուրքերն. դրսիցն Լե գիւղից գիւղականք փախստական հազիւ կարացին մտանել ի բերդն խիզանով. մնացեալքն մնացին արտաքս»<sup>193</sup>:

Անպատրաստ Ղարաբաղի բնակչությունը, պարսիկների հանկարծակի հարձակումից շփոթված, ոչ միայն ժամանակ չէր ունեցել

<sup>192</sup> Քյուրքչյան Ա., նշվ. աշխ., էջ 151, Պարսամյան Վ., Հայ ազատագրական շարժումների պատմությունից, Երևան, 1958, էջ 82:

<sup>193</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 54, վավ. 342:

թաքցնել գույքն ու անասուններն անմատչելի տեղերում, այլև նույնիսկ իրենք չէին ամրացել բերդերում<sup>194</sup>:

Պարսկական զորքը Ամիր խան սարդարի գլխավորությամբ շարժվել էր դեպի Դիզակ: Դիզակի դեպքերի մասին բացառիկ արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Մատենադարանի արխիվային բաժնում պահվող մի ձեռագիր, որը գրվել է դեպքերին ականատես Գտչավանքի վարդապետ Առաքել Կոստանյանցի ձեռքով<sup>195</sup>: Վարդապետը նկարագրում է, որ Դիզակի բնակչության մի մասը շարժվեց դեպի Գտչավանք՝ անցնելով ինքնապաշտպանության. «Ի նմին աուրս և մենք ամրացեալք ի բարձրագոյն գագաթ լերինն Դողու բնակչաց, որ գտանի ի արևելյան կողմն Տիգափայտ լերին քան ինչ ասպատեզօք ի նմանե հեռի. բոլոր գավառն Դիզակու ժողովեալ անդ, ի սբ. վանք Գտչայ, արդարև չէր հնար մարդոց շարժել անդ, ի ձեռաց բազումի արանց և կանաց, մանկաց և տղայոց, բայց ողորմուն ան այն էր, որ բոլոր լեռան և յամ կողմանս նրա յոյժ թաաթուի անտառք. և խիտ առ խիտ ամրացեալ՝ չէր հնար և իսկ անծանոթից գտնել զանցս զերծեալ ի գերի վարութենէ և այլ ինչ մարդասպանութենէ»<sup>196</sup>:

Պարսկական զորքին միանում է նաև տեղի մահմեդական տարրը: Առաքել վարդապետը նկարագրում է նաև Դիզակի բնակչության տեղահանությունը. «Ի բազում տեղեաց յափշտակեալ տարան զմանկունս և զաղջկունս յերկիրն պարսից»<sup>197</sup>:

Ինքնապաշտպանություն է կազմակերպում նաև Դիզակ գավառի Տումի գյուղը. «Ի վանս Գտչոյ կայր հանդէպ մէր գիւղ մի, որոյ անունն կոչի տումի. զի յայնմ ժամանակի սակաւաւորք էին. թուով ոչ ավելի քան զքսան ծուխս. նաև իսկ պակասաւորք. սակայն ամենքն սաստիկ և քաջք և անտառաբնակք որպես վայրինիք»<sup>198</sup>: Գյուղի երիտասարդներից ոմն Խաչատուր կազմակերպում է

<sup>194</sup> Բեկնազարյանց Ա., նշվ. աշխ, էջ 366:

<sup>195</sup> Մատենադարան, ձեռ. 7823:

<sup>196</sup> Մատենադարան, ձեռ. 7823, թ. 69:

<sup>197</sup> Նույն տեղում:

<sup>198</sup> Նույն տեղում, թ. 173:

գյուղի ինքնապաշտպանությունը, ինչն ավարտվում է տումեցիների հաղթանակով<sup>199</sup>:

Կողոպտվում է Վարանդայի Ավետարանոց (Չանսախչի) գյուղում ռուսների թողած բեռն ու զինամթերքը: Վ. Մաղաթովի կալվածատիրական տունը Չանսախչիում (Ավետարանոց) և նրան պատկանող գյուղերը պարսիկների կողմից լրիվ ավերվում են, խաղողի այգիները ոչնչացվում, քշվում են դարաբաղյան ձիերի լավագույն երամակները<sup>200</sup>: Հետագայում Վ. Մաղաթովին պատմում են, որ Շուշի ամրոցից մի քանի օր շարունակ երևում էր նրա կալվածքների սարսափելի հրդեհը. «...ամենայն գոյք նորա հանդերձ գեղեցկաշէն դաստակերտին և մինչև ոսկերք մեռելոց հրոյ գործեաց զայն, զգլուխն տարուբերեալ շարժէր աւաղելով, և ի բոցակնակոյն նորին աչաց կայծակունք բարկութեան ցոլանային...»<sup>201</sup>: Այսուհետև Մեհտի Ղուլի խանի կարգադրությամբ պարսիկ զինվորները քարուքանդ են անում Վ. Մաղաթովի նախնիների գերեզմանները<sup>202</sup>: Ավետարանոցի ավերումը տեղի էր ունեցել Ելիզավետպոլի ճակատամարտից հետո՝ Աբբաս-Միրզայի փախուստի պահին. «Եւ անտի չուեալ գնայ տրտմեալ եւ տարակուսեալ յարքունիս իւր ի Թէհրան եւ զփախուցեալսն ի զօրաց գան հարկանէր, ասելով ընդ է՛ր ոչ քաջութեամբ մարտեայք»<sup>203</sup>:

Աբբաս Միրզայի փախուստից հետո էլ իրադրությունը չի կայունանում: 1826 թ. դեկտեմբեր-1827 թ. սեպտեմբեր ամիսները Ղարաբաղում բավականին ծանր էին. մի կողմից՝ պարենի պակասը, մյուս կողմից՝ քոչվորների կողմից իրականացվող կողոպուտն ու

<sup>199</sup> Ամիրջանյան Ա., Դիզակ, Երևան, 2006, էջ 222-223:

<sup>200</sup> Потто В., Кавказская война, т. III, Персидская война 1826-1828, с. 214.

<sup>201</sup> Տիտանյան Ռ., Նորահայտ վավերագրեր գեներալ Վ. Մաղաթովի մասին, «Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 4, Երևան, 1983, էջ 93:

<sup>202</sup> Մ. Յ. Ներսեսով, Նշվ. աշխ., էջ 117:

<sup>203</sup> Մաղալյան Ա., Յակոբ Ջաքարեանի «Պատմութիւն գաւառին Արցախոս» աշխատութիւնը, «Հանդէս ամսօրեայ», թիւ 1-12, 2006, Վիեննա, էջ 371-372: Հակոբ Ջաքարյանի վերոնշյալ աշխատության մասին տե՛ս Մաղալյան Ա., Պատմագիր Հակոբ Ջաքարյանի տեղեկությունները Շուշիի մասին, «Շուշին հայոց քաղաքակրթության օրրան», Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2007, էջ 61-69:

մշտական հարձակումները ծանր կացության մեջ էին դրել ժողովրդին: Ղարաբաղի նախկին խան Մեհտի Ղուլիի ապստամբության կոչերը Ղարաբաղի բեկերի մոտ շարունակում էին հղացնել դավադիր ծրագրեր: Չնայած Վ. Մադաթովը բոլոր ջանքերը գործադրում էր, որպեսզի կայունացնեի իրավիճակը, սակայն խառն իրադրությունը շարունակվում էր: Իրադրությունը որոշակիորեն շտկելու համար Շուշիի պաշարման ժամանակ դավաճանած և կալանքի տակ գտնվող բեկերի մի մասն ազատ էր արձակվում, մյուսներն էլ պետք է հեռանային Ղարաբաղի սահմաններից<sup>204</sup>:

1827 թ. հունվար-փետրվարին Վ. Մադաթովը զբաղվում է Արաքսով Ղարաբաղի սահմանները մշտապես խախտող քոչվոր ցեղերին սանձահարելով: 1827 թ. մարտի 3-ին մոտավորապես 300 հոգանոց պարսկական մի զորախումբ անցնում է Արաքսը և հարձակվում Հարավ և Կոռնիձոր գյուղերի վրա: Բախման ընթացքում զոհվում է 4 մարդ, 2-ը՝ վիրավորվում: Նույն թվականի հուլիսի 30-ին տեղի է ունենում հակառակորդի նոր հարձակում Գիշի գյուղի վրա: Շահսևանցիները՝ թվով 2000 մարդ, կողոպտում են գյուղի բնակչությանը, սպանում՝ 3, իսկ գերի տանում 10 հոգու<sup>205</sup>: Սեպտեմբերի 6-ին հակառակորդը 4000-անոց հեծելազորով հարձակվում է Շուշիի և Ասկերանի մոտ գտնվող բնակավայրերի վրա<sup>206</sup>: 1827 թ. հետագա ամիսներին Ղարաբաղում իրադրությունը կայունանում է:

Այս հանգամանքն ուներ իր պատճառները. տեսնելով ռուսական զորքերի հաղթանակները՝ նախկինում պարսկական կողմն անցած բեկերը ցանկություն էին հայտնում նորից ռուսական հպատակությունն ընդունելու: Այս մասին 1827 թ. հոկտեմբերի 24-25-ին Ն. Սիպյագինի՝ Ի. Պասկևիչին ներկայացրած հաշվետվության մեջ նշվում է. «...Ղարաբաղում, չնայած նրանք (բեկերը) չունեն բացահայտ բարյացակամություն մեր նկատմամբ՝ տեսնելով մեր զենքի հաջողությունները, ցանկանում են հավաստիացնել մեր կառավարության հանդեպ իրենց հավատարմությունը. ընդհանրապես

<sup>204</sup> АКАК, т. VI, ч. I, док. 1331, с. 871.

<sup>205</sup> Присоединение Восточной Армении к России, т. II, с. 330.

<sup>206</sup> Նույն տեղում, էջ 378:

այժմ արդեն հանգիստ է»<sup>207</sup>: Ղարաբաղում հաստատված անդորրը շարունակվում է 1827 թ. հոկտեմբերին հաջորդած ամիսներին և պահպանվում մինչև ռուս-պարսկական պատերազմի ավարտը:

1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմն ավարտվում է 1828 թ. փետրվարի 10-ին Թուրքմենչայի հաշտության պայմանագրով: Պայմանագրի համաձայն՝ Հայաստանի արևելյան հատվածի մի մասը, ազատվելով պարսկական լծից, ընդունում է ռուսական տիրապետությունը: Պայմանագրի 15-րդ հոդվածը Պարսկաստանի հպատակության տակ մնացած հայությանը իրավունք էր տալիս գաղթել Ռուսաստանին միացված հայկական տարածքները: Գաղթը հայության այդ հատվածի համար ֆիզիկական բնաջնջումից փրկվելու լավագույն տարբերակն էր: Ներգաղթի կազմակերպման գործում մեծ ջանքեր են գործադրում Ալ. Գրիբոյեդովը<sup>208</sup>, իսկ հայ հասարակական գործիչներից՝ Ն. Աշտարակեցին<sup>209</sup>, Լազարյանները և ուրիշներ: Ռուսական բանակի գնդապետ Ղազար Լազարյանը 1828 թ. մարտի 30-ին դիմելով իր քրիստոնյա եղբայրներին՝ ասել էր. «Ի գաւառնս Երևանայ, Նախիջևանայ և Ղարապաղու, զորս դուք ընտրեսցիք, տացի ձեզ լայնատարած և արգասաւոր երկիր արդէն իսկ ըստ մասին սերմանեալ է. և ի պտղոյ նորին զտաններորդ մասն միայն տացիք Տէրութեան և յընթացս վեց ամաց ազատ լիցիք յամենայն յարկատուութենէ. և որք միանգամ աւելի աղքատ իցեն ի ձէնք, տացի նոցա օգնութիւն չուելոյ»<sup>210</sup>:

---

<sup>207</sup> Նույն տեղում, էջ 410:

<sup>208</sup> Պարսամյան Վ., Ա. Ս. Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1947, Шостакович С., Дипломатическая деятельность А. С. Грибоедова, Москва, 1960.

<sup>209</sup> Հովհաննիսյան Կ., Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և Ներսես Աշտարակեցին, «Պատմա-բանասիրական հանդես», թիվ 3, Երևան, 1973, էջ 123, Խաչատրյան Մ., Պարսկահայերի ներգաղթի կազմակերպումը ըստ ժամանակի փաստաթղթերի, «Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 10, Երևան, 1978, էջ 96-99:

<sup>210</sup> Собрание актов относящихся к обозрению истории армянского народа, ч. II, Москва, 1838, с. 163-164.

Փետրվարի 29-ին Ի. Պասկևիչը հաղորդել էր, որ իրանական Ատրպատականի տարածքում ապրող շատ հայեր ցանկություն են հայտնել տեղափոխվելու Երևանի, Նախիջևանի և Ղարաբաղի շրջանները և ապրելու Ռուսաստանի հովանու տակ<sup>211</sup>: Պասկևիչը երկիցս նշել էր, որ անհրաժեշտ է գաղթականներին վերաբնակեցնել նաև Ղարաբաղում՝ չնայած նախապես որոշված էր գաղթականներին վերաբնակեցնել Երևանի և Նախիջևանի մարզերում<sup>212</sup>:

Հավանաբար, մերձակա լինելու հանգամանքի պատճառով Ուզումչի՝ առավելապես հունաբնակ գյուղի և նրա մոտ գտնվող երեք հայկական գյուղերի 147 ընտանիքներ գաղթեցին Ղարաբաղ<sup>213</sup>:

1828 թ. ապրիլի 24-ին Ի. Պասկևիչի զեկույցներից մեկում նշվում էր գաղթականների մեծ մասի, հատկապես աղքատների՝ Ղարաբաղ գնալու ձգտման մասին, որտեղ նրանք կապահովվեին բավարար կենսապայմաններով<sup>214</sup>: 1828 թ. մայիսի 26-ին Ի. Պասկևիչը Ի. Դիբիչին ուղղված իր զեկույցում հայտնում է, որ Ղարաբաղ է տեղափոխվել 279 ընտանիք<sup>215</sup>:

Ղարաբաղի պարեստ՝ իշխան Ի. Աբխազովը գաղթականներին տեղավորում է Պարտավում: 1831 թ. թվագրվող մի փաստաթղթում նշվում է, որ գաղթականների շրջանում շուտով սկսվում են ծանր հիվանդություններ և մահացություններ, որի հետևանքով նրանց թիվը նվազում է 100 ընտանիքի<sup>216</sup>: Գաղթականների ծանր վիճակի

---

<sup>211</sup> Նույն տեղում, էջ 157:

<sup>212</sup> Մանուկյան Եվ., Հայ ժողովրդի ազգահավաքման գործընթացը Արևելյան Հայաստանում 19-րդ դարի 20-ական թթ. վերջերին և 30-ական թթ. սկզբներին, Երևան, 2005, էջ 81:

<sup>213</sup> Тавакалян Н., Переселение армян из Турции в Закавказье после присоединения Восточной Армении к России, «Историко-филологический журнал», N 3, Ереван, 1978, с. 32.

<sup>214</sup> Глинка С., Описание переселения армян аддербиджанских в пределы России, Москва, 1831, с. 127.

<sup>215</sup> Գեղամեանց Ե., Հայերի ազատագրական շարժումները ժԹ դարում կամ Հայկական հարցի 4-րդ շրջանը, Բաքու, 1915, էջ 146, Присоединение Восточной Армении к России, т. II, с. 497.

<sup>216</sup> Колониальная политика российского царизма в Азербайджане в 20-60-х гг. XIX в., ч. I, Феодальные отношения и колониальный режим 1827-1843 гг., М.-Л., 1936, с. 201.

մասին է վկայում 1828 թ. օգոստոսի 21 թվագրվող մի փաստաթուղթ, որտեղ Չայլուի (Գետաշեն) հսկիչ Թումանովը զեկուցում է Ղարաբաղի պարետ Կալաչևսկուն գաղթականների ծանր վիճակի մասին. «...Հայ գաղթականների մեջ չկա որևէ առողջ մարդ, որ կարողանա ներկայանալ և հաշվետվություն տալ ձեզ մահացածների թվի մասին...»<sup>217</sup>: Թումանովի՝ Կալաչևսկուն ուղղված մեկ այլ զեկույցում (1828 թ. օգոստոսի 25) նշվում է. «...Գաղթականները գտնվում են այնպիսի իրավիճակում, որ մահացածներին թաղելու համար չկա ոչ մեկը, ամեն օր մահանում է մինչև քսանը»<sup>218</sup>:

Ղարաբաղ գաղթածների ծանր վիճակի մասին վկայում է նաև ռուս պաշտոնյա, վիճակագիր Դ. Զուբարյովը. «Պարսկաստանից եկած հայերը աչքի են ընկնում օրինակելի աշխատասիրությամբ: Նրանց մի մասը Կովկասում հազվադեպ հանդիպող անչափ օգտակար արհեստների տեր է: Ցավոք, օգտակար այս ժողովուրդը չափից դուրս ձնշվում է Ղարաբաղում... Ղարաբաղի տեղական իշխանությունը, հայերի դեմ ինչ-որ կանխակալությամբ՝ նեղում է նրանց չտեսնված աններելի կերպով: Մինչև այժմ նրանք չունեն մշտական կացարան, բնակեցման համար հատկացնում են ամենաաննպաստ հողերը... Առանց ջրի, առանց կերակրի, բաց երկնքի ու արևի կիզիչ ճառագայթների տակ տարաբախտ հայերը մահվան ճարակ էին դառնում: Երեք ամսվա ընթացքում մեռավ 1012 երկու սեռի մարդ»<sup>219</sup>: Ղարաբաղի մասին մեկ այլ փաստաթղթում Զուբարյովը գրում է. «Գաղթած հայերն այստեղ ձնշվում են թաթար նայիբների և տեղական ղեկավարության կողմից: Եթե այս խեղճերից մեկը խնդրանքով գալիս էր Շուշի, ապա նրան բավարարում էին ծեծով»<sup>220</sup>:

1828 թ. սկզբներից տարբեր ժամանակներում գլխավոր հրամանատարի կամքով Ղարաբաղի գավառ էին գաղթել 750 հայ և հույն ընտանիքներ<sup>221</sup>: Վերը նկարագրված ծանր վիճակն էլ

<sup>217</sup> Նույն տեղում:

<sup>218</sup> Նույն տեղում:

<sup>219</sup> АКАК, т. VII, Тифлис, 1878, док. 412, с. 460-462.

<sup>220</sup> АКАК, т. VII, док. 413, с. 464.

<sup>221</sup> Колониальная политика российского царизма в Азербайджане в 20-60-х гг. XIX в., ч. I, с. 204.



պատճառ է դառնում, որպեսզի նրանց մի մասը ետ վերադառնար Պարսկաստան<sup>222</sup>: Պետք նշել նաև, որ Ղարաբաղ գաղթած հայերի մեծ մասը նախկինում իրենց հայրենիքը լքած ղարաբաղցիներն էին, որոնք թուրք-պարսկական պատերազմների ընթացքում ստիպված էին հեռանալ դեպի Պարսկաստան: Այսպես, օրինակ 17-րդ դարի սկզբներին Շահ Աբասի արշավանքից առաջ Դիզակի գավառից չորս գյուղ, թուրքերից ճնշված, անցել էին Պարսկաստան ու ապաստան գտել Սպահանում<sup>223</sup>:

Ըստ Մակար Բարխուդարյանցի Ղարաբաղ գաղթածները բնակություն հաստատեցին Դիզակի Սարենշեն, Քարազլուխ, Ծակուռի, Մյուլքուդարա, Խծաբերդ, Ջրակուս գյուղերում, Խաչենում (Մեհտիշեն), Սարդարաշենում, Նորագյուղի մի մասում, Գյուլաթաղ, Մարաղա, Այգեստան (Չայլու), Ջրաբերդի Ջանյաթաղ և այլ գյուղերում<sup>224</sup>: Ըստ հայ ազգագրագետ Ս. Լիսիցյանի, տեղաբնիկների կողքին նոր բնակչության հայտնվելը բարբառային և ազգագրական յուրահատկություններում նկատելի փոփոխություններ չառաջացրեց մասամբ այն պատճառով, որ այդ տարրերը ամբողջ բնակչության 10 տոկոսն էլ չէին կազմում, մասամբ էլ, որ Ղարաբաղի և Ղարադաղի միջև վաղուց ի վեր գոյություն ունեին սերտ տնտեսական և մշակութային կապեր<sup>225</sup>: Մինչ պարսկահպատակ հայերի գաղթը Ղարաբաղի և Պարսկաստանի միջև եղել են բնակչության տեղաշարժեր: Մասնավորապես, Խաչենի Լուսածոր (Մեհտիշեն) գյուղի բնակչությունը այստեղ է տեղափոխվել 1828-1829 թթ. գաղթից շատ առաջ, որի մասին տեղեկություններ կան 1823 թ. կամերալ ցուցակագրությունում<sup>226</sup>:

---

<sup>222</sup> Մանուկյան Եվ., նշվ. աշխ., էջ 121, Нагорный Карабах. Историческая справка, Ереван, 1988, с. 19.

<sup>223</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. 4, Երևան, 1972, էջ 96:

<sup>224</sup> Բարխուտարեանց Մ., Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, Երևան, 1999, էջ 192-194, 177, 240, Հովհաննիսյան Լ., Ղարաբաղի էթնիկ կազմն ու բնակչության տեղաշարժերը 1800-1835 թթ. ընկած ժամանակահատվածում, Արցախի պատմությանն ու հուշարձանների պահպանությանը նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, 2002, էջ 67:

<sup>225</sup> Լիսիցյան Ս., Լեռնային Ղարաբաղի հայերը, «Հայ ազգագրություն և բանահյուսություն», պր. 12, Երևան, 1981, էջ 17:

<sup>226</sup> ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 163:

Փաստերն ապացուցում են, որ դասագրքային այն «ճշմարտությունը», թե ներգաղթածներին տրվել են արտոնություններ և, հետևաբար, նրանք հայտնվել են կենսագործունեության համար լիարժեք պայմաններում, քննադատության չի դիմանում: Բայց այն իրողությունը, որ պարսկական հետամնաց տիրապետության փոխարինումը համեմատաբար զարգացած ռուսական տիրապետությամբ ինքնին առաջադիմական երևույթ էր, անժխտելի է:

Այսպիսով՝ Թուրքմենչայի պայմանագրից հետո կատարված գաղթի հետևանքով Ղարաբաղում բնակություն է հաստատում մոտավոր տվյալներով մինչև 300 ընտանիք: Պատմական այս իրողությունը խեղաթյուրելով՝ ադրբեջանական «պատմաշինարարները» փորձում են իրենց և աշխարհին հրամցել այն կեղծիքը, թե իբր հայ բնակչությունը Ղարաբաղում հայտնվել է Թուրքմենչայի պայմանագրից հետո կատարված գաղթի հետևանքով<sup>227</sup>: Բացահայտ այս կեղծիքը՝ մոգոնված ադրբեջանական պատմագրության կողմից, «հիմնավորվում է» նրանով, որ Թուրքմենչայի պայմանագրով Ղարաբաղ է գաղթել ավելի քան 130 հազ. հայ, որոնք, այստեղ հաստատվելու պահից սկսած, զավթելով կալվածատիրական և պետական հողերը, մեծ անհանգստություն սկսեցին պատճառել Ղարաբաղի «բնիկներին»՝ մահմեդականներին<sup>228</sup>:

Այս «պատմական փաստն» իրավամբ քննադատվել է Եվ. Մանուկյանի կողմից. վերջինս վկայակոչում է 1979 թ. համամիութենական մարդահամարի տվյալները, ինչի համաձայն՝ ԼՂԻՄ-ում բնակվում էր ընդամենը 123100 հայ, այսինքն ստացվում էր, որ այդ ամբողջ պատմական ժամանակաշրջանում Ղարաբաղի

---

<sup>227</sup> Justin McCartney, *Armenian Terrorism: History as Poison and Antidote*, Ankara, 1984, pp. 85–94, Алиев И., *Нагорный Карабах: История. Факты. События*, Баку, 1989, с. 76–77, Мурадян П., *История-память поколений*, Ереван, 1990, с. 101–118, Мельтюхов М., Тер-Саркисянц А., Трапезников Г., *Исторические фальсификации с политической подоплекой*, Москва, 1999, с. 15, Карабах, НАН Азербайджана, Институт Археологии, Баку, 2004, с. 88, Маммадов И., Мусаев Т., *Армяно-азербайджанский конфликт: история, право, посредничество*, Түла, 2006, с. 20.

<sup>228</sup> Алиев И., նշվ. աշխ., էջ 76:

բնակչությունը հետաճ էր արձանագրել<sup>229</sup>: Փաստորեն, Ղարաբաղի բնակչության «եկվորության» և մահմեդական բնակչության «բնիկության» ադրբեջանական «պատմագիտական» տեսությունները հերթական անգամ դատապարտվում են ձախողման:

Ռուս-պարսկական պատերազմի ղարաբաղյան ժակատի իրադարձությունների ուսումնասիրությունը ամբողջական չէր լինի առանց ներքոշարադրյալի: Մատենադարանում պահվել են բազմաթիվ արխիվային փաստաթղթեր, որոնք վերաբերում են 1826 թ. Շուշիի պաշարման ընթացքում նրա պարիսպներից դուրս տեղի ունեցած քաղաքական իրադարձություններին, հատկապես մելիքներ՝ Մելիք-Վանի Աթաբեկյանի, Գյուլիստանի Մելիք Հովսեփի Մելիք-Բեգլարյանի և Սարգիս արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանի՝ այսպես կոչված «պարսկական կողմից հանդես գալու» և նրանց «դավաճանության» մասին<sup>230</sup>:

Իրականում տեղի էր ունեցել հետևյալը. Շուշիի պաշտպանությունից զայրացած Աբբաս-Միրզան հրամայել էր կոտորել շրջակա գյուղերի բնակչությանը: Սեփական ժողովրդի ճակատագրով մտահոգ Ղարաբաղի մետրոպոլիտ Սարգիս արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանը, Մելիք-Վանի Աթաբեկյանը<sup>231</sup> և Գյուլիստան գավառի տեր Մելիք-Հովսեփի Մելիք-Բեգլարյանը ներկայանում են Աբբաս-Միրզային՝ նրա զայրույթը մեղմելու մտադրությամբ:

Վ. Պոտտոն նշում է, որ Աբբաս-Միրզայի «Ղարաբաղը իմն է» հայտարարությանը Վանին պատասխանել է. «Եթե Ղարաբաղը քոնն է, հապա ինչու պարսիկները կոտորում են քո հպատակներին:.... Որքան շատ են հպատակները, այնքան հզոր և փառավոր է թագավորությունը»: Ըստ Վ. Պոտտոյի՝ այս խոսքերից հետո Աբբաս Միրզան փոխում է իր վերաբերմունքը հայերի նկատմամբ և եթե նախկինում մեկ հայի գլխի համար թունամանով էր վճարում

<sup>229</sup> Մանուկյան Եվ., նշվ. աշխ., էջ 120:

<sup>230</sup> Այս դեպքերի մասին մանրամասն տե՛ս Մաղալյան Ա., նշվ. աշխ.:

<sup>231</sup> Մաղալյան Ա., Ջրաբերդ գավառի վերջին տիրակալ Աթաբեկյանների տոհմաճառը (Նյութեր հայոց մելիքությունների պատմության մասին), «Կրթությունը և գիտությունը Արցախում», թիվ 3-4, Երևան, 2003, էջ 83:

պարսիկներին, ապա այժմ նրանք, ովքեր կբերեն հայերի գլուխներ, կվճարեն իրենց գլխով<sup>232</sup>:

Փաստաթղթերի ուսումնասիրությունը թույլ է տալիս դատելու, որ այս իրադարձությունները մեծ արձագանք էին գտել ամբողջ հայ իրականության մեջ: Ռուսական զենքին հավատարմության կոչերով հանդես եկած վրացահայ թեմի առաջնորդ Ներսես Աշտարակեցին իրադարձությունների անսպասելի շրջադարձի՝ Մելիք-Հովհաննեսի Մեհտի Ղուլի խանի մոտ գնալու առիթով գրություն է ուղարկում Մելիք-Հովսեփ Մելիք-Բեգլարյանին: 1826 թ. օգոստոսի 9 թվագրված նամակում կաթողիկոսը գրում է. «Յէտ փակելոյս զգրութիւն իմ առ քէզ, լուր էհաս առ կուսակալն որպէս թէ հաւատարիմն մեր մելիք Վանին գնացեալ է առ Մէհտի Ղուլի խանն՝ այլ ես միամտեցուցի զնորին բարձր գերազանցութեանն թէ գնալն նորա եթէ իցէ ժշմարիտ ոչ կարէ լինել առանց յատուկ շահաւէտութեանց վասն պահպանելոյ գժողովուրդն հայոց կողմանցն այնոցիկ»: Այնուհետև կաթողիկոսը պատվիրում է Մելիք-Վանիին իր կողմից ուղղված գրությունը հանձնել նրան, իսկ Մելիք-Հովսեփ Մելիք-Բեգլարյանին հուսադրելով, որ շուտով անցնելու է պատերազմական դրությունը՝ հորդորում է. «Դու թէ չիցես գնացեալ առ Մէհտի Ղուլի խանն մինչև ցայժմ մի ես յօժարեսցիս գնալ այժմ, եւ միամիտ լիցիս զի զկնի չորից եւ հնգից ատուրց գտանի մերձ առ ձեզ զօրօք բազմօք կնեազ Մատաթովն եւ Մէհտի Ղուլի խանն հալածեսցի անդրէն իբրև զծովս առաջի հողմոյ սաստկագունի»<sup>233</sup>:

1826 թ. օգոստոսի 9 թվագրված մեկ այլ նամակով կաթողիկոսն իր ցավն ու զարմանքն է հայտնում Աղվանից մետրոպոլիտ Սարգիս արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանին՝ Մելիք-Վանիի՝ Մեհտի Ղուլի խանի մոտ գնալու առիթով. «Ես լուեալ զայս զարհուրեցայ, թէ զիա՛րդ կարելի եղէ առն այնպիսոյ բեկանել զիր բազմաժամանակեայ արեամբ չափ հաւատարմութիւնն. եւ երդմամբ իմով կարօղ եղէ հաւանեցուցանել զկուսակալն, թէ ի ստոյգ լինիլն գնալոյն նորա, հարկաւ լինելոց է վասն օգտակարութեան

<sup>232</sup> Պոտտո Վ., Ղարաբաղի առաջին կամավորները, էջ 53:

<sup>233</sup> Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 614, թ. 16 բ:

իրիք ազգին հայոց՝ զի կարօղ լիցեն ապահովացուցանել զբազմութիւնն նոցա»<sup>234</sup>:

Չափազանց ծանր ու հանդիմանող էր Ներսես Աշտարակեցո՛ւ Մելիք-Վանին ուղղված նամակը (1826 թ. 9 օգոստոսի): Նամակի վերջում նա հույս էր հայտնում. «...յուսամ Աստուծոյ թէ նա ինքն վկայեսցէ սրտի կուսակալին անարատ պահել առ ձեզ զկարծիս իւր վասն ձերոց վկայեալ հաւատարմութեանց»<sup>235</sup>:

Ելիզավետպոլի ճակատամարտից հետո Ա. Երմոլովի կողմից Մելիք-Վանին և Մելիք-Հովսեփը ձերբակալվում և առանց դատ ու դատաստանի, որպէս պետական դավաճաններ արքորվում են Բաքու: Անպատիժ չի մնում նաև Սարգիս արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանը, որն էլ բանտարկվում է Թիֆլիսում<sup>236</sup>:

Իր դէմ ուղղված հանդիմանություններին Մելիք-Վանին պատասխանում է 1829 թ. հոկտեմբերի 29-ին Եփրեմ կաթողիկոսին հասցեագրած իր նամակում, որտեղ պարզաբանում է թագաժառանգի մոտ գնալու իրական շարժառիթները. «Հայք գաւառաց ոչ կարողացեալ տոկալ յոխորդ յարձակմանց բազմաթիւ զօրաց նորին առ և առհասարակ առ երկիւղի, ի փրկութիւն անձանց իւրեաց սկանայ տիմիցին առ նոսա անճար և անհովիւ մնացեալ այլ ես մերձ ամրոցի Ջերմուկայ ամրացայ հանդերձ ժողովրդեամբ իմով, իսկ մեծ վըտանգ մեզ այն եղէւ, ամենայն անցից և ճանապարհաց յանկարծ կապիլն. ուստի անկարացանք մեզ հաց և գիւլլայ պարութ զատրաստիլ»: Արդարացնելով իր արարքը՝ Վանին շարունակում է. «Եթէ ոչ գնացից եւ ես առ նոսա, ժողովուրդ իմ առ հասարակ մատնին ամենայն ընչիւք ի կորուստ... Վերջապէս գնալն իմ առ պարսիկսն, եղէւ առ օգտի հասարակ ժողովրդոց ինձ յանձնեալ հայոց»<sup>237</sup>:

Մելիք-Վանին արքորավայրից Ներսեսին ուղղված նամակում ապացուցում է, որ ինքը զոհ է իր դասակիցների ստոր մատնությանը: Ութ ամիս անց միայն անմեղ ճանաչված Մելիք-Վանին

<sup>234</sup> Նույն տեղում, վավ. 617, թ. 17 :

<sup>235</sup> Նույն տեղում, վավ. 618, թ. 17 բ:

<sup>236</sup> Մաղալյան Ա., նշվ. աշխ., էջ 117:

<sup>237</sup> ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի ֆոնդ, ց. 1, գ. 10, թ. 1-2:

և Մելիք-Հովսեփը Պասկևիչի կողմից ազատ են արձակվում: Չնայած պատմական այս իրադարձությանը՝ Վանի Աթաբեկյանի գործունեությունը բարձր է գնահատվել ռուսական կառավարության կողմից<sup>238</sup>: Մելիք-Վանին մահանում է 1854 թ., 88 տարեկան հասակում, իր հայրենի Կուսապատ կալվածքում՝ մինչև կյանքի վերջը մնալով ռուսական կառավարության հավատարիմ հպատակը<sup>239</sup>:

Անդրադառնանք նաև Սարգիս Հասան-Ջալալյանի անվան հետ հետ կապված «դավաճանության» դեպքին: Ըստ որոշ պատմական աղբյուրների՝ Աբբաս Միրզան փորձել էր Շուշին վերցնել մեկ այլ նենգ ճանապարհով: Նա հրամայել էր ամրոցի պատերին մոտեցնել մի քանի հարյուր հայ ընտանիքների և ստիպել Գանձասարի մետրոպոլիտ Սարգսին՝ համոզելու ամրոցում գտնվող հայերին հանձնվելու, այլապես կկոտորվեն իրենց ցեղակիցները: Սակայն պաշարվածները, այդ թվում կանայք և աղջիկները, քարե կարկուտով են պատասխանում Սարգսի առաջարկին՝ աղաղակելով. «Դու մեր հոգևոր տերը չես, դու մոլլա Սարգիս ես»<sup>240</sup>: Պաշարվածները կոչ են անում իրենց հավատակիցներին, որ ավելի լավ է գոհվի մի քանի հարյուր մարդ, քան ողջ ազգը ընկնի ղզլբաշի ծանր լծի տակ<sup>241</sup>:

Լեոն կասկածամտությամբ է վերաբերում Սարգիս արքեպիսկոպոսի վերը նշված արարքին. «Այս, սակայն, մի պարզ հերյուրանք է, եթե նկատի առնենք այն, որ մի պաշարված բերդի պարիսպներին չի կարելի մոտենալ այնքան, որ դեռ կարելի լինի խոսքի բռնվել ներսեցիների հետ, իսկ փոխանակ անօգուտ հայիոյանքների՝ հեշտ էր ընդմիջտ լռեցնել այդքան վտանգավոր պրոպագանդիստներին՝ գնդակահարելով նրանց»<sup>242</sup>: Ընդհանուր առմամբ, կարելի է համաձայնել Լեոյի վերոնշյալ տեսակետին՝ հաշվի առնելով միայն մեկ հանգամանք՝ որ հայությունը միշտ էլ անողոր

<sup>238</sup> ՀԱԱ, ֆ. 332, ց. 1, գ. 533, թ. 1:

<sup>239</sup> Մաղալյան Ա., նշվ. աշխ., էջ 117:

<sup>240</sup> Օրմանյան Մ., Ազգապատում, հատոր Գ, Էջմիածին, 2001, էջ 4032:

<sup>241</sup> Потто В., Первые добровольцы Карабаха в эпоху водворения русского владычества, с. 68.

<sup>242</sup> Լեո, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 412:

է գտնվել դավաճանների նկատմամբ, իսկ երբ դա աներ նրա հոգևոր հովվապետը՝ անկասկած, նրան կոչնչացնել իր ձեռքերով:

Պատմական սկզբնաղբյուրները բավականին շռայլ տեղեկություններ են հաղորդում մեծ աղմուկ հանած արքեպիսկոպոս Սարգիս Հասան-Ջալալյանի, այսպես կոչված, «դավաճանության» մասին: Դրանով խիստ մտահոգ՝ 1826 թ. հոկտեմբերի 8-ին Ներսես Աշտարակեցին նամակ է հղում Սարգիս Հասան-Ջալալյանին: Հայցելով նրա ծերունազարդ վեհանձնության ներողամտությունը՝ խորհուրդ է տալիս. «Ըստ այնմ ուրեմն երկայնամտեցիք և դուք ի ձերում լռութեան, մինչեւ անցցէն բարկութիւնք եւ երագեսցեն ձեզ ներողութիւնք եւ ամէնայոյս մարդասիրութիւնք Իւրոյ Կայսերական Մեծութեանն եւ Նորին Բարձր Գերագանցութեան Ալէքսէյ Պետրովիչ Երմոլովի եւ այլոց ամենեցուն հետեւեցելոց նոցին»<sup>243</sup>: Մելիք-Վանիի օրինակով Ներսես Աշտարակեցին ժամանակին հասկացել էր, որ կաթողիկոսը մեծ բանսարկության հերթական զոհն էր:

Սակայն Սարգիս Հասան-Ջալալյանի դեմ ձեռնարկվելիք միջոցառումներն իրենց երկար սպասեցնել չեն տալիս. 1826 թ. դեկտեմբերի 2-ին Ա. Երմոլովը Ներսես Աշտարակեցուն ուղղված իր նամակում գրել է Սարգիս մետրոպոլիտի «գարշելի դավաճանության» մանրամասների մասին<sup>244</sup>:

Ա. Երմոլովի հրամանով՝ Սարգիս մետրոպոլիտը պետք է ուղարկվեր Թիֆլիս՝ Ներսես Աշտարակեցու մոտ: Այս մասին գեներալ Վ. Մադաթովը Ներսես Աշտարակեցուն ուղղված նամակում գրել է (1826 թ. դեկտեմբերի 12). «Իսկ ես իմ պարտքն եմ համարում հաղորդել, որ նրա վարմունքն այնքան անթույլատրելի էր, որ նորին գերագանցությունը (Ա. Երմոլովը-Ն. Բ.) հրամայեց ինձ ուղարկման ժամանակ նրա նկատմամբ ունենալ խիստ հսկողություն՝ պահպանելով հանդերձ անհրաժեշտ հարգանքը նրա բարձր աստիճանի նկատմամբ, ինչը և իմ կողմից կատարվել է ճշտությամբ»<sup>245</sup>:

<sup>243</sup> Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 647, թ. 32 բ - 33:

<sup>244</sup> Երիցեան Ա., նշվ. աշխ., էջ 253:

<sup>245</sup> Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 106, գ. 51, վավ. 113, թ. 1, ռուսերեն:

Սարգիս արքեպիսկոպոսի շուրջը ծավալված խոսակցություններին անտարբեր չէր մնացել նաև Խաչատուր Լազարյանը (1789-1871)<sup>246</sup>: 1827 թ. մարտի 16-ին Սանկտ Պետերբուրգից նա նամակով դիմում է Ներսես Աշտարակեցուն: Ի դեպ՝ նամակում, հավանաբար, առաջին անգամ շրջանառության մեջ է դրվում այն կեղծ ասեկոսեն, որ իբր, Աբբաս-Միրզան Սարգիս արքեպիսկոպոսին խոստացել էր կաթողիկոսական աստիճան, որի պատճառով էլ վերջինս դիմել է Շուշիի բերդի պաշտպաններին՝ հպատակվելու կոչով<sup>247</sup>:

Խաչատուր Լազարյանի նամակին Ներսես Աշտարակեցին պատասխանել է 1827 թ. մայիսի 11-ին. «Գրությունք վասն Սարգիս արքեպիսկոպոսին սուտ են բոլորովիմբ եւ անհիմն ըստ ամենայնի վասն խաչին եւ ւետարանին, եւ յորդորելոյ զժողովորդն հայոց յանհաւատարմութին իւրոյ Կ. Մեծութեանն, եւ են այնոքիկ պատրանք ստաբանից, որով նորին բարձր գերագանցութիւնն Ալէքսէյ Պետրովիչ երմնովն ըստ հասարակ սովորութեան իւրում պատրեալ այնպէս, նախ գրեալ էր առ իս, եւ հրամայեալ էր Կառավարութեան Ղարաբաղու յղել զնա առ իս վասն դատապարտութեան...»<sup>248</sup>:

Ղարաբաղի թեմի առաջնորդի արդարացման գործում մեծ դեր է խաղում Ներսես Աշտարակեցու նամակն՝ ուղղված Կովկասի կառավարչապետ Ի. Պասկևիչին: 1827 թ. հունիսի 14 թվագրված նամակում Ներսես Աշտարակեցին ձգբրիտ փաստարկներով հերքում է Ղարաբաղի թեմի առաջնորդի դեմ հարուցված մեղադրանքները և խնդրում թույլատրել Սարգիս արքեպիսկոպոսի վերադարձը<sup>249</sup>:

Հենց այս նամակն էլ դրական ներգործություն է ունենում, և պատասխանն էլ չի ուշանում: 1827 թ. հունիսի 15 թվագրված արխիվային մի վավերագրում Կովկասի կառավարչապետ

---

<sup>246</sup> Հայ հասարակական-քաղաքական, մշակութային գործիչ, ռուսական պետական խորհրդական, Լազարյան ճեմարանի հոգաբարձու:

<sup>247</sup> Մաղալյան Ա., նշվ. աշխ., էջ 296-298:

<sup>248</sup> Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 768, թ. 36 բ-37 բ:

<sup>249</sup> Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 106, գ. 51, վավ. 115:



Ի. Պասկևիչը, դիմելով Ներսես Աշտարակեցուն, գրում է. «Հիմնվելով Ձերդ Բարձր սրբազանության հավաստիացումների վրա՝ Հայոց Արքեպիսկոպոս Սարգսի մասին, որը մեղադրվում էր դավաճանության և ղարաբաղյան հայերին նույնին դրդելու գործում, փոխարքայի կարգադրությամբ ուղարկվել էր Թիֆլիս, և հարգանքով ընդունելով Ձեր միջնորդությունը՝ այս արքեպիսկոպոսի համար՝ ես թույլատրում եմ նրան վերադառնալ իր բնակության վայրը Ղարաբաղ և այս մասին կարգադրել եմ Թիֆլիսի Ռազմական Նահանգապետին»<sup>250</sup>:

Սարգիս արքեպիսկոպոսի արդարացումը մեծ ուրախությամբ է ընդունվում Ներսես Աշտարակեցու կողմից, 1827 թ. հունիսի 17-ին նա նամակով դիմում է Շուշի քաղաքի, Ղարաբաղի հայ հասարակությանը՝ հայտնելով Սարգիս արքեպիսկոպոսի անմեղ ծանաչվելը և վերադարձը: Նամակում նա հորդորում է նաև պատվով վերաբերվել արքեպիսկոպոսին: Ապա իր ուրախությունն է հայտնում ժշմարտության հաղթանակի համար. «...քրիստոնեական է հրաման, թե ծանիջիք զժշմարտութիւնն եւ ժշմարտութիւնն ազատեսցէ զձեզ...»<sup>251</sup>:

Արցախահայությանն ուղղված նամակին հետևում է կաթողիկոսի նամակը՝ ուղղված Սարգիս արքեպիսկոպոսին: Նամակը թվագրված է՝ 1827 թ. հունիսի 17. «...Այսուհետեւ ընդարձակ են ձեզ ծանապարհք ձեր, եւ ըստ համաձայնութեան հաճոյից իւրոյ սրբազնագոյն օծութեան Վեհափառ տեառն մերում յորժամ եւ կամք իցեն ձեզ վերադառնալ յաթոռ ձեր՝ կարօղ էք ծանապարհորդել ազատօրէն...»<sup>252</sup>:

Սարգիս արքեպիսկոպոսի արդարացման լուրը մեծ ուրախությամբ է ընդունվում Լազարյանների կողմից, ինչը հաստատվում է վավերագրերով<sup>253</sup>:

<sup>250</sup> Նույն տեղում, թղթ. 106, գ. 51, վավ. 111, թ. 1, ռուսերեն:

<sup>251</sup> Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 779, թ. 45-46:

<sup>252</sup> Նույն տեղում, թղթ. 166, վավ. 778, թ. 45:

<sup>253</sup> Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 106, գ. 51, վավ. 73, թղթ. 106, գ. 51, վավ. 74, թ. 1-2:

Սարգիս արքեպիսկոպոսի համար անարգալից էր խարանված դավաճանի կնիքը: 1827 թ. մայիսի 20 թվագրված վավերագրում Սիմեոն արքեպիսկոպոս Բզնունյանցը գրում է, թե Սարգիս արքեպիսկոպոսը հիվանդ է, խնդրել է իրեն՝ գրել Ներսես Աշտարակեցուն օր առաջ իրեն իր վանքն ուղարկելու մասին<sup>254</sup>: Սարգիս մետրոպոլիտն Արցախ է վերադարձել 1827 թ. հուլիսի 4-ին<sup>255</sup>:

Հոգեկան ծանր ապրումների հետևանքներն իրենց ազդեցությունն ունեցան ազատ արձակվելուց հետո. Բաղդասար եպիսկոպոս Հասան-Ջալալյանի՝ եփրեմ կաթողիկոսին ուղղված և 1829 թ. փետրվարի 15 թվագրված նամակում նշվում է. «Սրբազան մետրոպոլիտ Հայրն մեր՝ ի դեկտ. ամսեան ի 19-ին փոխեցաւ առ Աստուած, և եթող զմիաբանութիւնս և զվանս մեր որբացեալ ի թշուառագոյն վիճակի սգոյ և տրտմութեան»<sup>256</sup>:

Սարգիս Հասան Ջալալյանը Աղվանից 85-րդ և վերջին կաթողիկոսն էր<sup>257</sup>: Ինչպես գրում է Մակար Բարխուդարյանցը՝ «Վախճանուած է կաթողիկոսութիւնն Աղուանից և թաղած վերջին Սարգիս կաթողիկոս Ջալալեանցի գերեզմանում»<sup>258</sup>:

Այսպիսով՝ ինչպես ցույց են տալիս վերոնշյալ փաստաթղթերը, Սարգիս արքեպիսկոպոսը, Մելիք-Վանին և Մելիք-Հովսեփը զոհն էին դարձել մեծ բանասարկության, որը հյուսվել էր Ա. Երմուլովի կողմից: Տեղում բարեհաճություն ցույց տալով դեպի հայերը և շահագործելով նրանց հավատարմությունը՝ Ա. Երմուլովը հարկ եղած դեպքում չէր երկնչում նրանց վատաբանելուց: Այս առիթով Ա. Մաղալյանը վկայակոչել է մի նամակ Ալ. Խուդաբաշյանից՝ ուղղված Ներսես Աշտարակեցուն, թվագրված 1827 թ. մարտի 30. «Հին կուսակալն թէպէտ առ ձեզ և առ ազգն մեր բարեհաճութիւն ցուցանէր, սակայն աստ զբազում վատաբանութիւնս գրէր»<sup>259</sup>:

<sup>254</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 57, վավ. 352:

<sup>255</sup> Մաղալյան Ա., նշվ. աշխ., էջ 145:

<sup>256</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 62, վավ. 19, ինչպես նաև՝ Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 56:

<sup>257</sup> Մկրտումյան Լ., նշվ. աշխ., էջ 210:

<sup>258</sup> Բարխուտարեանց Մ., Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, էջ 156:

<sup>259</sup> Մաղալյան Ա., նշվ. աշխ., էջ 145:

Այսպիսով՝ ամփոփելով ռուս-պարսկական պատերազմին արցախահայության մասնակցության և, ընդհանրապես, պատերազմի հետ անմիջական կապ ունեցող քաղաքական իրադարձությունների լուսաբանման փորձը՝ հանգում ենք հետևյալ եզրակացություններին.

- ա) Պատմագիտական աշխատություններում բավարար ուշադրություն չի դարձվել պատմական աղբյուրների այն տեղեկություններին, որոնց համաձայն՝ պարսկական կողմն առաջին հարվածներից մեկը պետք է հասցնել Ղարաբաղին: Վեր հանված փաստերը կոչված են մերժելու պարսկական զորքի ղարաբաղյան ուղղությամբ ներխուժման «հանկարծակիության» արհեստածին թեզը:
- բ) Պատմագիտության մեջ առաջին անգամ Շուշիի պաշարման տևողությունը 55 օր է ներկայացրել Ա. Քյուրքչյանը: Այս տեսակետը նրա աշխատության մեջ ներկայացվել է առանց աղբյուրագիտական հենքի: Մեր կողմից երևան հանված փաստերը, ինչպես նաև իրադարձությունների տրամաբանությունը խոսում են այս տեսակետի օգտին: Հաստատված տեսակետների նորովի մեկնաբանությունը նպատակ ունի, ոչ թե վերհանել 5-6 օր կազմող անճշտությունը, այլ ճշգրտել կողմերի ռազմավարությունը:
- գ) Շուշիի պաշտպանությունը, իրավամբ, պետք է համարել ռազմավարական տեսակետից մեծապես գնահատելի. Շուշին ձախողեց Աբբաս-Միրզայի՝ արագ հաղթանակի հասնելու ծրագիրը և հնարավորություն տվեց ռուսական կողմին՝ կենտրոնացնելու ուժերը: Շուշիի պաշտպանության նշանակությունը ռուս-պարսկական պատերազմի համատեքստում խիստ կարևորվում է, քանի որ իրադարձությունների այլընթաց զարգացման արդյունքում այն բաց դուռ կհանդիսանար դեպի Վրաստան:
- դ) Ուսումնասիրելով և վերլուծելով պարսկական կողմի արշավանքի երկրորդ՝ Գյումրի-Միրաք ուղղությունը՝ հայ պատմագիտությունը բավարարվել է միայն Շուշիի հերոսական պաշտպանությունը ներկայացնելով: Ուստի մեր ուսումնասիրության շրջանակներում ենք ներառել «Շուշիի պարիսպներից դուրս»

տեղի ունեցած իրադարձությունները. պարսկական զորքերի ավերածությունները Ղարաբաղի գավառում, Դիզակում կազմակերպված ինքնապաշտպանության դեպքը, գավառի սահմանամերձ տարածքների ավերումը, պարսկական զորքերի ու քոչվորների ասպատակումները՝ 1826 թ. հոկտեմբեր-1827 թ. հոկտեմբեր ամիսների ընթացքում:

ե) Թուրքմենչայի պայմանագրով կազմակերպված պարսկահայերի գաղթի հետևանքով Ղարաբաղում բնակություն են հաստատում մոտավոր տվյալներով մինչև 100 ընտանիք: Այս փաստը հիմք ընդունելով՝ ադրբեջանական «պատմաշինարարները» փորձում են ապացուցել, թե, իբր, հայ բնակչությունը Ղարաբաղում հայտնվել է Թուրքմենչայի պայմանագրից հետո կատարված գաղթի հետևանքով: Ընդ որում, ադրբեջանական պատմագիտության մեջ Ղարաբաղ գաղթածների թիվը միտումնավոր կերպով հասցվում է 130000-170000-ի՝ հիմնավորելու իրենց իսկ կողմից առաջ քաշված Ղարաբաղի հայ բնակչության «եկվորության» և մահմեդական բնակչության «բնիկության» ադրբեջանական «պատմագիտական» տեսությունները: Մինչդեռ պատմական հիմնավոր փաստերի առկայությունը ձախողում է պատմությունը խեղաթուրելու հերթական փորձը:

զ) Հայ երևելիների «դավաճանության» դեպքը ցույց է տալիս, որ երմոլովը պատերազմի ընթացքում իր կողմից թույլ տրված բացթողումները փորձել էր քողարկել ստոր բանասարկությամբ՝ այդպիսով ցարական կառավարության ուշադրությունը հրավիրելով արցախահայության երբևէ չունեցած «դավաճան երեսի» վրա:

**Գ) ՂԱՐԱՔԱՂԸ՝ ՌՌՒՍԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐԻ  
ՆԱԽԱԳԾԵՐՈՒՄ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ  
1822-1867 ԹԹ.**

Ինքնակալության՝ Ղարաբաղի նկատմամբ իրականացված վարչաքաղաքականության լուսաբանումը խիստ կարևոր և էական է՝ ինչպես հետգյուլիստանյան ժամանակաշրջանը գնահատելու, այնպես էլ պատմական պատգամների իմաստով: Ղարաբաղն առանձին վարչաքաղաքական և իրավասուբյեկտային միավորի կարգավիճակով անցավ Ռուսաստանին. ինչպես ներկայիս Ադրբեջանը կազմող տարածքները, Դաղստանը և Վրաստանը: Սակայն ցարիզմի վարչական քաղաքականության արդյունքում ստեղծվում է բոլորովին այլ իրավիճակ ինչը մանրամասն քննության է ենթարկվել ստորև<sup>260</sup>:

Դեռևս 1805 թ. մայիսի 14-ի Քյուրակչայի դաշնագիրը՝ Ղարաբաղի խանության գրավման առիթով առանձին դաշնագրի առկայությունը, անժխտելի վկայությունն է այն փաստի, որ Ղարաբաղը տարածաշրջանում ընկալվել է, որպես ինքնատիպ էթնոտարածքային միավոր: Ինչ վերաբերում է պատմական հայտնի իրադարձությունների արդյունքում Ղարաբաղում հաստատված խանական կարգին, ապա այն, ըստ էության, չի արտացոլել հայաբնակ Ղարաբաղի ժողովրդագրական պատկերը և պարզապես պայմանավորված է եղել մահմեդական պետության կազմում լինելու հանգամանքով: 1813 թ. հոկտեմբերի 12-ին Գյուլիստանի

---

<sup>260</sup> Ենթագլխի մասին տե՛ս նաև մեր հոդվածները՝ Բաղդասարյան Ն., Ղարաբաղը՝ ռուսական կայսրության վարչաքաղաքական բարեփոխումների նախագծերում և որոշումներում 1822-1867 թթ., «Հայագիտական հանդես», 1/2010, Ստ., 2010, էջ 49-59: Багдасарян Н., Карабах в административных проектах реформ и постановлений Российской империи в 1813 – 1859 г.г., «Россия и армяне Нагорного Карабаха в прошлом и настоящем», Южнороссийское обозрение, Центр системных региональных исследований и прогнозирования ИППК ЮФУ и ИСПИ РАН, Вып. 67, Москва-Ростов-на-Дону-Степанакерт, 2011, с.100-110.

պայմանագրով Ղարաբաղի՝ Ռուսաստանին միացման պահին Ղարաբաղի խանությունը<sup>261</sup> բաժանված էր մահալների, դրանք էին՝ Սիսիանի, Կապանի, Դեմուրջհասանլիի, Բաղաբերդի, Քյաբիրլուի, Բարգուշատի, Տաթևի, Զիվանշիրի, Զրաբերդի, Խուրդափարայի, Փիսիանի, Օթուզ-Իքիի, Իգիրմիդորդի, Կարաչորլուի, Վարանդայի, Դիզակի, Աջնանի, Թալիշի, Խաչենի, Մեղրիի, որոնց գլուխ կանգնած էին կամ հայ մելիքները, կամ թաթար բեկերը<sup>262</sup>: Փաստորեն, նման վարչաքաղաքական բաժանման, նրա կարգավորման, վերակազմակերպման հետ պետք է հարաբերվեր ցարական կառավարությունը հետագա մի քանի տասնամյակների ընթացքում:

1822 թ. Ղարաբաղի խանության վերացումն ուղեկցվեց նրա կառավարման համակարգի վերակազմավորմամբ: Խանական կարգը վերացվել էր 1822 թ. նոյեմբերին, իսկ 1823 թ. վերջից ցարական կառավարությունը ձեռնամուխ եղավ ինչպես միացված այլ տարածքներում, այնպես էլ Ղարաբաղում ռուսական վարչակարգ՝ օրենսդրություն, կառավարման տնտեսական և քաղաքական համակարգ մտցնելու գործին:

1823 թ. դեկտեմբերի 8-ին նախարարների խորհուրդը պետական դեպարտամենտի ներկայացմամբ հաստատում է Ա. Երմոլովի ներկայացրած առաջարկը՝ ստեղծելու ռազմական շրջան՝ կազմված Շաքիի, Շիրվանի և Ղարաբաղի գավառներից<sup>263</sup> (պրովինցիա): Այդ մասին որոշումը ցարի կողմից հաստատվում է 1824 թ. հունվարի 22-ին: Որոշման համաձայն՝ գավառային կառավարումը կենտրոնացվում է բերդաքաղաքներում՝ պարետների ձեռքում:

---

<sup>261</sup> Ղարաբաղի խանությունը ընդգրկել է Կուր-Արաքսյան միջագետքի հարավային և հարավ-արևելյան հատվածը, Գանձակի և Շաքիի խանություններից հարավ և զբաղեցրել է 13 հազ. քառ. վերստ: Այս մասին տե՛ս Иваненко В., Гражданское управление Закавказьем, Тифлис, 1901, с. 146.

<sup>262</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. 5, էջ 15, Հովհաննիսյան Լ., «Ղարաբաղի խանություն», «Ղարաբաղ», «Լեռնային Ղարաբաղ» անվանումների հարաբերությունը, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան» միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2007, էջ 113:

<sup>263</sup> Тунян В., Политика самодержавия России в Закавказье XIX-нач. XX вв. Часть первая, 1800-1826 гг., с. 120.

Պարետներին պետք է ենթարկվեին մահալների ղեկավարները՝ նայիբները, բեկերն ու մելիքները, որոնք իրականացնում էին ոստիկանական իշխանությունը, հսկում հարկահավաքությունը և պարհակների կատարումը<sup>264</sup>: Ղարաբաղի պարետն անմիջականորեն վերահսկում էր գավառի ֆինանսական գործը<sup>265</sup>: Պարետը չէր կարող ինքնուրույն նշանակել մահալների նայիբներին. 1824 թ. մարտ ամսից նայիբի թեկնածության հաստատումը, ռազմական շրջանի հրամանատարի ներկայացմամբ, վերահաստատվում էր Վրաստանի կառավարչապետի կողմից<sup>266</sup>: Փաստորեն, ժառանգություն ստանալով խաների իրավունքները՝ պարետներն ինքնուրույն չէին իրենց գործողություններում:

Ըստ որոշման՝ ռազմական շրջանի կենտրոնը Շուշի քաղաքն էր: 1823 թ. «Անդրկովկասի կառավարման կազմակերպման» մասին ցարական հրամանագրից հետո Երմոլովը որոշում ընդունեց ստեղծել «Շուշի ամրոցի և Նրա շրջանի քաղաքային դատարան»:  
Քաղաքային դատարանի՝ դիվանի կազմում կային 4 ատենակալներ՝ 2 բեկ և երկու քաղաքացի՝ հայ և թաթար: Նրանք նշանակվում էին պաշտոնավարման մեկ տարի ժամկետով<sup>267</sup>:

Շուտով իրականացվում է նաև տեղական ինքնակառավարման կազմակերպման գործը: 1824 թ. մայիսի 5-ի Սենատի հրամանագրով հաստատվում են Շաքիի, Շիրվանի և Ղարաբաղի գավառների հաստիքները և ռազմական շրջանի պետի պաշտոնը: Ռազմական շրջանի պետ է նշանակվում Վ. Մադաթովը: Սկզբնապես Վ. Մադաթովը կարծում էր, թե ինքը միանձնյա պետք է վարեր ռազմական, դիվանագիտական, քաղաքացիական և տնտեսական հարցերը: Սակայն հետագայում բախվում է այն իրողությանը, որ պարետները բավականին ինքնուրույն են իրենց գործունեության

<sup>264</sup> Мильман А., Политический строй Азербайджана в XIX– начале XX веков, Баку, 1966, с. 73–74.

<sup>265</sup> Тунян В., Административно–экономическая политика самодержавия России в Закавказье 1-й пол. XIX в., Ереван, 2003, с. 27.

<sup>266</sup> Նույն տեղում, էջ 27, Ерошкин Н., История государственных учреждений дореволюционной России, Москва, 1983, с. 189.

<sup>267</sup> Тунян В., Административно–экономическая политика самодержавия России в Закавказье 1-й пол. XIX в., с. 27.

մեջ և հաշվի չեն նստում իր հետ: Այս մասին նա 1824 թ. նոյեմբերի 24-ին Ա. Երմոլովին ուղղված զեկույցում վերջինիս ուշադրությունն էր հրավիրում իր ենթակայության տակ գտնվող կառույցների ինքնագործունեության վրա. «Շատ դեպքերում նկատելի է, որ նահանգներում կարևորություն ունեցող գործերի մեծ մասը իմ ենթակայության տակ գտնվող պարետների կողմից իրականացվում է առանց իմ ինսպեկցիայի: Ինչի պատճառները, ենթադրում եմ, կամ պարետներն են իմ կողքով կատարում իրենց ներկայացումները ռազմական կառավարչին, կամ վերջիններս են ուղղակի կարգադրություններ անում»: Այնուհետև Վ. Մադաթովը, իր մտավախությունը հայտնելով, գրում է. «Հայտնվելով նման իրավիճակում, ինձ վստահված պրովինցիաների հետ կապված կարող եմ վստահ լինել, որ բոլոր գործերն այստեղ ընթանում են իրենց կարգով...»: Ապա հարցնում է Ա. Երմոլովին, թե որևէ անկարգության դեպքում ինքը պատասխանատվության չի՞ ենթարկվի<sup>268</sup>:

Լինելով պատվախնդիր ու արժանապատիվ անհատականություն՝ Վ. Մադաթովը, նման իրադրությունը «անկարգություն» որակելով, հրաժարական է տալիս: Իրականում այդ «անկարգությունների» պատճառը ռազմաշրջանային պետի և պարետների իրավունքներն ու պարտականությունները սահմանող փաստաթղթի բացակայությունն էր: Վ. Մադաթովի հրաժարականն իրադրությունը չի շտկում: Մադաթովի հրաժարականից հետո 1827 թ. օգոստոսի 27-ին Շաքիի, Շիրվանի և Ղարաբաղի ռազմաշրջանային պետ է նշանակվում իշխան Ի. Աբխազովը, իսկ 1827 թ. նոյեմբերի 10-ին Ղարաբաղի պարետ է նշանակվում մայոր Կյուկի ֆոն Կյուզենհաուն<sup>269</sup>:

Հատկանշական է, որ Շուշիի և Շաքիի պարետներն իրենց գործունեության շրջանակները կարգավորող հրահանգներ ստանում են՝ սկսած 1828 թ.: Հրահանգները վերաբերում էին կառավարման տնտեսական, դատական, ոստիկանական և քաղաքացիական ոլորտներին: Պարետների օգնականներ են նշանակվում

<sup>268</sup> Тунян В., Политика самодержавия России в Закавказье XIX-нач. XX вв. Часть первая, 1800-1826 гг., с. 120.

<sup>269</sup> ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 1, թ. 1:



հազարապետները և հարյուրապետները, որոնք կոչվում էին մահալային բեկեր, նայիրներ և յուզբաշիներ<sup>270</sup>, որոնց իրավունքներն ու պարտականությունները հստակեցված չէին:

Անհրաժեշտ է նշել, որ այս ընթացքում հայ ազգային գործիչները շարունակում էին հայկական պետականության վերականգնման ծրագրեր մշակել: 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմը դեռևս չէր ավարտվել, երբ 1827 թ. Խաչատուր Լազարյանը ցարական կառավարությանն է ներկայացնում «Հայկական թագավորության» ստեղծման նախագիծը: «Հայկական թագավորությունը» պետք է ընդգրկեր ռուսական տիրակալության ներքո գտնվող բոլոր հայկական պատմական տարածքները. «Շատ մարզեր, ինչպես հին Նախիջևանի, Երևանի, Ղարաբաղի, Շաքիի և Շամախիի մարզերը, Էջմիածնի նախագահ վանքով կազմում են Հայաստանի վաղեմի հին թագավորության ընդհանուր կորիզը և գլխավոր հիմքը»: Այն օժտված պետք է լիներ ներքին ինքնավարության իրավունքով, իսկ ռուսաց կայսրը պաշտոնապես ընդունելու էր հայոց թագավորի տիտղոսը: Նախագծի համաձայն թագավորությունում ստեղծվելու էր հայկական սահմանապահ զորք և կայսերական գվարդիական հեծելավաշտ, գործելու էին հայկական օրենքները և ռուսական կայսրերի տված առանձնաշնորհումները, հայոց եկեղեցին պահպանելու էր անկախ կարգավիճակ: Իրականում «Հայկական թագավորության» ստեղծման առաջարկին հետևում է ցարական կառավարության կողմից «Հայկական մարզի ստեղծման» հրամանագիրը, որն ընդգրկում էր Երևանի և Նախիջևանի խանությունները<sup>271</sup>:

Անդրկովկասի կառավարման բարեփոխումների նախագծերում Ղարաբաղի գավառի կառավարման հարցը քննարկման առարկա դարձավ 1828 թվականին: Նախագծի հեղինակն էր ռուս աստիճանավոր Պ. Սանկովսկին: Այն կոչվում էր «Նախագիծ Անդրկովկասի կառավարման ենթադրյալ կոմիտեի նյութերի

<sup>270</sup> Туляев В., Административно-экономическая политика самодержавия России в Закавказье 1-й пол. XIX в., с. 28.

<sup>271</sup> Հայոց պատմություն, հ.3, գիրք առաջին, նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես- XIX դարի վերջ), Երևան, 2010, էջ 261-262:

Նախապատրաստման համար» (Проект изготовления материалов для предполагаемого комитета управления Закавказским краем): 1828 թ. հունվարի 1-ին նախագիծը ներկայացվում է գլխավոր շտաբի պետ Ի. Դիրիջին: Նախագծով նախատեսվում էր ստեղծել 5 վարչատարածքային միավորներ՝ մարզեր՝ Վրացական, Իմերեթական, Հայկական և 2 մահմեդական մարզեր: Ղարաբաղի, Շաքիի և Շիրվանի գավառները պետք է մտնեին առաջին մահմեդական մարզի մեջ: Վրաստանի և Իմերեթիայի համար մարզային կառավարումը նախատեսվում էր խարսխել արդեն գոյություն ունեցող կառավարման համակարգի հիմքերի վրա: Մնացած մարզերում, այդ թվում և Ղարաբաղի գավառում, նախատեսվում էր ռուսական դատավարության և գործավարության ապագա ներմուծումից հրաժարում, որովհետև դա կհանգեցներ բյուրոկրատական քաշքշուկների<sup>272</sup>:

Անդրկովկասի կառավարման համակարգի բարեփոխման վերոնշյալ նախագիծը հաջողություն չունեցավ, և բարեբախտաբար, մնաց թղթի վրա: Ղարաբաղի դեպքում դա կնշանակեր արդեն մուսուլմանական օրենսդրությունից հրաժարում, ինչը նրան կվերադարձներ խանական վարչակարգին:

1829 թ. օգոստոսի 15-ին ռուսական կայսրության ֆինանսների նախարար Ե. Կանկրինը ցարին է ներկայացնում «Անդրկովկասյան գավառների կառավարման ձևի» մասին նախագիծ, որի համաձայն՝ պետք է վերականգնվեին Շաքիի, Շիրվանի, Ղարաբաղի խանությունները, որտեղ գլխավոր կառավարումը հանձնվելու էր խանին: Խանությունների վերականգնման պատճառները չէին լուսաբանվում, քանի որ, Կանկրինի հավաստմամբ՝ «դրանք պահանջում էին մանրամասն շարադրանք»<sup>273</sup>: Խանությունների վերականգնման առաջարկն ուներ իր պատճառները: Խանությունների վերացումը որպես անշահավետ երևույթ էր գնահատվում 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ետնախորքում, քանի որ պարսկական բանակի կազմում

<sup>272</sup> Тунян В., Административно-экономическая политика самодержавия России в Закавказье 1-й пол. XIX в., с. 43.

<sup>273</sup> Նույն տեղում, էջ 44-45.

իրենցից մեծ ուժ էին ներկայացնում հենց նախկին խաները, բեկերը և աղաները, ուստի ռուսական պաշտոնավարող շրջաններում տիրում էր այն մտայնությունը, թե խանությունների վերացմամբ Ռուսաստանն իր համար ձեռք էր բերել ավելորդ թշնամիներ և զրկվել ամուր հենարանից: Սակայն խանական կարգի վերականգնման առաջարկն ինքնին հետադիմական էր, քանի որ նահանջ էր տարածաշրջանում գոյություն ունեցող քաղաքական հարաբերություններից:

Նախագիծը ցարի համար ընթերցվում է 1829 թ. օգոստոսի 16-ին, սակայն դրա վերանայումը ձգձգվում էր՝ պայմանավորված ընթացող ռուս-թուրքական պատերազմով: Ցարական կառավարությունը բավարարվում է միայն նրանով, որ սենատորներ Պ. Քուբայիսովին և Ե. Մեչնիկովին հանձնարարում է Անդրկովկասում անցկացնել ստուգում<sup>274</sup>:

1830 թ. սենատորները, անցկացնելով Ղարաբաղի գավառի ստուգումը, զեկույց են ներկայացնում՝ «Ղարաբաղի գավառի անկարգությունների և չարաշահումների մասին», որտեղ քննադատում են ռազմաժողովրդական<sup>275</sup> կառավարումը, պարետի և գավառային դատարանի գործունեությունը<sup>276</sup>:

Հավանաբար, սենատորների դիտարկման արդյունքում երևան հանված Անդրկովկասի անկազմակերպ կառավարման իրողությունը պատճառ է դառնում, որ 1830 թ. ապրիլի 24-ին Ի. Պասկևիչը ցարին է ներկայացնում զեկույց Անդրկովկասում միասնական քաղաքացիական, ֆինանսական և կառավարման կարգ, օրենսդրություն մտցնելու մասին՝ պատճառաբանելով, որ ժամանակավոր կառավարումը կարող է անվստահություն առաջացնել ժողովրդի մոտ: Ղարաբաղի, Շաքիի և Շիրվանի գավառների համար Ի. Պասկևիչը բնութագրական էր համարում կառավարման ռազմապարետային ձևը: Նա առաջարկում էր

---

<sup>274</sup> АКАК, т. VII, док. 47, с. 35.

<sup>275</sup> Ցարիզմի կողմից ռազմաժողովրդական կառավարում էր անվանվում պարետային կառավարումը:

<sup>276</sup> Тунян В., Политика самодержавия России в Закавказье XIX-нач. XX вв. Часть вторая, 1826-1836 гг., Ереван, 2006, с. 63.

տարածաշրջանը կիսել երկու նահանգների և Հայկական մարզի: Առաջինը Վրացական նահանգն էր, իսկ երկրորդը, որը պայմանականորեն Դաղստան պետք է կոչվեր՝ կազմվելու էր 8 գավառներից՝ Ելիզավետպոլի՝ Շամշադինի ուղեմասի հետ, Ղարաբաղի, Թալիշի, Շաքիի, Շիրվանի, Բաքվի, Ղուբայի, Դերբենդի<sup>277</sup>:

Նախագծով վերջ էր դրվում ազգային հիմքերի վրա վարչատարածքային բաժանումներին: Հայ ազգային գործիչներին առաջարկվում էր բավարարվել միայն Հայկական մարզով: Նախագծի միակ դրական կողմն այն էր, որ սահմանվում էր ռուսական միաձև հպատակություն<sup>278</sup>: Նախագիծը քննարկվեց, սակայն սա էլ, բարեբախտաբար, մնաց թղթի վրա:

Անդրկովկասի կառավարման բարեփոխումների նախագծերում Ղարաբաղի գավառի կառավարման հարցը կրկին քննարկման առարկա դարձավ 1834 թ. փետրվարի 2-ին: Անդրկովկասի կառավարման կոմիտեի քննարկմանը ներկայացված՝ ռազմական նախարար Ա. Չերնիշևի «Ռուսական կայսրության Անդրկովկասյան մարզերի կանոնադրության հիմնական դրույթների նախագիծը» ծրագրային գրության մեջ առաջարկվում էր Ռուսաստանի անդրկովկասյան շրջաններն այդուհետ կոչել Անդրկովկասյան Ռուսաստան, որն էլ իր հերթին պետք է բաժանվեր քրիստոնեական և մահմեդական հատվածների՝ համապատասխանաբար, Արևմտյան և Արևելյան նահանգների:

1834 թ. մարտի 12-ին քննարկումների ժամանակ ներքին գործերի նախարար Դ. Բլուդովի առաջարկությամբ Արևմտյան՝ քրիստոնեական նահանգի մեջ պետք է մտնեին Վրաստանը, Իմերեթիան, Մինգրեթիան, Հայկական մարզը և Ախալցխան: Ղարաբաղը մահմեդական գավառների հետ մտնելու էր Արևելյան նահանգի մեջ<sup>279</sup>:

<sup>277</sup> АКАК, т. VII, док. 47, с. 35-37, Документы и материалы по истории армянского народа, социально-политическое и экономическое положение Восточной Армении после присоединения к России (1830-1870), под ред. Н. А. Тавакаляна, Ереван, 1993, с. 55-58.

<sup>278</sup> Тунян В., Политика самодержавия России в Закавказье XIX-нач. XX вв. Часть вторая, 1826-1836 гг., с. 68.

<sup>279</sup> Тунян В., Административно-экономическая политика самодержавия России в Закавказье 1-й пол. XIX в., с. 51.

1834 թ. հոկտեմբերի 16-ին կոմիտեի նիստի ժամանակ քրիստոնեական նահանգն անվանվեց Սևծովյան, իսկ մահմեդականը՝ Կասպիական: Վերջինս կազմված էր լինելու 2 մարզերից՝ Դաղստանի (Դաղստան ու Ղուբա) և Կուրի, վերջինիս մեջ մտնելու էին Ղարաբաղի, Շաքիի, Շամախիի և Թալիշի գավառները: Փաստորեն, վարչատարածքային այս բաժանման հիմքում ընկած էր միայն աշխարհագրական գործոնի առկայությունը, և հերթական անգամ ոտնահարվելու էր Ղարաբաղի բնակչության ազգային ինքնությունը: Այս նախագիծը ևս հաջողություն չունեցավ և չիրականացվեց:

1835 թ. կազմվեց «Անդրկովկասի մահմեդական գավառների կանոնադրության ընդհանուր նախագիծը», որի առաջին գլխում որոշակիացվում էր «Մահմեդական գավառներ» (պրովինցիա) անվանումը. «Անդրկովկասի մահմեդական պրովինցիաներ անվան տակ պետք է հասկանալ նախկին խանությունները՝ Ղարաբաղի, Շաքիի, Շիրվանի, Թալիշի, Դերբենդի, Բաքվի և Ղուբայի խանությունը՝ Ղարա-ղայթաղի և Թաբասարանի հետ»: Ցարիզմի վարչաքաղաքականության մեջ տեղ գտած այս փաստն այսօր մեծապես շահարկվում է ադրբեջանական պատմագիտության կողմից, մասնավորապես՝ շահարկվում է ցարական կառավարության կողմից Ղարաբաղի գավառի արհեստական մոտքագրման փաստը, այսպես կոչված «մահմեդական գավառների» շարք: Իրականում անվան որոշման համար հիմք է ընդունվել ո՛չ պատմական, ո՛չ ազգագրական բաժանման, և ո՛չ էլ առավել ևս՝ էթնիկական նմանությունների սկզբունքը, այլ ուղղակի իրականացվել է աշխարհագրական բաժանման սինթեզ՝ զուգահեռվելով կառավարման հարմարության սկզբունքին, ինչի արդյունքում «մահմեդական գավառների» մեջ արհեստականորեն մտցվել էր Ղարաբաղի գավառը: Կառավարման հարմարության, միայն աշխարհագրական գործոններով առաջնորդվելու սկզբունքը, էթնիկ կենտրոնացումներից խուսափելու ցարական ավանդական քաղաքականության կրողն ու զոհը տվյալ դեպքում Ղարաբաղն էր:

Նախագծի համաձայն՝ մահմեդական գավառները պետք է բաժանվեին 2 մարզի, որոնցից առաջինի մեջ էին Ղարաբաղի,

Շաքիի, Շիրվանի նախկին խանությունները՝ կենտրոն ունենալով Շամախի քաղաքը: Մարզերն իրենց հերթին բաժանվելու էին շրջանների, որոնք ունենալու էին իրենց շրջանային քաղաքները: Ղարաբաղի շրջանային քաղաքն էր լինելու Շուշին<sup>280</sup>:

Ստանալով «Մահմեդական գավառների կառավարման կազմակերպման» ծրագիրը՝ Կովկասի գլխավոր կառավարչապետ Գ. Ռոզենն անհրաժեշտ համարեց գավառները բաժանել շրջանների: 1835 թ. նոյեմբերի 9-ին Անդրկովկասի կառավարչապետը մահմեդական գավառների և Թալիշի խանության կառավարիչ գեներալ-մայոր Կ. ֆոն Կրաբբեին պահանջեց ներկայացնել Ղարաբաղի բաժանման նախագիծը՝ «որքան հնարավոր է, շրջանների փոքր թվով»: Շրջանային բաժանման հիմքում առաջարկվեց ընդունել 3 գործոն. բնակչության թիվը, «տեղական հարմարությունները» և աշխարհագրական դիրքը<sup>281</sup>:

1835 թ. դեկտեմբերի 12-ին Կ. ֆոն Կրաբբեն Գ. Ռոզենին է ուղարկում Ղարաբաղի գավառի շրջանային բաժանման պահանջված նախագծերը, որը կազմվել էր Ղարաբաղի պարետ փոխգնդապետ Ստեպանովի կողմից<sup>282</sup>:

(Աղյուսակ 1)

Ծխերն ըստ 1832-1833թթ. կամերալ վիճ.	Ծխերի քանակը	Ենթադրյալ բաժանում (հազ.)	
		շրջաններ	բնակչություն
Վարանդա	2072	Վարանդա	25150
Զանգեզուր	4374	Զանգեզուր	18547
Խաչեն	491	Իգիրմիդորդ.	12315
Դիզակ	1748	Շուշի	8268
Զրաբերդ	153	մարզային քաղաք Շուշի	7136
<b>Ընդամենը</b>	<b>8838</b>		<b>71416</b>

<sup>280</sup> Тунян В., Политика самодержавия России в Закавказье XIX-нач. XX вв. Часть вторая, 1826-1836 гг., с. 146-147.

<sup>281</sup> Նույն տեղում, էջ 148:

<sup>282</sup> Նույն տեղում, էջ 151:

1837 թ. Ղարաբաղի գավառի հարցը շոշափվեց «ենթադրություններ Անդրկովկասի բաժանման մասին» նախագծում, որի համաձայն՝ Ղարաբաղի, Շաքիի, Շիրվանի և Թալիշի շրջանները մտնելու էին Կուրի, ապա՝ վերակազմավորված Ներքին Կուրի մարզի մեջ՝ Շուշի մարզային կենտրոնով: Ըստ նախագծի՝ Ղարաբաղի շրջանը կազմվելու էր 5 մահալներից<sup>283</sup>, որն ընդգրկում էր Ղարաբաղի լեռնային մասը, Վարանդան, Դիզակը, Զիվանշիրը, Իգիրմիդորդը: Նախագիծը քննադատվեց անմշակ լինելու պատճառով և չիրականացվեց<sup>284</sup>:

1838 թ. մայիսի 19-ին Անդրկովկասյան կոմիտեի սենատոր Պ. Գանը Կովկասի կառավարչապետին ներկայացրեց «Անդրկովկասի կառավարման կանոնադրությունը», ինչը կառավարչապետ Ե. Գոլովինի կողմից վերջնականորեն հաստատվեց 1838 թ. օգոստոսին: Ծրագրի վերամշակման աշխատանքների ժամանակ գաղափար հղացավ, բացի Վրացա-Իմերեթական նահանգից և Կասպիական մարզից, կազմավորել մեկ նահանգ ևս՝ Հայկական մարզի և Ղարաբաղի գավառի միավորման ճանապարհով: Գաղափարի հեղինակն էր Չիչագովը: Սակայն 2 նահանգների համար աստիճանավորների նախատեսվող քանակի անբավարարությունը, ձմեռային հաղորդակցության դժվարությունները, կառավարման համակարգի ծախսերի մեծացումը, երրորդ նահանգի ստեղծումը վերապահեցին կառավարությանը: Առաջ քաշված ծրագիրն այդպես էլ չընթացքավորվեց և, դժբախտաբար, մնաց թղթի վրա<sup>285</sup>:

Վարչական բաժանման փոխարեն 1839 թ. դեկտեմբերին առաջ քաշվեց Ե. Գոլովինի նախագիծը՝ 10 միլիոն ռուբլի տրամադրելու Կովկասյան երկրամասի բարեկարգմանը: Նախագծի համաձայն՝ պետք է բարեկարգվեր նաև Շուշիի ամրոցը<sup>286</sup>, հաղորդակցության

---

<sup>283</sup> Վարչաքաղաքական բաժանման համար հիմք էր ընդունվել Ղարաբաղի շրջանային բաժանման 1835 թ. նախագիծը:

<sup>284</sup> Тунян В., Политика самодержавия России в Закавказье XIX-нач. XX вв. Часть третья, 1836-1844 гг., Ереван, 2006, с. 25.

<sup>285</sup> Тунян В., Административно-экономическая политика самодержавия России в Закавказье 1-й пол. XIX в., с. 63.

<sup>286</sup> Շուշիի հատակագիծը բարեկարգելու մասին ցարական իշխանությունների նախագծերի մասին տե՛ս Մկրտչյան Շ., Լեռնային Ղարաբաղի

ուղիներ ստեղծվեին Ղարաբաղի և Նախիջևանի գավառների միջև<sup>287</sup>:

1838-1839 թթ. Անդրկովկասի կառավարման վերակազմակերպման հարցը շարունակում էր քննարկվել: Ի վերջո, 1840 թ. ապրիլի 10-ին Նիկոլայ 1-ինը հաստատում է Անդրկովկասի նոր վարչական բաժանման նախագիծը, որն օրենքի ուժ է ստանում<sup>288</sup>: Նոր վարչական բաժանման արդյունքում ամբողջ Անդրկովկասը բաժանվեց երկու խոշոր տարածքային միավորների՝ Վրացա-Իմերեթական նահանգի և Կասպիական մարզի: Ղարաբաղն այդուհետ գտնվելու էր Բաքվի, Շամախիի, Ղուբայի, Դերբենդի, Լենքորանի, Նուխիի կողքին՝ Կասպիական մարզի կազմում<sup>289</sup>:

1840 թ. վերջ տրվեց գավառների 18-ամյա ռազմաժողովրդական կառավարմանը, և մտցվեց քաղաքացիական կառավարում, միատիպ դատավարություն և գործավարություն<sup>290</sup>: Չնայած այս բարեփոխումներին՝ հաշվի չէին առնված տեղական ժողովուրդների յուրահատկությունները, ուստի քաղաքացիական կառավարման անցման առաջադիմական կողմն, այնուամենայնիվ, սահմանափակ էր:

Քաղաքացիական կառավարման առաջին գործողություններից մեկը կարելի է համարել 1843 թ. մայիսի 21-ին Կասպիական մարզի մնացած շրջանների զինանշանների, ինչպես նաև Ղարաբաղի գավառի զինանշանի հաստատումը: Այն կազմվել էր 19-րդ դարի գերմանացի զինանշանագետ Գուգո Շոյրոլի կողմից<sup>291</sup>:

---

պատմա-ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1980, էջ 131, 155, Պետրոսյան Ա., Շուշիի քաղաքաշինական զարգացման և ռեսթիլիտացիայի խնդիրները, Ատենախոսության սեղմագիր, Երևան, 2006, էջ 12:

<sup>287</sup> АКАК, т. IX, Тифлис, 1884, док. 20, с. 17-19.

<sup>288</sup> Тунян В., Административно-экономическая политика самодержавия России в Закавказье 1-й пол. XIX в., с. 66.

<sup>289</sup> Шахатунян А., Административный передел Закавказского края, Тифлис, 1918, с. 86-87, Саркисян Г., Население Восточной Армении в XIX-начале XX в., Ереван, 2002, с. 99, Тунян В., Восточная Армения в составе России, Ереван, 1989, с. 43.

<sup>290</sup> Тунян В., Карабахский конфликт: историко-геополитический аспект, Ереван, 1999, с. 6.

<sup>291</sup> <http://www.hrono.ru/heraldicum/russia/lost/towns/shusha.htm>. ինչպես նաև Դեմոյան Հ., Հայկական զինանշաններ, դրոշներ, պետական պարզաններ, Երևան, 2008, էջ 63:



Զինանշանի վերևի մասում՝ ոսկեգօծ դաշտում, կանգնած է վագրը, իսկ կողքին՝ հողից դուրս եկող երեք լուսե սյուն, ստորին մասում՝ կանաչ դաշտում սլացող ձի, ինչը խորհրդանշում էր, որ գավառում բուծվում էին ամենալավ տեսակի ձիեր:

1843 թ. դեկտեմբերի 11-ին Անդրկովկասի կառավարման գլխավոր խորհուրդը որոշում կայացրեց գավառային դատարանների, գավառային կառավարման վերակազմակերպման մասին: Այս որոշման արդյունքում Ղարաբաղում վերակազմավորվեցին դատական համակարգը և գավառային կառավարումը<sup>292</sup>:

1846 թ. դեկտեմբերի 14-ին ցարական կառավարությունը Անդրկովկասը նոր վարչական բաժանման է ենթարկում: Այս անգամ ստեղծվում են 4 նահանգներ՝ Թիֆլիսի, Քուֆայիսի, Շամախիի և Դերբենդի: Զանգեզուրն ու Ղարաբաղը՝ Շուշի վարչական կենտրոնով մտնում են Շամախի նահանգի<sup>293</sup> կազմի մեջ: 1859 թ. մայիսի 30-ին Շամախիում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժի պատճառով Կովկասի փոխարքա Ա. Բարյատինսկու առաջարկով կենտրոնական նահանգային վարչությունը տեղափոխվում է Բաքու<sup>294</sup>: Այդպիսով 1859 թ. դեկտեմբերի 6-ին Ղարաբաղի գավառը մտնում է վերանվանված Բաքվի նահանգի մեջ:

Մինչև 19-րդ դարի 60-ական թթ. առաջին կեսը Ղարաբաղի վարչատարածքային բաժանման վերաբերյալ ոչ մի փոփոխություն չի արձանագրվում: Այն կրկին քննարկման հարց դարձավ 1860-ական թթ. երկրորդ կեսին, երբ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Շուշիի գավառն զբաղեցնում էր մոտավորապես 20 հազ. քառ. կմ տարածք՝ 254 հազ. բնակչությամբ, որոշվեց առանձնացնել նրա կազմում գտնվող Զանգեզուրը և

<sup>292</sup> Тунян В., Административно-экономическая политика самодержавия России в Закавказье 1-й пол. XIX в., с. 87.

<sup>293</sup> «Кавказский календарь» на 1849 г., Тифлис, 1848, с. 37-40. Саркисян М., Из истории градостроительства Шуши, Ереван, 1996, с. 15.

<sup>294</sup> «Մեղու Հայաստանի», թիվ 316, 1860, էջ 17: Ստեփանյան Գ., Բաքվի նահանգի հայությունը XIX դարի երկրորդ կեսին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, 2010, էջ 52:

առանձին-առանձին մտցնել ստեղծվելիք Ելիզավետպոլի նահանգի կազմի մեջ<sup>295</sup>:

1867 թ. դեկտեմբերի 9-ի՝ ցարական կառավարության ընդունած նոր օրենքով Անդրկովկասը բաժանվում է 5 նահանգների՝ Քութայիսի, Թիֆլիսի, Երևանի, Ելիզավետպոլի և Բաքվի: Լեռնային Ղարաբաղը մտնում է Ելիզավետպոլի նահանգի կազմի մեջ: 1868 թ. Ելիզավետպոլի նահանգի կենտրոն ճանաչվեց Գանձակը, որն իր բնակչության թվով և քաղաքին բնորոշ մյուս գծերով զիջում էր Շուշիին:

Ղարաբաղի գավառական կենտրոններ հռչակվեցին Թարթառը՝ Ջիվանշիրի համար, որի մեջ ներառվեցին Գյուլիստանի, Ջրաբերդի նախկին մելիքությունների տարածքներն ամբողջապես և Խաչենի մի մասը, Ջերբայիլը՝ համանուն գավառի համար, որի կազմում էին Դիզակի տարածքի մի մասը, և Շուշին, որի մեջ ներառվեց ամբողջ Վարանդան, Խաչենի և Դիզակի զգալի մասը<sup>296</sup>:

Ընդհանրացնելով մեր կողմից ուսումնասիրվող ժամանակաշրջանում ցարիզմի կողմից իրականացված՝ Ղարաբաղի վարչաքաղաքական փոփոխությունների փուլավորումը՝ հանգում ենք առաջին՝ 1814-1822 թվականներն ընդգրկող ժամանակաշրջանում այն հիմնականում ծանոթության և փորձարարական բնույթ էր կրում: Ղարաբաղի խանությունում մինչև 1822 թ. պահպանվում էր խանական վարչաձևը: 1822 թ. խանական կարգերը տապալվելուց հետո Ղարաբաղը վերածվում է ռուսական սովորական գավառի: Ռուսական օրենսդրությունը, ռազմական և վարչական

---

<sup>295</sup> Отчет по главному управлению наместника Кавказского за первое десятилетие управления Кавказским и Закавказским краем е.и.в. князем Михаилом Николаевичем с декабря 1862-6 декабря 1872, Тифлис, 1873, с. 50. Մեկ այլ աղբյուրի համաձայն այդ պահին Շուշիի գավառի տարածքը կազմում էր 19866,4 քառ. վերստ, իսկ բնակչության թիվը՝ 253314, տե՛ս «Кавказский календарь» на 1868 г., Тифлис, 1867.

<sup>296</sup> Բալայան Վ., Արցախի վարչաքաղաքական կարգը (1813-1917 թթ.), Պատմագիտական ուսումնասիրություններ, մաս առաջին, Ստեփանակերտ, 2003, էջ 5:

համակարգերը, զուգակցվելով տեղում առկա ասիական բռնակալության տարրերին, մուտք են գործում Ղարաբաղ:

Երկրորդ փուլն ընդգրկում է 1822-1840 թվականները, երբ ցարիզմն ինչպես անդրկովկասյան իր բոլոր տիրույթներում, այնպես էլ Ղարաբաղում կատարում է վարչաքաղաքական փոփոխություններ, որոնց նպատակը իշխանության կենտրոնացումը, տնտեսական յուրացումն ու վերածումն էին գաղութ:

Երրորդ՝ 19-րդ դարի 40-60-ական թթ. ընդգրկող փուլը բնութագրվում է վարչաքաղաքական նոր փոփոխություններով, որոնց արդյունքում Ղարաբաղում հաստատվում է կառավարման նոր քաղաքացիական կարգ, կարգավորվում է դատական համակարգը:

Գնահատելով ցարական կառավարության վարչաքաղաքական նախագծերի և որոշումների էությունը՝ եզրահանգում ենք.

ա) ցարիզմը հավատարիմ էր մնացել էթնիկ ապակենտրոնացման իր քաղաքականությանը. այն արտահայտվել էր նաև Ղարաբաղում.

բ) նախագծերում առաջ քաշված եզակի առաջարկները Ղարաբաղը և Հայկական մարզը մեկ վարչաքաղաքական միավորի մեջ միավորելու մասին այդպես էլ մնում էին թղթի վրա՝ պատճառաբանվելով սոսկ աշխարհագրական նկատառումներով: Փաստորեն, ցարական կայսերապետական արտաքին քաղաքականության թելադրանքով Ղարաբաղը և Հայկական մարզը չմիավորվեցին մեկ վարչական միավորի մեջ:

***Ցարական կառավարության կողմից ընդունված՝ 1840, 1846 և 1847 թվականների բեկական և աղայարական օրենքների և կանոնադրությունների արտահայտությունները Ղարաբաղում***<sup>297</sup>: Ինչպես վերը բազմիցս նշվեց, ցարական պաշտոնավարող շրջանները Ղարաբաղ դիտարկման ուղարկված աստիճանավորների ներկայացրած զեկույցների միջոցով քաջատեղյակ

<sup>297</sup> Ենթահարցի մասին տե՛ս մեր հոդվածը՝ Բաղդասարյան Ն., Ցարական կառավարության կողմից ընդունված՝ 1840, 1846 և 1847 թվականների օրենքների արտահայտությունները Ղարաբաղում «Կրթությունը և գիտությունը համաշխարհայնացման դարաշրջանում» Մեսրոպ Մաշտոց Համալսարանի գործունեության 15-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր (Ստեփանակերտ, 3 նոյեմբերի, 2012 թ.), Երևան, 2012, էջ 131-136:

էին այստեղ տիրող իրավիճակին: 19-րդ դարի 30-ական թթ. սկզբներին սենատորներ Ե. Մեչնիկովի և Ե. Քուլթայիտովի կողմից անցկացված վերստուգումը ցույց էր տվել երկրամասի իրական պատկերը. հին ու նոր օրենքների անհամապատասխանություն, մշակված վարչական ընդհանուր կառավարման բացակայություն, որը և չարաշահումների աղբյուր էր իրականում:

Պաշտոնական գրագրությունները փաստում էին, որ Ղարաբաղում մեծ չափերի էր հասնում հատկապես պետական հողերի զավթումը. Ղարաբաղի Մեհտի Ղուլի խանի՝ Պարսկաստան փախչելուց հետո նրա կնիքը մնացել էր Ռուստամ բեկի և Միրզա Ջամալի մոտ<sup>298</sup> որոնք էլ, օգտվելով առիթից, շնորհագրերով գյուղեր էին բաժանել իրենց ազգականներին և բեկերին, սակայն այդ շնորհագրերն այնքան անձարակությամբ էին կեղծված, որ պարզևագրման տարեթիվը դրոշմաթղթերի տպագրման տարուց վաղ էր նշանակված<sup>299</sup>:

Շրջանառության մեջ կային ստորագրված ու կնքված բաց փաստաթղթեր, որոնք ձեռք բերողը կարող էր պայմանների ու պահանջների թելադրած բովանդակությամբ լրացնել դրանք<sup>300</sup>: Շնորհագրերի բազմացմանը նպաստել էր 1823 թ. Ղարաբաղի գավառի եկամուտների հաշվառման հանձնաժողովը, որի անտեղյակության և անզգուշության պատճառով բեկերն իրենց էին ամրագրել երբեք իրենց չպատկանող հողերը: Այս մասին հայտնի է դառնում Ղարաբաղ ուղարկված ցարական պաշտոնյա Պ. Կոցեբուի՝ գեներալ Ե. Գոլովինին ուղղված 1838 թ. նոյեմբերի 7-ի զեկույցից, որտեղ Կոցեբուն գրում է, թե կեղծ թալահները օրինականից տարբերելու համար Կովկասի փոխարքայի գրասենյակից թարգմանիչ է խնդրում՝ ուսումնասիրելու շնորհագրերի բնագրերը: Պ. Կոցեբուի այս պահանջը հանդիպում է լուրջ դիմադրության, դրանք նրան տրամադրելուց հրաժարվում են Ջաֆար Ղուլի

<sup>298</sup> Միրզա Ջամալը Մեհտի Ղուլի խանի վեզիրն էր, որը խանի փախուստից հետո աշխատել է Ղարաբաղի գավառային դատարանում: Այս մասին տե՛ս ԱԿԱԿ, Կ. Մ., Тифлис, 1885, док. 295, с. 289-290.

<sup>299</sup> ԱԿԱԿ, Կ. Մ., VII, док. 411, с. 460-461.

<sup>300</sup> Ավդալբեգյան Խ., Հոդային հարցը Արևելյան Հայաստանում (1801-1917 թթ.), Երևան, 1959, էջ 77:

աղան, Ազատ Բեգյունը, Հասան-Ալի բեկը, Ալի-բեկ օղլին՝ գրավոր հաղորդելով, որ շնորհագրեր չունեն:

Պ. Կոցեբուի նպատակն էր կամ առգրավել անօրեն կերպով զավթված պետական սեփականությունը, կամ էլ իրերը թողնել նույն դրությամբ՝ ապագայում նման չարաշահումները կանխելու պայմանով: Նրա կարծիքով՝ դա կզգաստացնեի Ղարաբաղի բեկերին և հարգանք կներշնչեր ռուսական օրենքի նկատմամբ: Հարկ է նշել, որ Ղարաբաղի բեկերի թիվը Կոցեբուն նշում էր մինչև 1400, որոնց մեծ մասը բեկական ծագում չունեի, այլ ունեցվածքի հետ ձեռք էր բերել նաև կոչում: Նա կանխատեսում էր, որ բեկերի իրավագրկումը որոշ վայրերում, հատկապես Փխսիանում, Իգիրմիդորդում, Շահսևանում, Ղափանում, Քեյլանում հուզումներ կառաջացնեն, սակայն միաժամանակ չէր բացառում, որ գյուղացիները, ազատվելով նման ծանր լծից, հանդես կգան նրանց դեմ<sup>301</sup>:

Ցարական կառավարությունը ոչ միայն անտարբեր չէր, այլև նախանձախնդիր էր վերոնշյալ և բազմապիսի այլ խնդիրների լուծմանը, քանի որ նրան Անդրովկասում անհրաժեշտ էր առաջին հերթին կայունություն՝ երկրամասն առանց խոչընդոտների իր գաղութատիրական նպատակներին ծառայեցնելու համար:

Այս ուղղությամբ հատկապես կարևոր նշանակություն ունեցավ 1840 թ. ապրիլի 10-ի ցարական օրենքը, այն մեծ չափով վերաբերում էր նաև Ղարաբաղին: Ըստ օրենքի՝ տեղական «բարձր դասը»՝ աղաներն ու բեկերը, դուրս էին մղվում վարչական գործունեության ասպարեզից՝ համարվելով իբրև ցարիզմի քաղաքական խնդիրներին անհամապատասխան ավելորդ մի տարր: Միայն Շաքիում, Շիրվանում և Ղարաբաղում «բարձր դասի» թիվը կազմում էր 10750 մարդ, որոնց կերակրում էին 83000 գյուղացիներ, ընդ որում՝ պետական գանձարանին չվճարելով ոչ մի կոպեկ<sup>302</sup>:

<sup>301</sup> АКАК, т. IX, Тифлис, 1884, док. 215, с. 189-191.

<sup>302</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. 5, էջ 208:

Աղաների, բեկերի ու մելիքների փոխարեն տեղում պաշտոններ էին զբաղեցնում ռուս աստիճանավորները<sup>303</sup>:

Սակայն տեղական «բարձր դասին» հասցված այդ ծանր հարվածը կարող էր հանգեցնել անկանխատեսելի հետևանքների: Ստեղծված կացությունից դուրս գալու համար որոշվեց բեկերին թոշակ նշանակել պետական գանձարանից: Դրան անմիջապես հետևեց հողերի բռնագրավումը<sup>304</sup>: Ղարաբաղում 11 գյուղ անհատույց վերցվեց ավատատերերից<sup>305</sup>: Այդ է պատճառը, որ ինչպես Անդրկովկասի մի շարք տարածքներում, այնպես էլ Ղարաբաղում ապստամբական շարժումներ և զանգվածային դժգոհություններ են սկսվում<sup>306</sup>:

1842 թ. մայիսի 22-ին իրավիճակը հարթելու համար Անդրկովկաս է ուղարկվում ռազմական նախարար Ա. Չերնիշևը, որը տեղեկանում է, որ Ղարաբաղի և Շիրվանի բեկերը պատրաստվում են ապստամբության՝ նախկին խաների օգտին: Կասպիական մարզի բեկերին հուզում էին իրենց նկատմամբ կիրառվող հակաաղալարական օրենքները և կալվածատիրական իրավունքներից զրկումը<sup>307</sup>: Ա. Չերնիշևը, տեսնելով նման կացությունը և «արտոնյալ դասի» դժգոհությունը, կարգադրեց վերականգնել բեկերի նախկին իրավունքները: Կարգադրությունն ընթացքավորվում է, ստեղծվում են հանձնաժողովներ, որոնք եզրահանգում են, որ բեկերի ու աղալարների իրավունքները հավասարազոր են, որովհետև նրանք օգտվում են համանման իրավունքներից ու արտոնություններից<sup>308</sup>:

Կովկասի փոխարքա Մ. Վորոնցովի կառավարման տարիներին բեկերի և աղալարների հարցը կրկին վերանայվում է: 1845 թ.

<sup>303</sup> Ռուս աստիճանավորների թիվն Անդրկովկասում կրկնապատկվում է՝ 704-ից հասնելով 1311-ի: Այս մասին տե՛ս Պարսամյան Վ., Ցարիզմի գաղութային քաղաքականությունը Հայաստանում, I մաս, Երևան, 1940, էջ 156:

<sup>304</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. 5, էջ 208:

<sup>305</sup> Агаян Ц., Крестьянская реформа в Азербайджане в 1870 году, Баку, 1956, с. 45.

<sup>306</sup> Պարսամյան Վ., Ցարիզմի գաղութային քաղաքականությունը Հայաստանում, I մաս, էջ 157:

<sup>307</sup> Агаян Ц., Крестьянская реформа в Азербайджане в 1870 году, с. 45.

<sup>308</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. 5, էջ 218:

փոխարքայի, նրա կողմից լիազորված պաշտոնյա Լադինսկու, Շաքիի և Ղարաբաղի բեկերի խորհրդակցությունից հետո կազմվում է նախագիծ, որը ներկայացվում է Անդրկովկասի կառավարման գլխավոր խորհրդին: Խորհուրդը հաստատում է նախագիծը, որի հիմնական դրույթներն էին՝ բեկերին և աղաներին ետ վերադարձնել այն հողերը. «որոնք սխալմամբ և մեզ համար մեծ վնասով վերցվել են նրանցից»: Ինչ վերաբերում է գյուղացիների հարկերին, ապա, նախագծի համաձայն, դրանք պետք է ծանրացվեին. «... որոշ պրովինցիաներում, օրինակ, Ղարաբաղում, պետք է վճարեն 1/10-ի փոխարեն բերքի 1/5-ը»<sup>309</sup>:

Չնայած Մ. Վորոնցովի նախագծի դեմ կային լուրջ առարկություններ, բայց այն հաստատվեց Նիկոլայ 1-ինի կողմից, որին իսկույն հետևեց 1846 թ. դեկտեմբերի 6-ի հրովարտակը, որով նախատեսվում էր կայունացնել Անդրկովկասի արտոնյալ դասի վիճակը՝ դրանով իսկ նրանց օգտակար դարձնելով կառավարության վարելիք քաղաքականությանը: Հրովարտակով բեկերի, աղաների, մելիքների և այլոց ժառանգական սեփականությունն էին ճանաչվում նախկինում զանազան ծառայությունների և քաջագործությունների համար նրանց շնորհված և երկրամասը Ռուսաստանին միացվելու ժամանակ վերոհիշյալների տիրապետության տակ եղած, ինչպես նաև այդ պահին էլ անվիճելիորեն նրանց ձեռքին գտնվող հողերը<sup>310</sup>:

Ցարական կառավարության նպատակն էր «բարձր դասի» անձնական իրավունքներն ըստ հնարավորության հավասարեցնել այն իրավունքներին, որոնք շնորհված էին ռուսական ազնվականությանը: Դրա համար ստեղծվեցին, այսպես կոչված, «բեկական

---

<sup>309</sup> АКАК, т. X, док. 14, с. 11.

<sup>310</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. 5, էջ 220, Гулянян Х., Очерки истории армянской экономической мысли XIX века, Москва, 1955, с. 26, Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края (այսուհետև՝ СМІЭБГКЗК), т. II, Тифлис, 1887, с. 77, Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края, (այսուհետև՝ МІЭБГКЗК ), т. IV, ч. I, Тифлис, 1886, Экономический быт государственных крестьян в Шушинском и Джебраилском уездах Елисаветпольской губернии, исследование А. Г. Деконского, с. 226, АКАК, т. X, док. 15, с. 12.

հանձնաժողովներ» խաների, բեկերի, աղալարների և մելիքների անձնական իրավունքների ճշտման համար<sup>311</sup>: Թիֆլիսում, Երևանում, Բաքվում և Շուշիում ստեղծված այդ հանձնաժողովներին հրահանգված էր. «Բեկական տոհմի մեջ հաշվելու համար առավել վճռական հատկանիշը համարվում է հողատիրությունը...»<sup>312</sup>: Բեկերի կալվածատիրական իրավունքներն ապացուցելու համար որպես իրավաբանական ապացույց էին խանական շնորհագրերն ու վկաների ցուցմունքը:

1846 թ. հրովարտակի հռչակումից հետո Ղարաբաղի բեկերի, աղաների և մելիքների մոտ նոր թափ հաղորդվեց պետական հողերին տիրելու ձգտումներին: Պետական հողերին տիրելու ամենատարածված ձևը խանական կեղծ թալահների հորինումն էր, ինչպես նաև կաշառելու միջոցով սուտ վկայություններ տալը<sup>313</sup>: Նման դեպքերը հեշտությամբ հնարավոր էին դառնում, որովհետև նախկին պարետային կառավարման ժամանակ պետական հողատարածքները ճշտված չէին: Քանի որ այս գործի վերահսկողությունը հանձնված էր նախկին տեղական ինքնակառավարման մարմիններին, ապա արդյունքում գյուղերի մեծ մասը դարձել էր կալվածատիրական: Ղարաբաղում բեկերի կողմից պետական հողերի զավթման նոր եղանակներ ներկայացրել է կապիտան Պրուժանովսկին իր զեկույցում: Նա նշում է. «Առավել ուշ Ղարաբաղի բեկերը, տեսնելով, որ այլևս հնարավոր չէ կեղծել խանական թալահները, դիմեցին մեկ այլ միջոցի, այսպես, օրինակ, երկու կալվածատերերի հողերի մեջ ընկած էր արքունական հողատարածք, նրանք պայմանավորվում էին իրար հետ և այդ հողի նկատմամբ ցուցաբերում իրենց հավակնությունները»: Սկսվում է օրինական հետաքննություն, որի ընթացքում կալվածատերերից մեկը, ըստ պայմանավորվածության, սկսում է զիջել, ապա «գիտակցում իր անհիմն հավակնությունները», այնպես, որ դրանով առավել ուժ էր հաղորդվում հակառակորդի

<sup>311</sup> Адонц М., Экономическое развитие Восточной Армении в XIX веке, Ереван, 1957, с. 136.

<sup>312</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. 5, էջ 220:

<sup>313</sup> СМИАБГКЗК, т. II, с. 226.



ճշմարտացիությանը: Գործը հասնում է քաղաքացիական և քրեական դատական պալատ, որտեղ քննելով այն և վարույթը կողմերից մեկի սեփական անարդարացիության գիտակցման փաստը հաշվի առնելով, որոշում է ինքնակոչ տիրոջն անրագրել վեճի առարկա հողը՝ տալով Նրան համապատասխան փաստաթուղթ: Այդպիսով, պայմանավորվածության համաձայն, կալվածատեր հարևանները կամ վաճառքի, կամ էլ նվիրատվության եղանակով իրար միջև բաժանում էին Նրանց հողերի միջև ընկած՝ «վեճի առարկա» հանդիսացող տարածքը<sup>314</sup>: Պրուժանտվսկին հավելում էր, որ Ղարաբաղի շատ բեկերի նույնիսկ պետք չէր ո՛չ շնորհագիր և ո՛չ էլ վերոնշյալ քաշքշուկը, քանի որ արքունական հողերը հաշվառված չէին, ուստի Նրանք անօրեն կերպով զավթում էին ցանկացած հողատարածք<sup>315</sup>:

Կրկին անդրադառնալով բեկական հանձնաժողովների գործունեությանը՝ նշենք, որ հանձնաժողովների գործունեության արդյունքը եղավ բեկական և աղալարական կոչվող «կանոնադրությունների» ընդունումը: Բեկական և աղալարական երեք կանոնադրություններից Ղարաբաղին էր վերաբերում 1847 թ. ապրիլի 20-ին հրատարակվածը<sup>316</sup>: Կանոնադրությունների արդյունքում ստեղծված նոր բեկական և աղալարական դասը կազմեց կալվածատերերի դասը, որը կոչված էր Անդրկովկասում ցարիզմի ամուր հենարանը և գաղութատիրական գործիքը դառնալու:

Վերոնշյալ օրենքներն ու կանոնադրությունները կյանքի կոչելու ընթացքում ցարիզմը Ղարաբաղում վարում էր բավականին հետաքրքիր քաղաքականություն. հովանավորելով մահմեդական բարձր դասին՝ միևնույն ժամանակ տեղական ինքնակառավարման կարևոր պաշտոններում նշանակում էր հայերին: Մեր տեսակետը հաստատվում է բազմաթիվ նորահայտ վիճագիր արձանագրություններով<sup>317</sup>: Հետգյուլիստանյան պատմաշրջանի քաղաքական հետևանքների ետնախորքին

<sup>314</sup> АКАК, т. X, док. 295, с. 289-290.

<sup>315</sup> Նույն տեղում:

<sup>316</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. 5, էջ 221:

<sup>317</sup> Հարությունյան Հր., Շուշի. քարտեղեն անխոս վկաներ, Ստեփանակերտ, 2013:

տիրապետելու համար խիստ կարևոր է ներկայացնել ցարիզմի վարած տեղական ինքնակառավարման քաղաքականությունը: Այս քաղաքականության իրական պատկերն ստեղծելու համար «Կովկասյան տարեցույցների»<sup>318</sup> միջոցով հնարավոր է դարձել կազմելու Ղարաբաղի տեղական կառավարումն իրականացնող պաշտոնատար անձանց ցուցակը 1846-1866 թթ., որը կներկայացնենք աղյուսակի տեսքով:

(Աղյուսակ 2)<sup>319</sup>

	Ղարաբաղի գավառապետ	ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ՊԵՏԵՐ					
		Մեղրիի	Քերբերլիի	Ջանգեզուրի	Ջիվանշիրի	Ջրաբերդի	Վարանդայի
1846	Մ. Կոլյուբյակին	Ա. Մուկրիցկի	Ա. Շալիկով	Ն. Կամպակեյեց	Ա. Կուլստ	Հ. Շահնազարյան	Ա. Մամիկոնյան
1849	Կ. Թարխան-Մուրավյով	Ի. Օռլով	Ա. Մամիկոնյան	Ն. Մուրաչև	Ջ. Աղասարյան	Ի. Խանդամիրյան	Ն. Թուլան
1854	Կ. Թարխան-Մուրավյով	Ի. Իսպանդիարով	Ն. Մուրաչև	Աբդուլա-Բեկ-Ռուստամ-Բեկ օղլի	Ի. Խանդամիրյան	Ջ. Աղասարյան	Ն. Թուլան
1855	Պ. Սաֆոնով	-	Ի. Խանդամիրյան	Ֆ. Կունչերով	Վ. ֆոն Վոլֆրամ	Ա. Վարնեկ	Ա. Միխայլովսկի

<sup>318</sup> «Кавказский календарь» на 1846 г., Тифлис, 1845, с. 176-177, «Кавказский календарь» на 1849 г., Тифлис, 1848, с. 37-40, «Кавказский календарь» на 1846 г., Тифлис, 1845, с. 176-177, «Кавказский календарь» на 1855 г., Тифлис, 1854, с. 638-639, «Кавказский календарь» на 1856 г., Тифлис, 1855, с. 630-631, «Кавказский календарь» на 1858 г., Тифлис, 1857, с. 432-433, «Кавказский календарь» на 1859 г., Тифлис, 1858, с. 458-459, «Кавказский календарь» на 1860 г., Тифлис, 1859, с. 14-15, «Кавказский календарь» на 1861 г., Тифлис, 1860, с. 20-21, «Кавказский календарь» на 1865 г., Тифлис, 1864, с. 26-27, «Кавказский календарь» на 1866 г., Тифлис, 1865, с. 26-27.

<sup>319</sup> Աղյուսակում հայկական ազգանուններին ավելացված են ռուսական ազգանվանական վերջավորություններ, ինչը ռուսական տիրապետության շրջանում հայ պաշտոնյաների և առևտրական խավի շրջանում տարածված երևույթ էր:

1856	Պ. Սաֆոնով	-	Ի. Խանդա- միրյան	Հ. Ախշա- րունով	Վ. ֆոն Վոլֆրամ	Ա. Վարնեկ	Ա. Միխայլո- վսկի
1857	Պ. Սաֆոնով	-	Ի. Խանդա- միրյան	Հ. Ախշարու- մով	Ի. Ստաշևսկի	Ա. Ֆեոդոսև	Մ. Կվինտո
1858	Պ. Սաֆոնով	-	-	-	-	-	-
1859	Պ. Սաֆոնով	-	-	-	-	-	-
1860	Պ. Սաֆոնով	-	Վ. Յանցով	Գ. Իվերսկի	Գ. Մար- դանով	Ա. Վարնեկ	Կ. Յանաու
1861	Ն. Բրուսիլով	-	-	-	-	-	-
1864	Մ. Զուրաբով	-	-	-	-	-	-
1865	Կ. Կրինիցկի	-	Ն. Բայչևսկի	Կ. Տոմաշև	Ի. Կանչելի	Դ. Մար- կելիչ	Վ. Կո- վալյով

Աղյուսակի տվյալները ներկայացնում են ցարական կառավարության վարած տեղական ինքնակառավարման քաղաքականությունը: 1) չնայած ինքնակալությունն իր օրենքներում և կանոնադրություններում պաշտպանում էր մահմեդական բեկերի շահերը, սակայն դա առավել շատ վերջիններիս իր դեմ չտրամադրելու համար էր արվում: Ցարիզմը կառավարման հարցում չէր վստահում մահմեդական բեկերին, որոնք առիթի դեպքում չէին խորշում Ռուսաստանի հակառակորդի դերում հանդես գալուց: 2) Ինչ վերաբերում է հայ բնակչությանը, ապա նրանց շրջանում դավաճանության դեպքերը բացառվում էին, ուստի վերջիններիս կույր հավատն էլ օգտագործվում էր ցարիզմի կողմից իր դիրքերն այստեղ ամրապնդելու համար: Դրանով կարելի է բացատրել այն, որ տեղական ինքնակառավարումն իրականացվում էր մեծաթիվ հայ պաշտոնյաների միջոցով:

Փաստորեն, ցարիզմի վերոնշյալ քաղաքականությունը տեղում քաղաքական հակակշռություն ստեղծելու և այդ ճանապարհով սեփական հենարանն ամրապնդելու նպատակ էր հետապնդում:

**ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ  
1813-1867 ԹԹ.: ՑԱՐԻԶՄԻ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ**

**Ա) ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ,  
ԱՐՇԵՍՏՆԵՐԸ ԵՎ ԱՌԵՎՏՈՒՐԸ**

19-րդ դարի սկզբին ինչպես Արևելյան Հայաստանում, այնպես էլ Ղարաբաղի խանությունում տնտեսության հիմնական ճյուղը մնում էր գյուղատնտեսությունը, որի զարգացմանն արգելակում էին ավատատիրական հետամնաց հարաբերությունները, աշխատանքի նախնական գործիքները, հողի մշակման հնամենի եղանակը:

Ղարաբաղի տնտեսական կյանքը մեծապես տուժել էր հատկապես 1804-1813 թթ. ռուս-պարսկական պատերազմի հետևանքով, որովհետև պատերազմի ամբողջ ընթացքում Ղարաբաղը թատերաբեմ էր ռազմական գործողությունների համար: Եթե փորձենք վերհանել տվյալ ժամանակաշրջանում Ղարաբաղի իրադրությունը փաստերի վերլուծությամբ՝ հնարավորինս կպարզաբանվեն նրա տնտեսական ծանր վիճակի իրական պատճառները:

Ռուս-պարսկական պատերազմի ընթացքում Ղարաբաղի բնակչության կողոպուտի, բռնությունների մասին են վկայում «Ակտերի» էջերում տեղ գտած բազմաթիվ փաստաթղթեր. «Այստեղ մնացած բնակիչների կրած ավերածությունների մասին մանրամասնորեն հայտնել հնարավոր չէ, քանի որ բացառությամբ 1807 և 1808 թթ. չի անցել տարի, որի ընթացքում նրանք չտուժեին պարսիկներից՝ անասունների գողացմամբ և տարբեր կողոպուտներով: Հատկապես 1811 թ. ընթացքում 1000 ընտանիքներից ավելի ոչ

միայն հարկեր վճարելու հնարավորություն չունեն, այլև պահանջում են կերակրել իրենց...»<sup>320</sup>:

Մեկ այլ տեղեկության համաձայն՝ պարսկական 6000-ի հասնող գորքը 1810 թ. սեպտեմբերի 11-ին և 12-ին անցել է Արաքսը, քել մեծ քանակությամբ եղջերավոր անասուններ, կողոպտել և գերեվարել բնակչությանը<sup>321</sup>:

Շարունակվում էր նաև խանությունների միջև պայքարը, որն ուղեկցվում էր սպանություններով, անասունների ըջմամբ և այլն: Ղարաբաղի խանության նկատմամբ հատկապես թշնամաբար էր տրամադրված Շաքիի Ջաֆար-Ղուլի խանը, որը բազմիցս ասպատակում էր խանության տարածքը՝ քելով անասուններին և կողոպտելով բնակչությանը<sup>322</sup>:

Ըստ էության, 1804-1813 թթ. ռուս-պարսկական պատերազմի հետևանքների իրական պատկերը տալիս է ռուս-պարսկական բանակցություններին մասնակցած եվրոպացի մի ճանապարհորդ, որի ուղեգրություններում Ղարաբաղի խանության մասին հետևյալն է ասվում. «Գետը անցնելուց հետո մենք անմիջապես մտանք ռուսական հողամասը՝ Ղարաբաղի գավառը, որ հողի, ջրի, կլիմայի տեսակետից հավանականորեն աշխարհի ամենագեղեցիկներից մեկն է, բայց երկար ժամանակից ի վեր պարսիկների մղած պատերազմից հետո ամայացել է: Մենք չտեսանք և ոչ մի բնակիչ կամ ոչ մի բնակված տեղ, մինչև որ նշմարեցինք հեռավոր մի բլրի վրա ռուսական հեծապահակներին»<sup>323</sup>:

Մեկ այլ անգլիացի ճանապարհորդի հիշատակության մեջ ասվում էր. «Շատ գերիներ առնված ռուսներից պահում են արքունիքում և Թավրիզի բերդում: Քսանից երեսուն հայ գյուղացիներ՝ Ղարաբաղի բնիկներ գտնելով, որ պարսիկ հեծելազորի կողմից իրենց դաշտերում կատարված արշավանքների պատճառով իրենք ենթարկված էին սովամահ մի վիճակի, որոշեցին գաղթել Աբբաս Միրզայի երկիրը: Ճանապարհին նրանք հանդիպեցին

<sup>320</sup> АКАК, т. V, Тифлис, 1873, док. 696, с. 579

<sup>321</sup> Сумбат-заде А., Сельское хозяйство Азербайджана в XIX в., Баку, 1958, с. 17.

<sup>322</sup> АКАК, т. IV, Тифлис, 1870, док. 758, с. 742.

<sup>323</sup> Հակոբյան Հ., Ուղեգրություններ, հ. 2, (1800-1820 թթ.), Երևան, 1934, էջ 386:

հեծելազորից թալանչիների մի խմբի, որոնք առանց մտիկ անելու ձերբակալեցին նրանց որպես գերի և ուղարկվեցին Թավրիզ»<sup>324</sup>:

1813 թ. հոկտեմբերի 12-ին կնքված Գյուլիստանի պայմանագրով Ղարաբաղը խաղաղ գոյատևման և տնտեսության զարգացման հնարավորություն ստացավ. նրա սահմաններն այդուհետ պետք է պաշտպաներ ցարական Ռուսաստանը:

Սակայն Ղարաբաղի տնտեսական վերելքին նորից հարվածեց ռուս-պարսկական երկրորդ պատերազմը՝ 1826-1828 թթ.: «Ակտեբրի» էջերում տեղ գտած փաստաթղթերից մեկում ասվում էր, որ ծայրահեղ պայմաններում հայտնված Ղարաբաղի գավառի բնակիչները պատերազմի հետևանքով միջոցներ չունեին և դրսից հացահատիկ էին ներմուծում անհավատալի բարձր գներով<sup>325</sup>:

Պարսկական զորքերի հասցրած վնասի և հալածանքների մասին հստակ պատկերացում կազմելու համար վկայակոչենք մեկ այլ փաստաթուղթ. 1829 թ. Բաքվի գավառից սպասվում էր 10704 ռուբ.՝ արծաթով եկամուտ և 2001 ռուբ. ապառք, Շաքիի գավառից՝ 118252 ռուբ.՝ արծաթով եկամուտ և 2725 ռուբ. ապառք, իսկ բնական պայմաններով և տարածքով առաջիններին գերազանցող Ղարաբաղի և Շիրվանի գավառներից, պատերազմի թատերաբեմ ծառայելու և ավերված տնտեսական կյանքի հետևանքով, սպասվում էր ընդամենը՝ 24000 ռուբ.՝ արծաթով եկամուտ<sup>326</sup>:

1828 թ. կնքված Թուրքմենչայի հաշտության պայմանագրի կնքումից հետո Ղարաբաղն այս անգամ երկարատև՝ մինչև 1905-1906 թթ. հայ-թաթարական ընդհարումները, զարգանում էր բնականոն հունով:

Ղարաբաղի անվտանգության ապահովումը, ներքաղաքական մասնատվածության վերացումը մեծ նշանակություն ունեցան երկրի տնտեսության զարգացման վրա: Գյուղատնտեսության զարգացման խթանը ոռոգման համակարգի բարեկարգ վիճակն է: Բնական ջանապարհով Թարթառ գետը ոռոգում էր 137, Կարկառը՝ 42, Բազարչայը՝ 22, Հակարին՝ 33, Կապանը կամ Չավնդուրը՝ 12,

<sup>324</sup> Նույն տեղում, էջ 393-394:

<sup>325</sup> АКАК, т. VI, ч. I, док. 728, с. 525-526.

<sup>326</sup> АКАК, т. VII, док. 21, с. 11-12.

վարանդան՝ 7 գյուղերի հողահանդակներ<sup>327</sup>: Յուրաքանչյուր համայնք, իրավաբանական կամ ֆիզիկական անձ իրավունք ուներ օգտվելու բնական ջրից<sup>328</sup>:

Ինչ վերաբերում է արհեստական ոռոգմանը, ապա 1850 թ. ստեղծված Կովկասյան գյուղատնտեսական ընկերության նախաձեռնությամբ քայլեր ձեռնարկվեցին Երևանի և Շուշիի գավառներում ոռոգման ջրանցքների կառուցման ուղղությամբ<sup>329</sup>: Աշխատանքներն այս ուղղությամբ դանդաղ էին ընթանում, և 19-րդ դարի 60-ական թթ. անգամ վաղ էր համակարգված կազմակերպված ցանցի մասին խոսելն, այն դեպքում, երբ Շուշի քաղաքի համար մեծ խնդիր էր անգամ խմելու ջրի հարցը: Այս մասին «Մշակի» էջերում կարդում ենք. «Շուշիի 6000 բնակչության համար բավարար չէր քաղաքի խանի աղջկա հանած ջուրը, այն բավարարում էր միայն հարուստներին, ուստի Կեանջեցեանցը որոշել էր քաղաքն ապահովել ջրով, հակառակ շուշեցիների այն ցանկության, որ անհրաժեշտ է օրիորդաց ուսումնարան հիմնել»<sup>330</sup>: Շուշիի խմելու ջրի խնդրի մասին մեկ այլ հոդված վկայում է. «Միաժամանակ այդ հարուստներից Խանի աղջկա հանել տված ջրի մոտ մարդ էր դրված խեղճերից ջուր վերցնելու համար փող առնելու, բայց փոքր միջոցից հետո զանազան պատճառներից ելնելով ստիպված չէին պահանջում»<sup>331</sup>:

Ղարաբաղի 19-րդ դարի 20-ական թթ. տնտեսական կյանքի մասին տեղեկություններ ենք ստանում Պ. Ի. Մոզիլսկու և Պ. Ն. Երմոլովի «Описание Карабахской провинции»<sup>332</sup> աշխատանքից: Նշված տեղեկություններից հայտնի է դառնում, որ Ղարաբաղի բնակչությունը հացահատիկային մշակաբույսերից ցանել է ցորեն, գարի, կորեկ և հաճար: Ընդ որում, մշակաբույսերի արտադրությունն ուղղված էր եղել միայն ներքին պահանջունքների

<sup>327</sup> Обзорение российских владений за Кавказом, ч. III, СПб, 1836, с. 262.

<sup>328</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. 5, էջ 27:

<sup>329</sup> Тунян В., Политика самодержавия России в Закавказье XIX-нач. XX вв. Часть четвертая, 1845-1876 гг., Ереван, 2007, с. 31.

<sup>330</sup> «Մշակ», թիվ 23, 13 հունիս, 1874:

<sup>331</sup> «Մշակ», թիվ 25, 27 հունիս, 1874:

<sup>332</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 241, վավ. 206:

բավարարմանը և գանձվել էր որպես հարկ՝ խանի, բեկերի, աղաների օգտին: Դժբախտաբար, տեղեկություններ չկան ցանքի և բերքի քանակության մասին:

Հացահատիկային և հատիկավոր մշակաբույսերի մասին համեմատաբար հարուստ, բայց և ոչ ճշգրիտ տվյալներ քաղում ենք «Обозрение российских владений за Кавказом» ուսումնասիրությունից<sup>333</sup>: 1845 թ. տվյալները հայտնի են դարձել Կասպիական մարզի կառավարչի հաշվետվություններից, որոնք ներկայացրել է Սումբատ-գադեն<sup>334</sup>: Այժմ կփորձենք ներկայացնել հացահատիկային և հատիկավոր մշակաբույսերի արտադրության չափերը Ղարաբաղում՝ օգտագործելով վերոնշյալ աշխատությունների տվյալները:

(Աղյուսակ 3)

Հացահատիկային և հատիկավոր մշակաբույսեր	1830-1832թ.	1845թ.
Ցորեն	220000 չետվ. <sup>335</sup>	420000 չետվ.
Գարի	143000 չետվ.	208572 չետվ.
Կորեկ	26000 չետվ.	27000 չետվ.
Հաճար	1750 չետվ.	-
Սիսեռ	-	632 չետվ. <sup>336</sup>
Բրինձ	33750 չետվ.	60000 չետվ.

Փաստորեն, հացահատիկային հիմնական մշակաբույսերը Ղարաբաղի գավառում 19-րդ դարի 30-ական թթ. և 40-ական թթ. սկզբներին եղել են ցորենը և գարին: Ընդ որում, եթե դրանց արտադրության գծով Ղարաբաղի գավառն առաջատար տեղում էր, ապա բրնձի արտադրության գծով զբաղեցնում էր վերջին տեղը՝ Թալիշի, Շիրվանի և Շաքիի գավառներից հետո<sup>337</sup>:

<sup>333</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 241, վավ. 206:

<sup>334</sup> Сумбат-заде А., Сельское хозяйство Азербайджана в XIX в., с. 59-77.

<sup>335</sup> Հատիկավոր մշակաբույսերի մեկ ռուսական չետվերտը հավասար է 9,5 փուֆի:

<sup>336</sup> Նշված թիվը ներկայացնում է Ղարաբաղի, Շաքիի, Շիրվանի, Թալիշի գավառների սիսեռի ընդհանուր բերքը. տե՛ս Сумбат-заде А., Сельское хозяйство Азербайджана в XIX в., с. 72.

<sup>337</sup> Նույն տեղում, էջ 70:



Եթե մինչև 19-րդ դարի 40-ական թթ. երկրորդ կեսը աղքյուրներում Ղարաբաղի գավառի վերաբերյալ տվյալները տրվում էին առանձին, ապա արդեն 19-րդ դարի 50-ական թթ., երբ Ղարաբաղը գտնվում էր Շամախի նահանգի կազմում, գավառի մշակաբույսերի արտադրության վերաբերյալ առանձին տվյալներ չեն ներկայացվում: Ըստ տվյալների՝ Շամախիի նահանգում 1850-1856 թթ. հացահատիկային և հատիկավոր մշակաբույսերի արտադրությունը բավական դանդաղ էր աճում, իսկ 1858-1859 թթ. նույնիսկ կրճատվել էր, ինչը պատճառ էր ինչպես տարերային, բնական աղետների, այնպես էլ մորելիս տարածվածության, որը կատարյալ չարիք էր դարձել հայ գյուղացու համար: «Մշակ» թերթի էջերում շուշեցի հողավաճագիրը մորելիս հասցրած վնասների մասին գրել է. «Ես չեմ մոռացել, ինչպես 12 տարեկան հասակում, երբ մորելիս ամառի պես երկինք էր բարձրացել արևի առաջը կտրելով, մեր հարևանները կաթնով ծաշ էին եփել, կաթսաները գլխներից դրել, իսկ մեզանից, մանուկներից ամեն մեկը պղնձե աման ձեռքներին՝ դողանջեցնում էինք պղինձները, մորելիսներին ետ դարձնելու համար: Այդ աստվածապաշտ կանայք կաթնով եփած ծաշը շերեփով սրսկում էին արտերի մեջ մորելիսների առջև... Անգույթ մորելիսները կերան ծաշը, ոչնչացրին և չհասունացած արտերը ու հեռացան»<sup>338</sup>:

Բացի բնական աղետներից, հացահատիկային և հատիկավոր մշակաբույսերի արտադրության կրճատման գլխավոր պատճառը, թերևս, 1846 թ. դեկտեմբերի 6-ի և 1847 թ. դեկտեմբերի 20-ի ցարական կառավարության օրենքներն էին, որոնք առավել ծանրացրին հողահարկերն ու պարհակները: Ցարական բարձրագույն հրահանգներով օրինականացվեցին և ուժեղացվեցին դարերով գոյություն ունեցող ավատատիրական հարաբերությունները, որոնք խոչընդոտում էին տնտեսական զարգացման գործընթացին:

Չնայած հացահատիկային մշակաբույսերի արտադրության աճի կամ անկման գրանցված տատանումներին՝ այնուամենայնիվ,

---

<sup>338</sup> «Մշակ», թիվ 39, 10 ապրիլի, 1890:

դրանք բավարարել են թե՛ ներքին պահանջները, թե՛ զորքին, իսկ մի մասը նույնիսկ վաճառվել է: Այսպես օրինակ, 1845 թ. դրությամբ Ղարաբաղում վաճառվել էր 50000 չետվ. ցորեն, 10572 չետվ. գարի, 10000 չետվ. բրինձ<sup>339</sup>: Պետք է նկատել, որ այդ մշակաբույսերի ապրանքայնությունը Ղարաբաղում ունեցել է իր առանձնահատկությունը: Ղարաբաղում ապրող քոչվորները նստակյաց բնակչությունից հացահատիկ էին ձեռք բերում հիմնականում փոխանակությամբ, ինչի պատճառով Շուշի քաղաքի շուկա էր հանվում բերքի միայն աննշան մասը:

Գյուղատնտեսության զարգացման գործում մեծ կարևորություն ունեն նաև աշխատանքի գործիքները: Ղարաբաղի գավառում 1832 թ. տվյալներով կար 4000 արոր և գութան: Հնձի գործիքները ևս նահապետական էին. հնձի ժամանակ օգտագործվում էր մանգաղ<sup>340</sup>:

Բարենպաստ բնակլիմայական պայմանները հնարավորություն են տվել Ղարաբաղի բնակչությանը՝ զբաղվելու այգեգործությամբ և բանջարաբուծությամբ: 19-րդ դարի 30-ական թթ. Ղարաբաղի մրգատու այգիների թիվը հարյուրից չէր անցնում, ընդ որում, դեղձի, ծիրանի, խնձորի, նռան ծառերն աճում էին թթենի ծառերի և խաղողի այգիների կողքին: Առավել մեծ թիվ էին կազմում խաղողի այգիները՝ ինչպես արքունական, այնպես էլ մասնավոր: 1832 թ. տվյալներով՝ հաշվվում էր 3080-ից ավելի խաղողի այգի, որից ստանում էին 70000 դույլ գինի և 3400 դույլ օղի: Բացի այդ խաղողից պատրաստում էին «բաքմազ» (դոշաք) կամ հյութ՝ մինչև 5700 բաթման թիլանի կամ մինչև 4800 փութ: Հայերն օղի էին պատրաստում նաև այլ մրգերից<sup>341</sup>:

1833 թ. «Коммерческая газета»-ի տվյալներով՝ Ղարաբաղի գավառում ստանում էին 73000 դույլ գինի և 3700 դույլ օղի<sup>342</sup>: Գինու որակն այդ ժամանակ լավ չէր, ունեցել է թթու համ և հազվադեպ էր պահպանվում երկար տարիներ:

<sup>339</sup> Сумбат-заде А., Сельское хозяйство Азербайджана в XIX в., с. 76.

<sup>340</sup> Обзорение российских владений за Кавказом, ч. III, с. 288-289.

<sup>341</sup> Նույն տեղում, էջ 294.

<sup>342</sup> Նույն տեղում, էջ 295:

19-րդ դարի 40-ական թթ. Շուշիի գավառում կար 1196 մրգատու, 2083 խաղողի այգի, դա, փաստորեն, նշանակում էր խաղողի այգիների քանակի կրճատում՝ 1830-ական թթ. տվյալների համեմատությամբ:

«Կովկասյան տարեցույցի» 1856 թ. համարում հետաքրքիր տեղեկություններ կան նաև Ղարաբաղի գավառի խաղողի և պտղատու, ինչպես նաև թթենու այգիների քանակի մասին՝ ըստ տեղամասերի<sup>343</sup>:

(Աղյուսակ 4)

Այգիներ	Ջրաբերդ	Ջանգեզուր	Քեբեդլին	Վարանդա	Ջիվանշիր	Ընդ.
Խաղողի	178	167	600	1858	-	2803
Պտղատու	6	15	100	575	500	1196
Թթենու	21	13	1000	422	2500	3956

Չնայած խաղողի մշակությունը Ղարաբաղում լայն չափեր ուներ, սակայն ծնունդ էր բերում Ելիզավետպոլից և Երևանից էր Շուշի խաղող բերվում վաճառքի<sup>344</sup>: 19-րդ դարի 60-ական թթ. վերջերից Ղարաբաղում սկսում է զարգանալ գինու և օղու արտադրությունը, ընդ որում, գինեգործությունը կենտրոնացված էր Գիշի, Ղզղալա<sup>345</sup> և Ճարտար գյուղերում<sup>346</sup>: «Արարատ» ամսագրում հետաքրքիր տեղեկության ենք հանդիպում հատկապես Ջրաբերդ գավառի ծաղկուն տնտեսության մասին: Այստեղ կարդում ենք. «Այս գաւառը բաղկացած է երեսուն և վեց գիւղօրեից,

<sup>343</sup> Նույն տեղում, էջ 295:

<sup>344</sup> Сумбат-заде А., Сельское хозяйство Азербайджана в XIX в., с. 126.

<sup>345</sup> Բալայան Վ., նշվ. աշխ., էջ 249:

<sup>346</sup> 1860-ական թթ. Ղարաբաղում գտնվելու Ժամանակ ռուս ճանապարհորդ Վ. Վերեշչագինը ճաշակել էր Ճարտարի գինին, որը քնութագրել է որպես քաղցր, սակայն տարօրինակ համի խառնուրդով գինի: Խոսքը «խնդողի» տեսակի խաղողից արտադրված գինու մասին էր: Այս մասին տե՛ս Մելքումյան Ս., Ճարտար, Երևան, 2003, էջ 130:

որոց մերազնեայ բնակչաց թինն հազար երեք հարիւրի կհասնի, որոնցից ոմանք երկրագործութեամբ և կէսք այգեգործութեամբ կպարապին: Այս գիւղօրեից մէջ ամենէն երեւելի է Կուսապատ այգեւետ գիւղն, որ ունի հարիւր յիսուն տունն Հայկազն բնակիչ...»<sup>347</sup>:

Բամբակագործությունը համարվում էր Ղարաբաղի տնտեսության կարևոր ճյուղերից մեկը: Հատկանշական է, որ այս ոլորտում ևս Ղարաբաղը գրավում էր առաջատար տեղերից մեկը: 1832 թ. տվյալներով հավաքվել էր 3200 փութ բամբակ, որից առանձնացվել էր 1100 չետվ.<sup>348</sup> սերմ:

Ցարական կառավարության ջանքերով 19-րդ դարի 30-ական թթ. կեսերին փորձեր կատարվեցին բամբակի նոր երկար թելավոր տեսակի աճեցման համար: Ինչ վերաբերում է Ղարաբաղին, ապա այստեղ փորձերն ուղեկցվում էին փոփոխական հաջողություններով<sup>349</sup>: 19-րդ դարի 40-ական թթ. այդ փորձերը շարունակվեցին: Շուշիի գավառային վարչությունից հայտնում էին, որ սիցիլիական բամբակատեսակը, որը տրվել է Ջիվանշիրի տեղամասային պետին՝ բնակչությանը բաժանելու և հարմար տեղերում ցանելու համար, կլիմայական անբարենպաստ պայմանների և խոլերայի պատճառով չէր աճել<sup>350</sup>: Սակայն Շամախիի և Լենքորանի գավառներում գրանցված հաջողություններն ուժեղացրին ցարական իշխանությունների հետաքրքրությունը Անդրկովկասում բամբակագործության զարգացման նկատմամբ:

Այդ նպատակով ցարական կառավարությունը, ի դեմ Մ. Վորոնցովի, կարգադրեց երկար թելավոր բամբակի տեսակ ներմուծել Ելիզավետպոլ, Շամախի և Լենքորան ու 100 ֆունտ արծաթով գումար նշանակել նրան, ով բամբակազտման համար ավելի լավ մեքենա կպատրաստի՝ քան այդ ժամանակ գործածության մեջ գտնվող նյու-յորքյան մեքենան կլիներ: Կարգադրվել էր Շուշիից, Լենքորանից և Բաքվից 5-6 ռուբ. արծաթով գին առաջարկել

<sup>347</sup> Պլուզեան Մ., Արցախ նահանգի Ջրաբերդ գաւառը, «Արարատ», թիւ Ը, 1871, էջ 441-443:

<sup>348</sup> Обзорение российских владений за Кавказом, ч. III, с. 284.

<sup>349</sup> Сумбат-заде А., Сельское хозяйство Азербайджана в XIX в., с. 100.

<sup>350</sup> «Кавказ», Тифлис, 1848, с. 145, АКАК, т. X, док. 154, с. 169.

բամբակի դիմաց, որն իր որակով չէր զիջի Քուբայիսի նահանգում աճեցված բամբակին: Այս հետևողական միջոցառումները սովեցին իրենց դրական արդյունքները<sup>351</sup>:

1850 թ. Կովկասյան գյուղատնտեսական ընկերության շնորհիվ բամբակի տեսակներ բերվեցին Հյուսիսային Ամերիկայից, Սիցիլիայից և Եգիպտոսից և փորձարկվեցին Երևանի, Նախիջևանի, Շուշիի և Լենքորանի գավառներում, որտեղ և լավ բերք ստացվեց: Մալթա կղզուց առաքվեց վեց ձեռքի մեքենա՝ բամբակի վերամշակման համար: Թիֆլիսում դրանք ընդօրինակվեցին և ուղարկվեցին Երևանի, Շուշիի և Թիֆլիսի ուեզդներ<sup>352</sup>:

Պատահական չէ, որ արդեն 1857 թ. Անդրկովկասի գյուղատնտեսական և արդյունաբերական ապրանքների ցուցահանդեսին չգտված և զտված բամբակ ներկայացվել է Շուշիի գավառից:

Միաժամանակ փաստերը ցույց են տալիս, որ 1850-ական թթ. առաջին կեսին Ղարաբաղում նկատվել է բամբակի ցանքսի խիստ կրճատում. 1845 թ. ստացված 450 փուփի փոխարեն 50-ական թթ. առաջին կեսին ստացվել էր 30 փուփ<sup>353</sup>: Բամբակի ցանքսի կրճատումը բացատրվում է նրանով, որ բնակչության աճի հետ կապված, աճում են բրնձի, եգիպտացորենի և ցորենի գները, և բամբակագործությունը դառնում է տնտեսապես անշահավետ: Բացի այդ, ռուսական և արտասահմանյան բամբակե էժան գործվածքների ներմուծումը ևս արգելք էր բամբակագործության զարգացման համար: Բամբակագործության զարգացմանը խոչընդոտում էին նաև հողերի սակավությունը և կլիմայական անբարենպաստ պայմանները:

19-րդ դարի 30-40-ական թթ. մեծ ուշադրություն էր դարձվում ծխախոտի մշակությանը: Դեռևս 1826 թ. մարտի 27 թվագրված մի նամակում Ներսես Աշտարակեցին Զոհրապ Թառումյանին գրել է, որ ստացել է հնդկական բամբակի ու լեղակի, ինչպես նաև

---

<sup>351</sup> Օհանջանյան Ն., Ցարական Ռուսաստանի տնտեսական քաղաքականությունը Ղարաբաղում 1805-1860-ական թթ. և դրա հետևանքները, ԱրՊՀ «Գիտական տեղեկագիր», Երիտասարդ գիտնականների միջազգային գիտաժողովի հողվածներ, թիվ 3, Ստեփանակերտ, 2007, էջ 35:

<sup>352</sup> АКАК, т. X, Отчет князя М. С. Воронцова за 1849-1851 гг., с. 885-886.

<sup>353</sup> Сумбат-заде А., Сельское хозяйство Азербайджана в XIX в., с. 103.

ամերիկյան ծխախոտի սերմեր, որից ուղարկելու էր և նրան<sup>354</sup>: Արդեն 19-րդ դարի 30-ական թթ. սկզբներին Ղարաբաղի գավառում ստանում էին 450 փուֆ ծխախոտ<sup>355</sup>: 1845 թ. տվյալներով՝ Ղարաբաղում կատարվել է մեկ փուֆի ցանքս, որից ստացվել է 320 փուֆ ծխախոտ, դրանից 210 փուֆը թողնվել է տնային կարիքների համար, 5-ը՝ ցանքսի, իսկ 105 փուֆը հանվել է վաճառքի<sup>356</sup>:

Ղարաբաղում ծխախոտագործության զարգացման գործում նշանակալի էին նաև անհատական նախաձեռնությունները: Այսպես, օրինակ, Ղարաբաղի գավառի պարետ՝ մայրո Կալաչևսկին սեփական նախաձեռնությամբ Ղարաբաղ էր ներմուծել ծխախոտի ամերիկյան տեսակը: Պլատոն Զուբովը «Հայացք Անդրկովկասի ֆինանսական և առևտրական հարաբերություններին» 1832 թ. տպագրված հոդվածում գրել էր, որ ծխախոտի մշակությունը Կալաչևսկուն հաջողվել է, և նա կարողացել է հիանալիորեն աճեցնել ամերիկյան ծխախոտը, որն իր որակով չէր զիջում մարիլանդյան ծխախոտին<sup>357</sup>: 1850 թ. ստեղծված Կովկասյան գյուղատնտեսական ընկերության օգնությամբ Շուշիի գավառում կատարվեց նաև ծխախոտի մարիլանդյան, կենտուկյան, բրազիլական և հավայան տեսակների ցանքս, ինչն այնքան էլ հաջող բերք չտվեց<sup>358</sup>: Ընդհանուր առմամբ, ծխախոտագործության զարգացումը Ղարաբաղում դուրս չեկավ բնակչության ներքին պահանջները բավարարելու ջրհանակներից:

Ղարաբաղի տնտեսության կարևոր ճյուղերից էր անասնապահությունը: Բարձրադիր լեռնային վայրերը, հարուստ բուսականությունը շատ նպաստավոր պայմաններ էին անասնապահության զարգացման համար: 19-րդ դարի սկզբին անասնապահությունը սկսեց առավել մեծ թափով զարգանալ՝ կապված 18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի սկզբներին Ղարաբաղ ներթափանցած քոչվոր թաթարական տարրի հետ:

<sup>354</sup> Մատենադարան, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 453:

<sup>355</sup> Обозрение российских владений за Кавказом, ч. III, с. 284.

<sup>356</sup> Сумбат-заде А., Сельское хозяйство Азербайджана в XIX в., с. 105.

<sup>357</sup> Նույն տեղում, էջ 106:

<sup>358</sup> Тунян В., Политика самодержавия России в Закавказье XIX-нач. XX вв. Часть четвертая, 1845-1876 гг., с. 31.

Չնայած անասնապահությանը զբաղվում էր հիմնականում քոչվոր բնակչությունը, սակայն նստակյաց բնակչությունը ևս պահում էր բավական քանակությամբ անասուններ, որը բավարարում էր բնակչության կարիքները<sup>359</sup>:

Անասնապահության զարգացած ժյուղերից էր ձիաբուծությունը: Ղարաբաղյան ձիերը հռչակված էին Անդրկովկասում իրենց գեղեցկությամբ, ոսկեգույն փայլով և արագավազությամբ: «Обозрение»-ի տվյալներով՝ Ղարաբաղում 19-րդ դարի 30-ական թթ. սկզբներին կար մինչև 20000 ձի<sup>360</sup>: 19-րդ դարի 40-ական թթ. Ղարաբաղում ձիերի խոշոր երամակներ ունեին Ջաֆար Ղուլի աղան, Ահմեդ խանը, Սաֆար Թարխանյանի որդիները, Վ. Մադաթովի ժառանգորդները և ուրիշներ: 1846 թ. Վորոնցովը գրել է. «Այս երկրամասում, հատկապես՝ Ղարաբաղում կան հիանալի ձիեր, որոնք չնայած հավասար չեն արաբական ձիերին, բայց և լավ ընտրություն և օգտակար կարող են լինել մեր բուծարանների համար»<sup>361</sup>:

Փաստորեն, Ղարաբաղում ձիաբուծարաններ չկային, ձիերի երամակները պատկանում էին առանձին բեկերի ու աղաների, ինչի մասին մշտապես ընդգծվել է Շամախիի նահանգապետի 19-րդ դարի 50-ական թթ. առաջին կեսի հաշվետվություններում: Դրա հետ մեկտեղ նշվում է, որ ձիերի լավագույն երամակները գտնվել են Շուշիի գավառում, իսկ դրանց մեջ հատկապես առանձնանում էր կալվածատեր Ասադ բեկի երամակը: Նահանգապետի մեկ այլ՝ 1858 թ. հաշվետվության մեջ ասվում էր, որ կանոնավոր ձիաբուծարաններ նահանգում չկային, բայց շատ բեկեր և նույնիսկ գյուղացիներ ունեին երամակներ, որոնց մեջ կային 100–250 զամբիկներ: Նահանգապետը նշել էր, որ Շուշիի գավառում բեկերը բուծում էին ձիերի Ղարաբաղյան տեսակը, որոնք հռչակված են իրենց ոսկեփայլ մորթով և արագավազությամբ<sup>362</sup>:

<sup>359</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. 5, էջ 28:

<sup>360</sup> Обзорение российских владений за Кавказом, ч. III, с. 296.

<sup>361</sup> АКАК, т. X, док. 175, с. 176–177.

<sup>362</sup> Сумбат-заде А., Сельское хозяйство Азербайджана в XIX в., с. 81, 83.

Օ. Եվեցկին գրում է, որ ղարաբաղյան ձիերի տեսակը բարելավելու համար Ղարաբաղի խաներն օգտագործել են արաբական ձիեր<sup>363</sup>: Սակայն իր ուղեգրություններում Լ. Սեգալը գրում է. «Կիրք տածելով լավ ձիերի նկատմամբ՝ բեկերը, սակայն, չեն հոգում այս ցեղի բարելավման մասին»<sup>364</sup>: Ձիաբուծությանը վերաբերող ներքորերյալ աղյուսակային ցուցանիշները թույլ են տալիս կարծել, որ բացի բեռնակրային նպատակներով օգտագործվելուց, ձիերը վկայությունն էին տիրոջ հարստության, հետևաբար՝ շքեղության խորհրդանիշ էին: Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Ղարաբաղի գավառի անասնապահության աճի կամ անկմանը վերաբերող տվյալները հետևյալն էին<sup>365</sup>.

(Աղյուսակ 5)

Ըստ տարեթվերի	1832	1843	1845	1850	1851	1853	1855	1856 <sup>366</sup>	1857	1858
<b>Ձիաբուծություն</b>		35161	38000	49420	48088	48300	47916	48308	48915	48500
<b>Ուղտ</b>	100	-	290	-	-	3351	3975	3215	2245	2340
<b>Էշ և ջորի</b>	2200	-	9631	-	-	10642	12898	15735	17790	17630
<b>Խոշոր եղջանան.</b>	100000	-	85200	206269	168027	-	201538	209620	251750	258300
<b>Ոչխարաբուծ.</b>	300000	79114	260000 <sup>367</sup>	-	307562	367580	-	259604 <sup>368</sup>	152755	-
<b>Խոզաբուծ.</b>	3500	21310	22000	36662	35172	-	27156	24940	22300	-

Աղյուսակների ուսումնասիրությամբ նշված թվերը կասկածելի են դառնում: Օրինակ՝ 1845 թ. 85200 գլուխ խոշոր եղջերավոր անասունների թիվը 1850 թ. հասել էր 206269 գլխի, սակայն, ըստ

<sup>363</sup> Евецкий О., Статистическое описание Закавказского края, ч. 2, СПб, 1835, с. 205.

<sup>364</sup> Сегаль Л., Елисаветпольская губерния, впечатления и воспоминания, Тифлис, 1902, с. 60–61.

<sup>365</sup> Сумбат-заде А., Сельское хозяйство Азербайджана в XIX в., с. 82–89.

<sup>366</sup> «Кавказский календарь» на 1856 г., Тифлис, 1855, с. 358–441.

<sup>367</sup> Այծերի հետ միասին:

<sup>368</sup> «Кавказский календарь» на 1856 г., с. 358–441.



աղյուսակի, 1851 թ. տեղի է ունեցել անասունների գլխաքանակի զգալի նվազում: Թվաքանակի այդ կասկածահարույց ցուցանիշները հաճախ բացատրվում են անասունների զանգվածային անկմամբ:

Ինչ վերաբերում է մանր եղջերավոր անասնապահությանը, ապա այն համարվում էր բնակչության հիմնական զբաղմունքներից մեկը, իսկ խոզաբուծությամբ զբաղվում էր Ղարաբաղի քրիստոնյա բնակչությունը: Մահմեդական քոչվոր բնակչությունը, կրոնական դրդապատճառներից ելնելով, չէր զբաղվում անասնապահության այդ ժյուղով<sup>369</sup>:

Աղյուսակի ուսումնասիրությունը թույլ է տալիս կատարել հետևյալ եզրակացությունը. չնայած աճի կամ անկման երբեմն կասկածահարույց ցուցանիշներին՝ Ղարաբաղի գավառում անասնապահությունը տնտեսության զարգացած ժյուղերից մեկն էր, որի խոսուն փաստն է 1832-1858 թթ. անասունների գլխաքանակի զգալի աճը:

Սումբատ-զադեի աշխատանքում զետեղվել է 1845 թվականին վերաբերող՝ Սանկտ-Պետերբուրգի Կենտրոնական պետական պատմական արխիվում գտնված մի փաստաթուղթ, որն արժեքավոր աղբյուր է տվյալ ժամանակաշրջանում շուկա հանված անասունների և մսամթերքի առևտրի վերաբերյալ: Համաձայն այս փաստաթղթի՝ 1845 թ. Շուշիի գավառում վաճառվել են անասուններ՝ 1000 ձի, 6000 խոշոր եղջերավոր անասուն, 18000 ոչխար, կենդանական ծագման մթերքներ և ապրանքներ՝ 9000 փուֆ յուղ, 10500 փուֆ պանիր, 4000 փուֆ ճարպ, ինչպես նաև 10960 փուֆ բուրդ, 15900 հատ կաշի: Վաճառահանված ապրանքների ընդհանուր գումարը կազմում էր 190775 ռուբ.՝ արծաթով<sup>370</sup>:

Այսպիսով՝ չնայած անասնապահությունը Ղարաբաղում գտնվում էր զարգացման բավականին բարձր աստիճանի վրա, սակայն արտաքին շուկայի հետ թույլ կապերի պատճառով ապրանքային բնույթ չէր ստանում:

<sup>369</sup> Обзорение российских владений за Кавказом, ч. III, с. 296.

<sup>370</sup> Сумбат-заде А., Сельское хозяйство Азербайджана в XIX в., с. 91.

Ղարաբաղի տնտեսական կյանքում զգալի դեր էր խաղում արհեստագործությունը<sup>371</sup>: Այն այստեղ արտահայտված էր իր առանձնահատկությամբ. առևտրական կենտրոններից կտրվածությունը, հաղորդակցության ուղիների բացակայությունը, տնտեսական կյանքի պարփակվածությունը ստիպում էր բնակչությանը՝ զբաղվելու տնայնագործական բնույթի արհեստագործությամբ: «Կովկասյան տարեցույցի» 1855 թ. տեղեկությունների համաձայն՝ հնարավոր է դարձել իմանալ Ղարաբաղի գավառի արհեստավորների ընդհանուր թիվը, սակայն սկզբնաղբյուրն արհեստների տեսակների մասին ոչինչ չի ասում<sup>372</sup>:

(Աղյուսակ 6)

Արհեստավորների թիվն ըստ տեղամասերի	Քրիստոնյաներ	Մահմեդականներ	Ընդամենը
1. Շուշի քաղաք	1318	545	1863
2. Զրաբերդ	215	-	215
3. Զանգեզուր	100	20	120
4. Քերերլին	-	-	-
5. Մուստաֆախանլի	-	12	12
6. Վարանդա	30	-	30
7. Զիվանշիր <sup>373</sup>	-	-	-

Աղյուսակից հետևում է, որ գյուղերում արհեստագործությամբ զբաղված էր հիմնականում 377 մարդ: Հավանաբար, աղյուսակում ներկայացված էին այն հիմնական արհեստները, որոնցով հռչակված էին գյուղերը, իսկ տնայնագործական արհեստները՝

<sup>371</sup> Տե՛ս նաև Բաղդասարյան Ն., Արհեստագործության զարգացումը Ղարաբաղում (1810-1860 թթ.), Մեսրոպ Մաշտոց Համալսարանի «Լրատու» (գիտական հոդվածների ժողովածու), թիվ 2/13/, Երևան, 2012, էջ 42-53:

<sup>372</sup> «Кавказский календарь» на 1856 г., с. 358-441.

<sup>373</sup> Աղբյուրներում Զիվանշիրի վերաբերյալ տվյալների սղությունը հիմք է տալիս ենթադրելու, որ այս տեղամասը բավականաչափ ուսումնասիրված չէր:

որպես այդպիսին, չէին գրանցվել: Ասվածն ապացուցելու համար վկայակոչենք 1844 թ. թվագրվող արխիվային մի նյութ, որի համաձայն Շուշիի գավառն ուներ 251 գյուղ, Զիվանշիրի գավառը՝ 216, Զանգեզուրի գավառը՝ 326, իսկ Ջերբայիլի գավառը՝ 166<sup>374</sup>, ուստի 959 գյուղերում 377 արհեստավորի առկայությունը, բնականաբար, չէր կարող բավարարել պարփակված տնտեսությունն ունեցող դարաբաղյան գյուղերին, հետևաբար, կարելի է ենթադրել, որ աղյուսակում տեղ են գտել միայն մասնագիտացված արհեստները:

Հատկանշական է, որ որոշ գյուղեր հռչակված և մասնագիտացված էին արհեստի որևէ տեսակով: Օրինակ՝ Հադրուզը հռչակված էր իր լավ քարագործ վարպետներով, Տումին՝ հյուսններով, Մեծ Թաղլարը՝ երաժիշտներով: Գյուղերի մի մասն էլ հռչակված էր արտադրած ապրանքով՝ ճարտար և Մարտակերտ գյուղերը՝ ցորենով, Գիշի և Ղզղալա գյուղերը՝ գինու պատրաստմամբ, Դաշբուլաղն ու Նորշենը՝ տարբեր խմիչքներով: Արհեստների մասնագիտացումն էլ հիմք է տվել այնպիսի ժողովրդական ասոյթների, ինչպես օրինակ. «լօխ պրուտ ըն նինգյրցէքյ» (արցախյան բարբառով «պրուտ»՝ նշանակում է բրուտ), «լօխ զարգյար ըն սզնրքէցէքյ» (զարգյար-ոսկերիչ), «սօղան ծախօղ տուղուցէքյ» (սողան-սոխ), «խօզ պախօղ ըն մոշխըմըհըտէցէքյ», «կյինի շինօղ դըզղըլէցէքյ»<sup>375</sup>: Գյուղերում գոյություն ունեցած արհեստների մասին աղբյուրագիտական արժեք ունեն ազգանունները: Այսօր էլ շատ գյուղերում հանդիպում են արհեստավորների շառավիղներ, որոնք կոչվում են Դալլաքանք (դալլաք-սափրիչ), Զարգյարանք և այլն:

Որոշ արհեստների գծով մասնագիտացել էր վարանդան: Վարանդայի Մեծ Թաղլար, Ճարտար, Քարին տակ, Խնածախ, Բադարա, Ուլուբաք գյուղերում զարգացած էին արհեստագործության այնպիսի ճյուղեր, ինչպիսիք էին՝ նվագարանագործություն, բրուտություն, ոսկերչություն, տակառագործություն, աղյուսագործություն, ջուլիակություն և այլն: Վարանդայի Ավետարանոց

<sup>374</sup> ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 1, թ. 3:

<sup>375</sup> Мкртчян А., Общественный быт армян Нагорного Карабаха (вторая половина XIX-начало XX вв.), Ереван, 2010, с. 39-40.

(Չանախչի) գյուղի շրջակա հարուստ անտառների առկայությունը հնարավորություն էր տվել գյուղացիներին՝ փայտից տնային անհրաժեշտության իրեր պատրաստելու, իսկ կավե աման՝ չանախ, անվանումից էլ գյուղը ստացել էր իր անվանումը: Բացի փայտագործությունից, Չանախչին հայտնի էր նաև թամբագործությամբ: Վարանդայում գործում էր նաև կաշեգործարան, որտեղ աշխատող 3 բանվորները տարեկան վերամշակում էին 150 կաշի: Արհեստագործության տարբեր ճյուղերով, առանձնապես պղնձագործությամբ, դարբնությամբ, պայտարությամբ և համետագործությամբ հայտնի էին Ջրաբերդի Ղազանչի, Դրմբոն և Մեհմանա գյուղերը: Վանք գյուղը հայտնի էր իր զինագործ վարպետներով: Գյուլիստանում զարգացած էին որմնադրությունը, պայտարությունը, կողովագործությունը, ջուլիակությունը, ատաղձագործությունը և զինագործությունը<sup>376</sup>: Զանգեզուրի գավառի Տեղ, Տաթև, Շինուհայր, Ղազաննի գյուղերի բնակչությունը հայտնի էր բրդյա թելերի արտադրությամբ, մահուդի, կարպետների, գորգերի, տոպրակների, մետաքսե և բամբակե գործվածքներից անդրավարտիքներ կարելու արհեստով<sup>377</sup>:

Այժմ անդրադառնանք Ղարաբաղի գավառի միակ քաղաք Շուշիին, որը հռչակված էր որպես արհեստագործական կենտրոն: Ի տարբերություն գյուղերի մասին տվյալների՝ աղբյուրները համեմատաբար շռայլ տեղեկություններ են հաղորդում Շուշիի մասին: Դրա հիմամբ հաջողվել է կազմել 1823-1879 թթ. Շուշի քաղաքի արհեստների և արհեստավորների թվաքանակի համապատասխան աղյուսակը, սակայն այստեղ էլ հնարավոր էր եղել ներկայացնել միայն 1823, 1832, 1848, 1849, 1851, 1860, 1879 թթ. տվյալները<sup>378</sup>: Թվային միջակայքերի տվյալների

<sup>376</sup> Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ատլաս, Երևան, 2009:

<sup>377</sup> Гаджиева З., Гарабагское ханство: социально-экономические отношения и государственное устройство, Баку, 2008, с. 55

<sup>378</sup> Обзорение российских владений за Кавказом, ч. III, СПб, 1836. Сумбат-заде А., Промышленность Азербайджана в XIX в., Баку, 1964, с. 55, 65, 107, 109, 158, 164, 208. «Кавказский календарь» на 1852 г., Тифлис, 1851, с. 434, Տեր-Գասպարյան Ռ., Շուշի քաղաքը, Երևան, 1993, էջ 50-51:

բացակայությունը պայմանավորված է համապատասխան նյութերի բացակայությամբ:

(Աղյուսակ 7)

Շուշի քաղաք							
Արհեստներ	1823	1832	1848	1849	1851	1860	1879
Թաղեգործ	3	2	-	-	12	5	-
Ոսկերիչ	1	-	-	-	-	-	-
Աղյուսագործ	1	-	-	1	-	-	-
Կաշեգործ	6	9	18	21	27	32	-
Ներկարար	11	8	8	8	15	23	-
Քարագործ	8	-	43	9	27	104	-
Դարբին	5	25	26	10	27	112	57
Տեղացի հրուշակագործ	-	-	-	-	6	-	-
Կլայեկչի	-	-	4	2	13 <sup>379</sup>	15	-
Պղնձագործ	9	6	3	4	-	11	-
Սափրիչ, վարսավիր	14	3	-	-	25	-	-
Պայտար	4	-	21	15	19	52	-
Դերձակ <sup>380</sup>	16	30	33	94	52	161	45
Հյուսն	10	14	58	-	42	133	21
Կազմարար	-	-	-	-	-	1	-
Զինագործ	9	22	1	-	-	-	-
Գոտեգործ	-	-	-	9	-	-	-
Արծաթագործ	7	12	9	32	24	81	-

<sup>379</sup> Պղնձագործների հետ:

<sup>380</sup> Վերոնշյալ աղյուսակում դերձակների թվի նվազումը կարելի է բացատրել դրամատիրական հարաբերությունների զարգացմամբ և պատրաստի արտադրանքի ներմուծմամբ: Մեր կողմից ուսումնասիրվող ժամանակաշրջանում Շուշիում նշանավոր դերձակներ են եղել Ասրի Յանեսյան Ջիալյանցը (1796-1870), Ղահրաման Պետրոսյանը (մահացել է 1861 թ.), Ասլան Դանիելյանը (1795-1871):

Թամբագործ	10	10	-	3	44	10	
Ատաղձագործ	4	-	-	-	7	1	
Փականագործ	-	-	20	-	20	31	3
Կոշկակար <sup>381</sup> , մաշկակար	22	44	84	1	40	77	54
Մանածագործ	-	-	51	24	-	-	-
Խառատ	-	-	-	-		2	-
Հացագործ	-	-	-	-	21	18	-
Ժամագործ <sup>382</sup>	1	-	-	1	2	-	-
Գզրար	-	-	3	2	-	2	-
Լծասարքագործ	3	15	27	-	44	34	-
Գդակագործ	17	24	42	24	28	84	10
Քուղագործ	-	-	-	-	-	7	-
Երաժիշտ	4	-	-	-	-	-	-
Դանակագործ	3	-	-	-	-	-	-
Ձուլագործ	1	-	-	-	-	-	-
Մուշտակագործ	1	-	-	-	-	-	-
Թամբատակ պատրաստող	1	-	-	-	7	-	-
Շուկաների խոհարարներ	5	-	-	-	12	-	-
Որմնադիր-քարագործ	8	-	-	-	38	-	-

Աղյուսակի տվյալները ամբողջական չի կարելի համարել, Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ինչպես ներկայացվել է աղյուսակ 8-ում, 1855 թ. Շուշի քաղաքի արհեստավորությունը

<sup>381</sup> Ըստ տապանագրերի՝ Հակոբ Աղայանը եղել է Շուշիի առաջին կոշկակարը «քաղաքիս առաջին կոշկակարը սապոժնիկ» (1824-1899): Հավանաբար մինչև նրա այդ արհեստով զբաղվելը քաղաքի բնակիչները իրենց պահանջը բավարարել են տնայնագործական կոշկեղենով: Տապանագրերից հայտնի է դարձել նաև կոշկակար Ղարաբեկ Այվանյանցի անունը: Այդ մասին տես Հարությունյան Հր., Շուշիի տապանաքարերի արձանագրությունները, Երևան, 2008, էջ 197, 258:

<sup>382</sup> Շուշիի տապանագրերից հայտնի է դարձել ժամագործի անուն՝ Հայրապետ Սարգսյան Մխիթարյանց (մահացել է 1880 թ.) այդ մասին տես Հարությունյան Հր., Շուշիի տապանաքարերի արձանագրությունները, էջ 147:

կազմում էր նրա բնակչության 12,3 %-ը, (քաղաքի բնակչության թիվը կազմում էր 15194 մարդ) այսինքն՝ 1863 մարդ<sup>383</sup>:

Շուշիում գորգագործությունը տնայնագործություն էր: Գորգագործների թիվը հայտնի չէր անգամ տեղական գավառական ղեկավարությանը<sup>384</sup>: ՏՄՈՄՊԿ-ի էջերում Շուշիի գորգագործության մասին կարդում ենք. «Նախկինում (20 տարի առաջ) գորգագործների թիվն անհամեմատ քիչ էր: Գորգերը սպառվում էին տեղում, հազվադեպ էին արտահանվում. հիմնականում նվիրաբերվում էին: Այժմ դրանք Շուշիից արտահանվում են մեծ քանակությամբ: Նախկինում տերը գորգագործությունն ավարտելուց մեկ շաբաթ առաջ դուրս էր գալիս քաղաքի հայկական հատվածը՝ գնորդ գտնելու և հայտարարում, որ ինքը մեկ շաբաթից կավարտի գորգի գործումը: Հետագայում դա այլ կերպ էր տեղի ունենում. գորգի վաճառքը հանձնարարվում էր «դալալներին»: ...Նախկինում, երբ Շուշիում համեմատաբար քիչ և վատորակ էին գործում, ունևոր հայերը գորգերը բերում էին Պարսկաստանից, հետագայում, երբ այստեղ սկսում են գործել ավելի լավ, տեղացիները սկսում են գնել Շուշիի գորգերը»<sup>385</sup>:

Շուշիի գորգերի փայլի, կենդանի գույների, մեծ գծանախշերի, ամրության ու հաստ բրդի մասին իր հիացմունքն էր արտահայտել 19-րդ դարի առաջին կեսին Ղարաբաղ ժամանած՝ պարսից գահաժառանգ Բեհմեն Միրզայի շքախմբում գտնվող ֆրանսիացի կին ճանապարհորդ Շանտրը<sup>386</sup>:

Ղարաբաղի գորգերի մեծ հռչակի մասին նշվում է՝ նաև Կովկասի գյուղատնտեսական ընկերության գործունեության 1856-1863 թթ. հաշվետվության մեջ<sup>387</sup>: Ղարաբաղում գորգերը և «ջեջիմները» գործում էին ինչպես բրդից, այնպես էլ մետաքսից: Ընդհանրապես

<sup>383</sup> «Кавказский календарь» на 1856 г., с. 358-359, Исмаил-заде Д., Население городов Закавказского края в XIX- начале XX в., Москва, 1991, с. 138-139.

<sup>384</sup> ՏՄՈՄՊԿ, вып. XI, отд. I, Тифлис, 1891, с. 2.

<sup>385</sup> Промысловые занятия в некоторых населенных пунктах Закавказья, ՏՄՈՄՊԿ, вып. XI, отд. I, Тифлис, 1891, с. 35-36.

<sup>386</sup> Madame B Chantre, A travers, L'armenie Russe, Paris, 1893, s. 57.

<sup>387</sup> Краткий очерк 25-ти летней деятельности Кавказского общества сельского хозяйства, Тифлис, 1875, с. 18.

արցախյան գորգերի թեմատիկան բազմազան է՝ բուսածաղկային (Նշանախշ, Կենաց ծառ, Արմավենյակ, Ուտիք, Ծաղկավոր, Բերդածոր, Կուսապատ, Աղբակ, Ամարաս), խաչազարդ հորինվածքով (Խաչերով, Ծաղկած խաչ, Լոռի-Փամբակ, Լոռի, Հաղպատ, Մեծ Խաչ, Կեռխաչ), բազմանիստ խոշոր հորինվածքով (Փառակա, Մեղրի, Մենլինգ, Կոգովիտ, Դիզակ, Վարանդա), շեղանկյունազարդով (Բանանց, Քաշաթաղ, Ճարտար, Բագրևանդ, Գլածոր Բարգուշատ), աստղազարդով (Աստղավոր, Որոտան, Փայլող աստղ), մեկ ընդհանուր զարդաշրջանակում ամփոփված հորինվածքով (Վահան, Տաշիր), երկայնաձիգ ուղղանկյուն շրջանակով (Ոսկանապատ, Վայոց ձոր, Իջևան), խորանավոր (Սյունազարդ, Աղոթագորգ), նախաշերտով (շեղակի, ուղղաձիգ, հասկաձև), վիշապագորգ (Գուհար, Սիսական, Գարդման, Մասյացոտն, Փյունիկ, Ջրաբերդ, Խնձորենկ, Գետաշեն, Վայք), Ջրաբերդ (Ջրաբերդ-Դիզակ, Ջրաբերդ, Ջրաբերդ-Վարանդա), թեմատիկ պատկերային (Ձկնավոր, Հորաղիգ, Ծնող զույգ, Մայր Հայաստան, կենդանապատկերով)<sup>388</sup>: 18-19-րդ դարերում Ղարաբաղում հայտնի էին հեծյալ որսորդի և շան պատկերներով, խաչազարդ հորինվածքներով գորգեր, որոնց տրված էր «Ղարաբաղ» (Աղստաֆա, Ղազախ) անվանումը, իսկ Վարանդայում գործում էին շեղանկյունազարդ քառաթև զարդանախշով գորգեր<sup>389</sup>: Տարածված սովորույթ է եղել նշանավոր մարդկանց գորգեր և կարպետներ նվիրելը: Ղարաբաղի տոհմագորգերի մասին արժեքավոր տեղեկություններ են հաղորդվում Վ. Թաթիկյանի աշխատության մեջ<sup>390</sup>:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում զարգանում էր նաև մետաքսագործությունը<sup>391</sup>: 19-րդ դարի սկզբներին շերամի մշակման եղանակները ինչպես Անդրկովկասում, այնպես էլ Ղարաբաղում

<sup>388</sup> Բնակավայրերն ըստ գորգատեսակների մասնագիտացման տե՛ս Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ատլաս, էջ 86:

<sup>389</sup> Պողոսյան Ա., Հայոց գորգագործական մշակույթը (պատմագագագրական ուսումնասիրություն), Ատենախոսություն, Երևան, 2003, էջ 53, էջ 61:

<sup>390</sup> Թաթիկյան Վ., Արցախի տոհմագորգերը, Երևան, 2004:

<sup>391</sup> Տե՛ս մեր հոդվածը՝ Բաղդասարյան Ն., Մետաքսագործությունը Ղարաբաղում 19-րդ դարի 10-60-ական թթ., Մեսրոպ Մաշտոց Համալսարանի «Լրատու», (գիտական հոդվածների ժողովածու), թիվ 1(10), Ստ., 2011, էջ 20-25:



շարունակում էին տնայնագործական բնույթ կրել: Ղարաբաղի գյուղերում շերամը պահում էին շերամի գոմերում<sup>392</sup>: Շերամորդը ճիշտ չխնամելու և հաճախակի տարածվող հիվանդությունների պատճառով, մետաքս ստացվում էր բավականին նվազ քանակությամբ: Այսպես օրինակ, Շուշիի գավառի Աղդամ գյուղից հայտնում էին, որ շերամապահությամբ գյուղում զբաղված էր 30 մարդ. «Հիվանդությունների պատճառով բերքը քիչ է և անորակ, որից և բոժոժի փուլը վաճառվում է ցածր գնով՝ 6-8 ռուբ.»<sup>393</sup>: Մինչև 19-րդ դարի կեսերը շերամապահ գյուղացին իր տանը ոտնաչարխով թել էր պատրաստել, որը տեղացի վաճառականները գնել և արտահանել էին<sup>394</sup>:

«Ակտերի» էջերում տեղ գտած մի փաստաթղթում՝ թվագրված 1809 թ., նշվում է, որ Շուշիում ստեղծվում է մետաքսի ամենալավ հումքը (մինչև 4000 փուլ<sup>395</sup>), ինչը բարձր ցուցանիշ էր Ղարաբաղի՝ տվյալ ժամանակաշրջանի ներքաղաքական կացության պայմաններում:

1813 թ. Գյուլիստանի պայմանագրի կնքումից հետո նպաստավոր պայմաններ են ստեղծվում այս շյուղի զարգացման համար: Ցարական կառավարող շրջանները լավ էին հասկանում շյուղի հեռանկարայնությունը և այս ուղղությամբ քայլեր ձեռնարկեցին: Արդեն 19-րդ դարի 20-ական թթ. Ղարաբաղի գավառում ստացվում էր 1708 փուլ մետաքս<sup>396</sup>, որի զգալի մասն արտահանվում էր: «Ակտերի» էջերում տեղ գտած մի փաստաթղթում նշվում է, որ Ղարաբաղից, Շիրվանից, Ելիզավետպոլից արտահանվում էր մետաքսի հումք, գործվածքներ, ոլորած և չոլորած մետաքս՝ տարբեր գույների: Մետաքսն արտահանվում էր Վրաստան<sup>397</sup>, Պարսկաստան և Թուրքիա<sup>398</sup>: 1827 թ. Ե. Կանկրինը Անդրկովկասում մետաք-

<sup>392</sup> ԼՂՀ Հաղորդի շրջանի Թաղուտ գյուղի մասին պատմող նյութի բնագիրը պահվում է շրջանի պատմաերկրագիտական թանգարանում:

<sup>393</sup> СМОМПК, т. VI, ст. II, с. 74-75.

<sup>394</sup> Լալայան Ե., Վարանդա, Թիֆլիս, 1898, էջ 91:

<sup>395</sup> АКАК, т. VI, док. 96, с. 79.

<sup>396</sup> Памятная книга Елисаветпольской губернии на 1914 г., Тифлис, 1914, с. 200.

<sup>397</sup> АКАК, т. V, док. 396, с. 332-340.

<sup>398</sup> АКАК, т. IV, док. 95, с. 79-81.

ասագործությունը տարածելու համար 80000 ռուբլի արծաթ վարկ և 1-ին գիլդիայի վաճառականի իրավունք է տալիս ֆրանսիացիներ Կաստելլոյին և Դիդլոյին: Այս ասպարեզում կատարված աշխատանքների արդյունքում Շիրվանի գավառում տնկվում են 570 պետական թթենու այգիներ, Շամախիում՝ 490, Ղարաբաղում՝ 104<sup>399</sup>:

Շուշի քաղաքի մետաքսագործության զարգացման մասին տեղեկանում ենք. «1829 թ. Շուշի քաղաքում արտադրվել էր 7200 կտոր մետաքսե գործվածք, որից 740 գլխաշոր, 6100 միաչափ հատված կտորներ, որոնցից կարում էին վարագույրներ, ծածկոցներ, հագուստ և այլն: Շուշիում հաշվվում էր 324 ջուլիակ (նաև կտավագործ) ու բանվոր, իսկ եղած դազգահների թիվը՝ 132: Մեկ կտորաչափը գործելու համար ջուլիակը ստանում էր 90 կոպ. արծաթ աշխատավարձ: 27 միավոր գլանվածքի համար՝ 1 ռուբ. 20 կոպ., հենքի<sup>400</sup> համար՝ 10 ռուբ. էր տրվում, դրա թելերի կարգավորման ու ամրացման աշխատողին՝ 1 ռուբ., ներկողին՝ 20 կոպեկից մինչև 2 ռուբլի՝ ըստ չափի և գույնի: 10 վերջուկից մինչև մեկ արշին լայնությամբ և 25 արշին երկարությամբ մետաքսե գործվածքն արժեք էր 8 ռուբ.՝ արծաթով: Շուշի քաղաքում կար 7 մոտովիլ<sup>401</sup>, որոնցով աշխատում էր 15 բանվոր: Որակյալ մետաքսաթելի յուրաքանչյուր ստիլի<sup>402</sup> ստացման համար արտադրողին վճարվում էր 24 կոպ. պղնձե դրամ, վատորակ մետաքսաթելի դեպքում 18 կոպ.»<sup>403</sup>: 1832 թ. Շուշիում կար 42 մետաքսագործարան: Շաքիում, Շիրվանում և Ղարաբաղում մետաքսագործության զարգացման մասին իր գոհունակությունն էր հայտնել Գ. Ռոզենը՝ 1832 թ. դեկտեմբերի 22-ին Ե. Կանկրինին ուղղված իր նամակում<sup>404</sup>: 19-րդ դարի 30-ական թթ. տվյալներով՝ Շաքիի, Շիրվանի, Ղարաբաղի, Գանձակի,

<sup>399</sup> Туляев В., Политика самодержавия России в Закавказье XIX–нач. XX вв. Часть вторая, 1826–1836 гг., с. 59.

<sup>400</sup> Հենք նշանակում է գործվածքի նախահիմք:

<sup>401</sup> Մոտովիլ նշանակում է թել փաթաթող սարք:

<sup>402</sup> 1 ստիլը հավասար էր մեկ ֆունտի՝ 400 գրամի:

<sup>403</sup> Առաքելյան Գ., Շերամապահությունն ու մետաքսագործությունը Ելիզավետպոլի նահանգում (XIX դ.), «Հայոց պատմության հարցեր», (Գիտական հոդվածների ժողովածու), թիվ 8, Երևան, 2007, էջ 171–172:

<sup>404</sup> АКАК, т. IX, док. 108, с. 193.

Ղուբայի ու Թալիշի մետաքսի տարեկան եկամուտը կազմում էր 15000 փուֆ:

Ռուսաստանում մշտական քննարկման հարց էր Անդրկովկասի տնտեսական հնարավորությունների լրիվ օգտագործումը: Ղարաբաղի գավառն այդ առումով դիտվում էր որպես մետաքսագործության զարգացման համար բարենպաստ վայր՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Ղարաբաղի հայությունը հնուց ի վեր զբաղվում էր շերամապահությամբ: Համաձայն Նիկոլայ 1-ինի խորհրդական Տրիբոդինոյի նախագծի՝ Պետերբուրգում մետաքսագործության զարգացման համար Անդրկովկասում պետք է բացվեին մասնաժյուղեր: Ընդ որում, գործարանը պետք է լիներ Թիֆլիսում, իսկ մասնաժյուղերը՝ Շիրվանում, Շաքիում և Շուշիում<sup>405</sup>:

1840-ական թթ. Ղարաբաղի մետաքսագործության զարգացման աստիճանի մասին է վկայում հետևյալ նյութը. «Մետաքսը կա և մնում է Անդրկովկասի արտադրության կարևորագույն ժյուղը և մշտապես ունի իր սպառողը: Շաքիի մարզում տարեկան ստացվում է 10000-14000, Շիրվանից՝ ավելի քան 5000, Ղարաբաղից՝ 2000, Ղուբայից՝ 4000 փուֆ մետաքս: Նշվածի մոտ 2/3 առաքվում է Ռուսաստան, մնացածը՝ արտասահմանյան այլ երկրներ: Ղարաբաղի մետաքսը վատորակ է, և մեկ փուֆը վաճառվում էր 60-65 ռուբլով, իսկ Նուխիին՝ անհամեմատ լավ է, և արժեք 370-540 ռուբ. (մեկ փուֆը), հետագայում, դա էլ չդիմանալով մրցակցությանը, վաճառվում էր 260 ռուբլով»<sup>406</sup>: Կովկասի կառավարչապետի 1843 թ. հաշվետվության մեջ նշվում է, որ Կասպիական մարզի ամենահարուստ մետաքսագործական այգիները գտնվում են Շաքիում և Շիրվանում, փոքր չափերով դրանք գոյություն ունեն Ղարաբաղի, Ղուբայի, Թալիշի գավառներում<sup>407</sup>: Չնայած աղբյուրներում հանդիպող վերոնշյալ ոչ այնքան բարձր ցուցանիշներին՝ մետաքսագործության նշանավոր մասնագետ Ռայկոն գրել է, որ

<sup>405</sup> Тунян В., Административно-экономическая политика самодержавия России в Закавказье первой пол. XIX в., с. 164

<sup>406</sup> Առաքելյան Գ., նշվ. հոդվածը, էջ 178:

<sup>407</sup> АКАК, т. IX, док. 520, с. 605.

Անդրկովկասում արտադրվող մետաքսի մեծ մասը պատկանում է Շամախի, Շուշի և Նուխի գավառներին<sup>408</sup>:

Տեղական հումքի, մետաքսե գործվածքների, արհեստավորների ձեռագործ ապրանքների առևտուրն ամենուր կատարվում էր Շուշիի, Գանձակի, Ագուլխի, Թիֆլիսի ու այլ վայրերի հայ առևտրականների միջոցով և որոշ դեպքերում այն հասնում էր եվրոպական մակարդակի:

1849 թ. դրությամբ՝ Շուշիում գործել է 42 մետաքսագործարան, որտեղ կար 132 հաստոց, 528 բանվոր, մշակվում էր 792 փուֆ մետաքս, որի արժողությունը կազմում էր 55440 ռ.<sup>409</sup>: 1850 թ. տվյալներով՝ Շուշիում կար 132 հաստոց, այն դեպքում, երբ Նուխիում այդ թիվը հասնում էր 6-ի<sup>410</sup>:

1856-1857 թթ. Աղաբաբ և Գրիգոր Խաչատրյաններն ու Կարապետ Շահմուրադյանը Ստեփանակերտում հիմնադրեցին մետաքսի ֆաբրիկա, որտեղ աշխատում էին Նուխիից եկած 25-30 հայ բանվորներ: Արդեն 1858-1859 թթ. Շուշիում կար 28, 1861 թ.՝ 26, 1862 թ.՝ 16 մետաքսագործարան, որոնց տարեկան արտադրությունը համապատասխանաբար կազմել է 18000 ռուբ., 95000 ռուբ. և 78000 ռուբ.: Չնայած գործարանների թվի նվազմանը՝ ապրանքի որակի բարձրացումն էր հավանաբար պատճառը, որ աճում էր նրա ապրանքայնությունը<sup>411</sup>:

19-րդ դարի 60-ական թթ. շուշեցի վաճառականները, լինելով Մարսել, Լիոն, Միլան, Վենետիկ և Ջենովա քաղաքներում, ընդօրինակաբար ստեղծում են մանարան, մետաքս ոլորող մեքենա: «Ցելլիվսի» եղանակով սկսում են ստանալ առողջ սերմ: Առաջին անգամ Ղարաբաղի մետաքսագործի կիսանահապետական աշխատանքին փոխարինելու է գալիս արդյունաբերական եղանակով մետաքսաթելի արտադրության առաջին փորձը: 1868 թ.

<sup>408</sup> «Кавказ», N 53, за 1854 г.

<sup>409</sup> Тунян В., Административно-экономическая политика самодержавия России в Закавказье 1-й пол. XIX в., с. 213.

<sup>410</sup> Тунян В., Политика самодержавия России в Закавказье XIX-нач. XX вв. Часть четвертая, 1845-1876 гг., с. 32.

<sup>411</sup> Сумбат-заде А., Промышленность Азербайджана в XIX в., с. 80.

Շուշիի գավառում կար 490 մետաքսակարժական արհեստանոց, որտեղ թողարկվում էր 76 հազ. ռուբլու արտադրանք<sup>412</sup>:

Գորգագործությանը և մետաքսագործությանը զուգահեռ՝ զարգանում էր նաև ներկարարության արհեստը: Բամբակյա, մետաքսյա և բրդյա գործվածքների ներկման համար Շուշիում կար 3 ներկարան, որտեղ ներկում էին 3 տարբեր գույներով: Գույները ստանում էին բնական ճանապարհով՝ մարենից, երիտասարդ խնձորենու կեղևից, ընկույզի, նռան կեղևից, թթենու տերևներից, դդմից և այլն:

Շուշին համարվում էր նաև կաշեգործական կենտրոն: Այստեղ կար 19 կաշեգործարան, որտեղ աշխատում էր 40 մարդ, որոնք տարեկան վերամշակում էին 5000 տարբեր կաշիներ: Քաղաքում կար 2 աղյուսի գործարան, որտեղ աշխատում էր 22 մարդ<sup>413</sup>: 19-րդ դարի սկզբին Շուշիում կար 1 տնայնագործական օձառի գործարան, որը բավարարում էր ինչպես քաղաքի, այնպես էլ նրա շրջակա գյուղերի բնակչությանը<sup>414</sup>: Կապված ներքին և արտաքին պահանջարկի աճի հետ՝ Շուշի քաղաքի օձառի գործարանների թիվը 1858 թ. դրությամբ 8 էր, 1861 թ.՝ 10: Օձառի գործարանների արտադրանքի արժեքն ամենամեծ ցուցանիշն է գրանցել 1867 թ., երբ եղել է 4000 ռուբ.՝ հաջորդ տարում նվազելով մինչև 1675 ռուբլու<sup>415</sup>: Պահանջարկի աճի և կտրուկ անկման նման ցուցանիշները կարելի է բացատրել պատրաստի օձառի ներմուծմամբ:

Արխիվային տվյալների համաձայն՝ 19-րդ դարի կեսերին Շուշի քաղաքում ապրում էին 124 նշանավոր արհեստավորներ<sup>416</sup>, որոնք մասնակցում էին քաղաքում իրագործվող բարեգործություններին: Ցավոք, արխիվային նյութում ներկայացված են միայն արհեստավորների անուն-ազգանունները՝ առանց նշելու նրանց զբաղմունքը: Այս բացթողումը հնարավոր է

412 Բալայան Վ., նշվ. աշխ., էջ 250-251:

413 Обзорение российских владений за Кавказом, ч. III, с. 313.

414 Նույն տեղում, էջ 311:

415 Сумбат-заде А., Промышленность Азербайджана в XIX в., с. 118.

416 ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 1, թ. 7-8:

եղել վերացնել Հր. Հարությունյանի ուսումնասիրությունների միջոցով<sup>417</sup>:

Շուշիում զարգացում էր ապրում մետաղագործությունը. մետաղագործ վարպետներ էին Ավետիս Դանիելյանը (1823-1898), Հովհաննես Դանիելյանը (1825-1898), Հարություն Խաչատուրյանցը (1848-1898), դարբին Բաղդասարը (մահացել է 1871 թվականին) և Մկրտիչ Մուսայելյանը (1815-1890): Շուշիում բավականին լայն տարածում է ունեցել զինագործությունը: Մեր կողմից ուսումնասիրվող ժամանակաշրջանում այդ արհեստի հմուտ ներկայացուցիչներն էին Շաբով Բեկլարյան Միրզայանցը<sup>418</sup> (1847-1884), Հարություն Աստվածատրյան Թունյանցը (մահացել է 1857 թ.), Միրզաջան Հարությունյանցը (1848-1875), Առուստամ Լազարյանցը (1827-1866), Ադամ Առուշանյանցը (մահացել է 1872 թ.):

Ղարաբաղի մի շարք բնակավայրերում՝ Հադրութում, Թաղլարում, Ճարտարում և Գետաշենում ոսկերիչ վարպետները հիմնականում կատարում էին վերանորոգչական աշխատանքներ, իսկ ոսկերչությունը և հատկապես արծաթագործությունն ու ակնագործությունը ծաղկում են ապրել Շուշիում: Ոսկերիչների արհեստանոցները տեղակայված էին Կազարմայի թաղամասում, Ղազանչեցոց և Ագուլեցոց եկեղեցիների մոտ և քաղաքի հայկական շուկայում: 1842-1917 թթ. քաղաքում աշխատել են 173 վարպետներ: Նրանք կիրառում էին նաև արծնապատման տեխնիկան, որի նշանավոր վարպետն էր Գրիգոր Բաղամյանցը (ուստա Բադամ)<sup>419</sup>:

Ինչպես շատ արհեստներ, այնպես էլ ոսկերչությունը Շուշիում ժառանգական բնույթ է կրել: Ասվածն ապացուցում է հետևյալը. հավանաբար, 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբներին

<sup>417</sup> Հարությունյան Հր., Շուշի (Նորահայտ Նյութեր քաղաքի պատմության մասին), Ստեփանակերտ, 2002, Шуши: новоявленные исторические надписи, Степанакерт, 2008, Շուշիի տապանաքարերի արձանագրությունները, Երևան, 2008:

<sup>418</sup> Շաբով Բեկլարյան Միրզայանցը կին է եղել:

<sup>419</sup> Մարգարյան Հր., Արցախի ոսկերչական արվեստը XIX-XX դարի սկզբին, «Հայ ժողովրդական մշակույթի հետազոտման հարցեր» (Արցախ) (զեկուցումների հիմնադրոյթներ), Երևան, 1992, էջ 19-20:

ապրած Նշանավոր ոսկերիչ Դանիելի արհեստն ուսանել են նրա երեք որդիները՝ Արզումանը, Գրիգորն ու Հովհաննեսը: Արձանագրություններում «քաջ ոսկերիչ» պատվանունն էր տրված հատկապես Դանիելի որդի Հովհաննեսին և թոռանը՝ Միքայելին, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ նրանք առավել, քան իրենց ազգականները, տիրապետում էին ոսկերչության բարդ արհեստին: Որպես ոսկերիչ՝ տապանագրերում հիշատակվում է նաև Աղաջան Զիալյանցը (մահացել է 1885 թ.): Նշանավոր ոսկերիչներ է տվել Ղահրամանյանների տոհմը: 19-րդ դարում են գործել Ավետիս Գրիգորյան Միրզա Յուզբաշյանցը և Ղուկաս Ղուկունցովը (1823-1863 թթ.)<sup>420</sup>:

Շուշիի ոսկերիչներն զբաղվում էին նաև եկեղեցական և կենցաղային սպասքի արտադրությամբ: Տարածված էր նաև արծաթյա գոտիների և կանացի արդուզարդի արտադրությունը: Շուշեցի վարպետները մեծ հռչակ են ունեցել Անդրկովկասում. 1877-1890 թթ. Բաքվում աշխատող 30 զինագործ-ոսկերիչներից 3-ը շուշեցիներ էին, Նուխիում՝ 25-ից 7-ը, Ղուբայում՝ 7-ից 8-ը և այլն: Շուշեցի վարպետների արտադրանքը մեծ պահանջարկ ուներ նաև արտաքին շուկայում: Ոսկերիչներից ոմանք մասնակցել են Անդրկովկասում, Պետերբուրգում, Լոնդոնում, Փարիզում կազմակերպված միջազգային ցուցահանդեսներին և արժանացել մրցանակների: 1862 թ. Լոնդոնի ցուցահանդեսին մասնակցել են Հայրապետ Աղաջանովը, Հովսեփ Թարխանովը<sup>421</sup>:

Ոսկերչությանը զուգահեռ՝ զարգացել է նաև ականագործությունը: Հայտնի ականագործներ են եղել Աբրահամ Ստեփանյանցը, Վանո Կյանջումյանցը<sup>422</sup>, ինչպես նաև ոսկերիչ Ավետիս Հովհաննիսյան Դանիել-բեկյանցը (1818-1888 թթ.)<sup>423</sup>:

<sup>420</sup> Մարգարյան Հր., նշվ հոդվածը, էջ 19-20:

<sup>421</sup> Նույն տեղում, էջ 20:

<sup>422</sup> Հարությունյան Հր., Ոսկերչությունն ու ականագործությունը Շուշիում 18-19-րդ դարերում՝ ըստ Նորահայտ վիմագրերի, «Պատմագիտական ուսումնասիրություններ» (հոդվածների ժողովածու), մաս երկրորդ, Ստեփանակերտ, 2006, էջ 56:

<sup>423</sup> Հարությունյան Հր., Շուշիի տապանաքարերի արձանագրությունները, էջ 191:

19-րդ դարի առաջին կեսին Ղարաբաղում արհեստագործական և տնայնագործական արտադրությունն իր տեղը զիջեց արդյունաբերական մասնագիտացված գործունեության սկզբնական ձևին: Արհեստագործության առանձնահատկությունը պատվերով աշխատանքն էր, իսկ արդյունաբերական արտադրությանը՝ ազատ շուկայի:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Ղարաբաղում մեծ թափով զարգանում էր նաև առևտուրը<sup>424</sup>: Քյուրակչայի դաշնագիրը կնքելուց անմիջապես հետո Կովկասյան զորքերի գլխավոր հրամանատար Պ. Ցիցիանովը Ալեքսանդր ցարին ուղղված մի ընդարձակ զեկույցում կարևորում է Ղարաբաղի տնտեսական, ռազմաստրատեգիական և առևտրական նշանակությունը. «...Երբ Սալյանում ամրություն կշինվի, - գրել է Պ. Ցիցիանովը, - և Ջավադը այն տեղը, ուր Կուրը միանում է Արաքսի հետ, խվի Շիրվանի խանից, իբրև մի տեղ, որը միշտ պատկանել է Ղարաբաղի խանին, այն ժամանակ Աստրախանից այստեղ՝ Ջավադ կամ Սալյան կգան իրենց նշանակություն չունեցող ապրանքներով և նրանց փոխարեն կստանան Ղարաբաղից և Շամախիից մետաքս, իսկ Գանձակից՝ շիբ, որը Ձեր Կայսերական Մեծության գանձարանի համար գնվում է այստեղ փութը 80 կոպեկով, մինչդեռ Աստրախանում վաճառվում է փութը 16 ռուբ.»<sup>425</sup>:

Ռուսական տիրապետության տակ անցնելուց հետո ինչպես Անդրկովկասի մի շարք քաղաքներ, այնպես էլ Շուշին առևտրական կապեր էր պահպանում Պարսկաստանի հետ: 1809 թ. մի զեկույցագրում նշվում է, որ Շուշիում արտադրվում էր ամենալավ տեսակի մետաքսի հումք՝ մինչև 4000 փութ, տորոն՝ մինչև

---

<sup>424</sup> Տե՛ս մեր հոդվածները՝ Բաղդասարյան Ն., Առևտրական կյանքը Ղարաբաղում 19-րդ դարի 30-60-ական թթ. «Ժողովրդավարության կայացումը հետխորհրդային շրջանում. հիմնախնդիրներն ու հեռանկարները», միջազգային գիտաժողովի նյութեր, Մեսրոպ Մաշտոց Համալսարան, Երևան, 2010, էջ 204-206, Շուշիի դերը Անդրկովկասի առևտրական կապիտալի ձևավորման գործում 19-րդ դարի 30-60-ական թթ., միջազգային գիտաժողով՝ նվիրված ԼՂՀ և ՀՀ անկախության 20-ամյակին. «Խաղաղ Կովկասը տարածաշրջանի զարգացման գործոն», Մեսրոպ Մաշտոց Համալսարան, Երևան, 2011, էջ 245-254:

<sup>425</sup> АКАК, т. II, Тифлис, 1868, док. 1436, с. 703.



10000 փութ: Այդ ապրանքները, ինչպես նաև մեծ քանակությամբ գոմեշի կաշի, արտահանվում էին Պարսկաստանի և Ատրպատականի քաղաքներ: Շուշիում իրացվում էին Հնդկաստանից բերված մեծ քանակությամբ ներկեր, որոնք Անդրկովկաս էին ներմուծվում անգլիական Արևելահնդկական ընկերության միջոցով<sup>426</sup>: Ռուս-պարսկական պատերազմի ընթացքում, ցարական կառավարության հրամանով Ղարաբաղից, Շաքիից և Դաղստանից Վրաստան ներմուծվող ապրանքներից մաքս չէր գանձվում<sup>427</sup>:

1813 թ. հոկտեմբերի 12-ին կնքված Գյուլիստանի պայմանագրի 5-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ հոդվածները վերաբերում էին ռուս-պարսկական առևտրական կապերին: Համաձայն պայմանագրի կետերի՝ պայմանավորվող կողմերը պետք է թույլ տային վաճառականների ազատ երթևեկությունը ցամաքային և ջրային ճանապարհներով: Կարգավորվում էր նաև մաքսային համակարգը: Նախկին տարատեսակ մաքսերի փոխարեն սահմանվում էր ընդհանուր մաքս՝ ապրանքի արժեքի 5%-ի չափով<sup>428</sup>:

1813 թ. դրությամբ Ղարաբաղն առևտուր էր կատարում Վրաստանի, Ռուսաստանի, Ելիզավետպոլի հետ<sup>429</sup>:

Պայմանագրի կնքումից հետո թվում էր, թե Ղարաբաղում առևտուրը պետք է աշխուժանար: Բայց այն չունեցավ սպասված դրական արդյունքները՝ պայմանավորված հետևյալ հանգամանքներով. ա) Ղարաբաղում խանական վարչակարգը շարունակում էր պահպանվել: Դա խանգարում էր ինչպես արտաքին, այնպես էլ ներքին առևտրի զարգացմանը: Ղարաբաղի խանը իր ձեռքում կուտակած եկամուտներից փոխառություններ էր տրամադրում խոշոր վաճառականներին՝ դրանով իսկ

<sup>426</sup> Մարկոսյան Ա., Ռուս-ֆրանսիական և ռուս-անգլիական հակամարտությունը Պարսկաստանում Անդրկովկասի նվաճման կապակցությամբ, Երևան, 1935, էջ 76

<sup>427</sup> АКАК, т. III, Тифлис, 1869, док. 82, с. 46.

<sup>428</sup> Тунян В., Административно-экономическая политика самодержавия России в Закавказье 1-й пол. XIX в., с. 137, Семенов Л., Россия и международные отношения на Среднем Востоке, Ленинград, 1963, с. 43-44.

<sup>429</sup> АКАК, т. V, док. 265, с. 199.

մասնակից դառնալով նրանց առևտրական գործառնություններին<sup>430</sup>: ք) Ղարաբաղի առևտրական կյանքի զարգացմանը խոչընդոտող հանգամանքներից էին ավատատիրությանը հատուկ մաքսային համակարգը, ճանապարհների վտանգավորությունը, առևտրականների կյանքի և գույքի ապահովության երաշխիքների բացակայությունը, չափ ու կշռի դրամական միավորների բազմազանությունը, սպառողների ցածր գնողունակությունը: Ղարաբաղում գոյություն ուներ սպառողների հաստատուն մի խավ, որի կազմում էին Ղարաբաղի խանը, բեկերը, միրզաները, ինչպես նաև հայ մեծահարուստները, որոնց թիվն այնքան էլ մեծ չէր:

Ղարաբաղում առևտուր կատարելու համար տոմսակներ էին տրվում մասնավոր անձանց պատկանող տոմսանոցներում կամ մաքսատներում, որոնք տրամադրվում էին խանի կողմից՝ կապալով<sup>431</sup>: Ռահդարի՝ մաքսի գանձումը կապալային հողված էր, որն ամեն տարի որոշակի գումարի դիմաց խանը հանձնում էր կապալառուներին: Ռահդար գանձվում էր ապրանքների արտահանման, ներմուծման և փոխադրման ժամանակ, չափը փոփոխական էր՝ կախված նրանից, թե խանը ինչ հարաբերությունների մեջ էր հարևան խանությունների կամ սեփական խանության այս կամ այն հատվածի հետ: Մաքսից զերծ չէր ոչ մի ապրանք<sup>432</sup>:

Ռահդար-խանե<sup>433</sup> հարկի մասին առավել հստակ պատկերացում կազմելու մասին ներկայացնենք հետևյալ աղյուսակը:

---

<sup>430</sup> Դիլոյան Վ., Արևելյան Հայաստանը 19-րդ դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1989, էջ 108, Օհանջանյան Ն., Առևտրական կյանքը Ղարաբաղում 19-րդ դարի առաջին երեսնամյակին, Մեսրոպ Մաշտոց Համալսարանի «Լրատու», թիվ 2, Ստեփանակերտ, 2007, էջ 54:

<sup>431</sup> Դիլոյան Վ., նշվ. աշխ., էջ 110:

<sup>432</sup> Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում (1800-1870), հ. I, Բաքու, 1916, էջ 64:

<sup>433</sup> Ռահդար՝ ներմուծվող կամ արտահանվող ապրանքներից ստացվող հարկ:

Ներմուծվող ապրանք	Հարկաչափը՝ մեկ պարկի դեպքում
Մետաքս	6ռ. 20կ. խանական դրամով
Տորոն (ներկ)	5ռ. 50կ. խանական դր.
Բամբակ	5ռ. 20կ. խանական դր.
Երկաթ	5ռ. 20կ.(փոքր պարկից 2ռ. 60կ.) խանական դր.
Պղինձ	5ռ. 20կ.(փոքր պարկից 2ռ. 60կ.) խանական դր.
Կաշի	5ռ. 20կ.(փոքր պարկից 2ռ. 60կ.) խանական դր.
Նավթ	1ռ. 60կ. խանական դր.
Մրգեր	3ռ. 20կ.(փոքր պարկից 1ռ. 60կ.) խանական դր.

Ղարաբաղում առևտուրն ուներ իր առանձնահատկությունները. եթե արտաքին առևտուրը կենտրոնացված էր ժամանակի մեծահարուստների ձեռքում, որոնք ի վիճակի էին վճարելու բազմաքանակ տուրքերը, նույնը չի կարելի ասել ներքին ապրանքաշրջանառության մասին: Միևնույն ապրանքից գանձվող տարաբնույթ տուրքերը Ղարաբաղի գյուղացիներին հետ էր պահում իրենց ապրանքները քաղաքի շուկայում վաճառելուց: Այդ է պատճառը, որ Շուշիում այդ տարիներին երբեմն թարմ միս չկար կամ էլ ձեռք էր բերվում բավական բարձր գնով<sup>434</sup>:

Վերոնշյալ բոլոր հանգամանքներով հանդերձ՝ Շուշին համարվում էր առևտրական կենտրոն՝ հետ չմտալով Թիֆլիսից, Երևանից և ժամանակի նշանավոր քաղաքներից: Շուշին ընկած էր Թիֆլիսը Կասպից ծովի ափերի հետ կապող առևտրական մայրուղու վրա<sup>435</sup>:

Ցարական կառավարությունը 1821 թ. հոկտեմբերի 8-ի օրենքով Անդրկովկաս ներմուծվող ապրանքների համար սահմանեց 5% մաքս, իսկ Պարսկաստան առաքվող ապրանքների համար հաստատվում էր անմաքս տրանզիտ: Մաքսային նման քաղաքականությունը խթան հանդիսացավ նաև Շուշիի առևտրականների աշխույժ գործունեության համար: Արդեն 19-րդ դարի 30-ական թթ. ցարական պաշտոնական աղբյուրները վկայում էին, որ հայ

<sup>434</sup> Присоединение Восточной Армении к России, т. II, с. 112-113.

<sup>435</sup> Դիլոյան Վ., նշվ. աշխ., էջ 114:

առևտրականներն իրենց ձեռքն էին առել «Թիֆլիսի և ամբողջ Անդրկովկասի առևտուրը»<sup>436</sup>:

Տարեկան մինչև 250000 ռուբլի շրջանառություն ունեցող առևտրականները հիմնականում հայեր էին: Դրանցից հայտնի էին Շուշիի մեծահարուստներ Հախումյանների և Թառումյանների ընտանիքները:

Շուշիի այս մեծահարուստների մասին տեղեկություններ է հաղորդել Մեսրոպ Թաղիադյանը: Նա մանրամասն նկարագրել է երկու առևտրական տների գործունեությունը «Ճանապարհորդութիւն ի Հայս» աշխատության մեջ: Եթե Թառումյաններն աչքի էին ընկնում իրենց առատաձեռնությամբ, բարեգործությամբ, ապա Հախումյանները, որոնք մինչև մեկ միլիոնի հասնող կապիտալ ունեին ռուսական կայսրության բանկերում, նշանավորվել էին իրենց ժլատությամբ. «Երկոքին տունք էին Հայոց՝ որոց ընդարձակութիւն վաճառաց, բազմութիւնք գործավարաց, և պատիւք ի մէջ Ռուսաց՝ մեծանային յո՛ժ յոյժ: Տունն Հախումեանց ամենահարուստ, որ և ի գանձարանի կայսրութեանն Ռուսաց ունէր մինչև միլիոնս ռուբլեաց, և ի քաղաքացն Պարսից մինչև ի քաղաքս Սիբերիոյ և Եւրոպայ՝ ձգէր առևտուր: Բայց ի վերայ այսորիկ ամենայնի՝ տակաւին ճիշդս կարդայր զնոսա ազգն և ռիշտս, զի առ անբաւ գանձուցն յոլովութեան զարարս մեծագործութեան յանձինս ո՛չ բերէին, տինս՝ և ի դուզնաքեայ ողորմութենէ կարօտեալ և տառապեալ համազգայն զինքեանս ի բաց որոշէին»<sup>437</sup>:

Չնայած Հախումյանների ժլատությանը՝ մեծ էր նրանց դերը վաճառականության ձևավորման գործում: Իրենց առևտուրը զարգացնելու նպատակով նրանք զարգացնում էին առևտրական դասակարգն իրենց բազմաթիվ «չրաղների» (գործակատարների) միջոցով<sup>438</sup>. «...Սակայն և այնպէս, գեղեցիկ իմն մոլութեամբ մոլեալ ընդարձակէին յոյժ ձեռն տալ աչալրջաց մերազանց, գործավարս կարգելով ի վերայ վաճառաց իւրեանց ի տեղիս տեղիս,

<sup>436</sup> Բալայան Վ., նշվ. աշխ., էջ 254:

<sup>437</sup> Թաղիադյան Մ., Գրական ժառանգություն, հ. 9, էջ 158:

<sup>438</sup> «Չրաղ» նշանակում է ճրագ: Գործակատարներին Շուշիում անվանում էին չրաղ:

և ջանալով հարստացուցանել զնոսա, և ի տունս հաստատունս կազդուրել, զորս և Չրաղս իւրեանց անուանէին, այսինքն է՝ ճրագունս փայլեցուցանել յարտաքս զանուն և զերախտիս իւրեանց: Սէր բազում ճրագս ունելոյ բնիկ իմն էր քաղաքիս, վասն որոյ և այր զարամբք ելանէր ճոխացուցանել զհամազգիս իր՝ զի պարծանաց սակի էր յոյժ ի տեղուջն համբաւեալ գործն»<sup>439</sup>:

Շուշին եռանդով վաճառականության ոգի էր տարածում Ղարաբաղի ազգաբնակչության մեջ: Գործակատարների թվաքանակի մեծությունը պատիվ էր յուրաքանչյուր վաճառականի համար: Գործակատարները «մարդ դառնալու» ճանապարհին մեծ դժվարություններ էին հաղթահարում: Տարիներ էին անցնում՝ մինչև «դուքանի աշակերտը» հասնում էր ծայրագույն երջանկության՝ սեփական գործ, խանութ ունենալուն<sup>440</sup>:

Շուշիի վաճառականական հաջորդ տունը Թառույնյանների տունն էր: Այս տան հարստության հիմնադիրն էր Բաբա Թառույնյանը, որին 1808 թ. տրվել էր Բաքվի տուրքերը 4 տարով զանձելու իրավունքը<sup>441</sup>, նրանց ձեռքին էր գտնվում նաև Կասպից ծովի նավթի, ձկան, աղի արտադրության կապալը:

Իր ուղեգրություններում Մ. Թաղիադյանը գրում է. «Երկրորդ տունն էր Զոհրապայ և Մարկոսի Թառումեանց՝ յամենայնի վերագոյն: Վասն զի՝ սոքա ընդ իւրեամբք ունելով զամենայն արտունութիւնս զծովուն Կասպից թէ զձկնորսական իրաւունս և թէ զնաւագնացութեան տեղեհարկս, բազամագունից պէտս ունեին գործավարաց յայն պաշտօն: Ուր մնայ, զի և վաճառականութեանցն առևտուր ո՛չ ինչ նուազ քան զՀախումեանցն՝ ձգէր ի հեռաւոր ծագս աշխարհաց: Ծրագունք տան Թառումեանց գոլ մի մի շահապք շահաստանի, այնքան զարդարեալք և պաճուճեալք՝ թէ զգեստու, թէ տամբ, թէ հարստութեամբ, մինչ յառաջին տեսութեան իմում համարել զնոսա տեարս տերանցն իւրեանց Զոհրապայ և Մարկոսի: Առօրէական բաշխոյք ողորմութեանց

<sup>439</sup> Թաղիադեան Մ., Ճանապարհորդութիւն ի Հայս, հ. առաջին, էջ 289-290:

<sup>440</sup> Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց Թեմական հոգեւոր դպրոցի 1838-1913, էջ 68-69:

<sup>441</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. 5, էջ 268:

տան այսմիկ առաւելոյր քան զռուբլիս 500, թո՛ղ զմեծամեծ հասարակաց սեղանս, զոր տային ի տան անդ իւրեանց»<sup>442</sup>:

Այսպիսով՝ երեք վաճառական հայ ընտանիքներ (Զոհրապ Թառումյան, Մարկոս Թառումյան, Հախումյան-Ն. Բ.) Շուշիի սարահարթից հսկում էին մի մեծ առևտուր, որի միջոցով իրար էին կապվում աշխարհի չորս ծայրերը՝ Չինաստանից մինչև Արևմտյան Եվրոպա, Հնդկաստանից մինչև Ռուսաստան և Սկանդինավյան երկրներ<sup>443</sup>:

Ըստ «Обозрение»-ի տվյալների՝ Ղարաբաղն առևտրական կապեր ուներ հարևան խանութայինների՝ Շաքիի, Շիրվանի, Բաքվի, Գանձակի, Նախիջևանի և Երևանի հետ, որոնցից, ինչպես նաև Թիֆլիսից և Դերբենդից Ղարաբաղն ստանում էր մինչև 90000 ռուբ. ռուսական արծաթ կազմող ապրանք: Իսկ Թավրիզից, Արդեբիլից, Խոյից և Ուրմիայից, ինչպես նաև Իրանից, ընդհանրապես, ներմուծվում էր մինչև 140000 ռուբ. ռուսական արծաթով ապրանք: Ղարաբաղի արտաքին առևտրում կենտրոնական տեղը պատկանում էր Թավրիզ քաղաքին: Ղարաբաղի վաճառականները սերտ առևտրական կապեր ունեին Մոսկվայի և Նիժնի Նովգորոդի հետ: Թուրքիայի հետ վարվող առևտուրն այնքան էլ նշանակալի չէր: Թուրքիայից ներմուծվող ապրանքների ընդհանուր թիվը կազմում էր 3000 ռուբ. ռուսական արծաթով:

Ներմուծվող ապրանքները տարբեր տեսակի բամբակյա և մետաքսյա գործվածքներ էին, շաքար, թաղեկոշիկներ, աղ, չորացրած մրգեր, նավթ և այլն<sup>444</sup>: Արտահանվող ապրանքների մեջ առաջին տեղում էր մետաքսը: Ղարաբաղից հարևան գավառներ էին արտահանվում հիմնականում հացահատիկային մշակաբույսեր և անասուններ<sup>445</sup>:

19-րդ դարի առաջին երեսնամյակին Ղարաբաղի առևտրական կյանքի զարգացմանը դարձյալ խոչընդոտում էին բազմատեսակ

<sup>442</sup> Թաղիադյան Մ., Գրական ժառանգություն, հ. 9, էջ 159:

<sup>443</sup> Բալայան Վ., նշվ. աշխ., էջ 254:

<sup>444</sup> Обозрение российских владений Закавказьем, ч. III, с. 313-316:

<sup>445</sup> Сумбат-заде А., Сельское хозяйство Азербайджана в XIX в., с. 76, 91.

տուրքերը, որոնք, իբրև թե, թեթևացել էին ռուսական վարչակարգի մուտքից հետո: Այս մասին 19-րդ դ. 30-ական թթ. 2-րդ կեսին ռուս պաշտոնյա Նեֆեդենը գրել է. «Շուշիի ամրոցի դարպասների մոտ օր ու գիշեր հսկում էին պարետի հսկիչները, որոնք քաղաք ներմուծվող և արտահանվող յուրաքանչյուր ապրանքից տուրք էին վերցնում»<sup>446</sup>:

Առևտրի զարգացմանը խանգարում էր նաև միասնական դրամական, չափ ու կշռի համակարգերի բացակայությունը, որոնք ոչ միայն անհարմար էին դարձնում ապրանքափոխանակությունը, այլև լայն հնարավորություններ էին ստեղծում մութ մեքենայությունների համար: Բազմատեսակ էին նաև Ղարաբաղի գավառի դրամական միավորները, որոնք ժառանգություն էին մնացել խանական շրջանից. գործածվում էր աբասին, հոլանդական չերվոնեցը, պարսկական ոսկե չերվոնեցը, թումանը, պղնձե դրամը՝ շահին, ռուսական ռուբլին և արծաթե դրամը<sup>447</sup>:

Դա խանգարում էր հատկապես ներքին շրջանառությանը, որը շարունակում էր առավելապես բնատուր տեսք ունենալ: Այսպես օրինակ, Ղարաբաղի Քարահունջ գյուղը հարևան գյուղեր էր արտահանում օղի, ցորեն, կաշի, բուրդ, գորգեր, իսկ ներմուծում՝ կավե ամանեղեն՝ Ղավախան և Ննգի գյուղերից, փայտյա կենցաղային իրեր՝ Տումիից, գերամներ՝ Մեծ Թաղերից<sup>448</sup>: Չնայած վերոնշյալ արգելակող հանգամանքներին, 19-րդ դարի առաջին երեսնամյակին առևտուրը Ղարաբաղում շարունակում էր զարգանալ: Բավական է միայն նշել, որ Ղարաբաղի կենտրոն Շուշին, հատկապես արտաքին առևտրի առումով, կանգնած էր ժամանակի նշանավոր առևտրական կենտրոնների կողքին, իսկ

---

<sup>446</sup> Колониальная политика российского царизма в Азербайджане в 20-60-х гг. XIX в., ч. I, с. 367.

<sup>447</sup> Броневский С., Новейшие географические и исторические известия о Кавказе, ч. 2, Москва, 1823, с. 462-464.

<sup>448</sup> Բեգլարյան Մ., Ղարաբաղի մեր Քարահունջը, Ստեփանակերտ, 2004, էջ 84:

Շուշիի առևտրականները մասնակցում էին Լայպցիգի ամենամյա տոնավաճառին<sup>449</sup>:

Ինչպես Անդրկովկասի, այնպես էլ Ղարաբաղի արտաքին առևտուրը որոշակիորեն տուժեց 1831 թվականի կանոնադրությամբ, որի համաձայն՝ Անդրկովկասը մտցվեց Նիկոլայ 1-ինի կառավարության հովանավորչական մաքսային քաղաքականության շրջագծի մեջ և դարձավ ռուսական արդյունաբերական արտադրանքի վաճառահանման ներքին շուկա<sup>450</sup>: Կանոնադրության համաձայն՝ 5% մաքսային դրույքն ուժի մեջ թողնվեց միայն ասիական ապրանքների ներմուծման համար: Բարձր մաքսային սակագին էր սահմանվում Անդրկովկաս ներմուծվող եվրոպական ապրանքների համար: Արգելվում էր արտասահմանյան ապրանքների ներմուծումը Անդրկովկասի վրայով Ռուսաստան, բայց միաժամանակ թույլատրվում էր առանց մաքսի Անդրկովկասից արտահանել ռուսական և տեղական ապրանքներ:

1831 թ. հունիսի 3-ին ցարը հաստատեց «Անդրկովկասի մաքսային կառավարման կանոնադրությունը», որի համաձայն՝ վերացվեցին ներքին մաքսերը՝ տարածաշրջանը կազմակերպելով որպես առանձին մաքսային շրջան, որը ղեկավարվում էր Թիֆլիսից<sup>451</sup>: Ներքին մաքսերի վերացման արդյունքում Ամարասի և Նախիջևանի մաքսատներով իրականացվող ապրանքաշրջանառությունը հետևյալ աղյուսակային պատկերն էր ներկայացնում<sup>452</sup>:

---

<sup>449</sup> Ստեփանյան Ս., Հայ առևտրական բուրժուազիան Իրանի տնտեսական կյանքում (XIX դարի վերջ XX դարի սկիզբ), Երևան, 1992, էջ 70:

<sup>450</sup> Рожкова М., Экономическая политика царского правительства на Среднем Востоке во второй четверти XIX в. и русская буржуазия, Москва, 1949, с. 93.

<sup>451</sup> Կանոնադրությունը 4-ամյա ժամկետով էր անցկացվել, ուստի 1836 թ. մայիսի 11-ին Պետական խորհրդի որոշմամբ այն անփոփոխ թողնվեց: Չնայած կանոնադրությանը՝ ներքին մաքսերը վերացնելու ուղղությամբ հիմնական աշխատանքները սկսվում են 1841 թ. հունվարի 1-ից: Այս մասին տե՛ս Կунян В., Административно-экономическая политика самодержавия России в Закавказье 1-й пол. XIX в., с. 178.

<sup>452</sup> Կунян В., Политика самодержавия России в Закавказье XIX-нач. XX вв. Часть третья, 1836-1844 гг., с. 132.



Մաքսատներ	Նախիջևան		Ամարաս <sup>453</sup>	
	Ներմուծում	արտահանում	Ներմուծում	արտահանում
1839	616114	99123	308402	86778
1840	717353	137638	362581	169755
1841	531373	145583	553385	130344
Ընդամենը	1864844	382345	1224368	386877

1831 թ. արգելիչ մաքսային սակագինը չարդարացրեց իրեն և վերացվեց 1846 թ. վերջերին, երբ Նոր կանոնադրությամբ թույլատրվում էր եվրոպական և ասիական ապրանքների տրանզիտն Անդրկովկասի վրայով, իջեցվում էին եվրոպական ապրանքներից գանձվող մաքսերը<sup>454</sup>: Չնայած այս ամենին՝ առևտուրը Ղարաբաղում շարունակում էր մնալ տնտեսության զարգացման կարևորագույն ճյուղերից մեկը, որը կրկին մեծ թափ է ստանում 19-րդ դարի 40-60-ական թվականներին:

1846 թ. Նոյեմբերի 15-ին գերմանական «Ալգեմայնե ցայտունգ» թերթը գրել է. «Ղարաբաղի գլխավոր քաղաքը՝ Շուշին, առանց չափազանցության կարելի է համարել Կովկասյան Զիբրալթարը»<sup>455</sup>:

Ինչպես Շուշի քաղաքը, այնպես էլ գավառը առևտրական կապեր ուներ Օրդուբադի հետ<sup>456</sup>: Օրդուբադի ամենահարուստ կապիտալիստներից շատերն ապրում էին Շուշիում<sup>457</sup>: Քաղաքում վաճառականական տների առկայությունն էլ նպաստում էր այն հանգամանքին, որ Շուշին ծաղկում ապրեր: «Մեղու Հայաստանի» հոդվածագրի խոսքերով՝ «Մեր Շուշվոյ քաղաքին պես քաղաքումը՝

<sup>453</sup> Ամարասի մաքսատանը ենթարկվում էր պարսկական սահմանի ուղեկալներից և պահակակետերից՝ լեռնաշղթաներով մինչև Մեղրի ընկած տարածքը, ընդգրկելով Նաև Նախիջևանի մաքսատունը: Այս մասին տե՛ս Тунян В., Политика самодержавия России в Закавказье XIX-нач. XX вв. Часть вторая, 1826-1836 гг., с. 91.

<sup>454</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. 5, էջ 271- 272:

<sup>455</sup> Բալայան Վ., նշվ. աշխ., էջ 254:

<sup>456</sup> «Кавказский календарь» на 1866 г., Тифлис, 1865, с. 88.

<sup>457</sup> «Кавказский календарь» на 1868 г., Тифлис, 1867, с. 417.

որ փառք աստուծոյ համեմատած Կովկասի ուրիշ քաղաքների հետ՝ թե՛ ամենիցը չէ, գէթ շատերիցը՝ ճոխ է հարստութեամբ...»<sup>458</sup>: Շուշին որպէս առևտրական կենտրոն է ներկայացվում նաև Կովկասի փոխարքա իշխան Միխայիլ Ռոմանովի 1862-1872 թթ. տարեկան հաշվետվության մեջ: Այստեղ կարդում ենք. «Շուշին, որտեղ ապրում են բավական նշանակալի քանակությամբ հարուստ հայ առևտրականներ»<sup>459</sup>: Շուշին ժամանակավոր հանգրվան էր ծառայում Ռուսաստանի և արտասահմանի շատ առևտրականների համար<sup>460</sup>:

«Կովկասյան տարեցույցում» զետեղված՝ Կոնստանտինովիչի ընդարձակ հոդվածի հաղորդած տեղեկությունների համաձայն՝ Շուշին շարունակում էր գլխավոր առևտուրը կատարել Թավրիզի և Նիժնի Նովգորոդի հետ: Թավրիզից Շուշի էին ներմուծում բամբակամանվածքային, մետաքսե գործվածքներ, մահուդ, թավշյա շալեր, դիպակ: Բաղդադից և Բուխարայից ներմուծվում էին նորածին գառան մորթիներ, ծխախոտ և այլն: Նիժնի Նովգորոդից ներմուծվում էր մահուդ, բամբակե և մետաքսե կտորեղեն, ոչ մեծ քանակությամբ ճենապակե և ապակե ամանեղեն, երկաթ, երկաթե և պղնձե շինվածքներ, սկյուռի մորթիներ, մոմեր, թուղթ և այլն: Ռուսաստան էր արտահանվում քիչ քանակությամբ մետաքս, աղվեսի և կզաքիսի մորթիներ: Այս առևտրի ամբողջ շրջանառությունը չէր գերազանցում 70-80 հազ. ռուբ.՝ արծաթով: Թիֆլիսից ներմուծվում էր շաքար: Առևտրի մեջ ներգրավված էին բացի արհեստավորներից և ազնվական բեկերից, Շուշիի համարյա թե բոլոր բնակիչները: Կոնստանտինովիչի խոսքերով՝ «Կան հարուստ վաճառականներ, որոնք շրջանառության մեջ ունեն հարյուրից երկու հարյուր հազար ռուբլի արծաթե դրամ: Նրանք տրանզիտային առևտուր էին վարում Լայպցիգի, Կոստանդնուպոլսի և Թավրիզի միջև, իսկ շատերը մետաքսի առևտուր են անում Մոսկվայի հետ»<sup>461</sup>:

<sup>458</sup> «Մեղու Հայաստանի», թիվ 42, 1860:

<sup>459</sup> Отчет по главному управлению наместника Кавказского за первое десятилетие управления Кавказским и Закавказским краем е. и. в. князем Михаилом Николаевичем с декабря 1862-6 декабря 1872, Тифлис, 1873, с. 92.

<sup>460</sup> Ավագյան Ս., Ղարաբաղի մամուլի պատմություն (1828-1920), Երևան, 1989, էջ 4:

<sup>461</sup> «Кавказский календарь» на 1852 г., Тифлис, 1851, с. 435.

Շուշի քաղաքում և գավառում առևտրով զբաղվածների թիվը հնարավոր է դարձել պարզել «Կովկասյան տարեցույցի» էջերում տեղ գտած մեկ այլ տեղեկությամբ, որը կներկայացնենք աղյուսակի տեսքով<sup>462</sup>:

(Աղյուսակ 10)

Առևտրով զբաղվածների ըստ տեղամասերի	քրիստոնյաներ	մահմեդականներ	ընդամենը
Շուշի քաղաք	713	302	1015
Ջրաբերդ	15	-	15
Զանգեզուր	50	10	120
Քերերլին	7	-	7
Մուստաֆախանլի	5	93	98
Վարանդա	-	-	-
Ջիվանշիր	-	-	-

Փաստորեն, Շուշի քաղաքում առևտրով զբաղվածները կազմում էին բնակչության 6,7 %-ը<sup>463</sup>: 1855 թ. Շուշի քաղաքի բնակչության թիվը կազմում էր 15194 մարդ<sup>464</sup>: Աղյուսակում Վարանդայի և Ջիվանշիրի առևտրականների վերաբերյալ տվյալների բացակայությունը, պայմանավորված էր ոչ թե առևտրական հարաբերությունների, այլև նշված տեղամասերում համապատասխան ուսումնասիրության բացակայությամբ:

«Մշակ» թերթի էջերում տեղ գտած՝ «Մի հայացք Շուշու արդյունաբերության և վաճառականության վրա» բավականին հետաքրքիր մի հոդվածում հոդվածագիրը ներկայացնում է Շուշիի առևտրական կյանքի մասին ժամանակաշրջանի իրական պատկերը. «Մի երեսուն տարի սրանից առաջ Շուշու վաճառականն այլ տիպ էր ներկայացնում, շատ բաներում զանազանվում էր այսօրվան առևտրականից: Տարվա 9 ամիսը նա իր խանութումն էր նստում, իսկ ամառը հասնելուն պէս, նա նստում է իր ձին, ձիի

<sup>462</sup> «Кавказский календарь» на 1856 г., с. 358-441.

<sup>463</sup> Նույն տեղում, էջ 358-359:

<sup>464</sup> «Кавказский календарь» на 1856 г., с. 358-359, Исмаил-заде Д., Население городов Закавказского края в XIX – начале XX вв., Москва, 1991, с. 138-139.

գաւակին է գցում հին «աբասսիներով լիքը «հաբգեան» և կարաւանով, երբեմն առանձին, ուղևորվում էր դեպի Ատրպատականի մայրաքաղաք Թաւրիզը:

Այն ժամանակները մեր երկրի մէջ դեռ չը կար հովանաւորող սիստեմը, որը համարեա թէ անկարելի է դարձնում մեզ մօտ ուրիշ երկրների ապրանքների ներմուծումը: Սահմանի վրա մեր վաճառականը թեթև մաքս վճարելուց յետոյ, բերում էր Թաւրիզից Շուշի անգլիական և ֆրանսիական համեմատաբար էժանագին ապրանքներ, դարսում էր իր խանութի մէջ և սկսում էր իր առևտուրը: Պարսկաստանից ապրանք բերելն այնքան էլ հեշտ չէր հաղորդակցութեան վտանգաւոր լինելուն պատճառով»<sup>465</sup>:

Հողվածագիրը մատնանշում է այն փաստը, որ երբ 1861-1864 թթ. Ամերիկայի Միացյալ Նահանգների հյուսիսը և հարավը զբաղված էին պատերազմով, և այդ երկրի բամբակի արդու-նաբերությունը տուժել էր, Շուշիի 500 հազ. ռուբլի դրամագլուխ ունեցող 10 առևտրականներ եվրոպայում ստեղծում են իրենց ընկերությունը: Նրանք իրենց ձեռքն էին վերցրել Կովկասի և Պարսկաստանի բամբակի արտահանման գործը անգլիական շուկա: Բացի բամբակից շուշեցի առևտրականներն արտահանում էին նաև բոժոժ, մետաքս, բուրդ, մորթի և կաշի: Սակայն պատերազմի ավարտի հետ ավարտվում է նաև առևտրական ընկերության գործունեությունը<sup>466</sup>:

Շուշիի առևտրականների հմուտ առևտրի մասին է պատմում «Մեղու Հայաստանի» թերթի հողվածագիրը. «Շերամապահութեամբ աւելի պարապում են Բարկուշատի չղի թուրքերը: Շուշեցի մանրավաճառները մեծ օգուտ են քաղում այս թուրքերից: Նրանք դեռ ձմեռ ժամանակը ման են գալիս այս գիւղերում՝ մէկին տալիս են մի քանի գազ չիթ, միսին կտաւ, միայն այն պայմանաւ, որ ամառը փոխարէնը տան մի քանակութիւն բոժոժին... Շատ

<sup>465</sup> «Մշակ», թիվ 99, սեպտեմբերի 1, 1890:

<sup>466</sup> Նույն տեղում:

հաճախ մանրավաճառի վերայ մի փութ բոժոժը նստում է 5 մնթ., իսկ ինքը ծախում է 30-40 մնթ.»<sup>467</sup>:

Շուշիի առևտրի զարգացմանը նպաստում էր Երևանի նահանգի գյուղացիությունը, որը 1865 թ. առևտուր կատարելու համար վերցրել էր 305 վկայական և առևտուր էր կատարում հիմնականում Երևանում, Շուշիում և Ալեքսանդրապոլում<sup>468</sup>:

1861 թ. Շուշի այցելած հայ նշանավոր գրողներից Գարեգին Սրվանձտյանցը իր ուղեգրություններում տեղեկություններ է հաղորդել քաղաքի շուկաների և շուշեցիների հագուկապի մասին. «Քաղաքիս շուկան կամ հասարակաց առեստուրի տեղ ինչնում է տաճկաց մասնում. կայ եւ մասնավոր շուկայ մի Հայոց թաղերումը, որոց գլուխը կայ հրապարակ մի, զոր անուանում են Թոք(փ) խանա:

Մեր ժողովրդեան արանց կամ կանանց մէջ տակաւին տեղի չէ գտեր նորաձեւութիւնն Փարիզի զգեստներ. եւ թէ կան էլ հատ հատ մատով են ցոյց տալի մանաւանդ կնիկներ. վասն զի իրենք շատ ամօթխած են եւ համեստ թէ հագուստով եւ թէ վարմունքով»<sup>469</sup>:

Բացի Շուշի քաղաքից, գավառի մնացած հատվածներում առաջացել էին, այսպես կոչված, «առևտրական կենտրոններ»՝ ըստ տեղամասերի: Վարանդայում, որպես կիրակնօրյա շուկաներ նշվում է Խան-քենդին, իսկ Խաչենում՝ Վանք գյուղերի շուկաները<sup>470</sup>: Դիզակում կար երկու շուկա, որից առաջինը գտնվում էր գյուղում և կոչվում էր Շէնի բազար, իսկ երկրորդը գտնվում էր ռուսական շտաբի մոտ և կոչվում էր Շտաբի կամ Խոր-աղբյուրի բազար: Գյուղական շուկան կազմված էր 30 կրպակներից, որոնցից 6-ը պատկանում էր արդյունաբերական ապրանքներ վաճառողներին, 3-ը՝ արծաթագործ վարպետներին, 2-ը՝ ներկարարներին, 1-ը՝ եվրոպական կոշկակարին, 1-ը՝

<sup>467</sup> «Մեղու Հայաստանի», թիվ 40, հոկտեմբերի 20, 1873:

<sup>468</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. 5, էջ 269:

<sup>469</sup> Սրուանձտեանց Գ., Տեսարանք հայրենի աշխարհաց Սինեաց աշխարհ եւ Շուշի քաղաք, «Արծուի Վասպուրական», թիվ 4, Վան, 1862-1863, էջ 105: Սրվանձտյանց Գ., Երկեր, հ. 2, Երևան, 1982, էջ 71-72:

<sup>470</sup> «Кавказский календарь» на 1858 г., Тифлис, 1857, с. 209.

ասիական կոշկակարին, 12-ը՝ ծխախոտ և տարբեր մանր ապրանքներ վաճառողներին, 5 կրպակ էլ պատկանում էր դարբիններին: Շտաբի բազարը կազմված էր 15 կրպակներից և 10 առավել փոքր կառույցներից այստեղ կար նաև հրուշակագործական և զինագործ վարպետի կրպակ: Ապրանքները գնվում էին Շուշիում: Առևտրի մեջ ընդգրկված էին Հադրութի և մերձակա՝ Զրակուս, Թաղ, Տող, Ազոխ, Մարիամաձոր գյուղերի բնակչությունը<sup>471</sup>:

Այժմ անդրադառնանք Ղարաբաղից արտահանվող և Ղարաբաղ ներմուծվող ապրանքների քանակությանը: «Կովկասյան տարեցույցի» էջերում տեղ գտած մի տեղեկություն հնարավորություն է տալիս պարզել, թե 1860 թ. դրությամբ Ջեբրայիլի մաքսակետով որքան ապրանք է արտահանվել և որքան՝ ներմուծվել: Հավանաբար, այս գործում ապրանքաշրջանառությունն ապահովողի ամենագործուն դերակատարությամբ հանդես են եկել Շուշիի առևտրականները: Ասվածը հիմնավորելու համար, չթերագնահատելով Երևանի նահանգի հնարավորությունները, ներկայացնենք մի համեմատություն Երևանի նահանգի և Ղարաբաղի գավառի առևտրականների՝ Նիժնի Նովգորոդում և Մոսկվայում իրականացված ամենամյա առևտրի ծավալների մասին՝ դիտարկելով 1843-1845 թվականները: Այսպես օրինակ, 1843-1845 թթ. Երևանի նահանգում 55 հազ. ռուբ.՝ արծաթով առևտուր իրականացրել է 1 առևտրական, իսկ Ղարաբաղի գավառում 108 հազ. ռուբ.՝ արծաթով առևտուր իրականացրել են 9 առևտրական<sup>472</sup>: 1860 թ. իրականացված ապրանքաշրջանառությունը ներկայացնենք աղյուսակի տեսքով<sup>473</sup>:

<sup>471</sup> Давидбеков И., Село Гадрут, Елисаветпольской губернии, Джебраильского уезда, СМОМПК, вып. VI, отд. II, с. 173.

<sup>472</sup> Тунян В., Административно-экономическая политика самодержавия России в Закавказье 1-й пол. XIX в., с. 223.

<sup>473</sup> «Кавказский календарь» на 1861 г., Тифлис, 1860, с. 76.

(Աղյուսակ 11)

<b>Ջերբայիլի մաքսակետ</b>					
<b>Ներմուծված ապրանքի տեսակը</b>	<b>Ապրանքի արժեքը</b>		<b>Արտահանված ապրանքի տեսակը</b>	<b>Ապրանքի արժեքը</b>	
	ռուբլի	կոպեկ		ռուբլի	կոպեկ
<b>Եվրոպական շաքար</b>	99	-	<b>Ռուսական և անդրկովկասյան</b> բամբակե գործվածքներ	844	-
բամբակե գործվածքներ	86057	80	մետաքսի հումք	49010	-
ընդամենը	86156	80			
<b>Ասիական բամբակե գործվածքներ</b>	393310	68	մետաքսե գործվածքներ	115	50
բամբակ	218	50	բրդյա գործվածքներ	7771	-
մանված բամբակ	1358	50	կաշի և կաշվե ապրանքներ	6907	-
մետաքսի հումք	1200		մետաղ և մետաղյա ապրանքներ	483	-
մետաքսե գործվածքներ	27094	55	այլ ապրանքներ	697	50
բրդյա գործվածքներ	1136	-			
ներկեր	4238				

կաշի և կաշվե ապրանքներ	3636	80			
Նուրբ կտորներ	18874	45			
հացահատիկային մշակաբույսեր	769	50			
Ներկաքիմիական ապրանքներ	3605	-			
ծխախոտ	660	-			
մրգեր	8,619	-			
շաքար	5954				
տարբեր անասուններ	7626	40			
այլ ապրանքներ	732	36			
ԸՆդամենը	565190	54	ԸՆդամենը	65 828	-

Հարկ է նշել, որ աղյուսակում նշված ապրանքների ներմուծումից և արտահանումից մաքսատուրքը կազմում էր 49129 ռուբ. 56 1/2 կոպ.<sup>474</sup>: Հատկանշական է նաև այն փաստը, որ եթե 19-րդ դարի 40-ական թթ. Ջեբրայիլի մաքսակետով տեղի էր ունենում 246 հազ. ռուբ.<sup>475</sup>. ապրանքաշրջանառություն, ապա 1860 թ. դրությամբ այդ թիվն աճել էր մինչև 631 018 ռուբլու:

Ինչ վերաբերում է ներքին ապրանքաշրջանառությանը, ապա պահանջարկ վայելող հիմնական ապրանքները 1859 թ. դրությամբ ունեին հետևյալ արժեքը. 1 չետվ. ցորենն արժեր 49,5 կոպ., 1 դույլ օդին՝ 50 կոպ., 1 փուֆ կովի միսը՝ 20 կոպ., ոչխարինը՝ 60 կոպ.<sup>476</sup>, իսկ Ղարաբաղից արտահանվող մետաքսաթելի փուֆը 1858 թ. կազմում էր 95 ռուբ.<sup>477</sup>, 1859 թ.՝ 105 ռուբ.<sup>478</sup>, 1861 թ.՝ 110 ռուբ.<sup>479</sup>, այն

<sup>474</sup> Նույն տեղում:

<sup>475</sup> История Азербайджана, т. 2, Баку, 1960, с. 73

<sup>476</sup> «Кавказский календарь» на 1861 г., Тифлис, 1860, с. 66.

<sup>477</sup> «Մեղու Հայաստանի», թիվ 41, հոկտեմբերի 11, 1858:

<sup>478</sup> «Մեղու Հայաստանի», թիվ 1, հունվարի 11, թիվ 28, հուլիսի 11, 1859:

<sup>479</sup> «Մեղու Հայաստանի», թիվ 5, հունվարի 28, 1861:



իր որակով գիջում էր միայն Նուխիի թելին, որի միջին արժեքը նշված տարիներին կազմել է 130 ռուբ.:

Բացի վերոնշյալ ապրանքներից, 19-րդ դարի 60-ական թթ. վերջին և 70-ական թթ. սկզբին Արցախը և Նուխին շերամի, բրդի և ընկույզի կոճղի աշխույժ առևտուր էին անում<sup>480</sup>:

Մեր կողմից ուսումնասիրվող ժամանակաշրջանում առևտրական կյանքը Ղարաբաղում բավականին աշխույժ բնույթ ուներ՝ որոշ առանձնահատկություններով. Շուշիի առևտրականներն արտահանում էին Ղարաբաղում արտադրվող ապրանքների շատ քիչ մասը՝ հանդես գալով առևտրի մեջ միջնորդի դերում: Շուշիի հարուստ առևտրական տները, կուտակելով պատկառելի դրամագլուխ, այն 19-րդ դարի երկրորդ կեսին ծառայեցրեցին ինչպես սեփական գործի ընդլայնմանն ու զարգացմանը, այնպես էլ քաղաքի մշակութային կյանքի զարգացմանը:

---

<sup>480</sup> «Մշակ», թիվ 48, նոյեմբերի 28, 1874:

## Բ) ՑԱՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

Ռուսական տիրապետության սկզբնական շրջանում մինչև 1822 թ.՝ Ղարաբաղի խանության վերացումը, Ղարաբաղի կյանքում թե՛ տնտեսական և թե՛ քաղաքական առումներով շատ բան չփոխվեց: Գործում էր նաև նախկին հարկային համակարգը<sup>481</sup>: Ղարաբաղի խան Մեհտի Ղուլին շարունակում էր խանությունը ղեկավարել մահալների բեկերի օգնությամբ: Տարբեր խանություններում մահալների բեկերը տարբեր իրավունքներ ունեին, բայց, ընդհանրապես, նրանց պարտավորությունները հետևյալն էին՝ 1) խանի կողմից ողջ մահալի համար որոշված տուրքը բաժանել գյուղերի վրա, 2) ստիպել գյուղացիներին՝ անթերի վճարելու հարկերը և այլն<sup>482</sup>:

Ղարաբաղի բնակչությունը բաժանված էր երկու հատվածի՝ հարկատու և ոչ հարկատու: Բնակչության ոչ հարկատու հատվածի մեջ մտնում էին որբերը, այրիները, ջքավորները, հոտաղները, ռանչպարները, ինչպես նաև բեկերը, մաաֆները և հոգևորականությունը<sup>483</sup>: Հարկատու բնակչությունը՝ նստակյաց և քոչվոր, ուներ աշխատանքային, բնամթերային և դրամական հարկային պարտավորություններ:

Ղարաբաղի խանության նստակյաց և քոչվոր բնակչությունից տարբեր հարկեր էին գանձվում: Նստակյաց բնակչությունը, հոգուտ խանական դիվանի, *հողի օգտագործման համար* վճարում էր հետևյալ հարկերը. «**մալուջահաթ**» (նշանակում է՝ բերքի մաս), հացահատիկի և հացահատիկային մյուս մշակաբույսերի 1/10,

<sup>481</sup> Հարցի շուրջ տե՛ս մեր հոդվածները՝ Բաղդասարյան Ն., Ցարական Ռուսաստանի հարկային քաղաքականությունը Ղարաբաղում 19-րդ դարի 20–50-ական թթ., Միջազգային գիտաժողովի նյութեր՝ նվիրված ԱրՊՀ հիմնադրման 40-ամյակին, պրակ 1, Ստեփանակերտ, 2009, էջ 232–233, Ցարական Ռուսաստանի հարկային քաղաքականությունը Ղարաբաղում 19-րդ դարի առաջին քառորդին, Հայագիտական հանդես 2/2011, Ստեփանակերտ, 2011, էջ 104–116:

<sup>482</sup> Անանուն Դ., նշվ. աշխ., էջ 25:

<sup>483</sup> ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 1097 ա:

ինչպես նաև մետաքսի 1/5-ի չափով, **«սալյանե»**<sup>484</sup> գանձվում էր բնամթերքով (ցորենով և գարով): Ղարաբաղի բնակչության կողմից վճարվող հարկերից էր **«բաղբաշին»**, այգիներից և **«չորաշին»**, արոտավայրերից հավաքվող հարկ: 1847 թ. թվագրված մի վավերագրում հանձնարարվում է Մուսայել բեկ Դուլումսանովին և Մեսրոպ Թառումյանին՝ «Ղարապաղու թագաւորական տեղեաց զօպաշին» հավաքել և հասցնել Շուշի<sup>485</sup>:

Հարկերի հաջորդ խումբը հավաքվում էր *զորքին և սսփիճանավորներին պահելու* համար. **«միրզայանա»** կոչվող հարկը գանձվում էր խանական գրասենյակի համար, **«դուլլուղ փուլու»**<sup>486</sup>, **«թահվիլանի»** և **«դարդալըղ»** հարկերը գանձվում էին խանական պաշտոնյաների ծառաների և զորքի վարձատրության համար, **«քալանթարլըղ»** կոչվող տուրքը գանձվում էր առավել ցածր պաշտոններում ծառայողների օգտին: **«Ատ-արպասին»**, գարու հարկ էր, որը գանձվում էր խանական կամ բեկական ձիերի համար:

Գոյություն ունեին հարկեր, որոնք գանձվում էին *պարտադիր նվիրատվությունների* ձևով՝ հօգուտ ավատատերերի և աստիճանավորների. **«բայրամլըղ»**, նովրուզ-բայրամի տոնի և հարսանիքի համար վճարվող հարկ, որը կազմում էր 6 ռուբ. 40 կոպ.-10 ռուբ., իսկ առանձին գյուղեր այս հարկի դիմաց նաև փայտ էին տալիս<sup>487</sup>: **«Թոյ-փայի»**, տասանորդ էր «դատական նեղությունների» համար. երբ կողմերը հաշտվում էին վեճի նյութ դարձած առարկայի շուրջ, գանձվում էր վեճի առարկայի արժեքի տասներորդ բաժինը: Դատարանում գողոնի առգրավումից կամ տուգանքի ենթարկվածներից գանձվում էր **«ջերմա»**: Հարկաբաշխության ժամանակ, եթե ժողովուրդը նախօրոք համաձայնության էր գալիս տնային պարտավորության հարցում, ապա նայիբի կամ դարդալի

<sup>484</sup> Петрушевский И., Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI- начале XIX вв., Ленинград, 1949, с. 272.

<sup>485</sup> Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 156:

<sup>486</sup> Լեւոն Վարդան, Հարկերը Օսմանեան եւ Պարսկական Կայսրութիւններուն մէջ, ԺԵ-ի դար, Ա-Ի, Երևան, 2004, էջ 229:

<sup>487</sup> Колониальная политика российского царизма в Азербайджане в 20-60-х гг. XIX в., ч. I, с. 11.

(հարկահավաքի) օգտին հավաքվում էր դրամական ընծա, որը կոչվում էր «**օթաղ-խարջի**»՝ **տան-փող**<sup>488</sup> վճարվում էր ցորենով և գարով, երբեմն էլ՝ դրամով:

«**Կիր-խանա-խարջին**» ևս իրենից ներկայացնում էր պարտադիր նվիրատվություն, ծխերից հավաքվող հարկ՝ խանի սեղանի համար: Նստակյաց բնակչությունն այն վճարում էր ցորենով, գարով և երբեմն՝ յուղով, իսկ քոչվորները՝ յուղով, ոչխարներով և թռչուններով<sup>489</sup>: 1827 թ. Ղարաբաղի գավառի բնակչության կիր-խանա-խարջիի գումարը պետք է կազմեր 1244 ուրբ. 50 կոպ.՝ արծաթով:

Բացի բնամթերային հարկերից, Ղարաբաղի բնակչությունը պետք է կատարեր նաև *աշխատանքային պարտականք*. «**ղուլլուղ**»՝ պարտադիր աշխատանք տիրոջ համար, «**իլխիչի**»՝ ռայաթներ էին հատկացվում խանի ձիերի պահման համար, ինչպես նաև «**գորգերով հարկ**»<sup>490</sup>:

Վերոնշյալ հարկերից բացի, 1805 թ. կցվելով ցարական Ռուսաստանին, Ղարաբաղի խանությունը պարտավորվեց վճարել ամենամյա հարկ՝ 8000 չերվոնեց: Հարկի հավաքումը պետք է վերահսկեր պրիստավը<sup>491</sup>: Ղարաբաղի գյուղերից, ըստ ծխերի, գանձվող հարկն իրենք՝ գյուղացիները կոչում էին «**ոսկի՝ ըստ ծխի**»<sup>492</sup> կամ չերվոնեցներով հարկ, որը գանձվում էր ինչպես քոչվոր, այնպես էլ նստակյաց բնակչությունից: Այս հարկի հավաքումը հետագայում տեղիք տվեց չարաշահումների. 8000 չերվ. հարկը, ինչպես նաև փոստառաքման և փայտի պարտավորությունը, կատարում էր միայն հայ արքունական գյուղացիությունը, քանի որ բեկերից շատերը նախկին խանի թուլությունից և թողտվությունից օգտվելով, չէին մասնակցում այդ պարտավորության կատարմանը:

<sup>488</sup> Անանուն Դ., նշվ. աշխ., էջ 51:

<sup>489</sup> Исмаил-заде Д., Из истории кочевого хозяйства Азербайджана первой половины XIX в., «Исторические записки», N 66, 1960, с. 130, 96-136.

<sup>490</sup> Гаджиева З., նշվ. աշխ., էջ 50:

<sup>491</sup> Тунян В., Административно-экономическая политика самодержавия России в Закавказье 1-й пол. XIX в., с. 116.

<sup>492</sup> Թաղուտ գյուղի մասին պատմող նյութը պահվում է ԼՂՀ Հաղորդի շրջանի պատմաերկրագիտական թանգարանում:

Սկսած 1823 թվականից՝ գավառական դատարանը հաստատել էր ծխահարկը, որը նույնն էր յուրաքանչյուր ծխի համար: Այն հաստատվել էր նաև ռազմաշրջանային ղեկավարի կողմից: Հետագայում ծխահարկի բաշխման իրավունքն անցավ մահալային նայիբներին, որոնք կատարեցին ծխահարկի վերաբաշխում՝ կախված արդեն յուրաքանչյուր ծխի տնտեսական վիճակից: Հարկահավաքներն իրենք էին որոշում հարկաչափը, որը, կախված բերքի չափից, ամեն տարի փոխվում էր<sup>493</sup>: Նման համակարգը պատճառեղավ մեծ չարաշահումների:

Գավառը վճարում էր նաև **փայտի հարկ**՝ Շուշիում տեղակայված ռուսական զորքերի համար, կատարում **բեռնակրային** պարտավորություն՝ բանվորներ և բեռնակիրներ, ինչպես նաև բանող անասուններ տրամադրելով խանական, իսկ հետագայում՝ ռուսական վարչակազմին և զորքին՝ շինարարական աշխատանքների համար:

Ղարաբաղի նկատմամբ կիրառվող հարկային քաղաքականությունը էական փոփոխություններ չկրեց՝ մինչև 1816 թ. Ա. Երմոլովի Կովկասի կառավարչապետ նշանակվելը: Պաշտոնում նշանակվելուն պես՝ վերջինիս հետաքրքրությունների կենտրոնում հայտնվեց Ռուսաստանի անդրկովկասյան տիրույթների իրական հնարավորությունների բացահայտումը և ըստ այդմ՝ նա ուշադրությունը բեռեց հարկային համակարգի վրա: Ղարաբաղից հավաքվող հարկերի մասին առաջին փաստաթուղթը վերաբերում է 1817 թ. մարտի 4-ին, որը Ա. Պ. Երմոլովի զեկույցն էր՝ ուղղված ռուսաց կայսեր՝ Ալեքսանդր 1-ին, հարկերը չհավաքելու խնդրանքով: Երմոլովը պարզել էր, որ 1805-1817 թթ. Ղարաբաղի խանության ընդհանուր հարկերը կազմել են 88 հազ. չերվ., որից 53128 չերվ. ծախսվել էին բանակի կարիքների, խանական ընտանիքին ու աստիճանավորներին վարձատրելու համար: Դրանից 34872 չերվ. խանությունը պարտք էր մնացել: Այդ առիթով Ա. Երմոլովը դիմել էր Ալեքսանդր 1-ինին՝ խնդրանքով՝ չեղյալ համարել պարտքը: Նա մատնանշել էր այն հանգամանքը, որ

<sup>493</sup> Бахтадзе И., Податное обложение государственных крестьян Закавказского края, СМИЭБГКЗК, т. I, Тифлис, 1887, с. 28.

Պարսկաստանի հետ պայմանագրի կնքումից հետո 4000 ղարաբաղյան ընտանիքներ են տեղափոխվել, և իր կողմից կատարված մարդահամարի արդյունքում պարզվել էր, որ Ղարաբաղում 1817 թվականի դրությամբ ապրում էր 7872 ընտանիք, այն է՝ լրիվ աղքատ վիճակում: Նա նշում էր, որ 10000-անոց բնակչության համար սահմանված հարկն արդեն թվաքանակով քիչ բնակչությունը չէր կարող տալ<sup>494</sup>:

Ալեքսանդր 1-ինը մեծ նշանակություն տվեց Ա. Երմոլովի այս զեկույցին, ինչի մասին է վկայում նրա՝ 1817 թ. հուլիսի 4-ի՝ ֆինանսների նախարարին ուղղված գրությունը, որտեղ նա թույլատրում է վերջինիս՝ չգանձել Ղարաբաղի խանության ապառքը: Այդ առիթով նա գրել է. «...Նրանց վիճակի բարելավման և արտասահմանում մնացած ղարաբաղցիների նախկին բնակավայրերը վերադառնալը խրախուսելու համար ես թույլ եմ տալիս վերոհիշյալ ապառքը՝ 34872 չերվ., նրանց ներել՝ այդ մասին հայտարարելով ամբողջ Ղարաբաղին, մի կողմից՝ որպեսզի բնակիչները ամբողջությամբ զգան կառավարության ուշադրությունը, մյուս կողմից՝ որպեսզի խանը նրանցից պարտքը իր օգտին չպահանջի»<sup>495</sup>: Ցարն այս գիշույնը կատարել էր պայմանով՝ որ խանը պարտավորվի 1817 թ.-ից հետո հարկերը վճարել լրիվությամբ, իսկ հարկերի անկորուստ հավաքման վերահսկողությունը հանձնարարում էր Երմոլովին: Սակայն իրադարձություններն այլ հունով զարգացան. ինչպես վերը նշվեց, խանական վարչաձևը տապալելու ուղղությամբ Ա. Երմոլովի ձեռնարկած հետևողական քայլերը հասցրին նրան, որ 1822 թ. նոյեմբերին Ղարաբաղի վերջին խան Մեհտի Ղուլին փախավ Պարսկաստան: Նրա փախուստի մասին 1822 թ. դեկտեմբերի 14-ին Ալեքսանդր 1-ինին գրած իր զեկույցում Ա. Երմոլովը գրում է. «Խանության բնակիչները, ձերդ կայսերական մեծության շրայությունը՝ մի քանի տարվա ապառքը չվճարելու մասին, ստանալուց հետո, այս ողորմաձությունից չեն օգտվել, քանի որ խանը հարկերը գանձարան չի ներկայացրել, բայց բնակիչներից հարկ է հավաքել»: Այնուհետև նա գրել է, որ Ղարաբաղի

<sup>494</sup> Присоединение Восточной Армении к России, т. II, с. 34.

<sup>495</sup> Նույն տեղում, էջ 40:

խանութան մեծաքանակ հարկերը գանձարան մուծելու համար անհրաժեշտ էր համարում վերացնել «մահմեդական կառավարումը», որից հետո բնակչությունը, տեսնելով տիրող կարգապահությունը, հավատարիմ կլինի իր հանդեպ «բարեգործ» գտնված կառավարության նկատմամբ<sup>496</sup>:

Ա. Երմոլովը Ղարաբաղի իրական հնարավորությունները բացահայտելու և տեղում տիրող հարկային համակարգին ծանոթանալու նպատակով Ղարաբաղ է ուղարկում ռուսական պետական պաշտոնյաներ Պ. Ի. Մոզիլևսկուն և Պ. Ն. Երմոլովին: Նրանց երկարատև աշխատանքների արդյունքում պարզվում է, որ Ղարաբաղի խանութան շրջանի հարկային համակարգը բավականին խառը տեսք ունի, հարկահավաքման գործը գտնվել և գտնվում է խանի, նրա մերձավորների ձեռքում: Շատ հաճախ մեկ ապրանքից մի քանի տեսակի հարկ է գանձվել: Ինչպես վերը նշվել է, խանական գանձարանի եկամուտների մեծ բաժինը բերում էր մաքսային համակարգը՝ **ռահիարը**:

Խանական եկամուտների երկրորդ աղբյուրը **կապալային համակարգն** էր, որից ստացված եկամուտները խանությունների անուղղակի հարկերն էին<sup>497</sup>: Ղարաբաղի խանը մենաշնորհի կարգավիճակ ունեցող առևտրաարդյունաբերական ձեռնարկությունները վարձակալության կարգով տալիս էր իր հարազատներին ու բարեկամներին: Կապալառուն (վարձակալ) կանխիկ դրամ<sup>498</sup> գումար մուծելով խանի գանձարան՝ ազատորեն տնօրինում էր տվյալ գործարանը: Կապալային համակարգը բավականին պարզունակ ձև էր, որը բացասաբար էր անդրադառնում տնտեսության զարգացմանը:

Հարկահավաքությունը գտնվում էր տարբեր անձանց ձեռքերում, որոնց նշանակել էր խանը: Ընդ որում, երբեմն մեկ ապրանքից գանձվում էին ամենատարբեր անվանումներ ունեցող հարկեր,

---

<sup>496</sup> Նույն տեղում, էջ 111:

<sup>497</sup> Անանուն Դ., նշվ. աշխ., էջ 67:

<sup>498</sup> Тунян В., Политика самодержавия России в Закавказье XIX- нач. XX вв. Часть третья, 1836-1844 гг., с. 66.

օրինակ՝ մեկ մանր կամ խոշոր եղջերավոր անասունից մինչև քաղաք հասցվելը չորս անվանում ունեցող հարկ էր գանձվում<sup>499</sup>:

Պ. Մոգիլևսկին և Պ. Երմոլովն առաջարկում էին հարկահավաքությունը կամ վարձակալության իրավունքը փոխհատուցմամբ վերցնել առանձին անհատներից և հանձնել պետությանը: Գեներալ Ա. Երմոլովի կարգադրությամբ՝ հարկահավաքությունը հավաստող փաստաթղթի առկայության պարագայում, այդ իրավունքը հարկահավաքի ձեռքից վերցնելու դեպքում՝ վերջինս պետք է փոխհատուցում ստանար, այլապես զրկվում էր դրանից:

Հետևելով վերոնշյալ կարգադրությանը՝ 1823 թ. մայիսի 2-ին Ա. Երմոլովին ներկայացվեց Պ. Մոգիլևսկու և Պ. Երմոլովի գեկույցը Ղարաբաղի եկամուտների մասին: Պետության կողմից փոխհատուցման չենթարկված և փոխհատուցված վարձակալական հողվածները, որոնք այդուհետ գանձվելու էին ցարական գանձարանի օգտին, հետևյալ աղյուսակային պատկերն էին ներկայացնում<sup>500</sup>:

(Աղյուսակ 12)

Փոխհատուցման չենթարկված վարձակալական հողվածներ	Խանական դրամ		Ռուսական արծաթ	
	ռուբլի	կոպեկ	ռուբլի	կոպեկ
Մեհտի-Ղուլի խանին պատկանող հարկեր				
Զերաբ-խանե կամ դրամահատության իրավունք	47,165	-	-	-
Միզանի (ապրանքի արտահանման իավունք) և մարենի հարկ	-	-	1,428	57
Ներկահարկ	-	-	4,444	44
Տոմսահարկ	-	-	4,020	-

<sup>499</sup> Присоединение Восточной Армении к России, т. II, с. 112-113.

<sup>500</sup> Նույն տեղում, էջ 121-122:



Օճառահարկ	1,400	-	-	-
Կաշվեհարկ	500	-	-	-
Այգիներ՝ Մեհտի-Ղուլի խանին և Ջաֆար-Ղուլի աղային պատկանող	- 1,000	- -	1,000 -	- -
Հարկ՝ կրպակներից	424	-	-	-
Հարկ՝ մետաքսագործ վարպետներից	236	-	-	-
Մորթահարկ՝ Ասադ-բեկի մորթարանից	6,000	-	-	-
Տոմսահարկ, որը պատկանում էր Ռուստամ-բեկ և Հաջի-Աղալար-բեկ եղբայրներին	10,000	-	-	-
	66,725	-	10,893	1
66,725 ռ. խանականով կազմում է	-	-	10,591	35
<b>Ընդամենը</b>			<b>21,484</b>	<b>36</b>
<b>Փոխհատուցման ենթարկված վարձակալական հողվածներ</b>				
Ռահդար, որը պատկանում էր Խանլար-աղային	50,000	-	-	-
Տոմսահարկ՝ պատկանում էր Գյուլ-Մամեդ-բեկին	3,300	-	-	-
Կապան՝ պատկանում էր խանի քրոջը՝ Ազատ-բեգյումին	3,500	-	-	-
Ծխախոտահարկ՝ պատկանում էր խանի քրոջը Ազատ Բեգյումին	400	-	-	-

Շիրա-խաննե՝ օղեհարկ, պատկանում էր Բեհրամ-բեկին	-	-	500	-
Տոմսահարկ՝ պատկանում էր Ալի-բեկին	1,000	-	-	-
Դարգա-բազար՝ պատկանում էր խանի քրոջը՝ Գոհեր աղային	6,000	-	-	-
Ներկահարկ՝ պատկանում էր Հաջի-Բեգյար-բեկին	1,600	-	-	-
	65,830	-	500	-
65,830 ռ. խանականով կազմում է	-	-	10,449	25
<b>Ընդամենը</b>	-	-	<b>10,949</b>	<b>25</b>
Վարձակալական հողվածներից ստացվող շահույթը՝ ընդամենը			32,433	61

Ղարաբաղի եկամուտների հաշվառման ընթացքում Պ. Ի. Մոգիլսկին և Պ. Ն. Երմոլովը բախվել էին հետևյալ իրողությանը. բնակչության թվի, հարկերի մասին նրանք տեղեկություններ ստացել են հիմնականում մահալների բեկերի, գյուղերի տարեցների բանավոր պատմություններից, ուստի, բնակչության թիվը միտումնավոր կերպով նվազեցվել կամ ավելացվել է: Պաշտոնյաները մատնանշում էին, որ մաաֆները, խանի ծառաները և վարսավիրները հարկեր չէին վճարում և առաջարկում էին այդ իրավունքը հավաստող փաստաթղթեր ներկայացնել՝ հակառակ դեպքում պետք է ենթարկվեին հարկատվության<sup>501</sup>: Ռուս աստիճանավորների դիտարկման արդյունքում Ղարաբաղի գավառից սպասվող եկամուտները հետևյալ քանակությունն էին կազմում<sup>502</sup>:

<sup>501</sup> Присоединение Восточной Армении к России, т. II, с. 120.

<sup>502</sup> Նույն տեղում, էջ 122-123:

<b>Խանական վարչակարգի վերացումից հետո Ղարաբաղի գավառից աննկատվող եկամուտների ցուցակ</b>									
	ընտանիքներ		վայտի պարկերի լիցիտ	չերվոնեց		խանական արծաթ		ռուսական արծաթ	
	հարկտու	ոչ հարկտու		8000 չերվ. հարկ	օթալ-խալիցի	ռուբլի	կրպեն	ռուբլի	կրպեն
<b>1</b>	<b>2</b>	<b>3</b>	<b>4</b>	<b>5</b>	<b>6</b>	<b>7</b>	<b>8</b>	<b>9</b>	<b>10</b>
Շուշի	192	1,270	260	560	230	1,204	-	191	14
Խանական ընտանիքին պատկ.	914	1,350	234	564	4	487	90	77	48
Գյուլ-Մամեդ-բեկ	133	115	105	147	35	988	25	156	89
Սիսիանի մահալ	87	116	20	29	7	5,221	98	828	97
Դեմուրչիասանլի մահալ	335	132	220	388,5	114,5	5,113	80	811	73
Ուղուրլու-բեկի կալվ.	304	116	-	104	-	107	10	17	0,5
Քյուփարեի մահալ	34	22	-	22	3	1,950	64	309	66
Մաղաթովի կալվածք	1,245	-	-	338	-	-	-	-	-
Իսմայիլ-բեկի կալվածք	95	97	-	35	-	-	-	-	-
Հաջի-Աղալար-բեկի կալվածք	155	427	-	50	-	-	-	-	-
Սեֆեր-Ալիբեկի կալվ.	183	50	-	-	-	-	-	-	-
Բարգուշատի կալվ.	-	146	-	5	-	-	-	-	80
Բաղաթյուրտի մահալ	-	243	-	-	-	-	-	-	-
Խանլարաղայի կալվ.	378	370	465	650	-	-	-	104	-

Ռուստամ-բե- կի կալվ.	218	219	-	50	-	-	-	-	-
Մամեդ-Ա- լի-բեկի կա- ռավարման տակ գտնվող Քերթլիհի մահալի մի մասը	248	284	194	276	90	3,055	83	485	2
Տաթևի մա- հալ	508	190	589	737,5	221	46,531	70	7,385	99
Ասադ-բեկի կալվածք	237	153	-	45	20	984	-	156	21
Միրզա-Ալի -բեկի կառա- վարման տակ գտնվող Քե- բերլիհի մա- հալի մի մասը	164	214	49	110	25	666	97	105	91
Ջիվանշիրի մահալ	370	326	250	443	129	5,017	83	796	50
Թալիշի մա- հալ	143	102	100	85	29	3,546	40	1,472	98
Խաչենի մա- հալ	99	131	176	175	47	3,506	78	556	65,5
Քոլանցիներ կոչվող մահալ	203	259	140	198	45	1,429	-	226	91
Ջրաբերդի մահալ	127	74	120	130	55	2,205	-	350	5
Խուրդափա- րա-Դիզակ մահալ	129	89	241	197,5	56,5	10,351	74	1,642	95,5
Սիսիանի մա- հալ	55	832	20	25	15	1,470	50	233	45
Դիզակ-Ջի- վանշիրի մա- հալ	285	332	202	253	73	2,852	31	452	78,5
Օթուզ-իքի մահալ	381	241	274	487	102	3,571	85	566	99,5
Իգիրմիդորդի մահալ	85	70	135	133	38	2,711	75	430	46

Ղարաչորլուի մահալ	294	244	400	372	128	8,712	80	1,382	73,5
Վարանդայի մահալ	297	328	230	369,5	40,5	17,429	82	2,766	72
Դիզակի մահալ	110	178	143	187	27	6,360	2	982	57
Ջաֆար-Ղուլի-աղայի կավածք	792	430	392	766,5	-	25,237	12	3,922	56
Մեհտի-Ղուլի-խանին պատկանող կավածքի բաժին	231	315	28	43	5	21,533	30	3,418	4,5
Աջանան-թյուրքի մահալ	42	25	-	30	11,5	3,344	49	530	93
<b>ԸՆդամներ</b>	<b>9073</b>	<b>9490</b>	<b>4987</b>	<b>7955.5</b>	<b>1551</b>	<b>185592</b>	<b>88</b>	<b>30364</b>	<b>10.5</b>

Պ. Մոգիլևսկու և Պ. Երմոլովի վերոնշյալ դիտարկումները տեղ են գտել «Ղարաբաղի գավառի նկարագրությունը» մեծարժեք աշխատության մեջ<sup>503</sup>: Իր աղբյուրագիտական մեծ նշանակությամբ հանդերձ, այն ունի նաև թերի կողմեր.

- ա) Ցուցակներում ամփոփված են միայն հարկատու բնակչության հարկերը, սակայն պարտավորությունների մասին բավարար տեղեկություններ չկան:
- բ) Լրիվ չափազանցված է բեկերին պատկանող գյուղերի և քոչատեղիների թիվը: Դա բացատրվում է նրանով, որ Պ. Երմոլովը և Պ. Մոգիլևսկին տեղանքին, լեզվին, սովորույթներին, հողատիրության ձևերին ծանոթ չլինելու պատճառով մեծապես օգտվում էին բեկերի ցուցմունքներից: Օգտվելով առիթից՝ բեկերն իրենց էին վերագրում երբեք իրենց չպատկանող գյուղերը: Ցարական աստիճանավորներն արդարացիորեն գտնում էին, որ անհրաժեշտ է կատարել Ղարաբաղի գավառի նոր դիտարկում և նոր բաժանում՝ մահալների: Առաջարկը հիմնավորում էին հետևյալ պատճառներով. Ղարաբաղն անկանոն

<sup>503</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 241, վավ. 206:

բաժանված էր մահալների, որոշ մահալներ երբեմն անվանական բնույթ էին կրում, քանի որ դրանց բնակչությունը ցրված էր այլ տարածքներում<sup>504</sup>:

Վերը ներկայացված խանական շրջանի հարկային ժառանգությունը, ցարական պաշտոնյաների դիտարկումների արդյունքում ակնկալվող եկամուտներն իրենց անհամակարգվածությամբ չէին կարող բավարարել ռուսական կառավարությանը, որովհետև մահալային նայիրների և բեկերի միջոցով շարունակվող հարկահավաքության դեպքում հարկերը ռուսական գանձարան էին հոսում նվազագույն չափով: Չնայած նոր հարկային համակարգի անհրաժեշտությունն արտահայտված էր իր ամբողջ սրությամբ, այնուամենայնիվ, այս ուղղությամբ կատարվող քայլերը դանդաղ էին. Ռուսաստանը դեռևս ծանոթանում էր իր անդրկովկասյան տիրույթներին:

Ռուսաստանի տնտեսական քաղաքականությունը Անդրկովկասում ուժեղացավ ռուս-պարսկական 1826-1828 թթ. պատերազմի նախօրեին, սակայն վերահաս պատերազմը խանգարեց այդ քաղաքականության իրագործմանը:

1828 թ. փետրվարին Թուրքմենչայի պայմանագրի կնքումից հետո որոշվեց հանձնախումբ ուղարկել Անդրկովկաս՝ ֆինանսական հաշվառում անցկացնելու: 1832 թ. հանձնախումբն ավարտեց ֆինանսական հաշվառումը, և եթե Վրաստանում անցկացվեց հարկահավաքման դրամական ձևը, ապա Բաքվի, Ղուբայի, Ղարաբաղի, Շաքիի և Շիրվանի գավառներում մնաց հարկահավաքման նույն համակարգը: Ընդ որում, նախատեսվում էր, այսպես կոչված, «մահմեդական պրովինցիաներում» գործել հետզհետե, նորը միանգամից չմտցնել<sup>505</sup>:

1834 թ. հոկտեմբերի 23-ին ցարական աստիճանավոր Մ. Կալինովսկին Անդրկովկասի ուղղակի հարկերի մասին Ե. Կանկրինին ուղղված գրության մեջ նշում էր, որ եկամուտների մեծացման համար անհրաժեշտ էր հաստատել միասնական կարգ: Գրության

<sup>504</sup> Присоединение Восточной Армении к России, т. II, с. 120.

<sup>505</sup> Тунян В., Административно-экономическая политика самодержавия России в Закавказье 1-й пол. XIX в., с. 151.

մեջ նա անդրադառնում էր նաև Ղարաբաղի գավառին: Գավառի 7592 ծովա պետական գյուղացիները վճարում էին 33278 ռուբ. 50 կոպ.՝ արծաթով, այսինքն՝ 4 ռուբ. 38 կոպ. յուրաքանչյուր ծխից, իսկ 6754 բեկական ծխերից ստացվում էր 6754 ռուբ., այսինքն՝ մեկ ռուբլի արծաթով՝ յուրաքանչյուր ծխից: Ընդհանուր գումարը կազմում է 40032 ռուբ. 50 կոպ.՝ արծաթով: Նախատեսվում էր կարգավորել պետական և բեկական գյուղացիներից գանձվող հարկերը, ինչը պետական գանձարանին կտար ևս 51956 ռուբ. արծաթով, ինչպես նաև կնվազեցներ պետական գյուղացիների հարկի չափը և կնեճացներ բեկական գյուղացիների հարկի չափը: Առաջարկվող բարեփոխման համաձայն՝ դրամական հարկահավաքությունը պետք է իրականացներ պարետը, ընդ որում, եթե Շիրվանում այն գանձվում էր ըստ գյուղերի, Թալիշում՝ ըստ մահալների, ապա Ղարաբաղում՝ ծխերից<sup>506</sup>:

1837 թ. հոկտեմբերի 21-ին Կովկասի կառավարչապետ Գ. Ռոզենը Ռուսաստանի պաշտպանության նախարարին ներկայացրեց 1836 թ. Անդրկովկասի պրովինցիաների եկամուտների և ծախսերի մասին հաշվետվությունը: Այն ցույց է տալիս, որ Մ. Կալինովսկու առաջարկած բարեփոխումը չէր իրագործվել. Ղարաբաղի գավառի եկամուտները կազմում էին 73920 ռուբ.՝ արծաթով, իսկ ծախսերը՝ 58170 ռուբ.՝ արծաթով: Արդյունքում ճշգրտված եկամուտները կազմում էին 45481 ռուբ.՝ արծաթով<sup>507</sup>:

Ինչպես ամբողջ Անդրկովկասում, այնպես էլ Ղարաբաղում հարկերը ծանրանում են 19-րդ դարի 40-ական թթ. կեսերին՝ 1846 թ. դեկտեմբերի 6-ի ցարական հրովարտակով և 1847 թ. ապրիլի 20-ի կանոնադրությամբ: Ըստ կանոնադրության՝ 15 տարին լրացած արական սեռի գյուղացուն հողատերը պարտավոր էր տալ 5 դեսյատինից ոչ պակաս հողակտոր, իսկ վերջինս պետք է հողատիրոջը բնատուրք վճարեր հողի ամբողջ բերքի 1/10-ի չափով: Հողատիրոջից բանող անասուններ, գործիքներ և սերմացու ստանալու դեպքում այն կազմում էր բերքի 1/5 մասը: Այգիների,

<sup>506</sup> Тунян В., Административно-экономическая политика самодержавия России в Закавказье 1-й пол. XIX в., с. 155.

<sup>507</sup> Նույն տեղում, էջ 156:

բանջարանոցների, բրնձի ցանքերի և շերամապահության համար մալուջահաթը հավասար էր բերքի 1/3-ին: Գյուղացիները պարտավոր էին այն հասցնել կալվածատիրոջ տուն մինչև 50 վերստ հեռավորության վրա<sup>508</sup>:

Վերոնշյալ միջոցառումներին զուգահեռ՝ նոր հարկային համակարգ ստեղծելու ուղղությամբ իրական քայլեր սկսեցին գործադրվել 19-րդ դարի 40-ական թթ. երկրորդ կեսին, երբ ցարական կառավարությունը, ավարտելով Վրացա-Իմերեթական նահանգի հարկային համակարգի բարեկարգումը, ձեռնամուխ եղավ նման բարեփոխման նաև Կասպիական մարզում: Այդ նպատակով Ղարաբաղ գործուղված ցարական պաշտոնյան՝ Յու. Գագենեյստերը, եկել էր այն եզրակացության, որ Ղարաբաղի բնակչությունը 1842-1843 թվականների կամերալ վիճակագրական փաստաթղթերում 4000 ընտանիքով նշվածից ավելի էր, ուստի նա որոշում է կայացնում՝ ընդհանուր մարդահամար սկսելու: Անդրկովկասի Կառավարման Գլխավոր խորհրդի կարգադրությամբ՝ այն սկսում են հենց Շուշիի գավառից: Հանձնարարվում է բեկերին և գեղջավազներին՝ կազմելու ծխերի ցուցակները: Կեղծումները կանխելու համար յուրաքանչյուր ծխի չգրանցման դեպքում գանձվելու էր 50 ռուբլի տուգանք, որի կեսը հանձնվելու էր գանձարան, մյուս կեսն էլ՝ բացթողման մասին հայտնաձև անձին<sup>509</sup>:

Ինչպես Ղարաբաղում, այնպես էլ Կասպիական մարզի բոլոր շրջաններում բնակչությունը վախենալով, որ մարդահամարի նպատակն է ռեկրուտային նոր զորակոչը և հարկերի բարձրացումը, փախչում է անտառներ, անգամ որոշ գյուղեր լրիվությամբ տեղահանվում են՝ ապավինելով անտառներին: Ի վերջո, 1849 թ. հուլիսին կամերալ վիճակագրությունն ավարտվեց, և արդեն հնարավորություն կար անցնելու նոր հարկային համակարգի ստեղծմանը: Գագենեյստերի առաջարկությամբ՝ Ղուբայի, Դերբենդի և Բաքվի գավառների հարկերը նույնը թողնվեցին: Ինչ վերաբերում էր Շուշիի գավառին, ապա, Գագենեյստերի կարծիքով, նրա հարուստ բնական պայմանները չէին համապատասխանում գանձվող

<sup>508</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. 5, էջ 221:

<sup>509</sup> СМИЭГКЗК, т. I, с 105.



տուրքերին: Հետևաբար նա առաջարկում էր, չնվազեցնելով կալվածատիրական գյուղացիների հարկերը, պետական գյուղացիների հարկաչափը համապատասխանաբար մեծացնել<sup>510</sup>:

Գազեմեյստերի նախագծին առաջինը դեմ հանդես եկավ Շամախիի ռազմական նահանգապետ բարոն Վրանգելը, որը նշել էր, որ նախագծի հեղինակի կատարած դիտարկումը ճշգրիտ չէ, իսկ հաճախ էլ կատարվել է մոտավորապես: Նա ընդդիմանում է նաև Գազեմեյստերի այն կարծիքին, թե պետք է հարկահանությունն իրականացնել ոչ թե ըստ ծխերի, այլ ըստ ընտանիքների անդամների թվի: Վրանգելն առաջարկում էր հարկահանությունն իրականացնել Ռուսաստանում ընդունված ձևով՝ ըստ հողի որակի և չափի: Անդրկովկասի կառավարման գլխավոր խորհուրդն ընդունեց Վրանգելի դիտողությունները և 1850 թ. ստեղծեց նոր հանձնաժողովներ՝ առանձին գավառների համար: Հանձնաժողովները ղեկավարում էր դարձյալ Գազեմեյստերը: Հանձնաժողովների աշխատանքի արդյունքում կազմվում են նոր ցուցակներ. եթե մինչև նոր հարկային համակարգի մուտքը Շուշիի գավառը վճարում էր 69446 ռուբլի՝ արծաթով հարկ, ապա նոր հարկային համակարգով հաստատվեց հարկաչափ՝ 125454 ռուբլի՝ արծաթով: Տվյալ դեպքում տարբերությունը կազմում էր 56008 ռուբլի: Նոր հարկացուցակները կառավարության կողմից հաստատվեցին 1851 թ. նոյեմբերի 3-ին<sup>511</sup>:

Նոր հարկային համակարգը սկսեց գործել 1858 թ. նոյեմբերից: Բնակչությանը նոր հարկային համակարգի մասին իրազեկումը կատարվեց հետևյալ կերպ. յուրաքանչյուր գավառի գավառապետ և պետական ունեցվածքների վարչության մեկ պաշտոնյա հարկաչափի մասին հաստատված թղթերով և Կովկասի փոխարքա Մ. Վորոնցովի տված հայտարարությամբ ներկայանում էին գավառները՝ ծանոթացնելու նոր կարգին: Շուշիի գավառի բնակչությանն ուղղված ուղերձում Վորոնցովը գրել էր նոր հարկային համակարգի անցման առավելությունների մասին՝ ընդգծելով այն հանգամանքը, որ չնայած Շուշիի գավառի գյուղատնտեսության և

<sup>510</sup> Նոյն տեղում, էջ 108:

<sup>511</sup> Նոյն տեղում, էջ 114:

արդյունաբերության ծաղկուն վիճակին, նրանք վճարում են նույն-քան հարկ, որքան՝ բնական պայմաններով գավառին զիջող Երևանի և Ելիզավետպոլի բնակչությունը<sup>512</sup>: Կառավարության կնիքով հաստատված հարկաչափը բաժանվելու էր առանձին գյուղերի և քոչատեղիների: Շուշիի գավառի բնակիչները պետք է գեղջավազների միջոցով տարեկան երկու անգամ հարկեր վճարեին, ընդ որում, հարկաչափի մեկ երրորդը պետք է վճարեին մինչև մարտի 15-ը, իսկ երկու երրորդը՝ մինչև դեկտեմբերի 15-ը: Իր ուղերձում Վորոնցովը նշել էր նաև, որ մետաքսագործության զարգացման համար մետաքսից գանձվող «միզանի» հարկը վերացվում է<sup>513</sup>: Բնակչությանը թույլատրվում էր անվարձ օգտվելու ամառային և ձմեռային արոտավայրերից. փաստորեն, վերացվում էր «չոբաշին»: Վերացվում էր նաև «մալուջահաթը»՝ հացահատիկային տարբեր մշակաբույսերով վճարվող հարկը՝ հնարավորություն տալով յուրաքանչյուրին սեփական հայեցողությամբ տնօրինելու սեփական բերքը<sup>514</sup>:

Փաստորեն, նոր հարկային համակարգը էությամբ բավակա-նին ծանր էր, սակայն ուներ նաև որոշակի դրական կողմեր, որոնք միտված էին տնտեսության և շուկայական հարաբերությունների զարգացմանը: Այսինքն՝ նոր համակարգը, չնայած մի կողմից նախատեսում էր կրկնապատիկ քանակությամբ հարկ, մյուս կողմից, բաց էր անում այն վճարելու ուղիները՝ վերացնելով վերոնշյալ ծանր հարկերը: Ըստ էության՝ ցարիզը կրկին հավատարիմ էր իր ավանդական գաղութային քաղաքականությանը՝ իր տիրապետության տակ գտնվող հպատակ գաղութների տնտեսական հնարավորությունները մեծացնելու ճանապարհով ապահովել առավելազույն շահույթ:

Բացի վերոնշյալ հարկերից և տուրքերից, որոնք վճարվում էին կալվածատիրոջ կամ ռուսական արքունական գանձարանի

<sup>512</sup> Նույն տեղում, էջ 118: Բաղդասարյան Ն., Ցարական Ռուսաստանի հարկային քաղաքականությունը Ղարաբաղում 19-րդ դարի 20-50-ական թթ., միջազգային գիտաժողովի նյութեր՝ նվիրված ԱրՊՀ հիմնադրման 40-ամյակին, պրակ 1, Ստեփանակերտ, 2009, էջ 233-234:

<sup>513</sup> СМИЭ6ГКЗК, т. I, с. 119.

<sup>514</sup> Նույն տեղում, էջ 120:

օգտին, Ղարաբաղի բնակչությունը աթոռահաս տուրքեր էր վճարում նաև եկեղեցու օգտին: Վճարումները նվիրատվական բնույթ ունեին, բայց կան արխիվային վավերագրեր, որոնք ցույց են տալիս դրանց պարտադիր բնույթը, ինչն էլ իր հերթին իր պատճառներն ուներ: Ըստ էության, Արցախի թեմի եկեղեցիները վերանորոգելու համար անհրաժեշտ էին սեփական միջոցներ, տուրքերից ստացվող գումարները նպատակաուղղվում էին նաև հողափրկչական աշխատանքներին. այդ օրինակներով հատկապես հարուստ էին Բաղդասար Հասան-Ջալալյանի մետրոպոլիտության տարիները: Արխիվային վավերագրերը տեղեկություններ են հաղորդում այն մասին, որ Բաղդասար արքեպիսկոպոսը Հաթերք գյուղի Հովհաննես քահանայից պահանջում է աթոռին հասանելիք բոլոր տուրքերն անձամբ հասցնել Գանձասարի վանքը<sup>515</sup>: 1847 թ. թվագրված մի վավերագիր էլ պատմում է հետևյալը. արքեպիսկոպոսը հանձնարարում է Հաթերքի տուրքերը գանձել կրկնապատիկ չափով, դրան ընդդիմացողներից վերցնել հաստատված չափով, իսկ կտրականապես հրաժարվողներին էլ սպառնում էր կառավարության միջոցով բռնի հավաքել<sup>516</sup>:

Արխիվային վավերագրերի տեղեկություններն Արցախի թեմի եկամուտների աղբյուրների, տուրքերի տեսակների մասին բավականին հարուստ են: Այդ տեղեկությունների համաձայն՝ թեմի օգտին գանձվում էին հետևյալ կամավոր տուրքերը՝ «սգահամբոյր, տէրունի, գանձուց, ժամուց, ի դիազարդից, ի ժողովարարութանց, արդինք կտակի, խաչահամբոյր, նուէրք ի ստացողաց զմետրիքական»<sup>517</sup>, իսկ պարտադիր բնույթ կազմող տուրքերն էին՝ «աթոռահաս, հոգեբաժին, գանձանակադրամ յօգուտ վանիցն Գանձասարու, սրբադրամ արդինք»<sup>518</sup>:

Այսպիսով, մեր կողմից ուսումնասիրվող ժամանակաշրջանում Ղարաբաղի գավառի հարկային համակարգի

<sup>515</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 240, վավ. 58, թ. 1, վավ. 63, թ. 1:

<sup>516</sup> Նույն տեղում, թղթ. 240, վավ. 66, թ. 1:

<sup>517</sup> Վավերագրեր Հայ կեղեցու պատմութան, գիրք Թ, էջ 77-80:

<sup>518</sup> Նույն տեղում:

ուսումնասիրությունը թույլ է տալիս որոշակի եզրահանգումներ կատարելու: Ըստ էության, 1813-1822 թթ. ռուսական կայսրությունը ոչ մի փոփոխություն չմտցրեց ինչպես անդրկովկասյան իր բոլոր տիրույթների, այնպես էլ Ղարաբաղի գավառի հարկային համակարգում, 1823 թվականից՝ սկսած նախկինում խանական ընտանիքի մերձավորների օգտին գանձվող հարկերը համարյա նույնությամբ հանձնվեցին ռուսական արքունական գանձարանին: 1828-1832 թթ. ցարական կառավարության կողմից դիտարկման ուղարկված հանձնախմբերի աշխատանքների արդյունքում որոշվեց Ղարաբաղում թողնել հարկահավաքության նախկին ձևը: 19-րդ դարի 40-ական թթ. նոր հարկային համակարգի ստեղծման ուղղությամբ սկսած աշխատանքներն ավարտվում են միայն 1858 թ., երբ ցարական կառավարության կողմից հաստատվում է Ղարաբաղի համար սահմանված նոր, առավել ծանր հարկաչափը:

Այսպիսով, խնդրո առարկա ժամանակաշրջանի տնտեսական կյանքի ուսումնասիրությունը փաստում է, որ այն կրել է քաղաքական կյանքի վայրիվերումների ազդեցությունը: Չնայած ցարիզմի կողմից տարվող գաղութային քաղաքականությանը, այնուամենայնիվ, երկրամասը բռնել էր տնտեսական վերընձյուղման բնականոն ուղին:

## Գ) ԴԱՍԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

19-րդ դարի սկզբին ինչպես ամբողջ Արևելյան Հայաստանում, այդ թվում՝ Ղարաբաղում տիրապետող հասարակական տնտեսական հասարակարգը շարունակում էր մնալ ավատատիրությունը: Հիերարխիկ սանդուղքի բարձրագույն աստիճանին կանգնած խանը, որին հաջորդում էին մելիքները, բեկերը, աղաները, հոգևորականության բարձրագույն խավը: Հատկանշական է, որ մինչև 1822 թ. Ղարաբաղի խանության վերացումը՝ դասային հարաբերությունները փոփոխություններ չեն կրում, իսկ ռուսական վարչակարգի հաստատումից հետո փոխվում են մասամբ:

Ներկայացվող պատմաշրջանում դասային հարաբերությունները Ղարաբաղում նշանավորվել են հետևյալ առանձնահատկությամբ. նախորդ դարի կեսերին ձևավորված խանական վարչակարգն իր հետ բերել էր ինչպես հայ իրականությանը խորթ կառավարման համակարգ, այնպես էլ օտարահունչ պաշտոնանունների մի շարք: Չնայած իրավունքների սահմանափակմանը արքայազնային ընկերությունները դժվարությամբ պահպանում էին իրենց իրավունքները, հանդես գալով իրենց տիրապետության տակ գտնվող գյուղացիության պաշտպանի դերում:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Ղարաբաղում գոյություն ունեին հողատիրության հետևյալ ձևերը՝ պետական (արքունական), մուլքադարական և թիուլդարական: «Մուլքը» (արաբերենից թարգմանվում է՝ «տիրույթ», «կալվածք», «անշարժ գույք»)՝<sup>519</sup> հողատիրության այն ձևն էր, երբ որևէ ծառայության դիմաց, խանը որպես ժառանգական սեփականություն տիրույթներ էր շնորհում իր հպատակներին: Մուլքադարը տնօրինում էր կալվածքի եկամուտները՝ որոշակի հարկ վճարելով խանական գանձարանին: Գոյություն ուներ նաև հողատիրության «մուլք-խալիսե» կոչվող ձևը, երբ հողատերը խանից իրավունք էր ստանում ամբողջությամբ տնօրինել եկամուտը՝ ոչինչ չվճարելով գանձարանին: Հողային հարաբերությունների իշխող ձև էր նաև «թիու-

<sup>519</sup> Петрушевский И., նշվ. աշխ., էջ 222:

լը», երբ հողը և գյուղացիները պատկանում էին պետությանը, իսկ նրան ժամանակավոր, երբեմն նաև ժառանգաբար տիրող բեկերը ստանում էին նրա եկամուտները<sup>520</sup>: Հողատիրության ձևերից էր նաև «վակֆային»՝ վանքապատկան հողատիրությունը<sup>521</sup>: 1846 թ. դեկտեմբերի 6-ի հրովարտակով «մուլքը» և «թիուլը» ճանաչվեցին որպես ժառանգական սեփականություն: Այսպիսով, հողատիրական հիերարխիայի հիմքի վրա ձևավորվել էր Ղարաբաղի հիերարխիկ դասային կառուցվածքը:

Ավատատիրական սանդուղքի բարձրագույն աստիճանը ինչպես խանական, այնպես էլ հետխանական շրջանում զբաղեցնում էին **բեկերը**, որոնց ըստ դասային հարաբերությունների, կարելի է կարգել երեք հիմնական սկզբունքով.

1. Տոհմիկ բեկեր, որոնք իրենց պաշտոններն ստացել էին պարսկական շահերից և այդ առիթով ունեին շնորհագրեր: Նրանք այնքան էլ մեծ թիվ չէին կազմում<sup>522</sup>:

2. Բեկեր, որոնք իրենց քոչատեղիները, գյուղերը, մահալներն ստացել էին որևէ արժանիքի համար՝ պարսկական շահի շնորհագրով: Այդ բեկերը հարգված էին ժողովրդի կողմից և հաճախ չէին խոնարհվում խաներին<sup>523</sup>:

3. Բեկեր, որոնք իրենց շնորհումներն ստացել էին խանից՝ առանց որևէ շնորհագրի: Իրենց իրավունքները նրանք պահպանում էին այնքանով, որքանով ծառայում էին խանին<sup>524</sup>: Այսպես կոչված, խանական բեկերը, ինչպես գրում է Դ. Անանունը. «Դրանք օտար մարդիկ էին, որոնք քճնութեամբ հասել էին բարձր աստիճանի և իշխանաւոր կարգուել ժողովրդի գլխին: Գիւղերի կառավարութիւնից գոյացած հարստութիւնն էր նրանց միակ առաւելութիւնը...»<sup>525</sup>:

<sup>520</sup> Колониальная политика российского царизма в Азербайджане в 20-60-х гг. XIX в., ч. II, Феодальные отношения и колониальный режим 1843-1868, М.-Л., 1937, с. 52.

<sup>521</sup> Նույն տեղում, էջ 370:

<sup>522</sup> Сегаль Л., նշվ. աշխ., էջ 58:

<sup>523</sup> Անանուն Դ., նշվ. աշխ., էջ 53:

<sup>524</sup> Пахомов Е., О сословно-поземельном вопросе в Азербайджане, Баку, 1926, с. 3.

<sup>525</sup> Անանուն Դ., նշվ. աշխ., էջ 54:

19-րդ դարի 30-ական թթ. տվյալներով՝ Ղարաբաղի ազնվականության ընդհանուր թիվը բերված է մոտ 1190 ընտանիք<sup>526</sup>, իսկ 1840-ական թթ. վերաբերող մեկ այլ աղբյուրում հայ բեկերի թիվը 600 էր, մահմեդական բեկերինը՝ 2000 շունչ արական սեռի<sup>527</sup>:

«Ակտերի» էջերում տեղ գտած մի փաստաթղթում խոսվում է հատկապես թաթար բեկերի դաժանությունների մասին. «Թաթար բեկերը դաժանորեն են վերաբերվում գյուղացիներին՝ հատկապես հայերին, որոնց պատժում էին ասիական բոլոր վայրենություններով, երբեմն նույնիսկ ծեծում էին մահվան աստիճան, զրկում գույքից, վերցնում չսահմանված տուգանքներ: Այդ չարագործություններով առանձնանում էր Խանլար աղան՝ հայտնի իր վարքով, Գոհեր աղան և ուրիշներ»<sup>528</sup>:

Ինչպիսին էլ որ լիներ բեկերի ծագումը, Անդրկովկասը՝ Ռուսաստանին միանալուց հետո ռուսական կառավարությունը ամրագրեց այն հողերը, որոնց նրանք տիրում էին: Ճորտատիրության բացակայության պայմաններում գյուղացիներն ազատ էին մի բեկի տիրապետությունից մյուսին անցնելու գործում, սակայն հետագայում օգտվելով իրենց դիրքից, հարստությունից և խանի ողորմածությունից բեկերը գյուղացիությանը հասցրեցին համարյա թե ճորտության վիճակի<sup>529</sup>:

Սեգալը իր ուղեգրություններում հետաքրքրական նյութ է հաղորդում բեկերի նիստուկացի մասին: Նրա խոսքերով Ղարաբաղի բեկերի մեծ մասը ապրում է իրենց կալվածքներում: Սակայն գյուղատնտեսությամբ նրանք քիչ են զբաղվում, եվրոպական գյուղատնտեսության նվաճումների նկատմամբ մեծ համակրանք չեն տաժում, զբաղվում են միայն գյուղացիներից հարկեր հավաքելու գործով<sup>530</sup>:

**Աղա:** Այս կոչումը կրելու իրավասու էին խանական ընտանիքի երկսեռ բոլոր անդամները: Նրանք իրենց իրավունքներում

<sup>526</sup> Обзорение российских владений за Кавказом, т. III, с. 268.

<sup>527</sup> Колониальная политика российского царизма в Азербайджане в 20-60-х гг. XIX в., ч. II, с. 19-20.

<sup>528</sup> АКАК, т. VII, док. 411, с. 461.

<sup>529</sup> Сегаль Л., նշվ. աշխ., էջ 59:

<sup>530</sup> Նույն տեղում, էջ 61-62:

հավասար էին բեկերին<sup>531</sup>: Աղա էր կոչվում Մեհտի Ղուլի խանի քույր Գոհերը<sup>532</sup>: «Ակտեր»-ի էջերում տեղ գտած մի փաստաթղթում նշվում է. «Խանական ընտանիքի աղաներն իրավասու էին Նրանց (հպատակների) նկատմամբ մահապատիժ սահմանելու»<sup>533</sup>:

**Մելիքներ:** Մելիքներն ըստ դասային աստիճանի՝ 3 կարգ էին ներկայացնում՝ ա) բարձր կարգ, որոնց խմբին էին պատկանում երբեմնի հզոր հայ մելիքները: Նրանք իրենց մելիքական իրավունքներն ստացել էին Նադիր շահի ժամանակաշրջանից, իսկ հետագայում, քաղաքական շրջադարձային իրադարձությունների հետևանքով ընկնելով խանական տիրապետության տակ, զրկվել էին նախկին անկախությունից և իրավունքներով հավասարվել բեկերին ու աղաներին: Երկրորդ կարգը ներկայացնում էին այն մելիքները, ովքեր մելիքական աստիճանը ստացել էին շնորհիվ մատուցած ծառայության: Երրորդ կարգը կազմում էր գյուղական ավագանին<sup>534</sup>: 19-20-րդ դդ. Ղարաբաղի և Զանգեզուրի որոշ գյուղերում ավագանիներին անվանում էին «ախսախկալ», այսինքն՝ տարեց, ավագ<sup>535</sup>: Այն գեղջավագները, որոնք հոգատարությամբ էին վերաբերվում իրենց գյուղացիներին, վերջիններիս կողմից ստանում էին «գյուղի հայրեր», «իշխան պահապաններ» մեծ կոչումները<sup>536</sup>:

**Մինբաշիներ:** Բառացիորեն «մինբաշի»՝ նշանակում է հազարապետ: Սա ռազմական աստիճան էր, որն իրավունք էր տալիս ղեկավարելու հազար հոգանոց զորաջոկատը պատերազմի ժամանակ, իսկ խաղաղ ժամանակաշրջանում՝ նույն թվով գյուղացիներ: Իրավունքներով նրանք հավասար էին վերոնշյալ դասերին<sup>537</sup>:

<sup>531</sup> АКАК, т. VIII, Тифлис, 1881, док. 354, с. 469-470.

<sup>532</sup> Присоединение Восточной Армении к России, т. II, с. 115.

<sup>533</sup> АКАК, т. VIII, док. 354, с. 470.

<sup>534</sup> Նույն տեղում:

<sup>535</sup> Акопян М., Сельская община в Восточной Армении во второй половине XIX-начале XX вв. (историко-этнографическое исследование), Ереван, 1988, с. 102.

<sup>536</sup> Առաքելյան Մ., Ասք Ղարաբաղի և Ննգի գյուղի մասին, Երևան, 2005, էջ 144:

<sup>537</sup> АКАК, т. VIII, док. 354, с. 470.



Բարձր դասային կարգում և բեկերին իրավահավասար էին **սուլթանները**<sup>538</sup>:

Ավատատիրական սանդուղքի **միջին** դասն էին կազմում մաաֆությունը և յուզբաշիները:

**Մաաֆներ:** Մաաֆներ էին անվանվում այն գյուղացիները, ովքեր ազատված էին բոլոր հարկերից և պարհակներից, սակայն խանին պարտական էին իրենց ռազմական ծառայությամբ, ձիերով և սպառազինությամբ<sup>539</sup>: Մաաֆության իրավունքը երբեմն գնվում էր խանից:

Խանության վերացումից հետո ռուսական կառավարության պաշտոնավարող շրջաններում 1830-ական թթ. վերջերին և 1840-ական թթ. սկզբներին տարակարծություններ էին առաջացել մաաֆության, որպես դասի, վերացման կամ պահպանման մասին: 1840 թ. մայիսի 10-ին Անդրկովկասի կառավարման կոմիտեն որոշեց. պահպանել այն մաաֆներին, որոնք իրենց կոչման համար կունենան օրինավոր ապացույցներ, ապագայում այդ կոչումը տալ նրանց, ովքեր իրենց մատուցած ծառայություններով արժանի կլինեն դրան, նրանց օգտագործել սահմանը պահելու, ոստիկանական և փոստառաքման նպատակներով<sup>540</sup> : 1844 թ. մարտի 8-ին ցարը վերահաստատեց Անդրկովկասի կառավարման կոմիտեի վերոնշյալ որոշումը<sup>541</sup>: Հայաստանի ազգային արխիվում գտնվող մի փաստաթղթի վկայությամբ՝ Ղարաբաղի գավառի մաաֆ ընտանիքների թիվը, 1840 թ. դրությամբ, հասնում էր 146-ի<sup>542</sup> :

**Յուզբաշի:** Այս դասը փոքրաթիվ էր: Յուզբաշին ռազմական աստիճան էր, որն իրավունք էր տալիս ղեկավարելու 100 զինվորի՝ պատերազմի և նույնաթիվ ընտանիքների՝ խաղաղ ժամանակաշրջանում<sup>543</sup>:

Ավատատիրական հիերարխիայի ստորին աստիճանը գյուղացիությունն էր: Գյուղացիությունը բաժանված էր խանական կամ

<sup>538</sup> Սուլթան տիտղոսն էին կրում քոչվոր ցեղերի որոշ ցեղապետներ:

<sup>539</sup> AKAK, т. IX, док. 217, с. 196-197.

<sup>540</sup> Նույն տեղում, էջ 194:

<sup>541</sup> Նույն տեղում:

<sup>542</sup> ՀԱԱ, ֆ. 56, ց. 4, գ. 1097ա:

<sup>543</sup> AKAK, т. VIII, док. 354, с. 469-470.

պետական և բեկական կամ կալվածատիրական հատվածերի: 1827 թ. վերաբերող մի տեղեկության համաձայն՝ պետական գյուղացիության թիվը հաշվվում էր 7592 ընտանիք, իսկ կալվածատիրականը՝ 6754<sup>544</sup>: 30-ական թթ. վերջերին վերաբերող մեկ այլ աղբյուրի համաձայն՝ Ղարաբաղի գավառի մասնավոր կալվածատիրական գյուղացիները կազմում էին 9855 ընտանիք<sup>545</sup>:

Ղարաբաղի հարկատու բնակչությունը բաժանված էր 2 խմբի՝ ռայաթներ և ռանչպարներ: Ռայաթի կարգավիճակում էին այն գյուղացիները, որոնք ունեին իրենց տնտեսությունը, իսկ ռանչպարները տնտեսություն չունեցող գյուղացիներն էին, այսինքն՝ բատրակները:

Ռայաթները և ռանչպարներն անձնապես ազատ էին, քանի որ Ղարաբաղում ճորտատիրական իրավունք գոյություն չունեի<sup>546</sup>, սակայն նրանք իրենց կարգավիճակով բավականին տարբերվում էին միմյանցից: Ղարաբաղի **ռայաթներին**<sup>547</sup> իրենց հողատիրական հարաբերությունների բնույթով Իվանենկոն դասակարգել է 4 խմբի<sup>548</sup>.

1. Ռայաթներ, որոնք ապրում էին սեփական հողերի վրա: Դրանք ազատ հողագործներն էին, որոնք իրենց հողի համար ոչինչ չէին վճարում՝ բացի պետական հարկերից՝ բերքի 1/10 չափով: 2. Ռայաթներ, որոնք ապրում էին կալվածատիրական հողերի վրա, որպես ժառանգական վարձակալներ: Բացի պետական հարկերից, նրանք հողատիրոջն էին տալիս բերքի 1/10 մասը, մետաքսի, փայտի 1/5 մասը: 3. Ռայաթներ, որոնք ապրում էին իրենց սեփական հողերի վրա, բայց այն գյուղերում, որոնք խանը, շնորհագրերով տվել էր հոգևոր անձանց և բեկերին: Վերջիններս,

<sup>544</sup> Ռշտունի Վ., Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության (1828-1917), մաս Ա (1828-1878), Երևան, 1960, էջ 75:

<sup>545</sup> Колониальная политика российского царизма в Азербайджане в 20-60-х гг. XIX в., ч. I, с. 110.

<sup>546</sup> Մարկոսյան Ս., Ինունիտետի իրավունքը Արարատյան երկրում XVII-XVIII դարերում, Երևան, 1975, էջ 155:

<sup>547</sup> Հարկատու, հողագործ, հիմնականում՝ նստակյաց բնակչության վրա տարածված ընդհանրական անվանում:

<sup>548</sup> Иваненко В., նշվ. աշխ., էջ 134:

որպես այդ գյուղերի պետական պաշտոնյաներ, աշխատավարձի փոխարեն ստանում էին պետական տուրքերի որոշ մասը<sup>549</sup>: 4. Քոչվոր մահմեդական ռայաթներ, որոնք Ղարաբաղի տարբեր շրջաններում ունեին իրենց ամառային և ձմեռային արոտավայրերը, յուրաքանչյուր գլուխ անասունից հարկ էին վճարում:

Ռայաթները կազմում էին Ղարաբաղի բնակչության ճնշող մեծամասնությունը: Նրանք, փաստորեն, ամրագրված են հողին և այլ հողեր անցնելու դեպքում խոչընդոտներ էին հարուցվում՝ ինչն իր հերթին նպաստում էր գյուղացիության ամրագրմանը<sup>550</sup>: Ղարաբաղում գյուղացիության այս կարգավիճակը գոյություն ուներ ինչպես խանական շրջանում, այնպես էլ ռուսական վարչակարգի հաստատումից հետո:

Առավել ծանր վիճակում էին **ռանչպարները**: Նրանք չունեին սեփական տնտեսություններ և որպես բատրակներ՝ աշխատում էին ունևոր խավի համար: Պարսկերեն «**ռեչբար**» բառը նշանակում է՝ լուծ կրող, աշխատող: Ի տարբերություն ռայաթների՝ ռանչպարները չէին հաշվվում գյուղական համայնքի թվաքանակի մեջ: Եթե ռայաթներն ամրագրված էին հողին, ապա ռանչպարները՝ իրենց տիրոջը<sup>551</sup>: Նրանք խանից ստանում էին որոշակի սեփականություն՝ հող, այգի, արտ և այլն, և պարտավորվում էին իրենց ստացած բերքի 1/4-ից մինչև 1/2-ը վճարել խանին կամ որևէ մասնավոր անձի: Ռանչպարները պետությանը ոչ մի հարկ չէին վճարում, նրանց փոխարեն պետական բոլոր տուրքերը վճարում էին նրանց տերերը<sup>552</sup>:

Լեոն փորձել է ապացուցել, որ Ղարաբաղում ձևավորված դասային սանդուղքի ամենաստորին աստիճանին կանգնած էր ճորտ գյուղացիությունը<sup>553</sup>: Իր տեսակետի ապացուցման համար Լեոն հենվում էր մի շարք արխիվային վավերագրերի վրա,

---

<sup>549</sup> Անանուն Դ., նշվ. աշխ., էջ 55:

<sup>550</sup> Сейранян П., նշվ. աշխ., էջ 48:

<sup>551</sup> Նույն տեղում, էջ 49:

<sup>552</sup> Иваненко В., նշվ. աշխ., էջ 135:

<sup>553</sup> Մարկոսյան Ա., Ագրարային հարաբերությունները Արարատյան երկրում XVII-XVIII դդ. և XIX դարի առաջին քառորդում, Երևան, 1959, էջ 156-175:

որոնցում Գանձասարի վանքապատկան գյուղացիները վանական գրագրության մեջ կոչվում էին «**ճորտ**»<sup>554</sup> և «**ստրուկք**»:

Արխիվային վավերագրերից մեկում կարդում ենք, որ 1841 թ. Բաղդասար մետրոպոլիտ Հասան Զալալյանը ծերանալով և չկամենալով, որ իր մահից հետո իր տիրապետության տակ գտնվող գյուղացիները. «...սեպհական **ստրուկք** նորին բարձր սրբազնութեանն բնակեալք ի մասին ընդ ստրկաց որովհետեւ յուրաքանչիւրոյն կառավարիչք ու տիարք եղեալ են միեւնոյն անձինք, այսինքն նախորտք նորա Հասան Զալալյանք և նա ինքն մնացեալ նոցա անտէր կամ ինքնագլուխ ... ցրուիլ յայկոյս և յայնկոյս ի տեղոջ բնակութեան իւրեանց, ուստի վնաս մեծ հասցէ վանականաց և վանիցն Գանձասարու...»<sup>555</sup>: Լեոն Գանձասարի վանքի անշարժ կայքի I հոդվածում մեջբերում է այն տվյալը, որ Գանձասար և Կճողուտ գյուղերում ապրում են «43 ընտանիք **ստրկաց**»<sup>556</sup>: Կամ գրում է, որ Բաղդասար մետրոպոլիտը Գանձակում գտել է 15 «**ճորտ**» ընտանիք և իր հետ տարել Գանձասար<sup>557</sup>:

Լեոն գրել է նաև, որ 1808 թ. երբ Բաղդասար վարդապետը Սարգիս կաթողիկոսի հանձնարարությամբ ուղևորվում է Ղարաբաղ, նա նպատակ ուներ «նորոգելոյ Գանձասարայ աթոռն և կառավարելոյ զծառայսն նոցա, նոյն վանքին վերապատկանեցեալ»<sup>558</sup>: Վերը հիշատակված ծառաները վանքի «ստրուկ» կամ «ճորտ» գյուղացիներն էին, որոնք ցրվել էին զանազան կողմեր: Դրանց մեծ նշանակության մասին կարելի է դատել Բաղդասար մետրոպոլիտի մի թղթից, որ նա գրել է Կովկասի փոխարքա իշխան Վորոնցովին 1849 թ. ապրիլի 23-ին: Նա գրել է. «Ի ժամանակս իշխանութեան վաղեմի արքայիցն պարսից վանքն Գանձասարու էր ի ծաղկեալ դրութեան և ճոխացեալ և բաւական արդեամբք ի սնունդ ինքնեան և կատողիկոսունք նորա հանդերձ միաբանութեամբք իւրեանց լեալ են ի բարօրութեան, վասն զի վանքն ունէր ինքեան

<sup>554</sup> Լեո, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց Թեմական հոգեւոր դպրոցի 1838-1913, էջ 144:

<sup>555</sup> Նոյն տեղում, էջ 107,

<sup>556</sup> Նոյն տեղում, էջ 144:

<sup>557</sup> Նոյն տեղում, էջ 107:

<sup>558</sup> Նոյն տեղում, էջ 106:

ի սեպհական **ստրուկ** զհարիւր յիսուն գերդաստանս՝ բնակեալս ի վերաց վանքական հողոյն ո՛չ ենթարկեալս պահանջման հիմք յօգուտ տէրութեան և ազատս յամենատեսակ հարկատուութեանց և ի հպատակութեանց, որք միայն վանիցն հատուցանեին զամենայն սահմանեալս հաստատութեամբ»<sup>559</sup>:

Ովքե՞ր էին այդ «ճորտերը» կամ «ստրուկները»: Իրականում նրանց կարգավիճակը 19-րդ դարի առաջին կեսին միանգամայն նոր բովանդակություն էր ստացել և անգամ հեռավոր չափով չէր համապատասխանում իր սովորական իմաստին: Եվ եթե հիմնվելու լինենք Վ. Իվանենկոյի՝ «ռանչպար» գյուղացիության վերաբերյալ տվյալների վրա, ապա Գանձասարի վանքի «ստրուկներին» կարելի էր համարել «ռանչպարներ»: Նրանք պատկանել են Գանձասարի վանքին, որը նրանց փոխարեն պետք է վճարեր պետական հարկերը: Հատկանշական է, որ Լեոյի պնդումները Ղարաբաղում ճորտության գոյության մասին քննադատության են արժանացել Ս. Մարկոսյանի կողմից, որը վերջնականապես հերքել է Լեոյի՝ Ղարաբաղում «ճորտության գոյության ապացույցները» և ռանչպարների որոշակիորեն իրավագուրկ դրությունը փորձել է բացատրել նրանց ինքնական տեղափոխման «տնտեսական սահմանափակմամբ»<sup>560</sup> (անշարժ ունեցվածքը թողնելու, բնակեցման հետ կապված ծախսերը տիրոջը հատուցելու պայմանը):

Այսպիսով, մեր կողմից քննության առնված ժամանակաշրջանում դասային հարաբերությունների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ՝ ա) Գյուլիստանի պայմանագրի կնքումից հետո Ղարաբաղում ավատատիրական սանդուղքի ամենաբարձր աստիճանը շարունակում էր զբաղեցնել խանական ընտանիքը, բ) դասային հարաբերություններում փոփոխություն է արձանագրվում միայն 1823 թ. ռուսական վարչակարգի մուտքից հետո, մասնավորապես, իրավագրվում է խանական ընտանիքը, սակայն ինքնակալության թողտվության պայմաններում բեկերը շարունակում էին մնալ, որպես տիրապետող դաս, որն անխնա շահագործման

<sup>559</sup> Նույն տեղում, էջ 107:

<sup>560</sup> Ալեքսանյան Ս., Արևելյան Հայաստանի նոր շրջանի ագրարային հարաբերությունների պատմագրությունը, Երևան, 1991, էջ 242:

Էր ենթարկում գյուղացիությանը, գ) պատմագրության մեջ տեղ գտած «ճորտության գոյության ապացույցները» քննադատության չեն դիմանում. փաստերն ապացուցում են, որ, այսպես կոչված, «ճորտ» կամ «ստրուկ» գյուղացիությունն իր կարգավիճակով լիովին համապատասխանում էր «ռանչպար» գյուղացիության իրավական դրությանը, դ) Ղարաբաղի 19-րդ դարի դասային հարաբերություններն առանձնանում են իրենց բարդությամբ, քանի որ ժառանգություն էին մեղիքական շրջանի, խանական և ռուսական տիրապետությունների, որոնցից յուրաքանչյուրն իր կնիքն է թողել նրա ձևավորման վրա:

## **Դ) ՂԱՐԱԲԱՂԻ ՌՈՒՍ ՎԵՐԱԲՆԱԿՆԵՐԸ (ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ)**

Անդրկովկասը միացնելուց հետո ցարական կառավարությունը ձեռնամուխ է լինում վերաբնակեցման քաղաքականությանը: Վերաբնակեցման համար ընտրվում է ռուս գյուղացիության մեջ առաջ եկած աղանդավորությունը<sup>561</sup>: Ցարական կառավարության այս քաղաքականությունը հետապնդում էր մի քանի նպատակ. առաջին՝ նոր գրաված վայրերն ամրացնել ռուսական տարրի միջոցով՝ ստեղծելով ազգային հենարան, երկրորդ՝ ռուս աղանդավորներին հեռացնել կենտրոնական Ռուսաստանի ուղղափառ գյուղացիության միջավայրից և երրորդ՝ տեղացիների համեմատ արտոնյալ պայմաններ ստեղծելով՝ վերաբնակ աղանդավորներին վերադարձնել ուղղափառության<sup>562</sup>: Այս վերջին պայմանի իրականացումն էլ պատճառ դարձավ, որպեսզի առավել բերրի տարածքները բնակեցվեին Ռուսաստանի տարբեր նահանգներից բերված գաղթականներով, ինչը կատարյալ պատուհաս դարձավ հայ հողագործ բնակչության համար: Վերաբնակեցման քաղաքականությունը դժգոհությունների տեղիք տվեց նաև Ղարաբաղում, որտեղ ազատ հողատարածություններ չկային, և ռուս աղանդավորներին հողով հնարավոր էր ապահովել տեղական գյուղաբնակչության հողաբաժինների հաշվին:

---

<sup>561</sup> Տե՛ս Բաղդասարյան Ն., Ղարաբաղի ռուս վերաբնակները 19-րդ դարի 30-40-ական թթ. (Ռուսաստանի ժողովրդագրական քաղաքականությունը), Մեսրոպ Մաշտոց Համալսարանի «Լրատու» (գիտական հոդվածների ժողովածու), թիվ 1/12, Երևան, 2012, էջ 50-54: Демографическая политика России: русские переселенцы в Карабахе во второй четверти XIX века, «Общественно-российская и национальная идентичность»: материалы международной научно-практической конференции, 19-20 апреля 2012 г., Центр информационных и образовательных технологий ПГЛУ, Пятигорск, 2012, с. 369-373.

<sup>562</sup> Հայթյան Ա., Հայաստանի ռուս վերաբնակները (1830-1920 թթ.), Երևան, 1989, էջ 33-34:

Հպատակ տիրոջներում գաղութային և վերաբնակեցման քաղաքականության անհրաժեշտությանն են անդրադարձել ռուս մի շարք հեղինակներ<sup>563</sup>: Նրանց թվում ռուս պատմաբան Ն. Շավրովը չի քողարկում իր տեսակետները վերաբնակեցման անհրաժեշտության հարցում: Նա գրել է. «...1800-1864 թթ. մենք մեկը մյուսի ետևից միացրել ենք պրովինցիաներ աղքատ բնակչությամբ և հարուստ բնական պայմաններով: Այդ նվաճված հարստությամբ, որը լրիվ արդարացիությամբ չի կարելի չհամարել Ռուսաստանի անբաժանելի սեփականությունը, մենք կարող ենք ազատորեն տնօրինել այնպես, ինչպես պահանջում են Ռուսաստանի պետական շահերը և այդպես ամրագրել այն այնպես, ինչպես Հյուսիսային Կովկասը՝ անհապաղ այստեղ վերաբնակեցնելով ռուսական տարրով»<sup>564</sup>:

Ցարական կառավարությունը Անդրկովկասի վերաբնակեցումը սկսել է դեռևս 19-րդ դարի սկզբից: Վերաբնակեցման քաղաքականությունը, միմյանց հերթափոխելով, կատարել էին Կովկասում գտնվող ռուսական պետական պաշտոնյաներ Ա. Երմոլովը, Ի. Պասկևիչը, Ա. Ֆադեևը և Մ. Վորոնցովը<sup>565</sup>: Սկզբնապես նախատեսվել էր ստեղծել զինվորական բնակավայրեր, ինչն այնքան էլ իրեն չէր արդարացրել<sup>566</sup>:

Պետական խորհուրդը 1830 թ. հոկտեմբերի 20-ին որոշեց ռուս աղանդավորներին՝ դուխոբորներին, իկոնոբորներին, մոլդկաններին վերաբնակեցնել Անդրկովկասում: Փաստացի տվյալներով՝ 1830 թ. ռուս աղանդավորները՝ Դոնի կազակ դուխոբորները և մոլդկանները<sup>567</sup> (266 մարդ) հայտնվում են Ղաբարադում՝ հիմնավորվելով Շաբա-կիշյաղ (Շաբո-կիշյաղ)

<sup>563</sup> Авалов З, Национальный вопрос на Кавказе, выр. из журнала «Русская мысль», СПб, 1911, с. 74-91. Бороздин К., Переселенцы в Закавказье, выр. из журнала «Русский вестник», СПб, 1891, с. 117-161. Иванович Ив., Колонизация Кавказа, «Вестник Европы», СПб, 1900, с. 587-636.

<sup>564</sup> Шавров Н., Русская колонизация на Кавказе, СПб, 1883, с. 133.

<sup>565</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. 5, էջ 222-224:

<sup>566</sup> Բալայան Վ., նշվ. աշխ., էջ 247:

<sup>567</sup> Դրանք «առավել վտանգավոր աղանդների» ներկայացուցիչներն էին: Այս մասին տե՛ս Семенов И., История закавказских молокан и духоборов, Ереван, 2001, с. 31.



քնակավայրում՝ Տող գյուղի մոտ: Տեղանունը Կովկասի հնագիտական հանձնաժողովի փաստաթղթերում հիշատակվում է որպես Կիզըլ-Կիշյակ<sup>568</sup>: 1830 թ. Ղարաբաղի գավառում վերաքնակեցված մոլոկանների և դուխոբորների մոտ 50 ընտանիք հաստատվեցին Նաև Մամատազուր գյուղում: 1832 թ. Նախիջևանի գավառում վերաքնակեցված մոլոկանները և դուխոբորները հիմնադրում են Բազարչայ գյուղը: Մի քանի տարի անց տեղական անբարենպաստ կլիմայական պայմաններն ստիպում են վերաքնակներին տեղափոխվել Ղարաբաղի գավառի Ղարաբուլաղ գյուղը<sup>569</sup>:

1832 թ. Վոսկրեսենսկի աղանդի մոլոկանները բնակություն հաստատեցին Վարանդայի Դուդուկչի բնակավայրում, սակայն անբարենպաստ կլիմայի և հողասակավության պատճառով 1839 թ. վերաքնակները տեղափոխվեցին Բազարչայ գյուղը, իսկ 1842 թ. արդեն Նստակյաց կյանքի անցան Ջրաբերդում՝ հիմնադրելով Բորիս գյուղը<sup>570</sup>: Նույն աղանդի մեկ այլ խումբ, 1832 թվականից սկսած, երկար դեգերումներից հետո 1841 թ. հաստատվեց Բալուղայա կոչվող վայրում՝ հիմնադրելով համանուն գյուղը<sup>571</sup>:

1834 թ. Ռուսաստանի Տավրիչեսկի նահանգից սկոպեցները վերաքնակեցվեցին Ղարաբաղի գավառի Զանգեզուրի Գիրյակ բնակավայրում<sup>572</sup>: Կլիմայական անբարենպաստ պայմանների հետևանքով վերջիններս 1843 թ. այստեղից տեղափոխվում են Ջրաբերդի՝ Մելիք Բեգլարյանին պատկանող Հին Թալիշ գյուղը և չնայած անբարենպաստ կլիմային, վերջնականապես հաստատվում են այստեղ:

1836 թ.՝ Բազարչայում, իսկ 1841 թ.՝ Գյուլիստանում բնակություն հաստատեց ռուս աղանդավորների մի նոր խումբ: Հատկանշական

<sup>568</sup> АКАК, т. X, док. 295, с. 285.

<sup>569</sup> Долженко В., К истории образования русских поселений Закавказья 1830-1840-е гг., «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան» միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2007, էջ 316:

<sup>570</sup> АКАК, т. X, док. 293, с. 284.

<sup>571</sup> Նույն տեղում, էջ 281:

<sup>572</sup> Նույն տեղում:

է, որ ցարական կառավարությունը քաղաքաբնակ աղանդավորներին թույլատրում էր բնակվել ուժեղ կայազոր ունեցող քաղաքներում, այդ թվում՝ Շուշիում<sup>573</sup>:

1839-1844 թթ. ռուս աղանդավորները հիմնավորվում են Ղարաբաղի հետևյալ գյուղերում՝ Տող (Կիզիլ-Կիշլաղ) (745 մարդ), Ղարաբուլաղ (338 մարդ), Բալուղայա (298 մարդ), Գյուլիստան (35 մարդ), Ռուս Բորիս (37 մարդ), Հին Թալիշ (194 մարդ), ընդամենը՝ 1647 մարդ<sup>574</sup>:

Ինչպես վերը նշվեց, աղանդավորները հիմնականում հաճախակի փոխում էին իրենց բնակավայրը: Տեղափոխումների հիմնական պատճառն անբարենպաստ կլիմայական պայմանների հետևանքով բռնկվող համաճարակները և մահացություններն էին: Այսպես օրինակ, կլիմայական պայմանների հետևանքով Ղարաբաղի Գյուլիստան գյուղում բնակություն հաստատած ռուս աղանդավորները հիվանդությունների հետևանքով վերջնականապես վերանալուց փրկվելու համար 1846 թ. ցրվում են մերձակա գյուղերը<sup>575</sup>: Բացի այդ բերքատվության ցածր մակարդակը ստիպում էր վերաբնակներին՝ որպես հիմնական բնակատեղի ընտրել առավել բերքառատ վայրերը: Գյուլիստան գյուղի ռուս վերաբնակների մի մասը տեղափոխվում է Արևելյան Հայաստանի Ելենովկա, Կոնստանտինովկա և Դիլիջան գյուղերը<sup>576</sup>: Իսկ Ղարաբաղը որպես հիմնական բնակության վայր ընտրած ռուս վերաբնակները Դիզակի, Վարանդայի և Զրաբերդի

---

<sup>573</sup> АКАК, т. VIII, док. 34, с. 61.

<sup>574</sup> АКАК, т. X, док. 293, с. 281. Ռուս վերաբնակների մասին որոշակիորեն տարբերվող տեղեկություններ է պարունակում Մ. Պոզենի Նիկոլայ I-ին ուղղված զեկույցը, ըստ որի՝ Ղարաբաղի գավառում 1844 թ. ապրում էր 1747 աղանդավոր: Ընդ որում, Կասպիական մարզում այդ թիվը կազմում էր 6811, իսկ ամբողջ Անդրկովկասում 8618 մարդ, այս մասին տե՛ս Исмаил-Заде Д., Русское крестьянство в Закавказье 30-е годы XIX-начало XX в., Москва, 1982, с. 38-39.

<sup>575</sup> Долженко В., К истории образования русских поселений Закавказья 1830-1840-е гг., «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան» միջազգային գիտաժողովի նյութեր, էջ 318:

<sup>576</sup> ՀԱԱ, ֆ. 133, ց. 1, գ. 329, թ. 285-293:

սակավահող հողատարածությունների հաշվին հիմնում են Նիկոլանկա, Կարյագինո, Սկոբոլևկա, Լևոնարխ ռուսաբնակ գյուղերը<sup>577</sup>:

Ամփոփելով նշենք, որ եթե հաստատման սկզբնական շրջանում ռուս վերաբնակները պատուհաս դարձան Ղարաբաղի բնակչության համար, քանի որ ազատ հողատարածությունների բացակայության պայմաններում նրանց հողով ապահովելը տեղի էր ունենում տեղական գյուղաբնակչության հողատարածքների հաշվին, ապա հետագայում հայ և ռուս բնակչության միջև հաստատվում են տնտեսական կապեր:

---

<sup>577</sup> Բալայան Վ., նշվ. աշխ., էջ 247:

## Ե) ՀԱԿԱԱՎԱՏԱՏԻՐԱԿԱՆ ԵՎ ՀԱԿԱՑԱՐԱԿԱՆ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

19-րդ դարի 30-50-ական թվականները Արևելյան Հայաստանում, այդ թվում՝ Ղարաբաղում նշանավորվում են հակաավատատիրական և հակացարական ելույթներով, որոնք պայմանավորված էին ծանր և չհամակարգված հարկային համակարգի, հարկահավաքության ընթացքում կիրառվող կամայականությունների և բռնությունների հանգամանքով:

1822 թ. վերացվեց միայն խանական վարչակարգը, սակայն խանական հարկային համակարգը չնչին փոփոխություններով շարունակեց պահպանվել մինչև 1840-ական թթ.: 1822 թ. խանության վերացումից հետո մտցվել էր պարետային կառավարում, և հարկաչափը, ըստ օրենքի, պետք է որոշվեր գավառական դատարանում՝ քնակիչների կողմից ընտրված անդամների կողմից, սակայն իրականում այն որոշում էր պարետը<sup>578</sup>: Ռուսական վարչակարգի հաստատումը մասնակիորեն միայն թեթևացրեց քնակչության դրությունը, քանի որ չարաշահումները, զեղծումները, «տեղական բարձր դասի»՝ իշխանությունների կողմից հովանավորվելու դեպքերը շարունակում էին մեծ չափերի հասնել, ինչը երբեմն լցնում էր ժողովրդի համբերության բաժակը՝ հուզումների պատճառ դառնալով:

Ղարաբաղի գավառը բաժանված էր մահալների, որոնք ղեկավարում էին մահալների նայիրները, վերջիններս էլ չարաշահումների գլխավոր հեղինակներն էին: Նայիրների պարտականությունն էր հետևել մահալների կարգուկանոնին, մինչդեռ իրականում գողություններն ու սպանությունները տեղի էին ունենում նայիրների մասնակցությամբ: Հարկահանությունը ևս իրականացվում էր նայիրների միջոցով, որոնք գործընթացն իրականացնում էին կամայականությունների ու բռնությունների ուղեկցությամբ:

Շուշիի հերոսական պաշտպանությունից հետո նրա քնակիչներին թվում էր, թե կառավարությունն ինչ-որ ձևով կփոխհատուցի

<sup>578</sup> Колониальная политика российского царизма в Азербайджане в 20-60-х гг. XIX в., ч. II, с. 349.

իրենց մատուցած ծառայությունները և կնվազեցնի հարկերը, բայց սխալվում էին, որովհետև ցարական կառավարությունն այս ուղղությամբ ոչինչ չձեռնարկեց, ավելին՝ նրա լուռ համաձայնությամբ հայ բնակչությունը ստիպված էր հարկեր վճարել նայիբների, նրանց յասաուլների, մահմեդական աղաների և բեկերի օգտին: 1828 թ. ցարի հրամանագրով պարետների իրավունքներն ու պարտականությունները կանոնակարգվեցին. դա առանց փոփոխությունների հաստատեց գոյություն ունեցող իրավիճակը: Այն հնարավորություն տվեց պարետներին, մահալների բեկերին, նայիբներին և յուզբաշիներին՝ ավելի մեծ թափ հաղորդելու չարաշահումներին և կամայականություններին:

Ղարաբաղի գավառում «ռուսական օրենք» բառը հեգնանք էր առաջացնում: Սամադ սուլթանին՝ քոչվորական համայնքներից մեկի ցեղապետին, երբ փորձել են զգաստացնել օրենքով, նա, խփելով գրպանին, ասել էր. «Ես լավ գիտեմ ռուսական օրենքը, փառք աստծո, այն այստեղ բավականաչափ է»<sup>579</sup>:

Ռուս աստիճանավորների և մասնավորապես պետական ծառայության մեջ գտնվող տեղացի պաշտոնյաների կողմից աշխատավորությանը ճնշելու, հարստահարելու մասին ուշագրավ տեղեկություն է հաղորդում 1829-1830 թթ. Ղարաբաղն ուսումնասիրելու գործուղված Դ. Զուբարյովը: Նա գրում է. «Հայերն այս երկրում ամենից հավատարիմն են մեր կառավարությանը, և կարելի է ասել, ամենաազնիվը հասարակ ժողովրդի մեջ... Ղարաբաղի տեղական իշխանությունը, հայերի դեմ ինչ-որ նախապաշարմունքներ ունենալով, ճնշում է նրանց շատ աններելի կերպով: Իզուր հայերը դիմում են արդարադատությանը, նրանց բավարարում են միայն ծեծելով»<sup>580</sup>: 1830 թ. հունիսի 10-ին գեներալ-ադյուտանտ Ստրեկալովին ներկայացրած իր զեկույցում Զուբարյովը, ներկայացնելով Ղարաբաղում տիրող իրավիճակը, գրում է. «Մահալների նայիբները Ղարաբաղում ճնշում են բնակիչներին և մեծ անկարգություններ անում, բայց Վարանդայի մահալի

<sup>579</sup> Иваненко В., նշվ. աշխ., էջ 209:

<sup>580</sup> АКАК, т. VII, док. 412, с. 464.

Նայիբ պրապորշչիկ մելիք Խուդադադը<sup>581</sup> գերազանցել է բոլոր մյուսներին: Լինելով անբարոյական և հարբեցող, Նա իր հարբած և անզուսպ ծառայողների խմբով անցնում է գյուղերը, հարբում և հարբած վիճակում, առանց որևէ պատճառի, խիստ պատիժների է ենթարկում բնակչությանը...»<sup>582</sup>:

Զուբարյովը գրում է Նաև Շուշիի ոստիկանապետի օգնական Կազիմ բեկի մասին, որը բացահայտ կերպով բնակիչներին կողպտում է, նրանցից կաշառք վերցնում, ծեծում և այլն: Քաղաքի բնակիչներն ընդհանուր բողոք և դժգոհություն են հայտնում, բայց շնորհիվ իշխան Ի. Աբխազովի հովանավորության՝ Կազիմ բեկը մնում է իր պաշտոնում:

Զուբարյովը վկայում է, որ թալանը և գողությունը Ղարաբաղում մեծապես իշխում էին: Դրա համար ձևականորեն ցարական օրենքով պատիժ էր սահմանված: Իրականում ցարական կառավարությունը պատժելու փոխարեն այժ Էր փակում պետական պաշտոնյաների և տեղական բարձր դասի ներկայացուցիչների անկարգությունների դեմ<sup>583</sup>:

Ղարաբաղում տիրող չարաշահումների մասին վկայություն է տալիս ռուս պաշտոնյա Ն. Նեֆեդենը, որը, 19-րդ դարի 30-ական թթ. լինելով Ղարաբաղի գավառում, իր նկարագրության մեջ ներկայացրել է Ղարաբաղի գավառի Զանգեզուրի մահալի Նայիբ «Ագլինցովի դեպքը»: 1835 թ. հունիսի 22-ին գեներալ-մայոր Կ. ֆոն Կրաբբեն Վրաստանի կառավարչապետին տեղեկացնում է Զանգեզուրի մահալի բնակիչների՝ Ագլինցովի դեմ բողոքի մասին: Կառավարչապետը Ագլինցովին ժամանակավորապես հեռացնում է պաշտոնից և «դատական գործ» հարուցում: «Հետաքննությունը պարզել էր», որ բողոքներն անհիմն են, փաստեր չկան: Բողոքողներն ու բողոքի ներքո ստորագրողները խստորեն պատժվեցին, իսկ 1836 թ. հունվարի 31-ից Ագլինցովը նորից Նայիբ էր Զանգեզուրի

<sup>581</sup> Մելիք Խուդադադը ցարական պաշտոնյա էր, Մելիք-Ջումշուդ Շահնազարյանի թոռը:

<sup>582</sup> AKAK, т. VII, док. 413, с. 464-465, Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Երևան, 1994, էջ 183:

<sup>583</sup> Պարսամյան Վ., Ցարիզմի գաղութային քաղաքականությունը Հայաստանում, I մաս, էջ 142:

մահալում: 6 ամսվա ընթացքում մահալի բնակչությունից ապօրինաբար 17 հազար ռուբլի արծաթով<sup>584</sup> հարկ գանձելու պատճառով Ագլինցովը իր իսկ փրկության համար հեռացվեց պաշտոնից: Ն. Նեֆեդենն իր նկարագրության մեջ ներկայացրել է նաև Շուշիի ոստիկանապետ «Կորգանովի գործը»: 1834 թ. հունվարի 9-ին նրա չարաշահումների մասին քաղաքի բնակիչները բողոք են ներկայացնում գեներալ Կ. ֆոն Կրաբբեին, որն ընթացք չի ստանում: Քաղաքի բնակչությունը 1834 թ. նոյեմբերի 29-ին կրկին պարետին է ներկայացնում 200 հոգու ստորագրությամբ բողոքը, որտեղ Կորգանովը մեղադրվում էր կաշառակերության և բռնությունների մեջ: Հարուցվում է քրեական գործ՝ կանխատեսելի ընթացքով. բողոքարկյունների մեծ մասը հետ են վերցնում իրենց բողոքները, իսկ մնացածները՝ խստորեն պատժվում: 1836 թ. հուլիսի 20-ին կառավարչապետը համարելով, որ բողոքները մտացածին են, գործը փակում է, իսկ 1837 թ. հունվարին Կորգանովը նայիբ է նշանակվում Իգիրմիդորդի մահալում:

Ռուս պաշտոնյա Ա. Նեֆեդենը «Ղարաբաղի նկարագրության մասին» փաստաթղթում չարաշահումների և անկարգությունների պատճառը տեսնում է պարետների ինքնիշխանության, բեկերի կառավարման և սահմանված կարգերից ու պարտավորություններից զատ բնակչությանը կամայական հարկերով ծանրաբեռնելու մեջ<sup>585</sup>:

Վերոնշյալ դեպքերը, որոնք ներկայացրել էր Ն. Նեֆեդենը, բացառիկ երևույթ չէին Ղարաբաղում, դրանք արտացոլում էին տվյալ ժամանակաշրջանում վարչական մարմիններում տիրող քաոսը, ապօրինությունները, բռնությունը և այլն: Բնակչության շահերը ոտնահարվում էին, հազվադեպ բարձրացող բողոքի ձայները՝ խեղդվում: Իսկ ցարական կառավարության կողմից նշանակված աստիճանավորները, զգալով իրենց անպատժելիությունը, ավելի ու ավելի էին աշխուժացնում իրենց գործունեությունը՝

<sup>584</sup> Колониальная политика российского царизма в Азербайджане в 20-60-х гг. XIX в., ч. I, с. 352.

<sup>585</sup> Նույն տեղում, էջ 349:

աշխատանքային ծառայությունը համարելով հարստության կուտակման աղբյուր:

Նայիբները հաճախ համագործակցում էին մելիքների (այս դեպքում՝ գյուղի ավագի, գեղջավագի) հետ: Թերևս, այդ փաստը վկայող մի օրինակ. Նայիբը մելիքին կարգադրում է, որ վերջինս բանվորներ ուղարկի՝ Արաքսի վրա կամուրջ կառուցելու համար: Մելիքը հայտարարում է, որ անհրաժեշտ է 50 մարդ, իսկ ճանապարհին յուրաքանչյուրից վերցնելով 1-2 ռուբ. արծաթով կաշառք՝ Նրանց հետ է ուղարկում: Իրականում այդ գործը կատարելու համար անհրաժեշտ է 10 մարդ<sup>586</sup>:

Գյուղերը պարբերաբար շրջագայելու ընթացքում հարկահանության ժամանակ նայիբներին ուղեկցում էր յասաուլների մեծ «շքախումբը», որոնք էլ իրենց հերթին մեծ պատուհաս էին Ղարաբաղի բնակչության գլխին: Յուրաքանչյուր գյուղ գնալու ժամանակ յասաուլին առաջին հերթին հյուրասիրում էին, բայց նա հրաժարվում էր դրանից՝ ասելով, որ չի ուտի և չի խմի՝ մինչև իրեն չտան «**դիշքիր**», այսինքն՝ ատամների աշխատանքի համար վարձատրություն: Մի գյուղից մյուսը տեղափոխվելու համար յասաուլը իր ձին թողնում էր բնակիչներից մեկի մոտ, փոխարենը գյուղից մեկ այլ ձի վերցնում: Վերադառնալուց հետո, եթե յասաուլին թվում էր, թե իր ձիուն լավ չեն կերակրել, ապա «հանուն կառավարության նա պետք է պատժեր խնամողին»<sup>587</sup>:

Նայիբը չուներ մշտական բնակատեղի և գյուղից գյուղ էր տեղափոխվում: Նրա ժամանումը շատ ծանր բեռ էր բնակիչների համար: Նայիբները հաճախակի փոփոխվում էին: Ժողովրդի մեջ տարածվել էր հետևյալ տեսակետը. «Չենք հասցնում կշտացնել մեկին և մեզ են տալիս մեկ այլ սովածի, որը նոր ագահությամբ ձգտում է հարստության»<sup>588</sup>:

Բռնաճնշումների և կամայականությունների տիպիկ օրինակ կարելի է համարել 1837 թ. նոյեմբերի 25-ին գրված՝ Պարսկաստանից Զանգեզուրի Ուզ (Ույծ) գյուղում

---

<sup>586</sup> Նույն տեղում, էջ 350.

<sup>587</sup> Նույն տեղում:

<sup>588</sup> Նույն տեղում, էջ 351:



վերաբնակեցվածների խնդրանքը. «Մեզ Պարսկաստանից այս պրովինցիայում է վերաբնակեցրել կոմս Պասկևիչ-Էրիվանսկին և տվել է յուրաքանչյուր ընտանիքին 1 չետվ. ցորեն, 1 եզ, 1 կով և մենք մեկ տարի լավ ենք անցկացրել: Դրանից հետո մեր ղեկավարները դարձել են գայլեր և սկսել հոշոտել մեզ: Մեկը մեկ կովից վերցրեց 30 ռուբ.<sup>589</sup> արծաթով հարկ, երկրորդը՝ հացահատիկի համար 20 ռուբ., երրորդը՝ եզան համար 40 ռուբ.: Դրանից հետո սկսեցին գանձել բոլոր հարկերը և պարտավորությունները, բեռնակրի դիմաց՝ 30 ռուբ. և վերջապես, ստիպել են գերան կրել: Մինչև այդ ժամանակը և այժմ մենք չգիտենք՝ որքան ամենամյա հարկ պետք է վճարենք և պարտավորություն կատարենք, նրանք մեզանից վերցնում են, ինչքան ուզում են»<sup>589</sup>: Նրանք խնդրում էին հստակեցնել իրենց հարկերն ու պարտավորությունները:

1837 թ. նոյեմբերի 26-ին բողոքի ձայն են բարձրացնում Զանգեզուրի մահալի Պարկազյուտ գյուղի բնակիչները. «Սահմանված հարկերը Նայիբների կողմից հաստատվելուց հետո երկու անգամ մեծացնում էր պարետը, որը մշտապես Շուշիի ամրոցում էր գտնվում և իր սեղանի համար ամեն օր գանձում էր 1 ռուբլի՝ արծաթով: Յուրաքանչյուր 6 ամիսը մեկ Նայիբները փոխվում էին: Նայիբի յուրաքանչյուր ճաշի համար պահանջվում է 1 ոչխար, մեկ լիտր սարաչինի օղի, կես լիտր յուղ, նրա խոհարարին՝ 5 ռուբ.՝ արծաթով, ծառային՝ 4 ռուբ.՝ արծաթով, միրզային՝ 12 ռուբ., իսկ իրեն՝ 50 ռուբ.՝ արծաթով դրամ: Նայիբն ունի 10 ծառա, որոնք մեր ձիերն են օգտագործում և վերադարձնելու համար գանձում էին 1 ռուբ.՝ արծաթով»<sup>590</sup>:

1837 թ. նոյեմբեր-դեկտեմբերին, իրենց դրությունը բարելավելու խնդրանք են հղում Նաև Զանգեզուրի մահալի Գորիս գյուղի բնակիչները, ովքեր մատնանշելով իրենց հողերի անբերրիությունը, գրում են, որ ամեն տարի ղեկավարության կողմից 2 բեկ, բերքի հաշվառման ժամանակ հաշվի չառնելով բերքի

---

<sup>589</sup> Նույն տեղում, էջ 368:

<sup>590</sup> Նույն տեղում:

չափը, նշանակում են նույն հարկը, ինչից բացի նրանցից փող էին վերցնում<sup>591</sup>:

Վերը նշված բոլոր փաստաթղթերն արտահայտում էին Ղարաբաղի բնակչության բողոքն անկանոն հարկահավաքությունից և ցարական աստիճանավորների չարաշահումներից: Հարկաչափը որոշվում էր գավառական դատարանում, որը պետք է հաստատեր պարետը, սակայն իրականում այդ գործը կատարվում էր այլ կերպ. պարետն իր անձանց ուղարկում էր գյուղերը՝ բերքի իրական չափը գրանցելու համար, նրանք գյուղում սակարկում էին բնակիչների հետ՝ ինչ-որ բան ստանալու և հարկերը քիչ գրելու համար: Շուշիի բնակիչների խոսքերով՝ հարկահավաքները, որոնք ընտրվում էին չքավորներից, չունենալով ոչ մի ունեցվածք, միանգամից հարստանում էին<sup>592</sup>:

Փաստորեն, հարկահավաքներն ու պարետը կամայականորեն էին տնօրինում հավաքված հարկերը, ուստի Ղարաբաղի գավառից սկզբնապես նախատեսված եկամուտը բավականին նվազեցված չափերով հասցվում էր պետական գանձարան, իսկ կուտակված ապառքի համար պատասխանատու էր հարկատու բնակչությունը:

Բացի սահմանված հարկերից և պարտավորություններից, Շուշիի բնակչությունը ճնշվում էր բնակարանային պարտավորությունից: Շուշիի լավագույն տները վերցվում էին նրանց տերերից՝ տրամադրվելով աստիճանավորներին<sup>593</sup>:

Օրենքով պաշտպանված չէին նաև Շուշիի առևտրականները: Ն. Նեֆեդեևի Շուշի ժամանման ժամանակ ոստիկանի մտրակով ծեծվել և բանտ էր նետվել Միքայել Թառույանը՝ քաղաքի պատվավոր անձանցից մեկը: Վերջինս այդ կապակցությամբ բողոք է գրում մահմեդական գավառների կառավարիչ Կ. Կրաբբեին, ինչն անհետևանք է մնում<sup>594</sup>:

---

<sup>591</sup> Նույն տեղում, էջ 369:

<sup>592</sup> Նույն տեղում, էջ 354-356:

<sup>593</sup> Նույն տեղում, էջ 354:

<sup>594</sup> Նույն տեղում:

Ծանր էր նաև Շուշի քաղաքի արհեստավորության վիճակը: 1837 թ. նոյեմբեր-դեկտեմբերին բողոք-խնդրանք են հղում նաև Շուշի քաղաքի մի շարք արհեստավորներ. «...Անցած տարվա հունվար ամսից մեզանից 200 ռուբ. ռուսական արծաթով փող է հավաքվել և մեզ համար անհայտ է մնացել՝ դա որպես հա՞րկ, որպես տուգա՞նք, թե՞ որպես պարտք է գանձվել: ... Մենք՝ արհեստավորներս, այժմ հայտնվել ենք ծայրահեղ թշվառ վիճակում»<sup>595</sup>:

19-րդ դարի 30-ական թթ. երկրորդ կեսին բռնաճնշումներն և անօրինություններն այնքան էին ծավալվել, որ Ղարաբաղի բնակչությունը հարկերը թեթևացնելու խնդրանքով 1837 թ. դիմում է Նիկոլայ 1-ին ցարին. «... մենք կատարում ենք տեղական ղեկավարության պահանջները և ենթարկվում բռնությունների այն աստիճան, որ կորցնելով մեր սեփականությունը՝ այժմ գտնվում ենք ամենաչքավոր վիճակում, մեզանից ամենահարուստները գտնվում են անհամար պարտքերի մեջ»: Ղարաբաղի բնակչությունը խնդրում էր ցարին չափավոր հարկեր սահմանել, որպեսզի հնարավորություն ունենային վճարումներ կատարելու<sup>596</sup>: Բողոքն ուներ իր բացատրությունը. 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմում ռուսական կողմին ցույց տված օգնության դիմաց Ղարաբաղի բնակչությունը որոշակի արտոնություններ էր ակնկալում, ուստի ցարական պաշտոնյաների կողմից իրենց բաժին հասած չարաշահումներն անակնկալ էին: Այս ամենով հանդերձ՝ անհերքելի փաստ էր, որ ցարական աստիճանավորների չարաշահումները չէր կարելի համեմատել պարսկական անտանելի բռնաճնշումների հետ:

Ղարաբաղի տնտեսությանը ծանր հարված էր հասցնում հատկապես շինարարական աշխատանքների ժամանակ պահանջվող աշխատուժը, որի թիվն ամեն տարի փոխվում էր: Աղյուսակի տվյալները որոշակիորեն ներկայացնում են տիրող իրավիճակը:

---

<sup>595</sup> Նույն տեղում, էջ 369:

<sup>596</sup> Նույն տեղում, էջ 372:

(Աղյուսակ 14)

Ըստ տարեթվերի	Բանվորների թիվը	Բեռնակիրների թիվը
1826	300	74
1827	450	590
1828	599	699
1829	359	455
1830	359	644
1831	3656	631
1832	5200	365
1833	710	227
1834	252	137
1835	1100	815
1836	1100	3500
1837	900	815

Բանվորներից ու բեռնակիրներից բացի ամեն տարի հավաքվում էր 150 հոգանոց սահմանապահ պահակախումբ: Շինարարական աշխատանքների ժամանակ գյուղատնտեսական աշխատանքներից կտրվում էին նաև բանող անասունները: Այսպես օրինակ, Շուշիում գտնվող գնդի շտաբ-բնակարանի կառուցման համար անտառում կտրվել էր 7250 գերան, իսկ դրանք տեղ հասցնելու համար օգտագործվել է 3900 զույգ ցուլ: Քաղաքում ամեն ամիս ոստիկանապետ Դոլուխանովի (Դոլուխանյան) պահանջով 100-170 ձի էր հավաքվում: Այն բնակիչները, որոնք չէին կարողանում ձի տրամադրել, վճարում էին 50 կոպեկից մինչև 2 ռուբ. 50 կոպ.՝ արծաթով<sup>597</sup>: Ձիերն օգտագործվում էին ջուր կրելու և աստիճանավորների ընտանիքների համար:

Ձիեր էին պահանջվում նաև Ղարաբաղ ժամանած պատվավոր հյուրերի համար, դրանք տրամադրելուց գյուղացիները երբեմն հրաժարվում էին: Այսպես օրինակ, 1863 թ. Զրաբերդի որոշ

<sup>597</sup> Նույն տեղում, էջ 366:

գյուղացիներ հրաժարվում են երիվարներ տրամադրել գավառում շրջագայության եկած Պրուսիայի արքայորդի Ալբերտին և Նրան ուղեկցող շքախմբին: Գործն ունենում է կանխատեսելի վախճան. գյուղացիները ենթարկվում են խիստ պատժի՝ գանակոծության<sup>598</sup>:

Ղարաբաղի բնակչության ճնշման և հարստահարման վերջին նկարագրված դեպքերի ուսումնասիրությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ Ղարաբաղի խանության վերացումից մինչև 1830-ական թթ. վերջը Ղարաբաղի բնակչությունը միայն բողոք-խնդրանքներ էր հղում ղեկավար շրջաններին, որոնք լավագույն դեպքում անարձագանք էին մնում, հակառակ դեպքում բողոքարկունները ենթարկվում էին խստագույն պատիժների:

Իրադրությունն առավել սուր բնույթ է ընդունում, երբ 1840 թ. Ռուսաստանի կենտրոնական նահանգների օրինակով ռուսահպատակ տարածքներում անցկացվում է վարչական և դատական բարեփոխում: Դրանով առավել մեծ չափեր են ընդունում հարկերը, աճում է աստիճանավորների թիվը, ինչը հանգեցնում է դժգոհությունների: Բարեփոխմամբ օրինականացվում է ամենամանրան հանցանքի դեպքում ինչպես արական, այնպես էլ իգական սեռի ներկայացուցիչների պատիժը: Այժմ դժգոհ գյուղացիների թվին ավելացել էին արիեստավորները, առևտրականները, ավատատերերի մի մասը, որոնցից ցարական կառավարությունը խլել էր հողերը կամ գրկել էր բեկի կամ աղալարի կոչումից<sup>599</sup>:

Բարեփոխումը փաստորեն ոչնչով չթեթևացրեց, այլ հակառակը՝ առավել ծանրացրեց ժողովրդի վիճակը 1840-ական թթ. սկզբներին: Այդ շրջանում համարյա ամբողջ Կասպիական մարզում ժողովուրդն անհնազանդությունից անցում կատարեց խռովությունների: Այս մասին Լեոն գրում է. «Ռուս յանցագործ բիւրօկրատիային միանգամայն յաջողուեց ամբողջ Ղարաբաղը գերի դարձնել Թուրք բէկերին, որոնց հարստահարութիւնները շատ անգամ էին առիթ դառնում գիւղացիական ապստամբութիւնների»<sup>600</sup>:

<sup>598</sup> ՀԱԱ, ֆ. 56, ց. 5, գ. 84, թղթ. 58, թ. 163-170:

<sup>599</sup> Агаян Ц., Крестьянская реформа в Азербайджане в 1870 году, Баку, 1956, с. 156.

<sup>600</sup> Լեո, Սահմանավէճեր, Աթէնք, 1990, էջ 101:

1840 թ. բարեփոխումից հետո չարաշահումները և անկարգություններն առավել ուժեղացան: Փաստաթղթերից մեկում ասվում էր. «Ղարաբաղի կառավարման համակարգի բարեփոխումից հետո առանց չափազանցության կարելի է ասել, որ գողության և ավազակության գրեթե ոչ մի հանցագործություն չի հետաքննվել դատական կարգով»<sup>601</sup>:

Սկսած 1840-ական թթ. սկզբներից՝ հուզումներ ծայր առան Ղարաբաղի գավառի տարբեր գյուղերում, որոնք շարունակվեցին մինչև 1850-ական թթ.:

1841 թ. Ղարաբաղում մեծ աղմուկ էր հանել Շուշիի ուեզրի Զարդանաշեն կամ Վերին Թաղավարդ գյուղում կատարված դեպքը: Զարդանաշենցիները բողոք են ներկայացնում գյուղի կավածատեր Հովսեփ բեկ Մադաթյանի դեմ՝ նկարագրելով իրենց ծանր դրությունը և հարկահանությունը: Ցարական կառավարությունը, բնականաբար, պաշտպանեց Մադաթյանի շահերը: Այդ մասին ներքին գործերի նախարար կոմս Լ. Պերովսկին գրել է. «Այդ առիթով անցկացված հետաքննությունը պարզել է բողոքի ամբողջ անարդարացիությունը և բնակչությանը հարկ վճարելու հրաման է արձակվել»<sup>602</sup>: Չնայած հրամանին և տեղական ոստիկանության ջանքերին՝ հուզումները շարունակվում են: Արդյունքում գործը հանձնվում է դատական վերանայման: Կասպիական պալատի քրեական և քաղաքացիական դատարանի 1842 թ. մարտի 20-ի որոշմամբ՝ անկարգության և անհնազանդության 12 գլխավոր հրահրիչները ենթարկվեցին մեկամյա ազատազրկման: Եթե ապագայում նրանք նորից հրաժարվեին հարկատվությունից, այդ դեպքում կպատժվեին օրենքի ամբողջ խստությամբ: Չնայած դրան՝ զարդանաշենցիները համառորեն շարունակեցին չենթարկվել Մադաթյանի հրամաններին՝ կասկածի տակ դնելով նրա կավածատիրական իրավունքների օրինականությունը: Զարդանաշենցիների գործով դատավարությունն ավարտվեց նրանով,

<sup>601</sup> Колониальная политика российского царизма в Азербайджане в 20-60-х гг. XIX в., ч. I, с. 31.

<sup>602</sup> Колониальная политика российского царизма в Азербайджане в 20-60-х гг. XIX в., ч. II, с. 11.

որ Անդրկովկասի գործերով կոմիտեն, լսելով գործը, որոշեց, որ Մադաթյանը Ջարդանաշեն գյուղի օրինական տերն է, և նրա բնակիչները պատկանում էին ինչպես նրա հորը՝ Պետրոս-բեկ Մադաթյանին, այնպես էլ իրեն՝ Հովսեփ Մադաթյանին: Մյուս կողմից՝ կոմիտեն գտավ, որ խռովարարներին անպատիժ թողնելը ծանր հետևանքներ կունենա և վտանգավոր օրինակ կարող է ծառայել մնացած գյուղացիների համար:

Անդրկովկասի գործերով կոմիտեն հանձնարարում է Կովկասի կառավարչապետին զարդանաշենցիների համար պատիժ սահմանել՝ առավել նվազ մեղավորներին թեթև պատիժ և ժամանակավոր աքսոր Սիբիր: Կովկասի կառավարչապետ Ե. Գոլովինի հանձնարարությամբ 13 մարդ ռազմաքրեական օրենսգրքի 223-րդ հոդվածով գրկվեց ունեցվածքի իրավունքից և ճիպտահարվելուց հետո ուղարկվեց տաժանակիր աշխատանքի<sup>603</sup>:

Վարչադատական բարեփոխման անցկացման շրջանում, երբ դեռ չէին հստակեցվել ավատատերերի և գյուղացիների միջև իրավահարաբերությունները, 1841 թ. հուլիսին հուզումներ սկսվեցին Ղարաբաղի Կարաբյադուկ գյուղում: «Заквказский вестник»-ը գրում է, որ «Կասպիական պալատի քրեական և քաղաքացիական դատարանը Ղարաբաղի գավառի Կարաբյադուկ գյուղի բնակիչներին և Միրզա Յուսուֆի, Միր Հաշիմի և Հաջի բեկի ժառանգորդներին հրավիրում է՝ լսելու առաջինների՝ վերջիններից ազատություն պահանջելու գործի մասին որոշումը»: Սակայն Անդրկովկասի կառավարչապետ Ա. Նեյդգարտը մերժում է ռուսական օրենքները Անդրկովկասում կիրառելու փաստը՝ նշելով, որ մահմեդական գավառներում բնակիչների սեփականության իրավունքները դեռևս որոշված չեն<sup>604</sup>:

Թաթար բեկերի կողմից հայ բնակչության ճնշման ու շահագործման վկայությունն է Դիզակի Բանագուր գյուղի դեպքը, որը

---

<sup>603</sup> Колониальная политика российского царизма в Азербайджане в 20-60-х гг. XIX в., ч. II, с. 11-12. Գալոյան Գ., Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները, Երևան, 1978, էջ 242:

<sup>604</sup> Колониальная политика российского царизма в Азербайджане в 20-60-х гг. XIX в., ч. II, с. 13-14.

մեծ աղնուկ էր հանել 1849-1850 թթ. ընթացքում: Այս մասին արխիվային վավերագրերը բավականին ծանրակշիռ տեղեկություններ են հաղորդում:

1849 թ. փետրվարին Դիզակի Բանագուր գյուղի բնակիչները բողոք-խնդրանքով դիմում են Ներսես կաթողիկոսին՝ նկարագրելով այն տանջանքները, որը նրանք կրում են գնդապետ Ջաֆար-Ղուլի խանից. «Ղարաբաղու պօլկովնիկ Ճափար-կուլի խանն, ի ներքոյ կառավարութեան որոյ գտանենք իբր ռահիթ, վարի ընդ մեզ հիանալի տանջանօք, և հեղմամբ յանձինս մեր անպատմելի նեղութիւնս, որ հարուածովք, և որ զանազան տուժիք մինչև անգամ յամենայն կենցաղավարութենէ այժմիկ զրկեալ սովալլուկ եղեալ՝ մատնեալ կամք լուսաւորչեան ծնունդքս անօրէն բռնադատութեան նորա»<sup>605</sup>: Դիմելով կաթողիկոսին՝ նրանք խնդրում էին. «Ողորմած Հայր, զչարագործ վարումն նորա ընդ մեզ թշուառականացս մանրամասնաբար թուել ծանրութիւն վարկանիւմք Սրբութեան Ձերում, այլ միայն զողբալի տեսարանն, որով անօրէնն այն ած և արկանել ետ ընդդէմ կրօնի մերոյ զփիլոն քահանային մերոյ տէր Մինասայ ի շանն, և ստիպեաց զժողովուրդն ծնրադրութեամբ հետևել այնմիկ, պատուիրելով թէ այդ իցէ ձեզ սուրբ և քահանայ, որոյ աղագաւ և յիշեալ քահանայն նեղասրտեալ վախճանեցաւ յայնժամ: Քանի՞ անձինս ի մէնջ գանահարութեամբ մեռուցեալ է որպէս և ի 1848 ամի պահանջմամբ 350 մանէթ դրամ ի Բաղդասար Մարտիրոսովէն, գանելով սպան զնա, ի նեղ անկեալ բնակիչք գեղջ մերոյ ցրուեցան ամենեքեան յայլ և այլ տեղիս, ջանալով զերծուցանել զինքեանս ի գերութեանէ նորա, վասն որոյ երկոտասան տունքս անցեալ ի վիճակ Վրաստանի...»<sup>606</sup>:

Իր հերթին բանագուրցիների ծանր վիճակի մասին Ներսես կաթողիկոսին է դիմում Սարգիս վարդապետ Ջալալյանցը. «Յաւելում և զայս ամենախոնարհաբար թե՛ ես իսկ մտի ի գիւղն Բանագուր, տեսի զողորմելի դրութիւն այնոցիկ հայոց, տեսի և զաղի արտօսր այրեաց և որբոց անտերունչ մնացելոց, որք երանի կտային հարց

<sup>605</sup> Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 169:

<sup>606</sup> Նոյն տեղում:



իրեանց և Նախնեաց, զի ոչ ծնան ի ժամանակս Ջաֆարղուլի խանի»<sup>607</sup>:

1849 թ. մայիսի 31 թվագրված արխիվային մի վավերագրում Հովհաննես քահանա Երեմյանը հայտնում է, որ Բանազուր գյուղի բնակիչները, փախչելով Ջաֆար Ղուլի խանի չարչարանքներից, ապաստան էին գտել Ղարադաղում. «Ըստ բանաւոր պատուիրանաց Ձերդ Բարձր Արժանապատուութեան, տաց զցուցումն վանն ողորմելի արանց բանազորեցոց, որք յայսմ ամի յերեկոյի ջրօրինեաց ժողովեալ ի տուն ունեմն ղարատաղլուեցոյ Գրիգոր Նիագովի ուտէին զհաց և չէին աւարտեալ ողորմելիքն զհացկերութիւն իւրեանց, յանկարծ թափեցան ի տուն անդր արք ինն տաճիկք ի ծառայից Շափառ-ղուլի աղայի և կապեալ զամենին ընդ միմեանս սաստիկ գանիւ վարէին արտաքս հանդերձ կանամբք և որդուվք իւրեանց, յայնմ սաստիկ պահու ձմրան և որպէս գերի անողորմաբար հարկանելով առաջի իւրեանց արկեալ տանել կամէին, և նոցունց աղաղակ և վայք բարձրացեալ յերկինս հասաներ»<sup>608</sup>:

Իր հերթին Ներսէս կաթողիկոսը 1849 թ. ապրիլի 26-ին գրություն է ուղարկում Կովկասի փոխարքա Մ. Վորոնցովին՝ նկարագրելով Ջաֆար Ղուլի խանի կողմից իրականացված դաժանություններն ու սպանությունները. «Ձերդ Պայծառափայլությանը հատուկ արդարամտությամբ իհարկե անհրաժեշտ կհամարեք անցկացնել խիստ և օրինական հետաքննություն Ջաֆար Ղուլի աղայի նման գործողությունների համար»<sup>609</sup>: Ի պատասխան բողոքագրի՝ 1849 թ. մայիսի 4-ին Մ. Վորոնցովը գրել է, որ Ջաֆար Ղուլի խանի արարքների իսկությունը պարզելու համար գործի քննությունը հանձնել է իշխան Բեհբութովին, իսկ անձամբ ինքը կարծում է, որ գործի էությունը չափազանցված է: Ապա Վորոնցովը շարունակել է. «Ինչ վերաբերում է քահանա Մինասին հասցված վիրավորանքների գործին, ապա այստեղ ես իմացել եմ, որ այն տեղի է ունեցել դեռևս 1843 թ. և իմ նախորդի ժամանակ վերջնականապես լուծվել էր: Այդ պատճառով, իմ կարծիքով,

<sup>607</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 145, վավ. 212, էջ 2:

<sup>608</sup> Նույն տեղում, թղթ. 145, վավ. 211 ա, թ. 5:

<sup>609</sup> Նույն տեղում, թղթ. 145, վավ. 215, թ. 2, ռուսերեն:

այն վերաբացել հնարավոր չէր, իշխան Բեհբույթովը Ձերդ Սրբազնությանը կներկայացնի այդ գործից քաղվածք»<sup>610</sup>:

Գործի քննությունն ավարտվում է նրանով, որ 1849 թ. նոյեմբերի 30 թվագրված արխիվային մի վավերագրում Մ. Վորոնցովը ներսես Աշտարակեցուն գրել է. «Արդյունքում գեներալ-մայոր բարոն Վրանգելը ամփոփել էր, որ իր կողմից Շամախիի նահանգի կառավարման ամբողջ ընթացքում չի ստացվել ոչ մի բողոք Ջաֆար Ղուլի աղայի կողմից բանագլուրցիներին ճնշելու, հակառակը՝ նրա հեզահամբույր և զիջող վերաբերմունքը իր հպատակ գյուղացիների նկատմամբ կարող է օրինակ ծառայել Ղարաբաղի պրովինցիայի մնացած գյուղացիների համար»<sup>611</sup>: Վերջում Մ. Վորոնցովն ավելացրել էր, որ բանագլուրցիների բողոքն անհիմն է, ինչը պարզվել է մանրամասն քննությունից հետո:

Բանագլուր գյուղի գործն ավարտվեց նրանով, որ գնդապետ Ջաֆար Ղուլի աղան, զրպարտություն համարելով հայերի բողոքը՝ խնդրում է կաթողիկոսին միջոցներ ձեռնարկել, որ Գանձակ փախած 11 տուն հայերը ետ վերադառնան իրենց բնակավայրը: Այս մասին ավելի մանրամասն տեղեկություն է տալիս մեկ այլ վավերագիր. «Այժմ ես պարտք ինձ համարելով՝ Ձեր Վեհափառութեան իմացնում եմ-նախ՝ որ ես ահա վաթսուն տարեկանից անելի եմ, որ մինչև յիմայ տիպայ ինձ հպատակեալ հայերն ինձանից ոչինչ օրէնքիցն դուրս բան չի ծնվիլ, այժմ որպէս կարելի է ինձանից այդպէս վատ բաներ գոյանայ, դեռ որ անելի ծանօթացել եմ աշխարհումս քանի մի զանազան գործերի և փորձել, մանաւանդ որ Նորին Կայսերական Մեծութեան հովուութեան տակին եմ և տեսնում եմ զանազան ազգեր էլ կան, որ նա ամէն մէկին իրեանց օրէնքովն տանում է, կամ թէ մեր նախնեաց անից, որ առաջուան ժամանակին Ղարաբաղին տիրող են էլէլ, ոչինչ վատ բան դիպայ իւրանց հպատակներն դուրս չի եկել»<sup>612</sup>: Իր անմեղ լինելը նա պատճառաբանում է նաև այն հանգամանքով, որ իր հպատակ հայերն ամե-

<sup>610</sup> Նույն տեղում, թղթ. 145, վավ. 215, թ. 12, ռուսերեն:

<sup>611</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 145, վավ. 217, թ. 16-21, ռուսերեն:

<sup>612</sup> Նույն տեղում, թղթ. 145, վավ. 224, թ. 24-26:

Նահնազանդն ու ամենաանվնասն են, և իրեն պետք չէր Նրանց բռնաճնշումների ենթարկել<sup>613</sup>:

Փաստորեն, Բանագլուր գյուղի դեպքը վերոնշյալ մյուս դեպքերի նման ցարական կառավարության կողմից ստացել էր իր «սպասված» լուծումը:

Բանագլուր գյուղի օրինակը, ըստ էության, միակը չէր: Վավերագրերից մեկը պատմում է Ղարաբաղի՝ Շուշուաղալա, ինչպես նաև Ագաքար, Նորաշեն և Զեյվա գյուղերի բնակիչների մահմեդական խաներից կրած հարստահարությունների մասին: Վավերագիրը թվագրված է 1850 թ. օգոստոս, ուղղված՝ կաթողիկոսին: Այստեղ կարդում ենք. «Զբազմատեսակ նեղությունս և վիշտս կրելով օր ըստ օր է ձեռաց բարբարոս տէրանց, ընդ որոց կամք ի ծառայութեան ի վերջին շունչ հասեալ, ստիպեցաք ի մերոց վշտաց խնդրամատոյց լինել առ հոգևոր Տէրդ Ազգի մերոյ իբր գլխոյ եկեղեցւոյ, քանզի մեք բնակիչքս Շուշուաղալու և Ագաքար գեղջ գոլով հարկատու իշխանաց տաճկաց հատուցանելով զի վերայ մեր եղեալ զհարկս և տուժեալ բազմիցս անելորդովք, ոչ կարեմք զերծանել ի դառն տառապանաց եկելոց ի նոցանէ ի վերայ մեր, որոց տառապեցուցեալ զմեզ իբր գերւոյ ոչ տան թոյլ կատարել մեզ զքրիստոնէական մեր զաստուածպաշտութիւն»<sup>614</sup>: Աղբյուրների պակասը հնարավորություն չի տալիս այս դեպքը լրիվությամբ լուսաբանելու:

1849-1850 թթ. խոշոր հակաավատատիրական ելույթ տեղի ունեցավ Զանգեզուր գավառի Տեղ գյուղում: Ելույթն ուղղված էր Տեղի կալվածատեր Ասադ բեկ Ռուստամբեկովի դեմ: Մոտ 700-800 տուն ունեցող գյուղը ստրուկն էր դարձել Ասադ բեկ Ռուստամբեկովի, որն, ինչպես ապացուցում էին գյուղացիները, գյուղին տեր էր դարձել մի կեղծ թղթի միջոցով<sup>615</sup>: Այս մասին ժողովուրդը հայտնում է գավառապետ Ավետիս Մատվենիչ Մուրաչովին: Հե-

<sup>613</sup> Նույն տեղում:

<sup>614</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 157, վավ. 400, թ. 1-3:

<sup>615</sup> Գյուղն իր կալվածքներով հանդերձ հնում պատկանել է Տաթևի վանքին, ապա հայոց իշխաններին, այնուհետև համարվել է արքունական կալվածք, որին հետագայում կեղծ շնորհագրով տիրացել էր Ռուստամ բեկը՝ Ասադ բեկի հայրը:

տագա դեպքերի մասին տեղեկություն ենք ստանում գյուղի քահանա Սահակ Բաբայանի՝ Ներսես Աշտարակեցուն ուղղված նամակից՝ թվագրված 1850 թ. մայիսի 10: Ինչպես փաստաթղթում է նշվում, Մուրաչովը «սպառնացաւ գրիլ և յայտնիլ զմէնջ նահանգապետին Ղարաբաղայ կնիագ Թարխանովայ, որպես խռովարար և խարդախախոս ծանուցիլով նմա զժողովուրդսն մեր և վասն այնպիսի սպառնացեալ Մուրաչովայ, քանի մի անձինք յօժարեցան ըստ կամաց նորա գրիլ և ցուցանիլ թէ այս գիւղ պատկանի Ասաղ բէկին և յետ գրութեամբ իրեանց խնդրիցին և ինձ ի տեղի նոցա ստորագրիլ»<sup>616</sup>: Այնուամենայնիվ, գյուղացիներն այս մասին հայտնում են իշխան Թարխանովին, որը խոստանում է ուսումնասիրել գործը: Սակայն ուսումնասիրության փոխարեն Թարխանովի ուղարկած աստիճանավորները գյուղացիներին բավարարում են գանակոծությամբ և բանտարկությամբ: Իսկ Թարխանովի ուղարկած հերթական աստիճանավորը, գյուղացիներին հարկադրելով ստորագրել գյուղը կրկին ամրագրում է Ասաղ բէկին<sup>617</sup>:

Ինչ վերաբերում է «գլխավոր խռովարար» Տեղ գյուղի քահանա Սահակ Բաբայանին, ապա Մատենադարանի արխիվային վավերագրերը բավականին հանգամանալից տեղեկություններ են հաղորդում: 1850 թ. հունվարի 18-ին կաթողիկոսին ուղղված նամակում գործի նկատմամբ իր հետաքրքրությունն էր հայտնում Անդրկովկասի կառավարչապետ իշխան Բեհբուզովը<sup>618</sup>: Ի պատասխան նրա հարցման՝ կաթողիկոսը հայտնում է, թե քահանային կանչել է Թիֆլիս<sup>619</sup>: Իրադրությանն անձամբ ծանոթանալու համար Տեղ գյուղ է ժամանում ինքը՝ գավառապետ իշխան Կոնստանդին Թարխանովը: 1850 թ. ապրիլի 29-ին Աշտարակեցուն ուղղված իր նամակում Կ. Թարխանովը քահանայի պահվածքը բացատրում է կրոնական շարժառիթներով, որ նրա նպատակն էր «ազատել իր հավատակիցներին կալվածատեր-մահմեդականի

<sup>616</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 145, վավ. 220, թ. 1 և շրջերես:

<sup>617</sup> Նույն տեղում, թղթ. 145, վավ. 220, թ. 1 և շրջերես:

<sup>618</sup> Նույն տեղում, թղթ. 145, վավ. 218, թ. 1:

<sup>619</sup> Նույն տեղում, թղթ. 145, վավ. 219, թ. 1:

իշխանությունից, չնայած այդ կալվածատերն առաջիններից մեկն էր Ղարաբաղում, որն իր հպատակների հետ այնպես լավ և արդար է վարվում, որ մինչև այժմ նրանցից ոչ մի բողոք չի ստացվել»<sup>620</sup>: Ահա թե ինչպես էր ցարական պաշտոնյան բացատրում գյուղացիական հուզումների պատճառը՝ տալով նրան իրականությանը չհամապատասխանող որակումներ:

Գյուղում տիրող իրավիճակի և իր անմեղության մասին 1850 թ. մայիսի 10-ին Ներսես Աշտարակեցուն ուղղված իր նամակում քահանան գրել է. «Թեպէտ բազումք ցանկան յայտնիլ զնեղութիւն յիրեանց բարձրագոյն իշխանութեան, բայց խստիւ արգիլին ի բեգայ իւրեանց և սաստիկ պատուհասին որպես և պատահեցաւ Կօնձիճորցի քահանայի որդւոյն, որ վասն խնդրելոյն զայցելութիւն ի նորին պայծառափայլութեան կնիազ Վորոնցովայ ի լինիլն իւր ի Շուշի յետ մեկուսանալոյ նորուն անտի կնիազ Վօրօնցովի պատժեցաւ չարաչար իւրոյ բեգայ և եղև գանահար յոյժ»<sup>621</sup>: Քահանային ուղղված մեղադրանքները շարունակվում են նաև հաջորդ տարիներին: 1852 թ. ապրիլի 30-ին Բեհբույթովը դիմում է Աշտարակեցուն՝ հանձնարարելով քահանային տեղափոխել այլ գավառ<sup>622</sup>: Ի վերջո, 1853 թ. դեկտեմբերի 4-ին Ղարաբաղի հայոց վիճակային կոնսիստորիայի հրամանագրով Սահակ Բաբայանն իր ընտանիքով տեղափոխվում է Օրդուբադի գավառ<sup>623</sup>:

Զանգեզուրում բռնաճնշումները շարունակվել են նաև հետագա տարիներին, այս մասին «Մեղու Հայաստանին» գրում է. «Մի քանի գյուղեր տեսնում ենք Ղարաբաղու ինքնակոչ բեկերի տիրապետութեան տակ, որոնք ժողովրդին այն աստիճան նեղում են, որ շատերը սգում ու ողբում և անիծում են իրանց ծնուած օրերը: Արդարև ինչպե՛ս կարելի է դիմանալ այս թշուառներին, երբ բեգերը Շուշում նստած հրամաններ են դրկում գիւղացւոց և ստիպում են, որ մինչև իրանց գալը ոչինչ չանեն. բայց թէ երբ-երբ որ իրանց

<sup>620</sup> Նույն տեղում, թղթ. 145, վավ. 221, թ. 10-12:

<sup>621</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 145, վավ. 220, թ. 1 և շրջերես:

<sup>622</sup> Նույն տեղում, թղթ. 145, վավ. 227, թ. 13-14:

<sup>623</sup> Նույն տեղում, թղթ. 145, վավ. 234, թ. 1:

կամքը կիրամայել և գալուց յետոյ երբ կանեն իրանց բարբարոսական պահանջները՝ բոլոր ստացուածքից 30-40%»: Հոդվածագիրն անդրադարձել է նաև աշխատանքային պարտավորությանը. «Մօտ 8 տարի է, որ Զանկեգորում ճանապարհներ են շինում Շուշվից Նախիջևան, Գորիսից անտառը և այս ճանապարհների վրա ձրիապես բանում են Զանկեգորցիք»<sup>624</sup>:

Քահանային խռովարարության մեջ մեղադրելու Տեղ գյուղի դեպքը միակը չէր եղել: Ղարաբաղի գավառապետ Թարխանովի՝ 1850 թ. ապրիլի 29-ին կաթողիկոսին ուղղված վերոնշյալ վավերագրից հայտնի է դառնում նաև, որ Մարաղա գյուղի բնակիչները քահանայի դրոմամբ հրաժարվել են ենթարկվել կալվածատեր Շամիր-խան Բեգյարովին, սակայն Բաղդասար մետրոպոլիտի միջամտությամբ անկարգություններն ավարտվել են: Նույն փաստաթղթում Թարխանովը նշել էր նաև, որ հուզումներ են բռնկվել նաև Ղարաբաղի մի քանի այլ գյուղերում, որոնց գլխավոր հրահրիչները դարձյալ քահանաներն էին<sup>625</sup>: Վերոնշյալ դեպքերն էլ պատճառ են դառնում, որպեսզի Բաղդասար մետրոպոլիտի հատուկ կարգադրությամբ քահանաները լրիվ մեկուսացվեին աշխարհիկ գործերից:

Ըստ էության, եկեղեցու սպասավորները, լինելով ժամանակի քիչ թե շատ ուսյալ մարդիկ, հնարավոր է, որ եղել են հուզումների առաջնորդներ, բայց ոչ երբեք հրահրիչներ, քանի որ վերոնշյալ ելույթների հիմքում ընկած էին սոցիալական խոր պատճառներ, որոնք չնչին իսկ առիթի դեպքում վերաճում էին հակասության: Հուզումների հրահրման արդյունքում նրանց մեղավոր ճանաչելը կամ դժգոհությունների անձնավորումը ինքնակալության մեզ ծանոթ հեռահար քաղաքականություն էր:

Այսպիսով, եթե մինչև 19-րդ դարի 30-ական թթ. վերջը Ղարաբաղի գյուղացիությունն իր դրությունը բարելավելու համար բավարարվում էր անպատասխան և անհետևանք խնդրագրերով ու բողոքագրերով, ապա 19-րդ դարի 40-50-ական թթ. անցնում է պայքարի առավել վճռական ձևերի: Դժբախտաբար, չի կարելի

<sup>624</sup> «Մեղու Հայաստանի», թիվ 50, 29 դեկտեմբեր, 1873:

<sup>625</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 145, վավ. 221, թ. 10-12:

ասել, որ պայքարի այս ձևը որևէ դրական արդյունքի հասցրեց, այլ ինչպես ցույց է տալիս փաստաթղթերի ուսումնասիրությունը, հուզումների օջախ հանդիսացող բնակավայրերում խնդիրը լուծվում էր հոգուտ կալվածատիրոջ: Այս հանգամանքն ավելի է արձակում ավատատերերի ձեռքերը, որոնք, թիկունքում զգալով ցարական իշխանությունների տաք շունչը, հագուրդ էին տալիս իրենց ամենաթողությանը:

## ՎԵՐՋԱԲԱՆ

1813 թ. հոկտեմբերի 12-ին՝ Ղարաբաղի Գյուլիստան բերդավանում կնքված պայմանագրով մի շարք տարածքների թվում Ռուսաստանին է անցնում նաև Ղարաբաղը: Այս պատմական իրադարձությանը հաջորդած ժամանակաշրջանի համակողմանի ուսումնասիրությունը հիմք է տալիս կատարել հետևյալ եզրակացությունները.

Գյուլիստանի պայմանագիրն արցախահայությանը տվեց խաղաղ գոյատևման և արարելու հնարավորություն: Պայմանագրի հետևանքով ստեղծված համեմատաբար բնականոն կենսապայմանները բավարար հիմք հանդիսացան պատերազմի հետևանքով հեռացած Ղարաբաղի բնակչության հայրենադարձության համար, որին գուզընթաց վերակենդանացան ամայացած բնակավայրերը: Աշխատության մեջ եփրեմ կաթողիկոսի Ղարաբաղում իրականացված նվիրակության ներկայացումն ինքնանպատակ չէր, այս դեպքի հետ կապված իրադարձությունների ուսումնասիրությունը թույլ է տվել փաստել. ա) Ղարաբաղի ներստեսական հարաբերությունները բռնել էին վերընծյուղման ուղին, ուստի նվիրակության տեղի ընտրությունը պատահական չէր, բ) նվիրակության շուրջ ծավալված ցարական կառավարության արձագանքը վերստին հաստատում է այն իրողությունը, որ Ղարաբաղը ցարական Ռուսաստանի եկամտաբեր գաղութներից էր, որից ստացված շահույթը նա չէր ցանկանում բաժին հանել ոչ մի երկրորդ պետության, առավել ևս՝ Պարսկաստանին:

Ստեղծված բարենպաստ պատմաքաղաքական կացությունը օգտագործելով՝ Արցախի թեմի առաջնորդ Բաղդասար մետրոպոլիտը ազատագրում է վանքապատկան կալվածքները թաթար բեկերից, որի նշանակությունը արդիական մեծ հնչողություն ունի:

Բացի վերոնշյալ դրական հետևանքներից, Գյուլիստանի պայմանագրի քաղաքական հետևանքների վերլուծությունը թույլ է տվել վերհանել նրա բացասական կողմերը: Պայմանագիրը ոչ միայն չէր լուծել, այլ ավելի էր բորբոքել Ռուսաստանի և



Պարսկաստանի միջև սահմանային հարցերը. շահարկվող տարածքների թվում կենտրոնական տեղ էր զբաղեցնում Ղարաբաղի տարածքի հարցը:

Պայմանագիրը հուսախաբ էր արել հայ հասարակության առաջադեմ շրջաններին, ովքեր մեծ հույսեր էին կապել ռուսական տիրապետության հետ՝ համարելով, որ այդուհետ կվերականգնվեն Ղարաբաղի մելիքների նախկին փառքն ու հզորությունը: Գյուլիստանի պայմանագրի կնքումից հետո թուլացան Ղարաբաղի մելիքների ժառանգական իրավունքները, որին հակառակ՝ բարձրացավ խանական ընտանիքի դերակատարությունը: Տրամաբանական է, որ տվյալ պատմական պահին ցարիզմին առավել հաճո էր ունենալ խանական խամաճիկային վարչակարգը, քան իր մեջ պետականության տարրերը կրող մելիքական կարգը: Այնուհանդերձ, փաստերը վկայում են, որ մելիքները շարունակում էին մնալ իրենց կալվածքների ինքնիշխան տերեր:

Պայմանագիրը չարդարացրեց նաև խանական վարչակարգին վերջ դնելու ակնկալիքը: Տեղում տիրող վարչակարգն իր նպատակին ծառայեցնելու պատմական օրինաչափությունը գործել էր նաև այս դեպքում. ցարիզմը խանական վարչակարգի մեջ ամուր հենարան էր տեսնում իր գաղութային քաղաքականության մեկնարկային փուլում: Այն վերացվեց այն պահին, երբ ցարիզմն իրեն բավականաչափ ամուր էր զգում հպատակ տիրույթներում:

Աշխատության մեջ պատմական իրողությունների դրական և բացասական հետևանքների քննության արդյունքում վերագնահատվել է Գյուլիստանի պայմանագրի նշանակությունը: Գնահատման հարցում հիմք են ընդունվել ինչպես պատմական օրինաչափությունները, այնպես էլ տեղական իրողությունների թելադրանքը: Օրինաչափորեն առաջադիմական է համարվել պարսկական տիրապետության փոխարինումը համեմատաբար զարգացած ռուսական տիրապետությամբ, իսկ պատմական անցյալի իրողությունները թելադրել են «չարյաց նվազագույնի» հիմնադրույթի զարգացումը:

1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի կարևոր իրադարձություններից Շուշիի հերոսական պաշտպանությունը հայ պատմագիտության ուսումնասիրված էջերից է: Մի կողմ թողնելով հանրահայտ փաստերը ուշադրության ենք արժանացրել այդ դեպքերի՝ ցայսօր չուսումնասիրված կամ մասամբ միայն լուսաբանված կողմերին: Ուսումնասիրության շրջանակներում են ներառվել աղբյուրներում տեղ գտած այն փաստերը, որոնք պարսկական կողմի՝ դարաբաղյան ուղղությամբ նախապատրաստվող հարվածի մասին էին վկայում: Դրանով իսկ հակադարձվել է պարսկական կողմի հարձակման «հանկարծակիության» թեզին: Որոշակի ձգգրտման կարիք ուներ Շուշիի պաշարման տևողության հարցը. ուսումնասիրության մեջ փորձել ենք փաստացիորեն և տրամաբանորեն հիմնավորել Ա. Քյուրքչյանի կողմից առանց փաստական և աղբյուրագիտական հիմքի առաջ քաշված Շուշիի 55-օրյա պաշարման տեսակետը: Շրջանառության մեջ դրված աղբյուրագիտական ապացույցները, փաստերի և իրադարձությունների տրամաբանությունը ցույց է տվել, որ Շուշիի պաշարումը տևել է 55 օր: Նախկինում ընդունված 48-օրյա տեսակետից տարբերվող այս տեսակետի նպատակը ոչ թե 6-7 օրվա տարբերությունը հատկանշելն էր, այլ հակամարտող կողմերի ռազմավարությանը ձգգրտումն է: Սահմանափակվելով միայն Շուշիի պաշտպանության մանրամասները ներկայացնելով՝ պատմագիտական գրականության մեջ տեղ չեն գտել «Շուշիի պարիսպներից» դուրս տեղի ունեցած իրադարձությունները, մասնավորապես պարսկական զորքի հարձակման ուղղությունները դեպի Դիզակ և Վարանդա, ինքնապաշտպանության կազմակերպումը Դիզակում, և ընդհանրապես, պատերազմական կացությունը մինչև 1827 թ.: Ուսումնասիրության մեջ փորձ է արվել հավուր պատշաճի գնահատել Շուշիի պաշտպանության նշանակությունը:

1828 թ. ռուս-պարսկական պատերազմի ավարտին կնքված Թուրքմենչայի պայմանագրով կազմակերպված, Պարսկաստանի հպատակության տակ մնացած հայկական տարածքների հայ բնակչության գաղթի հետևանքով Ղարաբաղում բնակություն

է հաստատում, մոտավոր տվյալներով, մինչև 100 ընտանիք: Այս կեղծելով՝ ադրբեջանական պատմագրության մեջ տեղափոխվածների թիվը միտումնավորությամբ հասցվում է 130000-170000-ի՝ հիմնավորելու իրենց իսկ կողմից առաջ քաշված Ղարաբաղի հայ բնակչության «եկվորության» և մահմեդական բնակչության «բնիկության» ադրբեջանական «պատմագիտական» տեսությունները: Պատմական փաստերի առկայության պայմաններում՝ առաջ քաշված հիմնազուրկ տեսակետը քննադատության չի դիմանում:

Ռուս-պարսկական պատերազմի ընթացքում տեղի ունեցած հայ երևելիների, այսպես կոչված, «դավաճանության» դեպքի համակողմանի քննությունը ցույց է տվել, որ Նրանք ի սկզբանե անմեղ էին: Հակառակ դեպքում Նրանց հետ հաշվեհարդար կտեսներ ինքը՝ արցախահայությունը: Ա. Երմոլովի կողմից հյուսված այդ անհիմն զրպարտության պատճառը պատերազմի ընթացքում իր կողմից թույլ տրված բացթողումները քողարկելն էր:

1822-1867 թթ. ցարիզմի կողմից Ղարաբաղում իրականացված վարչաքաղաքական նախագծերի և որոշումների քննությունը ցույց է տվել. ցարիզմը հավատարիմ էր մնացել էթնիկ կենտրոնացումներից խուսափելու իր քաղաքականությանը, ինչը արտահայտվել էր նաև Ղարաբաղում: Նախագծերում առաջ քաշված եզակի առաջարկները Ղարաբաղը և Հայկական մարզը մեկ վարչաքաղաքական միավորի մեջ միավորելու մասին, այդպես էլ մնում էին թղթի վրա՝ պատճառաբանվելով բացառապես աշխարհագրական նկատառումներով:

19-րդ դարի 40-60-ական թթ. ցարական կառավարության օրենքներն ու կանոնադրությունները կյանքի կոչելու ընթացքի մանրամասն ուսումնասիրությունը թույլ է տվել վերագնահատել ինքնակալության վարած տեղական ինքնակառավարման քաղաքականությունը: Աղքյուրագիտական հենքի վերլուծությունը ցույց է տվել, որ ցարիզմը Ղարաբաղում հովանավորում էր մահմեդական բարձր դասին՝ իր դեմ չտրամադրելու համար, մինևույն պահին՝ տեղական ինքնակառավարման կարևոր պաշտոններում նշանակելով հայերին: Փաստորեն, ցարիզմի այդ քաղաքականությունը

տեղում քաղաքական հակակշռություն ստեղծելու և այդ ճանապարհով սեփական հենարանն ամրապնդելու նպատակ էր հետապնդում:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանի քաղաքական կյանքի վայրիվերումները մեծապես արտահայտվել են նաև սոցիալ-տնտեսական կյանքում. 1804-1813 թթ., 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմներից մեծապես տուժած Ղարաբաղը, կարճ ժամանակամիջոցում հաղթահարելով հետպատերազմյան դժվարությունները, կրկին բռնել էր բնականոն զարգացման ուղին: Ղարաբաղից առավելագույն շահույթ ստանալու նպատակով ցարական կառավարությունը խրախուսում էր տնտեսության մի շարք ժյուղերի զարգացումը:

19-րդ դարի առաջին կեսին Ղարաբաղում արհեստագործական և տնայնագործական արտադրությունն իր տեղը զիջեց մասնագիտացված արդյունաբերական գործունեության սկզբնական ձևին:

Չնայած գոյություն ունեցած խանգարիչ գործոններին՝ միամտական դրամական, չափ ու կշռի համակարգերի բացակայությանը, առևտուրը Ղարաբաղում զարգանում էր՝ կրելով որոշակի առանձնահատկություններ: Ներքին առևտուրը շարունակում էր առավելապես բնատուր տեսք ունենալ. Շուշիի առևտրականները արտահանում էին Ղարաբաղում արտադրվող ապրանքների շատ քիչ մասը՝ հանդես գալով առևտրի մեջ միջնորդի դերում: Շուշին, հատկապես արտաքին առևտրի առումով, կանգնած էր ժամանակի նշանավոր առևտրական կենտրոնների կողքին և մեծ դերակատարություն ուներ Անդրկովկասի առևտրական կապիտալի ձևավորման գործում:

Ցարիզմի գաղութային քաղաքականությունն արտահայտվեց նաև հարկային համակարգի կարգավորման գործում, որի վերջնական նպատակն էր Ղարաբաղից հնարավոր առավելագույն շահույթ ստանալը. ըստ էության, 1813-1822 թթ. ռուսական կայսրությունը ոչ մի փոփոխություն չմտցրեց ինչպես անդրկովկասյան իր բոլոր տիրույթների, այնպես էլ Ղարաբաղի հարկային համակարգում, 1823 թվականից սկսած՝ նախկինում խանական

ընտանիքի մերձավորների օգտին գանձվող հարկերը համարյա նույնությամբ հանձնվեցին ռուսական արքունական գանձարանին: 1828-1832 թթ. ցարական կառավարության կողմից դիտարկման ուղարկված հանձնախմբերի աշխատանքների արդյունքում որոշվեց Ղարաբաղում թողնել հարկահավաքության նախկին ձևը: 19-րդ դարի 40-ական թթ. նոր հարկային համակարգի ստեղծման ուղղությամբ սկսած աշխատանքներն ավարտվում են միայն 1858 թ., երբ ցարական կառավարության կողմից հաստատվում է Ղարաբաղի համար սահմանված նոր, առավել ծանր հարկաչափը:

Աշխատության մեջ ուսումնասիրվել են նաև ժամանակաշրջանի դասային հարաբերությունները. Ղարաբաղի 19-րդ դարի դասային հարաբերությունները համաձույլ արդյունքն էին մելիքական շրջանի, խանական և ռուսական տիրապետությունների, որոնցից յուրաքանչյուրն իր կնիքն էր թողել նրա ձևավորման վրա:

Ժամանակաշրջանը առանձանանում է նաև Ռուսաստանի՝ Ժողովրդագրական քաղաքականության ոլորտում արված առաջին քայլերով. մասնավորապես՝ ռուս աղանդավորությանը Ղարաբաղում վերաբնակեցնելու քաղաքականությամբ ցարիզմը մի շարք խնդիրների հետ փորձում էր լուծել տեղում ազգային հենարանի ստեղծման հարցը:

19-րդ դարի 30-50-ական թվականներն Ղարաբաղում նշանավորվել են հակաավատատիրական և հակացարական ելույթներով, որոնք պայմանավորված էին ծանր և չհամակարգված հարկային համակարգի, հարկահավաքության ընթացքում կիրառվող կամայականությունների և բռնությունների հանգամանքով: Եթե մինչև 19-րդ դարի 30-ական թթ. վերջը Ղարաբաղի գյուղացիությունն այս ամենի դեմ պայքարել է դրությունը բարելավելու անպատասխան դիմում-բողոքներով, ապա 19-րդ դարի 40-50-ական թթ. ստիպված է եղել անցնելու պայքարի առավել վճռական ձևերի, որոնք ևս որևէ դրական հետևանք չեն արձանագրել:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում ցարիզմի կողմից Ղարաբաղում իրականացված քաղաքական և սոցիալ-տնտեսական քաղաքականության նպատակն էր ուժեղացնել երկրամասի ենթակայությունը կենտրոնական իշխանությանը: Այս քաղաքականությունը որոշակի փոփոխություններով շարունակվում է մինչև 1917 թ.:

**НЕЛЛИ БАГДАСАРЯН**

**АДМИНИСТРАТИВНО-ПОЛИТИЧЕСКАЯ  
И СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКАЯ СИТУАЦИЯ  
В КАРАБАХЕ В 1813-1867 ГГ.**

**РЕЗЮМЕ**

Исследование посвящено одному из важнейших периодов армянской истории: административно-политической и социально-экономической ситуации в Карабахе в 1813-1867 гг.

По Гюлистанскому договору 1813 года Карабах переходит из-под власти Персии под российскую юрисдикцию. Значение Гюлистанского договора рассматривается историками в контексте присоединения Закавказья к России. При этом Гюлистанский договор расценивается по-разному: от имеющего прогрессивное значение до акта “наименьшего зла” в данной ситуации. В то же время нет ни одного историографического исследования, в котором всесторонне рассматривались бы последствия присоединения Карабаха к России, сложившаяся в результате присоединения административно-политическая ситуация, а также нестабильное положение Карабаха в период вплоть до образования Елизаветпольской губернии.

Освещению этих проблем и посвящено данное исследование, тема которого особенно актуальна, поскольку в условиях современной азербайджанской пропаганды, извращающей очевидные исторические факты, возникает необходимость в восполнении неизвестных страниц отечественной истории. Кроме того, сегодня возникает и необходимость опровергнуть навязанные советской историографией стереотипы, которые не всегда соответствуют реальным историческим фактам.

Хронологические рамки исследования охватывают период с 1813-го по 1867 год: со времени заключения Гюлистанского договора и присоединения Карабаха к России до очередной административной реформы царского правительства от 9 декабря 1867 года, в результате которой Карабах оказывается в составе Елизаветпольской губернии.

Исследование основано на историко-исследовательском анализе архивных документов, печатных источников, прессы исследуемого периода, историографической литературы.

Первая глава “Административно-политическая ситуация в Карабахе 1813–1867 гг.” состоит из трех параграфов. В первом параграфе “Политические последствия Гюлистанского договора” рассматриваются обстоятельства присоединения Карабаха к России по Гюлистанскому договору, заключенному в крепости Гюлистан 12 октября 1813 года, а также политические последствия договора, имеющие как положительное, так и отрицательное значение.

Гюлистанский договор рассматривается и оценивается в аспекте присоединения Закавказья к России. Этому политическому акту дается множество разных оценок; он рассматривается и как договор, имеющий прогрессивное значение, и как акт, который можно расценивать как “наименьшее зло”. То есть, по исторической закономерности, произошла замена владычества, ведущего к регрессии, владычеством сравнительно прогрессивным; подчинение владычеству, стоящему по развитию ступенью выше по сравнению с прежним, в сложившихся условиях можно считать прогрессом. Однако существующие критерии оценок исторических фактов позволяют нам утверждать, что Гюлистанский договор и следующее по нему присоединение Карабаха к России можно квалифицировать как “наименьшее зло”. Это утверждение нельзя считать окончательным и бесспорным, но ясно, что хотя и иностранное владычество никогда не может быть абсолютно благом, тем не менее русское владычество по сравнению с персидским в тот период для Карабаха стало тем самым “наименьшим злом”.



Этому международно-правовому акту могла бы быть дана иная оценка, если бы была реализована идея создания Арцахской автономной административной единицы. Присоединение к Российской империи (имеется ввиду и Туркманчайский договор) народа, имеющего тысячелетнее прошлое, богатейшее культурное наследие, царские династии, ведущего постоянную борьбу за восстановление и сохранение собственной государственности, нужно рассматривать как вполне закономерный и неизбежный этап развития исторических событий, этап, имеющий свои положительные и отрицательные последствия.

Во втором параграфе дается представление о русско-персидской войне 1826–1828 гг., и в этом контексте приводятся обстоятельства героической обороны Шуши. Уже известные факты здесь не затрагиваются, внимание заостряется на малоисследованных или неизвестных ранее обстоятельствах этих событий. Так, например, приводятся веские факты о том, что один из первых ударов персидская сторона должна была нанести по Карабаху, но эти предпосылки не были учтены, поскольку все внимание генерала А. Ермолова в этот ответственный момент было сосредоточено на Тифлисе. В армянской историографии срок осады Шуши называется в пределах 48 или 50 дней. На основе выявленных новых фактов можно утверждать, что осада Шуши продолжалась 55 дней. Оборона города дала возможность русской армии перейти в контрнаступление и победить в сражениях у Шамхора и Елизаветполя. Оборона Шуши определила исход войны и стала спасением для Грузии, основные силы которой были сосредоточены в Тифлисе.

После заключения Туркманчайского договора с армянских территорий, отошедших к Персии, в Карабах было переселено около 100 семейств. Фальсифицируя этот факт, азербайджанские историки доводят число переселенных семей до 130000–170000, чтобы обосновать выдвинутое ими мнение о том, что армянское население Карабаха является пришлым, а мусульманское население – автохонным. Множество исторических фактов делают данную точку зрения необоснованной, не выдерживающей никакой критики.

В третьем параграфе “Карабах в административных проектах реформ и постановлений Российской империи в 1822 – 1867 г.г.” рассматривается политика царского правительства с 1822 года: от крушения ханского правления в Карабахе до административной реформы 9 декабря 1867 года, по которой Карабах вошел в состав Елизаветпольской губернии.

В проектах реформ по управлению Закавказьем вопрос об управлении карабахской провинцией стал предметом обсуждения в проектах 1822 г. А. Ермолова, 1828 г. П. Санковской, 1829 г. Е. Канкринна, 1830 г. И Паскевича, 1834 г. А. Чернищева, 1834 г. Д. Блудова и т.д.. В этих проектах при административно-территориальном делении учитывался только географический и экономический фактор.

10 апреля 1840 г. императором утверждается новый проект административного деления Закавказья, который получает силу закона. В итоге нового административного деления Закавказье было разделено на две крупные административные единицы: Грузино-Имеретинскую губернию и Каспийскую область. Карабах наряду с Бакинской, Шемахинской, Кубинской, Дербентской, Ленкоранской и Нухинской провинций, вошел в состав Каспийской области. 14 декабря 1846 г. царское правительство подвергло территории Закавказья новому разделению. На этот раз было создано 4 губернии: Тифлисская, Кутаисская, Шамахинская и Дербентская. Карабах вошел в состав Шамахинской губернии, а с 6 декабря 1859 г. в состав Бакинской губернии. 9 декабря 1867 г. по новому закону царского правительства Карабах вошел в состав Елизаветпольской губернии.

Оценивая суть административно-политических проектов и программ царского правительства 1822-1867 г.г., можно сделать следующий вывод: царизм остался верен своей политике не допущения этнической централизации, что ярко прослеживается на примере Карабаха, где продолжала жить надежда на создание независимого государства. Выдвинутые в проектах единичные случаи объединения Карабаха и Армянского края в одну административную единицу так и остались на бумаге. Таким образом,

царское правительство не объединило Карабах и Армянский край в одну административную единицу исходя из своих политических интересов.

В 40–60–е годы 19 века царское правительство реализовало в Карабахе ряд законов и положений. На протяжении этого времени оно покровительствовало мусульманской части населения, в частности, его высшему сословию, в то же время назначая на ключевые должности местного самоуправления армян. Покровительство же мусульманским бекам было направлено на то, чтобы не настраивать их против царской власти. Фактически такая политика царского правительства имело целью укрепление собственных позиций и обеспечение политического равновесия в регионе.

Вторая глава “Социально-экономическая жизнь в Карабахе 1813–1867 гг. Проявление колониальной политики в Карабахе” состоит из пяти параграфов. В первом параграфе “Сельское хозяйство, ремесла и торговля” осуществляется наиболее полный анализ этих сфер деятельности.

Обеспечение безопасности Карабаха и устранение внутривнутриполитической раздробленности имели большое значение для развития экономики страны. Карабах, сильно пострадавший от русско-персидских войн 1804–1813 гг., 1826–1828 гг., за короткое время преодолел послевоенные трудности, вновь вышел на перспективный путь развития. С целью получения из Карабаха максимальной прибыли, царское правительство поощряло развитие ряда отраслей экономики.

В первой половине 19–го века в Карабахе кустарное ремесло уступило место специализированному промышленному производству. Несмотря на ряд препятствующих факторов, таких как отсутствие единой денежной системы и единой системы мер и весов, торговля в Карабахе развивается, имея при этом некоторые характерные особенности. Внутренняя торговля продолжает осуществляться преимущественно по принципу натурального обмена. Шушинские торговцы вывозили небольшое количество

товаров, производимых в Карабахе, выступая чаще всего в роли торговых посредников. В плане внешней торговли Шуши в то время стояла в одном ряду с известными центрами торговли.

Во втором параграфе “Налоговая политика царской России в Карабахе” рассматривается царская правительственная политика по направлению урегулирования налоговой системы. Колониальная политика царизма была направлена на урегулирование налоговой системы, и его конечной целью являлось взимание максимальной прибыли из Карабаха: по сути, в 1813–1822 гг. российские власти не ввели никаких изменений в существующие ранее налоговые системы Карабаха и других закавказских колоний: начиная с 1823 налоги, которые ранее взимались в пользу ханской семьи, теперь взимались и передавались в русскую казну. В 1828–1832 гг. царское правительство отправляет в Карабах ревизионную комиссию, по результатам работы которой было решено оставить бывшую форму налоговизмания. Начатая в 40-х гг. 19-го века работа в направлении создания новой налоговой системы завершается только в 1858 г., когда царским правительством утверждается новая налоговая система для Карабаха.

В третьем параграфе “Сословные отношения” проведен анализ проблемы и выявлены характерные особенности этого явления в Карабахе. Во-первых, после подписания Гюлистанского договора в Карабахе высшую ступень феодальной иерархии продолжает занимать ханская семья; во-вторых, в сословных отношениях изменения фиксируются только в 1823 г. В частности, после установления русского владычества лишается прав ханская семья, но при попустительстве царизма беки продолжали оставаться правящим сословием. Сословные отношения в Карабахе в 19-м веке были достаточно сложны, поскольку они стали наследием меликского, ханского и русского периода истории, каждый из которых наложил свою печать на его формирование.

В следующем параграфе “Русские переселенцы Карабаха: демографическая политика царской России” представлены причины, процесс и последствия переселения царским правительством в

